

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2009 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ 39

ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ..... 55

 Հարկային եկամուտներ և պետական տուրքեր.....58

 Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ71

 Պաշտոնական դրամաշնորհներ.....72

 Այլ եկամուտներ74

ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ..... 77

 Տնտեսագիտական դասակարգում.....77

 Ընթացիկ ծախսեր.....78

 Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ.....79

 Գործառական դասակարգում81

 Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ81

 Պաշտպանություն.....99

 Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն..... 100

 Տնտեսական հարաբերություններ106

 Շրջակա միջավայրի պաշտպանություն.....142

 Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ.....153

 Առողջապահություն.....160

 Հանգիստ, մշակույթ և կրոն.....174

 Կրթություն188

 Սոցիալական պաշտպանություն203

 Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր.....222

ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 224

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 229

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ)..... 230

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ) 234

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 237

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... 241

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ 1504

Տեղեկատվություն ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կատարման մասին..... 1648

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա հնարավորինս մեղմելու և սպասվող սոցիալական լարվածությունը կանխելու նպատակով 2009 թվականին ՀՀ կառավարության (այսուհետ՝ նաև կառավարություն) կողմից համալիր միջոցառումներ ձեռնարկվեցին ռեսուրսների նպատակային ուղղորդման համար: Մասնավորապես՝

Մոբիլիզացվեցին գործընկեր դռնոր կազմակերպությունների ռեսուրսները:

Համաշխարհային բանկի հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է շուրջ 700 մլն ԱՄՆ դոլարի վարկային ռեսուրս: Համաշխարհային բանկի՝ Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում ձևավորվել է նաև քաղաքականությունների աջակցության 60 մլն ԱՄՆ դոլար վարկային ռեսուրսով փաթեթը: Արժույթի միջազգային հիմնադրամի հետ կառուցողական և հետևողական համագործակցությունը հնարավորություն տվեց տնտեսության մեջ ներարկել շուրջ 500 մլն ԱՄՆ դոլար միջոցներ՝ դրանով թույլ չտալով հանրապետությունում հարկաբյուջետային և դրամավարկային ցնցումներ: Ասիական զարգացման բանկի հետ հիմք դրվեց լայնամասշտաբ համագործակցության, որի արդյունքում 80 մլն ԱՄՆ դոլարի բյուջետային աջակցություն ցուցաբերվեց աղետի գոտու վերականգնման, բյուջեի սոցիալական ծրագրերի իրականացման համար: Եվրամիության հետ շարունակական բանակցությունների արդյունքում հստակ պայմանավորվածություն ձեռք բերվեց 100 մլն ԱՄՆ դոլարի բյուջետային աջակցության վերաբերյալ:

Մեկնարկեց Հայաստանի համար աննախադեպ ենթակառուցվածքային ծրագիրը: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի փուլային իրականացման համար ԱԶԲ-ն 500 մլն ԱՄՆ դոլարի պարտավորություն ստանձնեց, այդ թվում՝ 60 մլն ԱՄՆ դոլար արտոնյալ վարկային ռեսուրս տրամադրելով առաջին փուլի համար:

Հակաճգնաժամային քաղաքականության իրականացման շրջանակներում գործուն աջակցություն ցուցաբերվեց իրական հատվածին:

Այս համատեքստում տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի աջակցության շրջանակներում իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն, ըստ որի 300 միլիոն դրամը գերազանցող առանձին ներդրումային բնույթի ապրանքների ներմուծման, ինչպես նաև կառավարության հավանությանն

արժանացած ներդրումային ծրագրերի համար ներմուծվող ապրանքների դիմաց ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգվում է 3 տարի ժամկետով:

Մասնավոր հատվածի ներկայացրած բիզնես ծրագրերի քննարկման և աջակցության ձևաչափի որոշման համար ստեղծված Օպերատիվ շտաբում դիտարկվել են մոտ 300 բիզնես ծրագրեր, որոնցից դրական ընթացք են ստացել 14.1 միլիարդ դրամ արժողությամբ 24 նախագծեր:

Իրականացվել են հետազոտական-վերլուծական աշխատանքներ:

Ճգնաժամին դիմակայելու և հետագա զարգացումը պլանավորելու իմաստով ձեռքբերումներ են արձանագրվել նաև հետազոտական-վերլուծական բնագավառում: Արդյունքների ամփոփման և իրավիճակի գնահատման առումով հիմք է դրվել թեմատիկ տնտեսական զեկույցների թողարկման գործելակերպի, որի համատեքստում թողարկվել է «Հայաստանի տնտեսական զեկույց 2009. ճգնաժամից դեպի նոր զարգացում» զեկույցը: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել «Գլոբալ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա. կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներ» թեմայով Երևանում կայացած միջազգային համաժողովին:

Ընդունվել է ՀՀ-ում տեսչական բարեփոխումների իրականացման հայեցակարգը և ներկայումս իրականացվում է պիլոտային ծրագիր 3 տեսչություններում:

Հայաստանի ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը մեկ ամբողջական տեղեկագրում զետեղելու և այն ամբողջ աշխարհում շահագրգիռ կառույցներին և ընկերություններին ներկայացնելու համար «ՓԵԻ Մեդիա» առաջատար ֆինանսական տեղեկատվական ընկերության հետ համատեղ, որը հրապարակում է «Ինֆրաստրաքչր ինվեստոր» ամսագիրը, պատրաստվել է Հայաստանի ծրագրերի մասին հատուկ թողարկում:

Գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքի ձևավորում

2009 թվականին ԱՄՆ-ից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից ժամանած 10 ականավոր ֆիզիկոսներից կազմված փորձագիտական հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի ամենամեծ գիտական կազմակերպության՝ Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտի միջազգային գիտական փորձաքննությունը: Աշխատանքներ են ձեռնարկվել Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտում ՀՀ Միջուկային բժշկության կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

Կառավարության որոշման համապատասխան ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՌԳ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջև ստորագրվել է

փոխընթացման հուշագիր «Դիլիջան քաղաքում միջազգային գիտակրթական և տեխնոլոգիական կենտրոն հիմնադրելու վերաբերյալ»:

Մշակվել և կառավարության հավանությանն է արժանացել «Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության իրականացման հայեցակարգը»: Մշակվել և Մտավոր սեփականության գործակալությունում ներդրվել է «Գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդունման» էլեկտրոնային առցանց համակարգը:

Արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացում

Մշակվել է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Իրականացվում են Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծմանն ուղղված աշխատանքներ:

Երևանի քաղաքային կոշտ թափոնների գործածության գործող համակարգը բարելավելու նպատակով կազմակերպվել է Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման 2 օպերատորների և Նուբարաշենի աղբավայրի շահագործողի ընտրության նպատակով միջազգային խորհրդատուի ընտրություն:

Մշակվել և կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգը:

Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում

2009 թվականից սկսել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրագործումը: 2009 թվականի նոյեմբերի 4-8-ը ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Սան Հոսե քաղաքում տեղի է ունեցել «ԱրմԹեք 2009» համաժողովը, որն աննախադեպ էր և՛ մասնակիցների թվով, և՛ նրանց ներկայացուցչականությամբ:

2009 թվականի հունիսի 19-20-ը Երևանում անցկացվել է «Դիջիթեք բիզնես 2009 ֆորումը», և հոկտեմբերի 2-4-ը՝ տեղեկատվական հեռահաղորդակցության և բարձր տեխնոլոգիաներին նվիրված ամենամյա Դիջիթեք 2009 ցուցահանդեսը:

Միջազգային փորձագետի ներգրավմամբ աշխատանքներ են իրականացվել ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման համակարգի և էլեկտրոնային հասարակության ձևավորման ժամանակացույցի (2009-2014թթ.), ինչպես նաև կիրեր-անվտանգության ապահովմանն ուղղված ծրագրերի մշակման ուղղությամբ:

Հիմնվել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ:

Անցկացվել է մրցույթ՝ ազգային հիմնացանցի ստեղծման նպատակով:

Ընդունվել է ՀՀ-ում Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը:

Կազմակերպվել է «Կասպերսկու Լաբորատորիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ե. Կասպերսկու այցը Հայաստան և հանդիպումը ՀՀ վարչապետի հետ, որի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Կասպերսկու Լաբորատորիայի» միջև կնքվել է «Անվտանգ Հայաստան» փոխըմբռնման հուշագիրը:

Միջազգային չափանիշներին համապատասխան՝ համապատասխանության գնահատման համակարգի ձևավորում

Աշխատանքներ են իրականացվել Հայաստանում հավատարմագրման գործընթացը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Համապատասխանության գնահատման փուլին ներգրավվել են միջազգային փորձագետներ, ինչը մի կողմից նպաստում է գնահատման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և գործելակերպի զարգացմանը, մյուս կողմից՝ գնահատված մարմնի վարկանիշի բարձրացմանը:

Հայաստանը՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորում, ներկայացում և ամրապնդում

Մշակվել և կառավարության կողմից հաստատվել է Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012 թթ. ռազմավարությունը:

Նկարահանվել և հանրությանն է ներկայացվել 52 րոպե տևողությամբ «Հայաստանը Նոյի երկիր» վավերագրական ֆիլմը, որն այժմ թարգմանվում է այլ լեզուներով՝ տարբեր հեղինակավոր հեռուստաալիքներով ցուցադրելու համար:

Ընդունվել է «Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» կառավարության որոշումը: Ներկայումս Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից մշակվում է ՀՀ «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագիրը:

Ընդունվել է «Հյուսիսային դարպաս» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին կառավարության որոշումը: Այժմ տարվում են աշխատանքներ նպատակային ծրագրի մշակման ուղղությամբ:

Հայաստանի՝ որպես գործարարության իրականացման համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորում և ամրապնդում

Մի շարք կարևոր քայլեր են ձեռնարկվել ՀՀ-ԵՄ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի կնքմանն ուղղված բանակցությունների մեկնարկի ուղղությամբ:

ՀՀ-ն 2009 թվականի հունվարի 1-ից կայուն զարգացման և լավ կառավարման համար հնարավորություն ստացավ օգտվել ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից» (GSP+) համակարգից, ինչը հնարավորություն է ընձեռում շահառու երկրներին շուրջ 6400 ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանել գրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամաններով հաստատվել և ՀՀ տարածքում գործողության մեջ են դրվել միջազգային ԻՍՕ և Եվրոպական ԵՆ ստանդարտներին ներդաշնակ ու միջազգային գործելակերպին համապատասխան հավանության մեթոդով ընդունված 36 ազգային ստանդարտներ:

Մշակվել և ընդունվել է Պետական-մասնավոր համագործակցության զարգացման հայեցակարգը, Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի կառուցվածքում ստեղծվել է Պետություն-մասնավոր հատված գործընկերության գործակալությունը:

Կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) իրականացման համակարգի ներդրում

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով երկարաժամկետ պլանավորման համակարգը ժամանակավորապես փոխարինվեց կարճաժամկետ պլանավորմամբ: ԿԶԾ իրականացման աշխատանքները համակարգող խորհրդի որոշմամբ մեկնարկեցին 2010-2011 թթ. քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի մշակման աշխատանքները: Այն ժամանակավորապես կփոխարինի ԿԶԾ-ին, կներկայացնի հակաճգնաժամային քաղաքականությունները, հիմք կհանդիսանա առաջնահերթ բարեփոխումների և գալիք ՄԺԾԾ-ի համար:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսությունում 2009 թվականին իրականացված քաղաքականությունը նպատակաուղղվել է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմմանը, ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, բնակչության աղքատության մակարդակի կրճատմանը:

Համաձայն ուսումնասիրությունների 2004-2008 թթ. արձանագրված տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսային կետ գյուղական աղքատության մակարդակը նվազեցրել է 0.49

տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսության ավելացված արժեքի աճի յուրաքանչյուր տոկոսային կետ գյուղական աղքատության մակարդակը նվազեցրել է 1.12 տոկոսային կետով:

2009 թվականին գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերն ուղղվել են հետևյալ կոնկրետ նպատակների իրականացմանը՝

- հողերի բերրիության պահպանում և բարձրացում՝ հողերի մելիորատիվ վիճակի բարելավում, հակահեղեղային միջոցառումներ.

- գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ բերքի անկորուստ ստացում՝ բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում հակակարկտային կայանքների տեղակայում.

- անտառային տնտեսության զարգացում, անտառապահպանության արդյունավետության բարձրացում՝ անտառվերականգնման աշխատանքների ծավալների մեծացում, անտառչինական նախագծերի կազմում, անտառային տարածքներում բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում.

- ներմուծվող և արտադրվող անվտանգ բուսական և կենդանական ծագումով մթերքներով ապահովում՝ կարանտին անվտանգության ապահովում, կարանտին օրգանիզմների և կենդանական ծագում ունեցող հումքի մթերքի, և կենդանիների միջոցով հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափացման կանխարգելում.

- կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների իրականացում, սննդամթերքի նմուշների փորձաքննություններ և տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում, բարձր մթերատու ցեղերի երինջների ներկրում.

- գյուղացիական տնտեսություններին բարձրորակ սերմերով ապահովում՝ բույսերի սելեկցիոն նոր սորտերի պաշտպանություն, բարձր վերարտադրության սերմերի որակի գնահատում.

- բարձրադիր գոտիներում գյուղատնտեսական հողօգտագործողներին հացահատիկային մշակաբույսերի մշակության համար պետական աջակցության տրամադրում.

- գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների և գյուղատնտեսությունում համախառն ներքին արդյունքի ավելացում.

- պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատում:

Ելնելով ոլորտի առանձնահատկությունների և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2009 թվականին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության

քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության համակարգի ու անտառային տնտեսության զարգացմանը:

Հանրապետության գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության և վարվող քաղաքականության արդյունքում վերջին տարիներին գյուղատնտեսությունում ապահովվում է տնտեսական աճ: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր ազդեցությունն ունեցավ նաև գյուղատնտեսության վրա, չնայած նրան, որ ճյուղը, ի տարբերություն տնտեսության մյուս ոլորտների, դրսևորեց հարաբերական կայունություն: 2009 թվականի գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է 0.1%-ով, ընդ որում բուսաբուծության ճյուղում կրճատվել է 0.7%-ով, իսկ անասնաբուծության ճյուղում ապահովվել է տնտեսական աճ 1%-ով: 2005-2009 թվականների տվյալներով միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 4.5%:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի (հացահատիկ, կարտոֆիլ), տնկիների, հանքային պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների մատակարարման և համապատասխան աշխատանքների կազմակերպման բարձրադիր գոտիներում հացահատիկային մշակաբույսերի տարածքների ընդլայնման և ագրոտեխնիկայի բարելավման ուղղությամբ:

Վերջին տարիներին նկատելիորեն ակտիվացել է խաղողի և պտղատու այգիների հիմնման գործընթացը: Որոշակի բարձրացել է այգիների ինտենսիվացման մակարդակը: Դա պայմանավորված է նաև խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի որոշակի մեղմացմամբ և ռոռզման համակարգերի զարգացմամբ:

2009 թվականին որոշակի աճ է գրանցվել անասնապահական հիմնական մթերքների արտադրության բնագավառում: Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները 2009 թվականին նախորդ տարվա նկատմամբ ավելացել են՝ մսինը՝ 0.2 և ձվինը՝ 9.4 %-ով:

Գործող վերամշակող ընկերությունների կայուն գործունեության արդյունքում 2009 թվականին հնարավորություն է ստեղծվել գնելու գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող պտղի, բանջարեղենի և խաղողի ողջ քանակությունը: 2009 թվականին մթերվել և վերամշակվել է 171.3 հազ.տոննա պտուղ-բանջարեղեն և խաղող: Մթերվել է 11.3 հազ. տոննա պտուղ, 32.3 հազ. տոննա բանջարեղեն, 127.7 հազ. տոննա խաղող:

Գյուղատնտեսական հունք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների արմատավորման, ապրանքի դիմաց վճարումների իրականացման շնորհիվ որոշակիորեն բարելավվել է գյուղացիական տնտեսությունների՝ շրջանառու միջոցներով համալրման գործընթացը:

2009 թվականին էականորեն ավելացել են թարմ մթերքների արտահանման ծավալները, մասնավորապես՝ ծիրանը 1.8 անգամ, խաղողը և կարտոֆիլը՝ համապատասխանաբար 17.9 և 50.7%-ով:

Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն

Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության ոլորտում կառավարությունն իր աշխատանքները 2009 թվականին վերակառուցեց հաշվի առնելով ոչ միայն համակարգի բնականոն գործունեության ապահովումը, այլև ճգնաժամի հարուցած հետևանքների կանխարգելումն ու վերացումը՝ բացառելով հնարավոր սոցիալական դժգոհություններն ու հուզումները: Թեև կառավարությունը ֆինանսատնտեսական ճգնաժամով թելադրված՝ անցավ խնայողությունների ռեժիմի, այնուհանդերձ, սոցիալական պաշտպանության ոլորտում բյուջետային միջոցների որևէ էական նվազեցում չիրականացրեց: Ջանքերն առավել կենտրոնացվեցին աշխատաշուկայի լարվածության մեղմման, իրականացվող ծրագրերի հասցեականության մեծացման, ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացման ուղղությամբ:

2009 թվականի հունվարի 1-ից բարձրացվեցին կենսաթոշակների և պետական նպաստների չափերը: Մասնավորապես՝

- կենսաթոշակների միջին չափը 2008 թվականի համեմատ աճել է շուրջ 16%-ով՝ կազմելով 24617 դրամ.

- ընտանեկան նպաստի միջին չափը 2008 թվականի համեմատ աճել է շուրջ 12%-ով՝ կազմելով 23560 դրամ.

- ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ընտանիքում ծնված առաջին և երկրորդ երեխաների համար 35000 դրամից բարձրացվեց 50000 դրամ, իսկ երրորդ և դրանից հետո ծնված երեխաների համար՝ 300.000 դրամից 430.000 դրամ.

- մինչև 2 տարեկան երեխայի խնամքի համար տրվող նպաստի չափը 3000 դրամից բարձրացվեց 6 անգամ՝ կազմելով 18.000 դրամ:

Վերը նշված ծրագրերի իրականացման համար ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում նախատեսվեցին համապատասխան միջոցներ, որոնք զգալիորեն գերազանցում էին նախաճգնաժամային (տնտեսական աճ գրանցած) տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցները, որոնք ֆինանսավորվեցին ամբողջությամբ և ապահովվեց այդ

ծրագրերին դիմած բոլոր քաղաքացիների պահանջարկը: Ընդ որում, պետք է նշել, որ սոցիալական աջակցության ամենամեծ ծրագրի՝ ընտանեկան նպաստի համակարգում բյուջեով նախատեսվել էր ընդգրկել 114.000 ընտանիք, սակայն ծրագրի հասցեականության բարձրացմանն ուղղված հետևողական քայլերի արդյունքում ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների միջին թիվը տարվա կտրվածքով կազմեց 107.500՝ խնայելով շուրջ 3.1 մլրդ դրամ: Սա նաև այն դեպքում, երբ Համաշխարհային բանկի 2009 թվականի երկրորդ եռամսյակում կատարված հետազոտության համաձայն՝ աղքատության մակարդակը հանրապետությունում աճել է շուրջ 4%-ով: Նշված խնայողություններն ուղղվեցին սոցիալական պաշտպանության ոլորտի այլ ծրագրերի լրացուցիչ ֆինանսավորմանը, որի պահանջարկն առաջացավ տարվա ընթացքում՝ կապված ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: Մասնավորապես՝

1) զբաղվածության ծրագրերի մասով՝

2009 թվականին գործազրկության միջին տարեկան մակարդակը հանրապետությունում կազմել է 6.9%՝ նախորդ տարվա 6.3%-ի փոխարեն:

Տարեսկզբից գործազրկության նպաստ ստանալու իրավունք է ձեռք բերել շուրջ 33300 գործազուրկ՝ նախորդ տարվա 21043-ի փոխարեն: Դճնաժամով պայմանավորված՝ նպաստառու գործազուրկների թիվն ամսական ավելացել է մոտ 58%-ով (նախատեսված 14500-ի փոխարեն միջինում կազմել է 22900 անձ), և գործազրկության նպաստների համար տրամադրվեցին լրացուցիչ միջոցներ՝ 1.4 մլրդ դրամի չափով:

2) Ժողովրդագրական նշանակություն ունեցող ծրագրերի մասով՝

Ծննդյան միանվագ նպաստների չափերի տարբերակումը (ըստ ընտանիքում ծնված երեխաների թվի) և բարձրացումը, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափի բարձրացումը, ընտանեկան նպաստ համակարգում երեխաներին տրվող հավելումների չափերի բարձրացումը և կառավարության կողմից հաստատված՝ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության շրջանակներում համակարգված ծրագրերի իրականացումն այս ուղղությամբ ապահովեց շոշափելի արդյունքներ, մասնավորապես ծնունդների թիվը 2008 թվականի համեմատ աճեց շուրջ 9%-ով՝ կազմելով 45.000:

Այս ծրագրերի լրացուցիչ ֆինանսավորման պահանջարկը ևս բավարարվել է վերը նշված խնայողությունների հաշվին:

Տարածքային կառավարման ոլորտ

Մարզպետարանների կառուցվածքի միասնականացում. բոլոր 10 մարզպետարանները 2009 թվականի դրությամբ ունեին տարբեր կառուցվածքներ և հաստիքացուցակներ: Մարզպետարանների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով խնդիր

դրվեց միասնականացնել բոլոր մարզպետարանների կառուցվածքը, որի նպատակով ընդունվեց կառավարության համապատասխան որոշում: Ներկայումս իրականացվում են մարզպետարանների կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործառույթների, ինչպես նաև կանոնադրությունների միասնականացման աշխատանքներ:

Մարզպետների աշխատանքի գնահատում. ՀՀ նախագահի հանձնարարությամբ 2009 թվականին կառավարության կողմից հավանության են արժանացել մարզպետների աշխատանքի գնահատման չափորոշիչները և դրանց հիման վրա ձևավորվող գնահատականների միավորները, որոնց հիման վրա էլ 2009 թվականի արդյունքներով մարզպետների գործունեությանն առաջին անգամ տրվել է գնահատական:

Մարզային զարգացման ծրագրեր. 2009 թվականին մշակվել են Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերի զարգացման ծրագրերը: Մյուս մարզերի ծրագրերը կհաստատվեն 2010 թվականի ընթացքում: Տարածքային համաչափ զարգացման համատեքստում մշակվել է նաև քաղաքների առաջանցիկ զարգացման նպատակային ծրագրերի կազմման և իրականացման հայեցակարգ:

Միգրացիայի և փախստականների ոլորտ

2009 թվականին մշակվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքից բխող և դրա կիրարկումն ապահովող կառավարության 8 որոշումների և 1 գերատեսչական նորմատիվ իրավական ակտի նախագծեր:

Հաշվետու տարում շարունակել է գործել օտարերկրյա պետություններում բնակվող մեր հայրենակիցների հայրենադարձության խթանմանն ուղղված համակարգը, որը տեղակայված է www.backtoarmenia.am/com հասցեում: Համակարգի միջոցով իրենց հուզող հարցերի պատասխաններն են ստացել 365 անձինք:

2009 թվականին շարունակվել են աշխատանքները բնակչության շրջանում տեղեկատվության տարածման միջոցով անօրինական միգրացիան կանխարգելելու ուղղությամբ:

Թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված աշխատանքները ծավալվել են 2007 թվականի դեկտեմբերի 6-ին կառավարության կողմից հաստատված թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման 2007-2009 թթ. Ազգային ծրագրին համապատասխան:

Հաշվետու տարում առաջին անգամ ՀՀ պետական բյուջեում առանձին տողով միջոցներ են հատկացվել թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով: Մշակվել և 100.000 օրինակով տպագրվել է «Օրինական ճանապարհով օտարերկրյա պետություններ մուտք գործելու, բնակվելու և աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին» տեղեկատվական թերթոնը՝ այդ նպատակով ծախսելով հատկացված 6 մլն-ից 3 մլն դրամը:

Գործակալության կողմից մշակվել է նաև «Թրաֆիքինգ՝ ժամանակակից ստրկություն» տեղեկատվական գրքույկի նախագիծը, որը սակայն չի տպագրվել:

ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի և Արաբական Միացյալ Էմիրությունների մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ազգային կոմիտեի միջև հաշվետու տարվա դեկտեմբերի 5-ին ստորագրվել է փոխըմբռման հուշագիր մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում համագործակցության մասին:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Հայաստանն առաջընթաց է արձանագրել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում: ԱՄՆ պետքարտուղարության՝ թրաֆիքինգի վերաբերյալ ամենամյա զեկույցում Հայաստանը երկրների 2-րդ խմբի վերահսկման ցուցակից հանվել և ընդգրկվել է բուն 2-րդ խմբի երկրների ցուցակում:

Ինչպես և նախորդ տարիներին, յուրաքանչյուր ամիս ամփոփվել և վերլուծվել են Հայաստանից մեկնող և Հայաստան մուտք գործող անձանց թվաքանակի վերաբերյալ տվյալները: 2009 թվականի տվյալները ցույց են տալիս, որ նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել՝

- ուղևորահոսքերի ծավալների աճի տեմպի նվազում.
- ուղևորահոսքերի ընդհանուր ծավալում ցամաքային ճանապարհներով կատարվող սահմանահատումների բաժնի աճ.
- միգրացիայի բացասական մնացորդի որոշակի նվազում:

Հաշվետու տարում շարունակական աշխատանքեր են տարվել հանրակացարաններում բնակվող փախստական ընտանիքների կողմից զբաղեցրած տարածքների սեփականաշնորհման ուղղությամբ: 2009 թվականին փախստական 22 ընտանիքներ օգտվել են այդ գործընթացից: Փախստական 23 ընտանիք տեղավորվել են «Հանրակացարաններ» ՓԲԸ-ի տնօրինության տակ գտնվող հանրակացարաններում:

2009 թվականին օտարերկրյա պետությունների քաղաքացիներից ստացվել են ՀՀ-ում ապաստան ստանալու մասին 67 դիմում, որոնցից 48-ը դիմել են ժամանակավոր ապաստանի, իսկ 19-ը՝ փախստականի կարգավիճակ տրամադրելու խնդրանքով: Փախստականի կարգավիճակ է տրվել 1 անձի, 1 դիմում մերժվել է, մյուսները գտնվում են քննարկման փուլում: Ժամանակավոր ապաստան է տրվել 33 անձի, իսկ Իրաքի 15 քաղաքացիների դիմումներ գտնվում են քննարկման փուլում:

Ավելացվել են ապաստան հայցողների համար նախատեսված «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի կարողությունները, այդ նպատակով ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի կողմից վերանորոգվել և կահավորվել են կացարանի երկրորդ հարկի և 22 սենյակներ՝ նախատեսված 45 ապաստան հայցողների համար:

ՄԱԿ ՓԳՀ-ի միջոցներով Իրաքից ապաստան հայցողների համար վերակառուցվել է Մասիսի շրջ. Դարբնիկ գյուղի նախկին գյուղատնտեսական քոլեջի շենքը՝ 47 կահավորված սենյակներով, որոնցում կտեղավորվեն Իրաքից ապաստան հայցողները: Նույն նպատակի համար վերակառուցվել է նաև Նոր-Նորքի Մոլդովական 70/1 հասցեի հանրակացարանի 3-րդ հարկը՝ 14 կահավորված սենյակներով:

Առողջապահություն

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2009 թվականի ընթացքում շարունակվել է սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության հետագա ձևավորումը և մշակումը, իրավական դաշտի լրամշակումը, պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության աշխատանքի համակարգման, կազմակերպական և մեթոդական ղեկավարման բարելավումը: Այդ նպատակով ներկա զարգացումներին համապատասխան մշակվել են բնակչության առողջության պահպանման, վարակիչ, մասնագիտական, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառման հարցերը կանոնակարգող մի շարք իրավական ակտեր:

2009 թվականին չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են դիֆթերիան, սուր պոլիոմիելիտը, սիբիրյան խոցը, խոլերան, ռիկետոցիոզները (այդ թվում՝ բժավոր տիֆ, Բրիլլի հիվանդություն) և այլն: 2006 թվականից սկսած հանրապետությունում մալարիայի տեղական դեպքեր չեն արձանագրվել, և Հայաստանը դիմել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը՝ որպես մալարիայից ազատ գոտի հավաստագրվելու համար:

Իրականացվել են մի շարք կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ Հայաստանի Հանրապետությունում գրիպի A /H1N1/ վիրուսային վարակի ներկրումը և հետագա տարածումը կանխարգելելու համար:

Բնակչության առողջության առաջնային պահպանում

Որպես առաջնահերթություն շարունակվել է առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը՝ որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության հիմնական օղակ:

Առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով ՀՀ մարզերում և Երևանում ստեղծվել են որակի վերահսկման խորհուրդներ, նշանակվել են համակարգողներ, որոնք կատարում են աջակցող վերահսկման այցելություններ իրենց ամրացված ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ, կատարում որակի մոնիտորինգ և արդյունքների մասին զեկուցում ՀՀ մարզային և Երևանի քաղաքապետարանի առողջապահական ծառայություններին: ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի հունիսի 1-ի N777-Ա հրամանով ստեղծվել է Առողջապահության նախարարին կից առողջության առաջնային պահպանման որակի բարելավման խորհուրդ, որին պարբերաբար զեկույց են ներկայացնում որակի համակարգողները:

Շարունակվել է բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացը, որի ընդգրկումը 2009 թվականին հասել է 85%-ի:

Մոր և մանկան առողջության պահպանում

Մոր և մանկան առողջության պահպանումն առողջապահության ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: 2009 թվականին կարևորվել է կանանց և երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների և մատչելիության, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումը՝ ուղղված երեխաների և մայրերի մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը:

Շարունակաբար ներդրվել է «Ծննդօգնության պետական հավաստագրի ծրագիրը», որն ուղղված է կանանց համար առավել մատչելի և իրապես անվճար ծննդօգնության ծառայությունների մատուցմանը, որը նպաստել է ծննդաբերությունների ավելացմանը մոտ 7.5%-ով: Բացի այդ, եռամյա կտրվածքով արձանագրվել է մայրական մահացության իջեցում 5%-ի չափով:

2009 թվականի ընթացքում շարունակվել են իրականացվել երեխաների մահացության, հիվանդացության և հաշմանդամության կանխարգելմանն ուղղված ծրագրերը: Իրականացվել են մի շարք ծրագրեր՝ երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման, աղջիկների վերարտադրողական առողջության գնահատման ու բուժման, խրոնիկ հիվանդ և հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման ուղղությամբ:

Միջազգային համագործակցության շրջանակներում որոշակի աշխատանք է կատարվել երեխաների և կանանց բժշկական օգնության որակի բարելավման, մասնագետների գիտելիքների բարձրացման, բուժհաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության բարձրացման, կարողությունների հզորացման, մանկական և մայրական մահացության նվազեցման, անպտուղ ամուսնության հիմնախնդրի հաղթահարման ուղղությամբ:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրում, սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովում

Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վարաբերյալ գիտելիքների քարոզչությունը սկզբունքային նշանակություն ունի բնակչության առողջության պահպանման հարցում, որի նպատակն է՝ բնակչության աղքատ խավերի սոցիալապես անապահով առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարձրացումը և առավելագույն ապահովումը:

Կարևոր է նաև սոցիալական առումով հատուկ նշանակություն ունեցող և անապահով բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող այնպիսի հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, կանխարգելումը և հետագա տարածումը, ինչպիսիք են՝ մալարիան, տուբերկուլյոզը, ՄԻԱՎ-ը և այլն:

Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ): 2009 թվականին կարևորվել է ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի՝ ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով դրանց պետական գրանցումը:

2009 թվականին կարևորվել է կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի անվանացանկի համալրումը նորագույն բուժման սխեմաների համար անհրաժեշտ դեղերով, պարբերաբար իրականացվել են դեղագործական շուկայում դեղերի գների ուսումնասիրություններ, որը հնարավորություն է տվել բժշկական հաստատությունների կողմից

բնակչությանը անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովելիս վերահսկել դրանց գները:

Կրթություն և գիտություն

ՀՀ կրթության և գիտության բնագավառի 2009 թվականի գերակա խնդիրներն են եղել՝

- հանրակրթության ոլորտի բարեփոխումները.
- նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումը.
- նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացումը.
- բարձրագույն կրթության բարեփոխումները՝ ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների.

- գիտության ոլորտի բարեփոխումներ՝ հայեցակարգային, ռազմավարական և իրավական հիմքերի ապահովումը:

Կրթության համակարգի առանցքային օղակի՝ հանրակրթության ոլորտի 2009 թվականի հիմնական ձեռքբերումը ՀՀ Ազգային Ժողովի կողմից «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումն էր: Այն վերջին տարիներին ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքների և քաղված դասերի արդյունքն է, որը նպաստավոր միջավայր է ապահովում համակարգի հետագա զարգացման համար: Այժմ կառավարությունը ձեռնամուխ է եղել օրենքից բխող ենթաօրենսդրական շուրջ 80 ակտերի մշակմանը: Դրանց ներդրումն առաջիկա տարիներին զգալիորեն կբարելավի իրավիճակը հանրակրթության ոլորտում. կներդրվեն ուսուցիչների ատեստավորման, տնօրենների հավաստագրման, ուսումնական հաստատությունների ներքին և արտաքին գնահատման և կրթության որակի բարելավմանն ուղղված մի շարք այլ մեխանիզմներ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումներում 2009 թվականն առանցքային էր նաև այն իմաստով, որ սկսվեց 12-ամյա կրթակարգի ներդրման վերջնական փուլը՝ եռամյա ավագ դպրոցի ծրագրի ներդրումը: Այդ նպատակով մշակվել են առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը, հրատարակվել են դասագրքերի առաջին խմբաքանակները, ուսուցիչների համար կազմակերպվել են համապատասխան վերապատրաստումներ:

12-ամյա կրթակարգի տեսանկյունից հանգուցային է առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնել համակարգի արդյունավետությունը, հաղթահարել ավագ դասարաններում այսօր առկա հիմնախնդիրները և ապահովել սովորողների լիարժեք պատրաստվածությունը՝ իրենց նախընտրած մասնագիտությամբ ուսումը շարունակելու համար: 2008/09 ուստարում 10 դպրոցներում իրականացված փորձնական ծրագրի արդյունքում ևս 38 դպրոցներ վերակազմավորվեցին

առանձին գործող ավագ դպրոցների: Նախատեսվում է մինչև 2012 թվականն ավարտել առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումը:

Հանրակրթության ոլորտի կարևոր խնդիրներից է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներմուծումը հանրակրթական դպրոց և դրանց համալրումը ժամանակակից համակարգչային միջոցներով: 2009 թվականին շարունակվել է «Համակարգիչների շահառու հիմնադրամի» միջոցով դպրոցներին համակարգիչների և այլ համակարգչային սարքավորումների տրամադրումը, ուսումնական հաստատությունների ընդգրկումը «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում», ընդլայնվել է էլեկտրոնային գրադարանների թիվը:

Հանրակրթության որակի և հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու տեսանկյունից կարևոր խնդիր է շարունակում մնալ նախադպրոցական կրթության մեջ երեխաների ցածր ընդգրկվածությունը: 2008-09 ուստարում ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում իրականացվեց նախադպրոցական ծախսարդյունավետ ծառայությունների ներդրման փորձնական ծրագիր, որի արդյունքում 22 հաստատություններում լրացուցիչ ընդգրկվեցին շուրջ 500 նախադպրոցահասակ երեխաներ: Ծառայությունների մատուցումն այժմ շարունակվում է համայնքների ֆինանսական աջակցության միջոցով: Առաջիկա տարիներին նախատեսվում է նման ծառայությունների ներդրում նաև այլ մարզերում:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության՝ միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը:

Նախապատրաստվել և կազմակերպվել են «2007 թվականի գործողությունների ծրագրի ներքո ոլորտային քաղաքականության աջակցության ծրագիր՝ ուղղված աղքատության կրճատմանը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտներում բարեփոխումների իրականացման ճանապարհով» ծրագրի 2008-2009 թթ. նախապայմանների կատարման ընթացքն ապահովող մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝

- 2009 թվականին ավարտվել են 12 փորձարարական քոլեջների շենքերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքները, վերազինվել և հագեցվել են նյութատեխնիկական բազաները.

- ավարտվել են քարոզարշավի ծրագրի աշխատանքները (տեսանյութեր, ասուլիսներ, հեռուստահաղորդումներ, բուկլետներ, պաստառներ և այլն).

- իրականացվել է 12 փորձարարական քոլեջների ընթացիկ մոնիթորինգ:

2009 թվականին հիմնադրվել է Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանը:

Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շուրջ 600 տնօրեն, տնօրենի տեղակալ և դասախոս մասնակցել են վերապատրաստման դասընթացների:

Մշակվել և հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում ցկայանս ուսումնառության հայեցակարգ»-ը, որը հիմք է ծառայելու ՀՀ ցկայանս ուսումնառության բնագավառի օրենսդրական կարգավորման համար անհրաժեշտ նախաձեռնությունների համար:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի հիմնական գերակայությունը Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործումն է, որը կապահովի հանրապետության բարձրագույն կրթության ինտեգրումը Եվրոպական միասնական կրթական համակարգին:

Մշակվել է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումների ազգային շրջանակի նախագիծը, որի մշակման հիմքում դրվել է Եվրոպական Բարձրագույն Կրթական Տարածքի որակավորումների շրջանակը: Աշխատանքներ են տարվել նաև կրեդիտային համակարգի կատարելագործման ուղղությամբ:

2009 թվականին հաստատվել է «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի 2-րդ փուլը, որը հիմնականում ուղղված է աջակցելու բարձրագույն կրթության բարեփոխումներին, մասնավորապես՝ որակի ապահովման ազգային համակարգի ներդրմանը, բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև մանկավարժական կրթության արդիականացմանը:

Կառավարությունն առանձնահատուկ կարևորում է մասնագիտական կրթության որակի ապահովումը: 2009 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կասեցվել են 13 բուհերի լիցենզիաները:

Սպորտ և երիտասարդության հարցեր

Սպորտի և երիտասարդության ոլորտում նախարարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք ներկայումս գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում. զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների, հանրապետական փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցության աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչությանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող

իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումների, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության՝ մասնավորապես ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

Մեծ նվաճումների սպորտի բնագավառում իրականացված քաղաքականությունն ուղղված է՝

- սպորտի բարձրագույն նվաճումների ապահովմանը.
- սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը.
- մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը.
- օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեության աջակցմանը.

- մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը.

- միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը.
- մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը.
- միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

2009 թվականին մարզական միջոցառումների անցկացման համար պետական բյուջեից հատկացվել է 1,044,967.2 հազար դրամ: Անցկացվել են Հայաստանի Հանրապետության 84 առաջնություններ, որոնց մասնակցել են 6700 մարզիկներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցումներին նախապատրաստվելու նպատակով մարզաձևերի Հայաստանի Հանրապետության հավաքականներում ընդգրկված 3850 մարզիկների համար կազմակերպվել են 126 ուսումնամարզական հավաքներ: Տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 1729 մարզիկներ մասնակցել են աշխարհի և Եվրոպայի առաջնությունների՝ նվաճելով 135 մեդալ, որից՝ 32 ոսկե, 47 արծաթե, 56 բրոնզե:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը.

- մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը.

- հաշմանդամ մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Երիտասարդական ոլորտում կառավարության կողմից տարվող պետական քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում), բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Էներգետիկա և բնական պաշարներ

Էներգետիկայի ոլորտում 2009 թվականի կարևորագույն ձեռքբերումներն են՝

- «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի սարքավորումների հավաքակցման աշխատանքների ավարտը, որը հնարավորություն ընձեռեց 2010 թվականի հունվար ամսից սկսել փորձարկման աշխատանքները՝ ապրիլ ամսին էներգաբլոկի արդյունաբերական շահագործման մեկնարկն ապահովելու համար.

- Իրան-Հայաստան գազամուղի շինարարական աշխատանքների ավարտը, որի շնորհիվ 2009 թվականի մայիսի 13-ից սկսվել են Իրան-Հայաստան գազամուղով Իրանից գազի կանոնավոր մատակարարումները, ինչպես նաև Հայաստանից Իրան էլեկտրաէներգիայի հանդիպակաց մատակարարումները՝ կողմերի միջև համաձայնեցված ծավալներով և ռեժիմներով.

- 2009 թվականի հոկտեմբերի 27-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև 2009 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված կառավարության «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման նպատակով փակ բաժնետիրական ընկերություն

ստեղծելու մասին» թիվ 1458-Ն որոշումը ՌԳ «ՌՈՍԱՏՈՄ» պետական կորպորացիայի կողմից առաջադրված՝ «Ատոմատրոյէքսպորտ» ընկերության հետ համատեղ ձեռնարկություն ստեղծելու մասին.

- 2009 թվականի դեկտեմբերի 27-30 Երևանում ԻԻՀ «Ֆարաբ» և «Սեպասադ» ընկերությունների և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչների միջև համապատասխան Փոխըմբռնման հուշագրի ստորագրումը՝ ամրագրելով Սեդրի ՀԷԿ-ի շինարարությունն Իրանական կողմից BOT կամ BOOT եղանակով իրականացնելու մասին հիմնական սկզբունքները և պայմանները:

Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում կառավարության 2009 թվականի գերակա խնդիրների իրականացման արդյունքները բերված են ստորև:

Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման աշխատանքների իրականացում

«Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագիծ» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են մոնտաժման և տեղակայման աշխատանքները: Նախագիծն ընթանում է ժամանակացույցին համապատասխան՝ առանց էական շեղումների և խոչընդոտների: Էլեկտրակայանը շահագործման է հանձնվել 2010 թվականի ապրիլ ամսին:

Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության և գազատուրբինային տեղակայանքով համակցման աշխատանքների 75%-ի իրականացում

Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման աշխատանքների իրականացման նպատակով վարկային համաձայնագրի ստորագրում

Վերականգնման վարկերի բանկի (KfW) փորձագետների կողմից մշակվել է «Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման ծրագրի» գնահատման հաշվետվությունը, որը դեռևս գտնվում է ուսումնասիրության փուլում: Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունների միջև 2009 թվականի հուլիսի 15-16-ին Բոննոմ կայացած՝ զարգացմանն ուղղված համագործակցության շուրջ բանակցությունների արդյունքում ստորագրվել է համապատասխան արձանագրություն, որի 2.3.1 կետով հաստատվել է «Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման ծրագրի» լրացուցիչ հատկացումը՝ 22 մլն Եվրո գումարի չափով:

Գյումրի 2 ենթակայանի վերազինման աշխատանքների կատարման նպատակով վարկային համաձայնագրի ստորագրում և գլխավոր կապալառուի ընտրություն

2009 թվականի հունվարի 30-ին KfW բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության (վարկառու) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (ծրագիր իրականացնող) միջև ստորագրվել է «Գյումրի-II ենթակայանի վերականգնում» վարկի տրամադրման և ծրագրի ֆինանսավորման պայմանագիր:

Նշված պայմանագրի համաձայն 2009 թվականի մարտի 17-ին KfW բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջև ստորագրվել է պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հատուկ համաձայնագիր, որի շրջանակներում կարգավորվում են նախագծի մանրամասները: Հատուկ համաձայնագրի համաձայն 2009 թվականի մարտի 24-ին KfW բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջև ստորագրվել է պայմանագիր, համաձայն որի KfW բանկը պետք է օժանդակություն ցուցաբերի ծրագիր իրականացնող «ԲԷՑ» ՓԲԸ-ին խորհրդատուի ընտրության հարցում: 2009 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջև կնքվել է Ենթավարկային պայմանագիր: Իրականացվել է խորհրդատուի ընտրության միջազգային մրցույթ, որի արդյունքը 2009 թվականի դեկտեմբերի 26-ին հաստատվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կառավարման խորհրդի կողմից և սահմանված կարգով ներկայացվել է կառավարություն:

Տարածաշրջանային ինտեգրացում և էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերազինում

Իրան-Հայաստան գազամուղի շինարարական աշխատանքների ավարտ

2009 թվականի մայիսի 13-ից սկսվել են Իրան-Հայաստան գազամուղով Իրանից գազի կանոնավոր մատակարարումները, ինչպես նաև Հայաստանից Իրան էլեկտրաէներգիայի հանդիպակաց մատակարարումները՝ կողմերի միջև համաձայնեցված ծավալներով և ռեժիմներով:

2009 թվականի հոկտեմբերի 23-ին շահագործման է հանձնվել «Իրան-Հայաստան» գազամուղի 188.35 կմ երկարությամբ «Քաջարան-Արարատ» հատվածն իր վերգետնյա կառույցներով: Ավարտվել են նաև իրանական գազի՝ դեպի Հայաստան տեղափոխմանը մասնակցող «Գորիս-Նախիջևան» մայրուղային գազատարի «Սիսիան-Անգեղակոթ» 22.1 կմ հատվածի, «Իլիչևսկ-Երևան» գազատարի «Երևան-Արարատ» 39.1 կմ հատվածի և «ԳԲԿ-2-Երևանի ՋԷԿ» գազատարի հիմնանորոգման, ինչպես նաև ամբողջ գազատարի երկարությամբ Մեղրի-Երևան տեխնոլոգիական կապի կառուցման աշխատանքները:

Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օղային գծի կառուցման աշխատանքների իրականացում

Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման 400 կՎ լարման օդային գծի կառուցման նախագծային աշխատանքները հիմնականում ավարտված են:

Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքների իրականացում

Վրաստան-Հայաստան 400 կՎ բարձր լարման գծի շինարարավերականգնողական աշխատանքների կատարման համար ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարարությունը մշակել է պլան-ժամանակացույց, որը հիմք կհանդիսանա երկու երկրների էներգետիկայի ոլորտի նախարարների կողմից աշխատանքները համակարգելու համար: Նշված պլան-ժամանակացույցի նախագիծը համաձայնեցման նպատակով ներկայացվել է վրացական կողմին: Պլան-ժամանակացույցը երկու կողմերի հաստատումից հետո տրամադրվելու է գերմանական KfW բանկին՝ վարկային համաձայնագրի շուրջ բանակցություններն ամփոփելու նպատակով:

SCADA կապի համակարգի ներդրման աշխատանքների իրականացում

Ավարտվել են գլխավոր կապալի պայմանագրով նախատեսված «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման և հոսանքի անխափան մատակարարման համակարգի տեղադրման և կարգաբերման աշխատանքները: Ավարտվել են նաև հեռուստամեխանիկայի վերջնական սարքավորումների տեղադրման աշխատանքները կայաններում և ենթակայաններում: Օդային գծերի վրա տեղադրվել է շուրջ 240 կմ OPGW (օպտիկամանրաթելային մալուխ ներկառուցված ամպրոպապաշտպան ճոպանի մեջ) մալուխ: Շարունակվում են OPGW մալուխների տեղադրման աշխատանքները, ինչպես նաև մալուխների և այլ սարքավորումների մատակարարումները Հայաստան:

110 կՎ լարման ենթակայանների վերազինման աշխատանքների իրականացում

2009 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին ավարտվել և շահագործման են հանձնվել առաջին խումբ չորս ենթակայանները («Սոտք» 110/35/6 կՎ, «Էջմիածին» 110/35/10 կՎ, «Ապարան» 110/35/10 կՎ և «Կիրգա» 110/35/6 կՎ): 2009 թվականի սեպտեմբեր ամսից սկսվել են նաև երկրորդ խումբ չորս ենթակայանների («Մալաթիա» 110/10 կՎ, «Շենգավիթ» 110/6 կՎ, «Շահումյան-1» 110/6 կՎ և «Նորք» 110/10), իսկ դեկտեմբեր ամսից՝ երրորդ խումբ չորս ենթակայանների («Ջրվեժ» 110/35/10 կՎ, «Սպանդարյան» 110/35/6 կՎ, «Չարբախ» 110/35/6 կՎ, «Արմավիր» 110/35/10 կՎ) վերականգնման աշխատանքները:

Հայկական ԱԷԿ-ի անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում

2009 թվականի սեպտեմբերի 5-ին Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկը 45 օրով կանգնեցվել է ՊՆՎ աշխատանքներ կատարելու նպատակով: Միջոցառումը ներդրվել է ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի օգնության միջոցների հաշվին:

Ատոմային էներգետիկայի զարգացում

Հայկական ԱԷԿ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հարցում ներդրողների հետ քանակությունների վարում

2009 թվականի փետրվարի 11-ին հայտարարվել է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման ծրագրի իրականացման նպատակով կառավարող ընկերության ընտրության համար: Մրցույթում հաղթող է ճանաչվել «Worley Parsons» ընկերությունը, որի հետ 2009 թվականի մայիսի 29-ին ստորագրվել է համապատասխան ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը:

2009 թվականի հոկտեմբերի 27-ին ընդունվել է ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման մասին»:

2009 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունվել է կառավարության «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման նպատակով փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» թիվ 1458-Ն որոշումը: Համաձայն այդ որոշման նախատեսվում է ստեղծել համատեղ ձեռնարկություն ՌԳ «ՌՈՍԱՏՈՄ» պետական կորպորացիայի կողմից առաջադրված՝ «Ատոմատրոյէքսպորտ» ընկերության հետ:

Մեփական վերականգնվող էներգառեսուրսների առաջընթաց յուրացման խթանում

Մեղրի ՀԷԿ-ի շինարարության մեկնարկ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի հիդրոէներգետիկ նախագծի ուսումնասիրության շրջանակներում ՀՀ և ԻԻՀ սահմանային երթևեկության դյուրացման կանոնակարգը վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից:

2009 թվականի ապրիլի 14-ին ՀՀ նախագահի՝ ԻԻՀ կատարած այցի ընթացքում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ԻԻՀ էներգետիկայի նախարարության միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր՝ Մեղրի ՀԷԿ-ի կառուցման համար ներդրումների ոլորտում համագործակցության մասին: Ըստ այդմ՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ԻԻՀ էներգետիկայի նախարարությունը հայկական կողմին կներկայացնի իրանական ներդրող ընկերություններին՝ Մեղրի ՀԷԿ-ի շինարարությունն իրականացնելու համար: Միաժամանակ իրանական կողմը պատրաստակամություն է հայտնել գնել Մեղրի ՀԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիայի ողջ ծավալը:

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի միջոցներով բիոէթանոլի ստացման, արևային ֆոտովոլտայիկ էլեմենտների տարրերի արտադրության,

երկրաջերմային էներգիայի նոր աղբյուրների հետազոտման ուղղություններով հետազոտությունների իրականացում

2009 թվականի հունվարի 26-ի Հայաստանի Հանրապետության վարչապետի N34-Ա որոշմամբ պայմանավորված՝ բանակցությունների արդյունքում Համաշխարհային բանկի հետ 2009 թվականի փետրվարի 2-ին ստորագրվել է երկրաջերմային ծրագրերի «Գռիձոր» և «Կարկառ» կոչվող երկու հարթակներում ուսումնասիրություններ իրականացնելու վերաբերյալ «Բանակցությունների մասին համաձայնեցված արձանագրությունը»:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (ՀՎԷԷՀ), Համաշխարհային Բանկի (ՀԲ) և Համաշխարհային Բնապահպանական Հաստատության (ՀԲՀ) GEF TF056211 դրամաշնորհի օժանդակությամբ իրականացվել են՝ «Հայաստանում կենսաէթանոլի արտադրության և յուրացման ներուժի ու հեռանկարայնության գնահատում» և «Հայաստանում արդի արեգակնային ֆոտովոլտայիկ էներգետիկայի զարգացման օժանդակում» ծրագրերը:

Ընդերքի պահպանության, վերարտադրության, արդյունավետ և համալիր օգտագործման ապահովում

Ընդերքօգտագործման մասով օրենսդրական դաշտի կատարելագործում:

«ՀՀ ընդերքի մասին» նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում բազմակողմանի ուսումնասիրվել, քննարկվել և հնարավորինս հաշվի են առնվել ԵՄ TAIEX ծրագրի և ՀԲ փորձագետների կողմից կատարված առաջարկությունները՝ այդ թվում հարկային դաշտի վերաբերյալ:

«ՀՀ ընդերքի մասին» նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքների կատարման համար 2009 թվականի սեպտեմբերի 17-ին հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ինվեսթմենթ Լո Գրուպ» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացվել է օրենսգրքի նախագծի նախնական տարբերակը: Քննարկման արդյունքում նախագծի լրամշակված տարբերակը սահմանված կարգով կներկայացվի կառավարություն:

Ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքի տեղամասերի քարտեզագրման աշխատանքների իրականացում:

Կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 836 որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցներով իրականացվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը», որում ներառված է «ՀՀ տարածքում ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների

թաղման նպատակով ընդերքի տեղամասերի տեղագրական քարտեզի կազմման աշխատանքներ» ենթաժրագիրը:

Երկրաբանական ֆոնդի թվայնացման աշխատանքների իրականացում:

2009 թվականին թվայնացվել են ՀՀ Արագածոտնի, Վայոց ձորի, Տավուշի, Սյունիքի, Արարատի, Արմավիրի մարզերի և Երևանի պինդ օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանական և պաշարների բլոկավորման քարտեզները:

Ջրային տնտեսություն

2009 թվականի ընթացքում ջրային տնտեսության կառավարման բնագավառում ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Կայուն զարգացման և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղությունները:

2009 թվականին շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, հաշվառման համակարգի ներդրման ու կատարելագործման, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման, բյուջետային և վարկային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում 2009 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները՝

1) կնքված պայմանագրերի շրջանակներում ապահովվել է «Երևան Ջուր» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև նշված ընկերությունների մասով ապահովվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը.

2) իրականացվել է ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում KfW բանկի ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացը, ապահովվել է «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների բնականոն գործունեությունը.

3) ապահովվել է «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» ՓԲԸ-ների կառավարչի ընտրության մրցութային գործընթացը, որի արդյունքները հաստատվել են կառավարության 2009 թվականի հունիսի 11-ի N 661-Ն որոշմամբ: Մրցույթի հաղթող է ճանաչվել գերմանական «Էմ Վի Վի Դեկոն ՋԻ Էմ քի Էյջ» (MVV decon GmbH), «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի» (MVV Energie AG) և հայկական «Էյ-ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ների կոնսորցիումը:

4) Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային համաձայնագրի շրջանակներում իրականացվել են համապատասխան շինարարական աշխատանքներ: Մեկնարկել և շարունակվել են ջրամատակարարման համակարգերի բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքները 9 քաղաքներում և 40 գյուղական համայնքներում: Կառուցվել են 280 կմ ընդհանուր երկարությամբ նոր ջրագծեր:

5) մեկնարկել է «Արփա-Սևան» թունելի վթարային հատվածների անհապաղ վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսված Աբու-Դաբի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագիրը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների գնման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում ընտրվել է համապատասխան խորհրդատվական կազմակերպություն, որը ներկայացրել է նախագծանախահաշվային փաստաթղթերը, աշխատանքներ են իրականացվել ռուսական լրացուցիչ անկախ փորձաքննություն իրականացնող կազմակերպություն ներգրավելու ուղղությամբ: 2009 թվականի ընթացքում «Արփա-Սևան» թունելի վերականգնման նպատակով կատարվել են 818.7 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

6) Ֆրանսիայի կառավարությունից ստացվող վարկի շրջանակներում իրականացվող Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի (այդ թվում՝ «Աերացիա» կայանի վերագործարկման) բարելավման ծրագրի իրագործելիության ուսումնասիրության, Երևան քաղաքի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրի աջակցման ծառայությունների մատուցման նպատակով մրցութային կարգով ընտրվել է միջազգային խորհրդատվական կազմակերպություն (Սոգրեա կոնսուլտանս ՍԱՍ), որն իր աշխատանքներն արդեն իսկ սկսել է:

7) Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD) ֆինանսավորմամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում անց են կացվել և սահմանված կարգով հաստատվել են Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքներում կոյուղացանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման մրցույթները: Շինարարական աշխատանքներն ընթացքում են:

8) USAID-ի աջակցությամբ մշակվել են Հայաստանի Հանրապետության ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի երկարաժամկետ ֆինանսավորման իրատեսական ռազմավարությունները և ֆինանսավորման մեխանիզմները, Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում շրջանառու հիմնադրամի ստեղծման հայեցակարգը և շրջանառու հիմնադրամի ստեղծման բիզնես պլանը.

9) ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 44 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում, և չնայած առկա որոշակի խնդիրներին՝ ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ.

10) համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժ: Միայն հավաքագրումների գծով 2009 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 16.85 մլրդ դրամ՝ 2008 թվականի 15.93 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել շուրջ 920 մլն դրամ: Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 13.6 մլրդ դրամ՝ 2008 թվականի 12.5 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 1.1 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.22 մլրդ դրամ՝ 2008 թվականի 3.44 մլրդ դրամի դիմաց կամ պակաս է գանձվել շուրջ 0.22 մլրդ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է մատակարարված ջրի քանակի նվազմամբ: Ընդ որում, ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2009 թվականին կազմել է 87.4%՝ 2008 թվականի 67.6%-ի դիմաց, կամ գանձման ցուցանիշն ավել է 19.8 տոկոսային կետով.

11) էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգում իրականացված ներդրումային և կազմակերպչական միջոցառումների արդյունքում հնարավորություն է ստեղծվել ավելի քիչ էլեկտրաէներգիա ծախսել՝ անցած տարիների համեմատությամբ:

12) 2009 թվականի հունվարի 1-ից համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների մասով ավարտվել է բնապահպանական վճարների, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի և շահութահարկի վճարման գծով դրամարկղային մեթոդի ժամկետի երկարացման մասին օրենքների արտոնությունները: Համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 5.47 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ, որը 2008 թվականի համեմատ ավել է շուրջ 910 մլն դրամով: Ընդ որում, եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև ՀՀ պետական բյուջե է վճարել շուրջ 2.27 մլրդ դրամ, այդ թվում՝ մարել է Երևանի

ջրամատակարարման և ջրահեռացման վարկային առաջին ծրագրի վարկից և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսներից 476.3 մլն դրամ.

13) «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-րի սպասարկման տարածքներում տեղի է ունեցել ջրամատակարարման տևողության ավելացում.

14) 2009 թվականին Սևանա լճից (առանց Մարտունու տարածաշրջանի պոմպակայաններով իրականացված ջրառը հաշվի առնելու) բաց է թողնվել 125.1 մլն մ³ ջուր: Սևանա լիճ է տեղափոխվել 203.05 մլն մ³ ջուր, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 12.39 մլն մ³-ով: 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1899.25 մ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 40 սանտիմետրով.

15) շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը, կատարվել են ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ ապահովվել է նաև ջրաչափական սարքերի տեղադրման գործընթացը, որոնք 2008 թվականի համեմատ ավել են 52.4 հազար հատով.

16) աջակցություն է ցուցաբերվել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի ոռոգման ոլորտին ուղղված աշխատանքների իրականացմանը.

17) Երևան, Վանաձոր, Գյումրի, Գորիս, Արթիկ, Էջմիածին, Թալին, Վեդի, Մասիս, Սևան, Արովյան, Բերդ, Չարենցավան քաղաքներում և 90-ից ավելի գյուղերում ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերով, այդ թվում՝ վարկային, իրականացվել են խմելու ջրի մատակարարման բարելավման աշխատանքներ: Խմելու ջրի մատակարարման ոլորտում իրականացված ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում 2009 թվականի ընթացքում ջրամատակարարման ապահովման համար շինարարական աշխատանքներ են իրականացվել այնպիսի գյուղերում, որոնք տարիների ընթացքում ընդհանրապես ջուր չեն ունեցել: Խմելու ջրի ոլորտում 2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքում ապահովվել է շուրջ 350 կմ-ից ավել ջրագծերի, այդ թվում՝ ներքին ցանցերի փոխարինման, 100-ից ավել օրվա կարգավորիչ ջրամբարների կառուցման և նորոգման, 50-ից ավել պոմպակայանների կառուցման և նորոգման, 5000-ից ավել անհատական տնային միացումների իրականացման և այլ աշխատանքներ.

18) ոռոգման ոլորտում 2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքում ապահովվել է շուրջ 50 կմ-ից ավել ջրագծերի, այդ թվում՝ ներքին ցանցերի փոխարինման, 20-ից ավել ջրամբարների նորոգման, 50-ից ավել պոմպակայանների

կառուցման ու նորոգման և այլ աշխատանքներ: Մեկնարկել է ոռոգման համակարգերի հրատապ վերականգնման վարկային ծրագիրը, իրականացվել են հիմնական մրցույթները և Թալինի և Արմավիրի մայր ջրանցքներում սկսվել են համապատասխան շինարարական աշխատանքները:

19) աշխատանքներ են իրականացվել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2009 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է անվտանգ շահագործում, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողություն, բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

Տրանսպորտ և կապ

2009 թվականի գերակա խնդիրը՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտը կարգավորող իրավական դաշտի ստեղծումն է. այդ նպատակով մշակվել են 4 իրավական ակտերի նախագծեր: Բացի այդ, զգալի աշխատանքներ են տարվել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես, ապահովվել է նաև Հայաստանի և Երևանի ճանապարհային երթևեկության անվտանգության ռազմավարության ընդունումը և հնգամյա գործողությունների պլանի հաստատումը:

Ճանապարհային տնտեսության բնագավառում 2009 թվականին ընդհանուր առմամբ վերանորոգվել են 411.06 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ, այդ թվում՝ 112 կմ պետական բյուջեի, իսկ 299.06 կմ՝ ներգրավված վարկային միջոցների հաշվին: Մասնավորապես՝ 2009 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել շուրջ 112 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների վրա, ձմեռային և ընթացիկ պահպանություն է իրականացվել շուրջ 3393 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին, սպասարկվել են 3 ավտոճանապարհային թունելներ և 5 խոշոր կամուրջներ, շահագործման են հանձնվել 85 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ:

Հանրապետությունում պետական ավտոտրանսպորտային կազմակերպությունների մասնավորեցման և այս ոլորտում մանր ու միջին բիզնեսով զբաղվող ընկերությունների աճի պայմաններում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում կարևորվել է կարգավորիչ և

վերահսկողական գործառույթը՝ օրենսդրական և նորմատիվային համապատասխան դաշտի ստեղծումը, համապատասխան մրցույթների կազմակերպումը և օրենքով սահմանված կարգով պետական վերահսկողության իրականացումը:

Մշակվել են 2009 թվականի համար թվով 273 միջնարգային երթուղիների սխեմաները և 29 միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների սխեմաներն ու չվացուցակները:

Մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել Երևան քաղաքի տարածքում միջնարգային ավտոբուսային (միկրոավտոբուսային) կանոնավոր փոխադրումների երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների շարժման ուղեգծերի, կայանման վայրերի հստակեցման և ազգաբնակչության ուղևորահոսքի տրանսպորտային պահանջարկի բավարարման խնդիրներն ուսումնասիրելու և Երևան քաղաքի տրանսպորտային բեռնափամանն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման ուղղությամբ:

Կապի և էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում 2009 թվականի ընթացքում ապահովվել է հանրապետության տնտեսության և բնակչության պահանջարկը: Մեծ ուշադրություն է դարձվել տեղեկատվայնացման ոլորտին: Հեռուստատեսության և ռադիոյի հեռարձակման ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են հեռարձակվող ալիքների ավելացմանը, երկրի բնակչության համար հեռուստաալիքների առավելագույն հասանելիության ապահովմանը, սփռման գործող ցանցի արդիականացմանը: Բարելավվել և ընդլայնվել է ինչպես հայկական, այնպես էլ՝ արտասահմանյան հեռուստառադիոծրագրերի հեռարձակումը:

Բջջային կապի ծառայությունների շուկայի ազատականացման արդյունքում երրորդ օպերատորի մուտքն իր հերթին ապահովեց մատուցվող ծառայությունների որակի բարելավում, զգալիորեն նվազեցրեց սակագների մակարդակը և ընդլայնեց այդ ծառայություններից օգտվողների քանակը:

Մշակվել է «Էլեկտրոնային հաղորդակցության և փոստային կապի ոլորտում շուկայական հարաբերությունների կարգավորմանն ուղղված հայեցակարգի մասին» կառավարության արձանագրային որոշման նախագիծը, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (հոդված 53), «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Մշակվել է նաև «Ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման աշխարհագրության ընդլայնմանը, բնակչության լայն շերտերի համար հասանելիության ապահովմանը, ինչպես նաև շուկայում առողջ մրցակցության ապահովմանն ուղղված հայեցակարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:

Արդիականացվել է Վայոց Ձորի մարզի հեռուստահաղորդիչ ցանցը, որի արդյունքում մի շարք համայնքներում բարելավվել է հեռարձակման որակը: Կառուցվել է նոր երեք ծրագրային հեռուստակայան:

2009 թվականին զգալի աշխատանք է կատարվել տրանսպորտի և կապի ոլորտներում տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ ու համակարգված համագործակցության կազմակերպման ուղղությամբ: Մասնավորապես՝ նախապատրաստվել են միջազգային համաձայնագրերի հետևյալ նախագծերը՝

- «Երկաթուղիների համագործակցության կազմակերպության դրույթ».

- «Միջազգային կարևոր համակցված տրանսպորտային ուղիների վերաբերյալ եվրոպական համաձայնագիր».

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մոլդովայի Հանրապետության կառավարության միջև 1996 թվականին Բիշնևում ստորագրված միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին» արձանագրություն.

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև Միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» համաձայնագիր.

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ավստրիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային բեռնափոխադրումների մասին» միջկառավարական համաձայնագիր.

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև ավտոմոբիլային տրանսպորտի մասին» համաձայնագիր.

- Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև կապի և տեղեկատվային ցանցի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի նախագիծ:

Նախապատրաստվել են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստի և Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստի արձանագրությունների կատարման եռամսյակային հաշվետվությունները:

Կազմվել է հաշվետու տարում կայացած հայ-ռուսական, հայ-իրանական, հայ-սիրիական և հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովների տրանսպորտի և կապի բնագավառների կետերին առընչվող հարցերը, նախապատրաստել նշված հարցերի վերաբերյալ տեղեկանքներ:

Մասնակցություն է ցուցաբերվել «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու նախագծի իրականացման աշխատանքներին, այդ թվում նաև նախագծի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման բանակցություններին:

Համակարգվել է Հայաստան-Իրան ուղիղ երկաթուղային կապ ստեղծելու նախագծի բանակցային փուլը իրանական և ռուսական կողմերի հետ:

Նախապատրաստվել է ՀՀ - ԵՄ Արևելյան համագործակցության ծրագրի տրանսպորտի և կապի բնագավառների կետերը:

Մասնակցություն է ցուցաբերվել Ասիական զարգացման բանկի հետ բանակցային գործընթացներին:

Նախապատրաստվել է «Թբիլիսի-Երևան երկաթուղային գծի վերականգնում» նախագծի համակարգումը Հայաստանի Հանրապետությունում:

Պետական եկամուտների քաղաքականություն

2009 թվականին մշակվել ու շահագրգիռ գերատեսչությունների, գործարար հանրության շահերը ներկայացնող կառույցների, ինչպես նաև Արժույթի միջազգային հիմնադրամի համապատասխան մասնագետների հետ քննարկվել են ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ և անցումային մասերի նախագծերը:

Մշակվել և ընդունվել են հարկ վճարողների մոտ հարկային մարմնի ներկայացուցիչների նշանակման, ընթացիկ հարկային հսկողության իրականացման, ինչպես նաև «Ակցիզային պահեստ» ռեժիմի կիրառության հետ կապված հարցերը կանոնակարգող օրենսդրական ակտեր (2009 թվականի հոկտեմբերի 29, ՀՕ-200-Ն, ՀՕ-202-Ն):

Մշակվել և 2009 թվականի մայիսի 29-ին ընդունվել է «ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1779-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության թիվ 636-Ն որոշումը, որով մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակը կրճատվել է համապատասխանաբար ներմուծման ժամանակ՝ մինչև 3 և արտահանման ժամանակ՝ մինչև 2 փաստաթուղթ:

ՀՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովների հետ քննարկվել և լրամշակվել են «Անշարժ գույքի հարկի մասին» և «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Մշակվել և 2009 թվականի մարտի 12-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պատվիրակելու կարգը հաստատելու մասին» թիվ 268-Ն որոշումը:

2009 թվականի ապրիլի 21-24-ը Լյուբլյանա քաղաքում կայացել են բանակցություններ «ՀՀ կառավարության և Սլովենիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի նախագծի շուրջ, և կոնվենցիան նախաստորագրվել է:

2009 թվականի մայիսի 13-21-ը Դուբլին քաղաքում կայացել է «ՀՀ կառավարության և Իռլանդիայի կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրի նախագծի շուրջ բանակցությունների երկրորդ փուլը, և համաձայնագիրը նախաստորագրվել է:

2009 թվականի նոյեմբերի 3-4-ը Քուվեյթում կայացել են բանակցություններ «ՀՀ կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայի նախագծի շուրջ, և կոնվենցիան ստորագրվել է:

2009 թվականի ընթացքում մշակվել է «ՀՀ և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման» կարգ, որն ընդունվել է կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 1112-Ն որոշմամբ:

Բյուջեների կատարման մեթոդաբանության ոլորտ

Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցները շրջանառվում են ՀՀ առևտրային բանկերի միջոցով: Սակայն պետական ծախսերի կառավարման տեսակետից առևտրային բանկերի միջոցով այդ միջոցների շրջանառումը անարդյունավետ է, քանզի մի կողմից կառավարությունը բանկային համակարգից ներգրավում է փոխառու միջոցներ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար՝ դրա համար վճարելով տոկոսներ, մյուս կողմից տարեկան կտրվածքով միջինը մոտ 28.0 միլիոն դոլարին համարժեք գումար մշտապես գտնվում է առևտրային բանկերի տնօրինության տակ՝ հիմնականում անվճար: Այս երևույթն ըստ էության հանդիսանում է կառավարության կողմից առևտրային բանկային համակարգի անուղղակի վարկավորում, որն իր համարժեք արտացոլումը չի գտնում կառավարության և բանկային համակարգի հետ հարաբերություններում:

Մյուս կողմից ԾԻԳ-երի հաշիվներն առևտրային բանկերի միջոցով շրջանառելու պարագայում բացակայում է այդ միջոցների փոփոխության վերաբերյալ օպերատիվ տվյալները, ինչպես նաև չի գործում վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կնքված պայմանագրերի՝ Գանձապետարանում գրանցման ընթացակարգը, ինչն էլ հնարավորություն չի տալիս գնահատել ստանձնված ֆինանսական պարտավորությունները:

Ավելին, լինում են դեպքեր, երբ հաստատված վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ԾԻԳ-երի կողմից գերազանցվում են ոչ միայն տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված վարկային և դրամաշնորհային միջոցները, այլև կառավարության համաֆինանսավորման մասով ստանձնվում են պարտավորություններ, որոնք նախատեսված չեն տվյալ տարվա պետական բյուջեում:

Վերոգրյալով պայմանավորված նպատակահարմար է համարվել այդ միջոցները շրջանառել ՀՀ գանձապետական համակարգի միջոցով և ՀՀ վարչապետի 2009 թվականի փետրվարի 13-ի N 02/23.12/939-09 հանձնարարականով սահմանվել է գանձապետական համակարգի գործառույթների բարեփոխման միջոցառումների առաջարկություն-ժամանակացույց:

Ժամանակացույցի առաջին միջոցառումն իրականացնելու նպատակով Համաշխարհային բանկի հետ կատարվել է համակարգի նախնական գնահատում, որի ընթացքում մանրամասն ուսումնասիրվել են ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար բացվող հատուկ հաշիվների նկատմամբ ՀԲ-ի պահանջները, և արդյունքում դրանց ապահովման համար ՀՀ գանձապետական համակարգի գործառույթներն ու կարողությունները գնահատվել են բավարար:

Հարցը քննարկվել է նաև ՀՀ կենտրոնական բանկի հետ, և արդյունքում միասնական գանձապետական հաշվով ֆինանսական միջոցների շրջանառման հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով վերջինիս և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է համաձայնագիր:

Միաժամանակ 2009 թվականին մշակվել և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 324-Ն որոշմամբ հաստատվել են վարկային և դրամաշնորհային միջոցների՝ ՀՀ գանձապետական համակարգով շրջանառելու գործընթացի հետ կապված հիմնական հարաբերությունները:

2009 թվականին հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման բարեփոխումների շրջանակներում մշակվել են նշված ոլորտը կարգավորող օրենքի և ենթաօրենսդրական ակտերի նախագծերը:

Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման շրջանակներում մշակվել է ԿՖԿՏՀ տեխնիկական առաջադրանքը, համակարգի իրականացման ռազմավարությունը և ֆինանսական նախահաշիվը:

Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մամիների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում մշակվել է

«Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությունը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծ:

Եվրահանձնաժողովի բյուջետային դեպարտամենտի և ՀԲ-ի համապատասխան առաջարկությունների հիման վրա լրամշակվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Եվրամիության ՄԻԳՍԱ/SIGMA ծրագրի փորձագետների աջակցությամբ մշակվել է «Պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարությունը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար ֆիդուցիար հսկողության փորձնական ներդրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հաստատվել է խորհրդատավական ծառայությունների գնման տեխնիկական տեխնիկական առաջադրանքը, և կազմակերպվել է մրցույթի գործընթաց:

«Պետական ֆինանսական կառավարման և կորպորատիվ հաշվապահական հաշվառման և աուդիտի ծրագիր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀԲ-ի հետ քննարկվել և կազմվել է ծրագրի գնումների պլանը:

2009 թվականին մշակվել է ծրագրային ապահովման նոր տեխնիկական առաջադրանքը՝ նպատակ ունենալով ապահովել գանձապետարանում վարվող հաշիվներից վճարումների իրականացումը և հաշիվների վերաբերյալ տեղեկատվության ստացումն ու տրամադրումը էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև մեկ միասնական համակարգում ինտեգրել բյուջետավորման և բյուջեների կատարման համար օգտագործվող ծրագրային ապահովումը՝ հնարավորություն ընձեռելով օգտվելու տվյալների բազայի առավելություններից:

Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման ոլորտ

Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման ոլորտում 2009 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարության» նախագիծը, որով նկարագրվում են գնումների համակարգում առկա հիմնախնդիրները, սահմանվում են ՀՀ կառավարության կողմից գնումների համակարգում իրականացվելիք բարեփոխումների շրջանակը և հիմնական նպատակները, դրանց իրականացման կարգը և բարեփոխումների արդյունքների գնահատման հիմնական ցուցանիշները:

Գնումների համակարգի կատարելագործման շրջանակներում ՀԲ-ի փորձագետների հետ համատեղ կազմվել և հրապարակվել է Երկրի գնումների համակարգի գնահատման հաշվետվությունը, որով արված առաջարկները դիտարկվում են գնումների համակարգի

բարեփոխումների ռազմավարության հիմնական դրույթներից մեկը: Գնահատումն իրականացվել է հինգ հիմնական ուղղություններով՝

- իրավական համակարգ.
- ինստիտուցիոնալ և վարչական կարողություններ.
- իրավակիրառական պրակտիկա.
- կոռուպցիոն ռիսկեր.
- էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման բարեփոխումներ:

«Գնումների համակարգի բարեփոխումների» ռազմավարությամբ նախատեսված՝ կառավարության որոշմամբ կարգավորման ենթակա միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով մշակվել և կառավարության կողմից հաստատվել են գնումների բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման ու մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության նոր կարգերը:

«Գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարության», ԵՄ և ՀԲ փորձագետների կողմից կազմված՝ գնումների համակարգի գնահատման հաշվետվությունների հիման վրա մշակվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում են գնումների գործող համակարգի նշանակալի փոփոխություններ:

Շարունակվել է ԱՀԿ-ի գնումների համաձայնագրին անդամակցելու գործընթացը: Այս կապակցությամբ կազմվել և ԱՀԿ քարտուղարության պետական գնումների կոմիտեի նիստում ներկայացվել է անդամացության նախնական հայտը:

Էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրման շրջանակներում համապատասխան ծրագրային ապահովման գնման նպատակով նախաձեռնվել է մրցույթի գործընթաց, որի արդյունքները նախատեսվում է ամփոփել 2010 թվականին:

Գնման գործընթացների հրապարակայնության աստիճանի բարձրացման նպատակով շահագործման է հանձնվել գնումների պաշտոնական ինտերնետային կայքի անգլերեն բաժինը:

Գնումների հրապարակայնության ապահովման նպատակով մրցույթների հայտարարությունների վերաբերյալ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվել են գովազդային հայտարարություններ և հաղորդումներ:

Գնումների գործի համակարգման պատասխանատուների վերապատրաստման նպատակով մշակվել են ուսումնական ձեռնարկներ, և թվով 351 մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ¹

2009 թվականը ՀՀ տնտեսության համար բավական դժվարին տարի էր, ինչը պայմանավորված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ Հայաստանի տնտեսության վրա թողած բացասական ազդեցությամբ: 2009 թվականի փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տարվա առաջին կեսին արձանագրվել է մակրոտնտեսական իրավիճակի վատթարացում, իսկ երկրորդ կիսամյակից արդեն իսկ նկատվել է տնտեսության անկման տեմպերի նվազում՝ նախանշելով տնտեսությունում գործարար ակտիվության վերականգնման գործընթացը: Հարկ է նաև նշել, որ գործարար ակտիվության վերականգնման գործընթացում զգալի է եղել կառավարության հակաճգնաճամային ակտիվ գործողությունների դերակատարումը:

Վերջին 15 տարիների անընդմեջ՝ միջինը 8.8%, տնտեսության բարձր տեմպերով վերելքից հետո, 2009 թվականին գրանցվել է 14.4% տնտեսական անկում, որն իր վրա է կրել հիմնականում իրական հատվածը: Տնտեսական անկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվեց 2009 թվականի հուլիսին՝ 18.5%, այնուհետև, ինչպես արդեն նշվել է, այն աստիճանաբար նվազում արձանագրեց: Նախորդ տարվա համեմատ անկում է արձանագրվել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության նվազում, հանրապետությունում աճել է գործազրկության պաշտոնական մակարդակը:

Տնտեսության անբարենպաստ զարգացումների արդյունքում 2009 թվականին նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների նվազում, ընդ որում՝ կրճատվել է գրեթե բոլոր հարկատեսակների և տուրքերի հավաքագրման ցուցանիշը: Այնուհանդերձ տարվա արդյունքներով հարկաբյուջետային քաղաքականությունը եղել է խիստ ընդլայնող՝ նպատակ ունենալով պահանջարկի ընդլայնման միջոցով հակազդել տնտեսության ակտիվության անկմանը: Ծգնաժամի հետևանքները մեղմելու նպատակով տարվա ընթացքում էլ ավելի կոորդինացվեցին իրականացվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները՝ դրանք դարձնելով պահանջարկի տեսանկյունից ընդլայնողական:

Համախառն պահանջարկ: 2009 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է 2.6%-ով: Վերջնական սպառման նվազումը հիմնականում պայմանավորվել է նախորդ տարվանից սկսված տնտեսական ճգնաժամի հետևանքով բնակչության իրական եկամուտների զգալի նվազմամբ: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2009 թվականին

¹ Ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-դեկտեմբերին» զեկույցում հրատարակած ցուցանիշները:

կազմել են համապատասխանաբար 15.1 և 84.9 %, ընդ որում իրական արտահայտությամբ մասնավոր սպառումը նախորդ տարվա համեմատ կրճատվել է 2.3%-ով, իսկ պետական սպառումը՝ 4.8%-ով:

Համախառն ներդրումները (կամ ներքին իրական ակտիվներում ներդրումները) կրճատվել են 34.5%-ով, հիմնականում մասնավոր ներդրումների կրճատման հաշվին: Վերջինիս իրական նվազումը կազմել է 42.1%, ինչն էլ հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: Այսպես՝ վերջին տարիներին շինարարության ճյուղում իրականացվող մասնավոր ներդրումների հիմնական մասն ուղղվել է բնակարանային շինարարությանը, որի համար զգալի աղբյուր են հանդիսացել նաև կապիտալ և ընթացիկ տրանսֆերտները: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2009 թվականի ընթացքում զգալիորեն կրճատվել են մասնավոր և կապիտալ տրանսֆերտները՝ համապատասխանաբար 31 և 40.2 %-ներով՝ հանգեցնելով կապիտալ շինարարություն ներհոսող միջոցների, հետևաբար՝ նաև մասնավոր ներդրումների կրճատմանը: Վերջինս իր հերթին հանգեցրեց շինարարության ճյուղում զգալի տնտեսական անկման: Փոխարենը կապիտալ ներդրումներում 16.7%-ով աճել են պետական ներդրումները, որոնց տեսակարար կշիռը ներդրումներում կազմել է 23.2%:


2009 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները նվազել են 11.5%-ով՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի և նախորդ տարվա հոկտեմբեր ամսից համաշխարհային շուկաներում արձանագրված հումքային ապրանքների գների կտրուկ անկմամբ: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ նվազել է 19.5%-ով:

Համախառն առաջարկ: 2009 թվականին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 3165.5 մլրդ դրամ, ընդ որում, իրական ՀՆԱ-ն նվազել է 14.4%-ով, իսկ դեֆլյատորը կազմել է 101.5%: Իրական աճի ցուցանիշը ցածր է նախորդ տարվա ցուցանիշից 21.2 տոկոսային կետով, իսկ դեֆլյատորը՝ 6.9 տոկոսային կետով:

2009 թվականի ընթացքում ծառայությունների ոլորտը եղել է տնտեսական աճին դրական նպաստում ունեցող միակ ոլորտը²: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 0.3 տոկոսային կետը, իսկ ծառայությունների իրական աճը կազմել է 0.7%: Տնտեսության մյուս բոլոր ճյուղերը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված, նվազել են. շինարարությունը նվազել է 42.3%-ով, որի հաշվին 2009 թվականի տնտեսական աճը նվազել է 11.4 տոկոսային կետով, արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) նվազել է 7.6%-ով և 14.4% տնտեսական

² Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

անկմանը նպաստել 1.0 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսությունը նվազել է 0.1%-ով և անկման վրա գրեթե ազդեցություն չի ունեցել: Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը:



Գծապատկեր 1. 2009 թվականի ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափը, տոկոսային կետ

Աղյուսակ 1. 2004-2009 թվականների իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ

	2004	2005	2006	2007	2008	2009
Համախառն ներքին արդյունք	110.5	113.9	113.2	113.7	106.8	85.6
Արդյունաբերություն	101.8	105.6	97.5	102.8	101.4	92.4
Գյուղատնտեսություն	114.6	111.2	100.5	110.4	102.4	99.9
Շինարարություն	115.4	127.9	137.7	118.2	107.2	57.7
Ծառայություններ	113.7	115.0	116.0	112.5	108.5	100.7
Ջուտ անուղղակի հարկեր	102.4	112.4	114.9	135.9	116.7	79.5

Արդյունաբերություն: 2009 թվականին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 7.8% նվազում՝ 2008 թվականի 1.7% աճի դիմաց³: Արդյունաբերական


³ Այսուհետ՝ ցուցանիշները ներկայացված են տնտեսության ճյուղերում ստեղծված համախառն արտադրանքի ծավալներով:

արտադրանքի նվազումը պայմանավորված էր մշակող արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի արտադրության և բաշխման ծավալների համապատասխանաբար 8.7 և 13.3 % անկմամբ: Հանքագործական արդյունաբերությունը, պայմանավորված շուկայի անբարենպաստ դրսևորումներով, զգալի դժվարություններ է ունեցել տարվա առաջին ամիսներին: Արտահանման ուղղվածության ճյուղերի և Հայաստանի համար համակարգաստեղծ լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունների՝ կառավարության վարկավորման քաղաքականությունը, զուգորդվելով համաշխարհային շուկայում իրավիճակի բարելավման հետ՝ ի դեմս մետաղների գների աճի, տվեց իր արդյունքները: Տարեվերջին հանքագործական արդյունաբերությունում զգալի աշխուժություն նկատվեց, և տարին ամփոփվեց այս ոլորտում թողարկված արտադրանքի 7.6% իրական աճի ցուցանիշով: Պետք է արձանագրել, որ նշված օժանդակությունը և ճյուղի աճը նպաստել են նաև գործազրկության նվազմանը, խթանել զբաղվածությունը և հիմք ստեղծել ճյուղի հետագա զարգացման համար: Չնայած մշակող արդյունաբերության ոլորտում արձանագրվել է անկում, նրա առանձին ենթաճյուղերում գրանցվել է թողարկման ծավալների աճ, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերությունում՝ 20.9%, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունում՝ 17.6%, ռետինե և պլաստմասայե արտադրատեսակների արտադրությունում՝ 16.7%:

Գյուղատնտեսություն: 2009 թվականի ընթացքում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության և անտառային տնտեսության համախառն արտադրանքի ծավալի 0.1% նվազում: Ընդ որում, գյուղատնտեսության անկումը պայմանավորվել է բուսաբուծության 0.7% և անտառային տնտեսության 15.5%-ով նվազումներով: Անասնաբուծության ճյուղում համախառն արտադրանքի 1.0% աճ է արձանագրվել:

Շինարարություն: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները 2009 թվականին կազմել են շուրջ 575.7 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ նվազել 36.4%-ով: Իրականացված կապիտալ շինարարության (ըստ ֆինանսավորման աղբյուրների) կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 32.1%՝ նվազելով 70.5%-ով: Կազմակերպությունների միջոցները կազմել են 33.7%, որոնց հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 4.3%-ով: Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարության ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 17.5%-ով՝ կազմելով մոտ 77.2 մլրդ դրամ:

Շինարարության հիմնական միջոցները (ըստ տնտեսության ճյուղերի) շարունակում են ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, որին բաժին է ընկել կատարված շինարարության ծավալների 33.6%-ը, որը, սակայն, նվազել է նախորդ տարվա նկատմամբ 27.4 տոկոսային կետով: Կապիտալ շինարարության մեջ աճել են էլեկտրաէներգիայի, ջրի, գազի արտադրության և բաշխման, ինչպես նաև տրանսպորտի և կապի տեսակարար կշիռները՝ հիմք հանդիսանալով շինարարության՝ ըստ տնտեսության ճյուղերի բազմատեսակավորման և հետագայում նշված ենթաճյուղերի հաշվին ավելացված արժեքների աճի համար (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի

Ծառայություններ և առևտուր: 2009 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը 2008 թվականի նկատմամբ աճել է 1.3%-ով: Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել կապի (21.4%), տրանսպորտի (21.4%) և ֆինանսական գործունեության (20.3%) ծառայությունները, ինչպես նաև առողջապահության (6.7%), կրթության (5.6%) և հյուրանոցային, ռեստորանային (4.2%) ծառայությունները:

2009 թվականի ընթացքում առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 1600.4 մլրդ դրամ, որը 2008 թվականի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, նվազել է 4.0%-ով: Ընդ որում, մանրածախ առևտուրն աճել է 1.0%-ով, մեծածախ և ավտոմեքենաների առևտուրը՝ նվազել համապատասխանաբար 7.9 և 38.2 %-ով:

Տրանսպորտ և կապ: 2009 թվականի ընթացքում հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2008 թվականի նկատմամբ աճել է 3.8%-ով: Բեռնափոխադրումների ծավալն ըստ օդային և մայրուղային-խողովակաշարային տրանսպորտի տեսակների նվազել է համապատասխանաբար 22.2 և 25.7 %-ով: Ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 11.3 և 6.8 %-ով՝ հիմնականում պայմանավորված գունավոր և սև մետաղների ներհանրապետական բեռնափոխադրումների աճով:

2009 թվականի ընթացքում կապի ծառայություններից ստացված հասույթը համադրելի գներով 2008 թվականի նկատմամբ աճել է 2.8%-ով: Կապի ոլորտում աճը հիմնականում տեղի է ունեցել հեռահաղորդակցության ծառայությունների (բաժանորդային վարձեր, միանվագ ծառայություններ, ինտերնետ հասանելիության ծառայություններ) աճի հաշվին, որը կազմել է 3.7%:

Գներ և սակագներ: 2009 թվականի տարեվերջին միջին գնաճը կազմել է 3.4%, որին որոշակիորեն նպաստել են որոշ ներմուծվող սպառողական ապրանքների համաշխարհային գների աճը, մարտի սկզբին դրամի կտրուկ արժեզրկմամբ պայմանավորված՝ ներմուծված ապրանքների գների ճշգրտումը և ապրիլից հիմնական կոմունալ ծառայությունների սակագների բարձրացումը: Միջին գնաճի նշված ցուցանիշը պայմանավորված էր պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքի և ծխախոտի) գների 0.7% (նպաստումը գնաճին՝ -0.4 տոկոսային կետ) անկմամբ, ոչ պարենային ապրանքների գների՝ 4.7% (նպաստումը գնաճին՝ 0.8 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների՝ 10.4% (նպաստումը գնաճին՝ 3.1 տոկոսային կետ) աճով: Չնայած տարեկան միջին գնաճի ցածր ցուցանիշին՝ 12-ամսյա գնաճը կազմել է 6.5%, որին հիմնականում նպաստել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գյուղատնտեսական ապրանքների (լոլիկ, վարունգ, կանաչ պղպեղ, սմբուկ) գների սեզոնային աճը:


2009 թվականի հունվար-դեկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.5%, ինչը 0.1 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը (0.4%):

Աշխատանքի շուկա: 2009 թվականին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.6 տոկոսային կետով և կազմել 6.9% (84.5 հազ. մարդ), որը պայմանավորվել է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով համախառն պահանջարկի, ինչպես նաև աշխատուժի նկատմամբ պահանջարկի զգալի նվազմամբ:

2009 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2008 թվականին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 9.7%-ով, ընդ որում՝ բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 15.2%-ով: Բյուջետային հատվածի աշխատավարձերի աճը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ճգնաժամի հետևանքով եկամուտների կտրուկ անկման պարագայում կառավարությունը չգնաց սոցիալական բնույթի ծախսերի՝ այդ թվում աշխատավարձերի կրճատմանը՝ նպատակ հետապնդելով մի կողմից ընդլայնել համախառն պահանջարկը, իսկ մյուս կողմից՝ մեղմել ճգնաժամի արդյունքում առաջացող սոցիալական լարվածությունը: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 84664 դրամ և 126464 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 101800 դրամ:

2009 թվականին իրական աշխատավարձի աճը 2008 թվականի համեմատ կազմել է 6.1%: Աշխատանքի արտադրողականությունն իրական արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ նվազել է 13.2%-ով, որը պայմանավորված էր ՀՆԱ-ի աճի տեմպերի (14.4%՝ հիմնական գներով) համեմատ զբաղվածության համեմատաբար փոքր կրճատմամբ (1.4%):

Արտաքին հատված: Տնտեսության արտաքին հատվածում 2009 թվականի ընթացքում պահպանվել են համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվել են Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները, ինչպես նաև՝ հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը: 2009 թվականի ՀՆԱ-ի անկման բարձր տեմպերի պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում ավելացել է և կազմել 15.4%:



Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)

2009 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (տե՛ս գծապատկեր 3) կազմել է 2094.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 569 մլն ԱՄՆ դոլարով կամ 21.3%-ով և կազմելով ՀՆԱ-ի 24%-ը՝ նախորդ տարվա 22.4%-ի դիմաց:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը (միջին հակումը) 2009 թվականին կազմել է 15.2% (2008 թվականին՝ 14.7%): Ապրանքների և ծառայությունների ներմուծումը կազմել է 2009 թվականի ՀՆԱ-ի 42.5%-ը՝ նախորդ տարվա 39.8%-ի դիմաց:

*Արտաքին ապրանքաշրջանառությունը*⁴ 2009 թվականի արդյունքներով կազմել է 4001.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 27%-ով: Հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների կրճատում. արտահանումը նվազել է 34%-ով՝ կազմելով 697.8 մլն դոլար, իսկ ներմուծումը նվազել է 25.3%-ով և կազմել 3304.2 մլն դոլար:


Ներմուծման նվազումը, որը վերջին 8 տարիների ընթացքում տեղի է ունեցել առաջին անգամ (2002 թվականից սկսած), հիմնականում պայմանավորված էր ընթացիկ տարում բնակչության տնօրինվող եկամուտների անկմամբ և մասամբ՝ 2009 թվականի մարտին տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Ներմուծման անկում է արձանագրվել բոլոր ապրանքախմբերի, այդ թվում՝ նաև ներդրումային բնույթի ապրանքների գծով. ընդհանուր ներմուծման մեջ շուրջ 22.8% կշիռ ունեցող «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի նվազումը 0.8 տոկոսային կետով նպաստել է ներմուծման անկմանը: 2009 թվականի ներմուծման նվազման ամենաբարձր՝ 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», 4.5 տոկոսային կետը՝ «Թանկարժեք քարեր և մետաղներ» և 3.4 տոկոսային կետը՝ «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման նվազմամբ, որոնք համապատասխանաբար կազմել են 57.8, 64.7 և 23 %:

Տնտեսության *արտահանման* ոլորտում ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների արդյունքները, զուգորդվելով տարվա չորրորդ ամսից սկսած հումքային բնույթի ապրանքատեսակների արտահանման շուկաների վիճակի բարելավման հետ, արդեն իսկ տարվա երրորդ եռամսյակից արտահայտվեցին արտահանման որոշակի աշխուժացման և ծավալների աստիճանական վերականգնման տեսքով: Մասնավորապես՝ օգոստոսի համեմատ սեպտեմբերին տեղի է ունեցել արտահանված ապրանքների ծավալների 26.5%-ով ավելացում: Համապատասխանաբար հոկտեմբերի համեմատ նոյեմբերին տեղի է ունեցել արտահանված ապրանքների ծավալների 2.3%-ով, իսկ դեկտեմբերին նոյեմբերի համեմատ՝ 1.8%-ով ավելացում:

⁴ Արտահանումը ՖՕԲ, ներմուծումը՝ ՄԻՖ գներով:

2009 թվականի տարեկան արդյունքներով արտահանման 34% նվազման ամենաբարձր՝ 10.9 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման նվազմամբ, որը կազմել է 33.3%: Արտահանման նվազման 6.4 տոկոսային կետը պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք», 6.4 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 3.8 տոկոսային կետը՝ «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ծավալների անկմամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 41, 39.3 և 23.4 %:


Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի⁵ գործակիցը, որը 1997 թվականի -0.6-ից աստիճանաբար բարելավվել է՝ 2002-2005 թվականներին պահպանելով -0.3 մակարդակը, այնուհետև 2006-2008 թվականներին ցուցաբերել է վատթարացման միտում՝ համապատասխանաբար կազմելով -0.4, -0.5 և -0.6: Վերջին երեք տարիների ընթացքում նորմալացված հաշվեկշռի նման վարքագիծը պայմանավորված է եղել արտահանման աճի տեմպերի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով, իսկ վերջինս էլ տնտեսությունում սպառողական և ներդրումային ապրանքների նկատմամբ անընդհատ աճող պահանջարկի, ինչպես նաև 2003 թվականից արժևորվող փոխարժեքի արդյունքն էր: 2009 թվականին նորմալացված հաշվեկշռի գործակիցը կազմել է -0.7՝ հիմնականում պայմանավորված դոլարային արտահայտությամբ արտահանման առաջանցիկ անկմամբ:



Գծապատկեր 4. Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը


2009 թվականի արդյունքներով գրանցված ներմուծման ծածկման գործակիցը շարունակել է նվազել, և տարեկան արդյունքներով արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման ընդամենը 35.7%-ը (տե՛ս գծապատկեր 5):

⁵ Առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն:



Գծապատկեր 5. 1996-2009 թվականների ներմուծման ծածկման գործակիցը⁶, %-ներով

2009 թվականի ՀՀ ներճյուղային առևտրի⁷ մակարդակի վերլուծությունը վկայում է «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի պահպանման մասին:



Գծապատկեր 6. 2009 թվականի ներճյուղային առևտուրը

⁶ Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):

⁷ Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: «0» նշանակում է լրիվ միակողմանի, իսկ «1» լրիվ երկկողմանի առևտուր:

Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):


Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2009 թվականի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 29.6%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 30.3%-ը՝ ԵՄ երկրներին, 2008 թվականին նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 27.6 և 35.3 %: ԵՄ երկրների հետ ՀՀ ապրանքաշրջանառության անկումը 2009 թվականին նախորդ տարվա համեմատ կազմել է 37.3%, իսկ ԱՊՀ երկրների հետ՝ 21.7%: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկվել էին Գերմանիան (առևտրաշրջանառության 7.3%-ը), Չինաստանը (7.6%), ԱՄՆ-ն (4.7%), Թուրքիան (4.5), Իրանը (3.8%), Բուլղարիան (3.7%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (22.5%) և Ուկրաինան (5.4%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության 94.4%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Նախորդ տարիներին ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման միտումները 2009 թվականի տարեսկզբից դադարել են: Մասնավորապես՝ եթե 2008 թվականի դեկտեմբեր ամսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել էր 307.8 դրամ, ապա 2009 թվականի դեկտեմբերին այն կազմել է 380.47 դրամ՝ արժեզրկվելով 19.1%-ով: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել համաշխարհային ճգնաժամի հետևանքով արտարժույթի ներհոսքի կտրուկ կրճատմամբ: Տարվա միջին փոխարժեքը կազմել է 363.28 դրամ ԱՄՆ դոլարի դիմաց (2008-ին՝ 305.97). նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական արժեքի 15.8% արժեզրկում՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի զգալի արժևորման դիմաց (11.8%):

ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք⁸) նախորդ տարվա համեմատ արժեզրկվել է 4.1%-ով, ինչը նշանակում է, որ ՀՀ դրամը արժեզրկվել է հիմնական արժույթների միավորված զնի համեմատ, ընդ որում վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթների արժեզրկումը դոլարի նկատմամբ ավելի համեստ էր, քան տարվա ընթացքում ՀՀ դրամի անվանական արտահայտությամբ 15.8% միջին արժեզրկումը: Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի միջին

⁸ Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժմնաքանակը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

արժեզրկումը տարվա ընթացքում կազմել է 5.3⁹%, ինչն իր դրական ազդեցությունն է թողել երկրի ընթացիկ հաշվի վրա:



Գծապատկեր 7. Իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների¹⁰ միջին շարժընթացը 2009 թվականի ընթացքում

Ֆինանսական շուկա: 2009 թվականի վերջում փողի բազան կազմել է 511.7 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 13.8%-ով: Ընդ որում զուտ արտաքին ակտիվներն աճել են 10.4, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 51.5%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 6.9%-ով, արդյունքում տարեսկզբի նկատմամբ կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում նվազել է 13.9 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 62.7%: Պարտադիր պահուստները՝ դրամով և արտարժույթով, աճել են 79.7%-ով, արդյունքում դրանց կշիռը փողի բազայում տարեսկզբի նկատմամբ աճել է 13.6 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 37%:

2009 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 815 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 15.1%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն աճել են 22.1%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 10.2%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը և դրամային ավանդները փողի զանգվածի աճը նվազեցրել են համապատասխանա-

⁹ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2010 թ. մարտի 25-ի տվյալները:

¹⁰ Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որը բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժընթացն ու շարժման ուղղությունը և կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման միտումների կողմնորոշիչ հետևություններ անելու համար: Բացի այդ, այն հիմնական ցուցանիշն է, որը բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր և գործընկեր երկրների միջև հարաբերական գների վարքագիծը՝ բերված մեկ արժույթի:

բար 4.7 և 7.2 տոկոսային կետով, իսկ արտարժույթային ավանդների հաշվին ապահովվել է աճի 27 տոկոսային կետը¹¹:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2009 թվականի վերջին նախորդ տարվա համեմատ ավելացել են 41%-ով¹² և ՀՆԱ-ի մեջ կազմել 20.8%, ինչը 8 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Նշենք, որ տարվա ընթացքում նաև նկատվել է ավանդների դոլարացման խորացում, որը հիմնականում դրսևորվել է տարվա առաջին կեսին, այնուհետև կայունացել է, և տարվա արդյունքներով ներգրավված ավանդների 73.4%-ը կազմել են արտարժույթով ավանդները՝ նախորդ տարվա 51.2%-ի փոխարեն: Չնայած նրան, որ թե՛ տնտեսությունում և թե՛ ֆինանսական համակարգում նկատվել է դոլարայնացման երևույթ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեզրկման՝ տնտեսության սպասումներով, այնուամենայնիվ ճգնաժամի պայմաններում ֆինանսական շուկաների նկատմամբ վստահության անկում՝ ի դեմս բանկերից ավանդների փախուստի, և ֆինանսական շուկաների անկայունությունն չնկատվեց: Վերջինս էապես պայմանավորված է եղել ճգնաժամի ժամանակ կառավարության և կենտրոնական բանկի միջև քաղաքականությունների արդյունավետ կոորդինացմամբ, ինչպես նաև նախորդ տարիներից եկող ֆինանսական համակարգի բարձր կապիտալացմամբ¹³:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2009 թվականի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 92.6 մլրդ դրամով կամ 13.4%-ով¹⁴ և ՀՆԱ-ի մեջ կազմել 24.8%, ինչը 5.8 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (նշենք որ վարկերի 50.2%-ը կազմում են արտարժույթով վարկերը): Հատկանշական է, որ տնտեսության վարկավորման ցուցանիշում կարևոր դերակատարություն է ունեցել նաև կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում համակարգաստեղծ ձեռնարկություններին, ինչպես նաև արտահանման և ներմուծման փոխարինման ուղղվածություն ունեցող ՓՄՁ սուբյեկտներին կառավարության կողմից տրամադրված ֆինանսական օժանդակությունը: Այսպես, տարվա ընթացքում կառավարության կողմից համակարգաստեղծ ձեռնարկություններին տրվեց 16.4 մլրդ դրամի վարկային միջոց: Հակաճգնաժամային քաղաքականության ներքո մեկ այլ գործիքով՝ նոր ստեղծված վարկային կազմակերպության և ԿԲ միջոցով, ՓՄՁ և արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկություններին տրամադրվեց մոտ 46.4 մլրդ դրամի վարկ:

¹¹ Փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:

¹² Ընդգրկված չեն կուտակված տոկոսները:

¹³ Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ճգնաժամային իրավիճակներում նկատվում է հակառակ երևույթը, հասարակությունը, ռիսկեր նկատելով ֆինանսական շուկաներում, հրաժարվում է իր խնայողությունները պահել բանկային համակարգում:

¹⁴ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Բնականաբար այս գործողությունները որոշակի աշխուժություն մտցրեցին թե՛ տնտեսությունում և թե՛ ֆինանսական համակարգում: Վերջինիս նպաստեց նաև ԿԲ կողմից հետևողականորեն իրականացվող ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը:

Ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները¹⁵ 2009 թվականի դեկտեմբերին կազմել են 18.79%՝ 2008 թվականի դեկտեմբերի 16.50%-ի համեմատ՝ հիմնականում պայմանավորված սպառողական վարկերի տոկոսադրույքների աճով: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2008 թվականի դեկտեմբերին ավանդների տոկոսադրույքը կազմել է 7.71%, ապա 2009 թվականի դեկտեմբերին այն աճել է 0.39 տոկոսային կետով և կազմել 8.1%:

Տարվա ընթացքում ԿԲ կողմից իրականացվող տոկոսադրույքների քաղաքականությունը համահունչ էր ձևավորված մակրոտնտեսական միջավայրին: Այսպես, փոխարժեքի ազատականացմամբ պայմանավորված սպեկուլյատիվ երևույթները կանխելու և հնարավոր գնաճային ճնշումներից խուսափելու համար ռեպո տոկոսադրույքը 2009 թվականի մարտի սկզբին բարձրացվեց 1 տոկոսային կետով՝ հասցնելով այն 7.75%-ի: Այնուհետև, համաշխարհային ճգնաժամի խորացման պայմաններում գնաճային ճնշումների թուլացմանը զուգահեռ ռեպո տոկոսադրույքն աստիճանաբար իջեցվել է մինչև 5.00%՝ նպատակ ունենալով լրացուցիչ և էժան միջոցներ ներարկելով ֆինանսական համակարգ նպաստել ամբողջական պահանջարկի ընդլայնմանը:

2009 թվականի առաջին եռամսյակում ներքին տնտեսական զարգացումների ներքո ձևավորված բացասական սպասումների պայմաններում արձանագրվել է վարկավորման տոկոսադրույքների որոշակի բարձրացում: Մակայն, իրականացված հակաճգնաժամային միջոցառումների արդյունքում, հիմնականում երկրորդ կիսամյակից սկսած, բոլոր վարկային պրոդուկտների տոկոսադրույքները սկսել են նվազել, իսկ տարեվերջին որոշ պրոդուկտների տոկոսադրույքներ նույնիսկ ավելի ցածր են եղել նախորդ տարվա համեմատ: Մասնավորապես, մեկ տարուց ավել ժամկետայնությամբ բիզնես վարկերի տոկոսադրույքը 2009 թվականի դեկտեմբերին կազմել է շուրջ 15.0% նախորդ տարվա դեկտեմբերի 16%-ի դիմաց, իսկ հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը՝ 15.5% նախորդ տարվա դեկտեմբերի 17.5%-ի դիմաց:

Միաժամանակ, 2009 թվականի ընթացքում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2008 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 8.93%, ապա 2009 թվականին այն կազմել է 10.87%: 2009 թվականի ընթացքում տեղաբաշխված

¹⁵ Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

պետական արժեթղթերի ծավալը կազմել է 112.1 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 1391 օր:

2009 թվականի վերջին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.83 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.87:

Հարկաբյուջետային հատված: 2009 թվականի հարկաբյուջետային քաղաքականության բնույթը եղել է հակացիկլիկ ընդլայնողական՝ նպատակ հետապնդելով հակազդել ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցություններին և խթանել ինչպես ամբողջական պահանջարկը, այնպես էլ ամբողջական առաջարկը: Պահանջարկի խթանման տեսանկյունից կարևոր է եղել սոցիալական բնույթի ծախսերի (թոշակ, աշխատավարձ, նպաստ) ժամկետներին և ծրագրված մակարդակի ամբողջական իրականացումը, որը 2008 թվականի նույն ցուցանիշների մակարդակի համեմատ ապահովել է 14-16% աճ՝ այսպիսով նպաստելով նշված ծախսերի շահառուների գնողունակության մակարդակի պահպանմանը: Առաջարկի խթանման տեսանկյունից կարևոր է եղել տնտեսավարողներին տրվող ֆինանսական օժանդակությունը, որը նպաստել է աշխատատեղերի պահպանմանը և թողարկումների ընդլայնմանը: Արդյունքում, նշված ծախսերի մեծ մասը ֆինանսավորվել է ոչ թե տնտեսությունից դուրս հանվող լիկվիդայնության, այլ արտաքին աշխարհից նոր միջոցների ներգրավման հաշվին՝ պակասուրդի մակարդակը հասցնելով ՀՆԱ 7.6%-ի:

2009 թվականի արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 21.8%-ը՝ նախորդ տարվա 21.5%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 19.8%-ը՝ նախորդ տարվա 19.9%-ի դիմաց: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական անկումը կազմել է 12.1%, իսկ հարկային եկամուտներինը (ներառյալ պետական տուրքերը և սոցիալական ապահովագրության վճարները)՝ 13.9%, ընդ որում, անկում է գրանցվել բոլոր հարկատեսակների և տուրքերի հավաքագրման գծով, բացառությամբ եկամտահարկի, հաստատագրված վճարների և հողի հարկի:

Հարկային եկամուտների կառուցվածքում նկատելի են դրական միտումներ հարկային եկամուտներում ուղղակի հարկերի տեսակարար կշռի բարձրացման ուղղությամբ: Այսպես, ուղղակի հարկերը կազմել են պետական բյուջեի հարկային եկամուտների 30.2%-ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը բարելավելով 5 տոկոսային կետով¹⁶:


ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով 2009 թվականի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է աճի միտումներ նախորդ տարվա նկատմամբ՝ 7.2 տոկոսային կետի չափով և կազմել 29.4%:

¹⁶ Ուղղակի հարկերում ներառված են հաստատագրված վճարները և պարզեցված հարկը՝ օրենքով սահմանված համամասնություններով:

Միաժամանակ կատարվել են պետական բյուջեի ծախսերի կառուցվածքային փոփոխություններ ոչ գերակա համարվող ծախսերի կասեցման միջոցով: Ընթացիկ ծախսերի գծով արձանագրված աճը պայմանավորված է գերակա համարվող սոցիալական բնույթի ծախսերի և աշխատավարձերի մակարդակի պահպանմամբ:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2009 թվականին կազմել են ՀՆԱ-ի 7%-ը՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց: 2009 թվականին իրականացվել են ինչպես ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, այնպես էլ աղետի գոտու բնակարանային շինարարության ծրագրեր, ինչի արդյունքում 2009 թվականին կապիտալ ծախսերը կազմել են 221.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 181.7 մլրդ դրամի դիմաց: Վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվել են շուրջ 96 մլրդ դրամի կապիտալ ծախսեր՝ ավելի քան 2 անգամ գերազանցելով 2008 թվականի ցուցանիշը: Վերջիններս ուղղված են եղել էներգետիկայի, ճանապարհաշինության, ինչպես նաև ոռոգման համակարգերի զարգացմանը:


Հարկաբյուջետային ազդակը: Հարկաբյուջետային քաղաքականության հակացիկլիկ ընդլայնողական բնույթը վառ արտահայտվում է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշներում: Այսպես՝ 2008 թվականի ողջ ժամանակատվածում գրանցված ընդհանուր առմամբ չեզոք հարկաբյուջետային ազդակի դիմաց 2009 թվականի տվյալներով ձևավորվել է 9.2% ընդլայնող հարկաբյուջետային ազդակ, ընդ որում, եկամուտների գծով գրանցվել է 0.3% զսպող ազդակ, իսկ ծախսերի գծով՝ 9.5% ընդլայնող ազդակ:



Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը

ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ


Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով, ելնելով 9.2% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ ավելի քան 905.4 մլրդ դրամի չափով եկամուտներ, որից շուրջ 870.7 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 34.7 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ և 16-րդ կետերի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար կառավարության որոշումներով բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է շուրջ 20.5 մլրդ դրամով (2.3%-ով) և կազմել շուրջ 925.9 մլրդ դրամ, որից 888.7 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 37.2 մլրդ դրամը՝ պաշտոնական տրանսֆերտների գծով: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունը թողեց նաև պետական բյուջեի եկամուտների վրա. կանխատեսված 9.2% տնտեսական աճի փոխարեն 14.4% անկման պարագայում փաստացի եկամուտները 25.5%-ով (235.9 մլրդ դրամով) զիջեցին ծրագիրը՝ կազմելով շուրջ 690 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հարկային եկամուտներն ու պետական տուրքերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները և պաշտոնական դրամաշնորհները զիջել են ծրագրված ցուցանիշները համապատասխանաբար 28.4, 19.9 և 41.7 %-ով: Միայն հարկային եկամուտների ու պետական տուրքերի գծով կանխատեսվածից պակաս է մուտքագրվել 207.6 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ, այլ եկամուտների գծով արձանագրվել է ծրագրի 42.1%-ով (12.8 մլրդ դրամ) գերազանցում:



Գծապատկեր 9. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտները


2008 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 12.1%-ով կամ 95.4 մլրդ դրամով: Եկամուտների անկումը գերազանցապես պայմանավորված է հարկային եկամուտների և պետական տուրքերի նվազմամբ (15.9%-ով կամ 98.7 մլրդ դրամով): Պարտադիր սոցիալական ապահովության վճարները նվազել են 2.1 մլրդ դրամով կամ 2%-ով, այլ եկամուտները՝ 1.3 մլրդ դրամով կամ 2.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները նախորդ տարվա համեմատ ավելացել են 6.7 մլրդ դրամով կամ 44.9%-ով:

Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցության ցուցանիշը կազմել է 21.8%, որը 0.3 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:



Գծապատկեր 10. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կատարողականը 2008-2009 թթ.


2008 թվականի համեմատ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտներում 1.5 տոկոսային կետով ավելացել է պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 1.2 տոկոսային կետով՝ պաշտոնական դրամաշնորհների, 0.6 տոկոսային կետով՝ այլ եկամուտների տեսակարար կշիռը, իսկ հարկային եկամուտների ու պետական տուրքերի գծով նույն ցուցանիշը նվազել է 3.4 տոկոսային կետով:



Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2008-2009 թթ.

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների 75.7%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են շուրջ 522.4 մլրդ դրամ և 28.4%-ով զիջել ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից 503.3 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, ավելի քան 19 մլրդ դրամը՝ պետական տուրքերը: Դիտարկելով հարկային եկամուտների ամսական շարժը՝ կարելի է արձանագրել, որ մինչև դեկտեմբեր ամիսը հարկային եկամուտները զիջել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, իսկ դեկտեմբերին նկատվել է աճ, որը կազմել է 6.7%:




Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ ամիսների, 2008-2009 թթ.

2008 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերը նվազել են 15.9%-ով կամ 98.7 մլրդ դրամով: Մասնավորապես՝ նախորդ տարվա համեմատ 20.7%-ով կամ 59.7 մլրդ դրամով նվազել են մաքսային սահմանին գանձված հարկային եկամուտները, 11.7%-ով կամ 39.1 մլրդ դրամով՝ ներքին շրջանառությունից գանձված հարկերը և տուրքերը:

ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի և տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 16.5%՝ 0.9 տոկոսային կետով զիջելով կանխատեսված և 0.5 տոկոսային կետով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Հարկային սահունության գործակիցը¹⁷, որը բնութագրում է տնտեսական աճի և հարկերի կապը, 2009 թվականին կազմել է 1.21, որը նշանակում է, որ տվյալ դեպքում ՀՆԱ-ի անկման յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի 1.21 տոկոսային կետով անկում:

¹⁷ Հարկային եկամուտների՝ ՀՆԱ-ի միավոր փոփոխությանը համապատասխանող փոփոխությունը:

2008 թվականի համեմատ հարկային եկամուտների կազմում գրանցվել է ուղղակի հարկերի տեսակարար կշռի աճ, մասնավորապես՝ եկամտահարկի և շահութահարկի տեսակարար կշռն աճել է 4.8 տոկոսային կետով և կազմել 28.2%: Միևնույն ժամանակ, 1.8 տոկոսային կետով նվազել է անուղղակի հարկերի բաժինը, մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկի տեսակարար կշռը նվազել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 50.5%:



Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2008-2009 թթ.

2009 թվականին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 254.2 մլրդ դրամ ավելացված արժեքի հարկ: Նշված գումարից շուրջ 168.9 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, որը 19.2%-ով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը, 85.3 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից, որը 2008 թվականի համեմատ նվազել է 21.9%-ով: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ նվազել է 20.2%-ով կամ 64.2 մլրդ դրամով: ԱԱՀ-ի անկման հիմնական պատճառներն են հանդիսացել՝

- 2009 թվականին արձանագրված ներմուծման աննախադեպ անկումը, որը կազմել է 25.3%: Մասնավորապես՝ մարդատար ավտոմեքենաների ներմուծումը կրճատվել է 61.4%-ով, ծխախոտի արտադրանքինը՝ 31.1%-ով, նավթամթերքինը՝ 13.9%-ով.

- 2009 թվականին ուժի մեջ մտած՝ ԱԱՀ վճարող համարվելու համար օրենքով 58.35 մլն դրամի չափով շեմի սահմանումը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք այլ փոփոխություններ ևս, որոնք կարող էին ազդեցություն ունենալ 2009 թվականի բյուջեի եկամուտների վրա: Մասնավորապես՝

- ֆիզիկական անձանց համար սահմանվել են ԱԱՀ-ով հարկվող՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքներ, մասնավորապես՝ օրենքի համաձայն ապրանքի մատակարարում է համարվում նաև ֆիզիկական անձանց պատկանող՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի (այդ թվում՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի և հողերի) օտարումը (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում դրանց ներդրումը):

- մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում.

- շենքերի և շինությունների օտարման դեպքում կիրառվող ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելու սկզբունքը տարածվել է նաև անավարտ և կիսակառույց շինությունների վրա, ինչպես նաև սահմանվել է, որ անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման գործարքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով, բայց ոչ պակաս գույքահարկով հարկման նպատակով՝ օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի բաժնենասին համապատասխանող արժեքի 5%-ից՝ հաշվարկված տարեկան կտրվածքով.

- սահմանվել է, որ արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարներն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հարկային հաշիվներում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով, եթե այդ գործարքների գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամը: Միանվագ գործարքի գումարը (ներառյալ՝ ԱԱՀ-ն) 300 հազար դրամը գերազանցելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի

կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումներով վճարումների դեպքում, իսկ ամսվա ընթացքում 300 հազար դրամը չգերազանցող բոլոր միանվագ գործարքների ընդհանուր գումարը 3.0 միլիոն դրամը գերազանցելու դեպքում սահմանված կարգով հաշվանցման ենթակա է այն գործարքի ԱԱՀ-ի ամբողջ գումարը, որի արժեքի հանրագումարը չի գերազանցել 3 միլիոն դրամի սահմանաչափը.

- մինչև 2012 թվականի հունվարի 1-ը՝ ոռոգման ջրի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման պահը որոշվում է ձեռք բերված ու մատակարարված ապրանքների և մատուցված ու ստացված ծառայությունների դիմաց վճարման պահով.

- կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից արտաքին տնտեսական գործունեության որոշ ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը գերազանցում է 300 մլն դրամը:

Կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող նշված ապրանքներից բացի, այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով.

- անմիջական արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված ձեռագործ գորգերի իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից.

- հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման գործունեությունն ազատվել է ավելացված արժեքի հարկից:

Ակցիզային հարկից մուտքերը հաշվետու տարում կազմել են շուրջ 42.8 մլրդ դրամ: Ընդ որում, հանրապետություն ներմուծված ենթասկզիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 28.5 մլրդ դրամ, որից 13.5 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 10.5 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթասկզիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի ակցիզային հարկի մուտքերը կազմել են շուրջ 14.3 մլրդ դրամ, որից 8 մլրդ դրամը ստացվել է տեղական արտադրության ծխախոտի իրացումից: 2008 թվականի համեմատ ակցիզային հարկը նվազել է 6.8%-ով կամ 3.1 մլրդ դրամով, ընդ որում ներքին շրջանառությունից ստացված ակցիզային հարկն աճել է, սակայն ընդհանուր գումարում ներմուծման համար զանձվող ակցիզային հարկի ունեցած մեծ տեսակարար կշռի և 2009 թվականին դրա նվազման հետևանքով գրանցվել է ակցիզային հարկի անկում: Հանրապետություն ներմուծված ենթասկզիզային ապրանքների հարկումից մուտքերը նվազել են 14.4%-ով կամ 4.8 մլրդ դրամով, ընդ որում, 15.2%-ով կամ 2.2 մլրդ դրամով նվազել է բենզինի

ներմուծումից գանձված ակցիզային հարկը: Նախորդ տարվա համեմատ նվազել են նաև ծխախոտի, դիզելային վառելիքի և որոշ ակոհոլային խմիչքների ներմուծման գծով մուտքերը: Միևնույն ժամանակ 13.5%-ով կամ 1.7 մլրդ դրամով ավելացել են հանրապետությունում արտադրվող ենթասկզիզային ապրանքների հարկումից մուտքերը՝ հիմնականում պայմանավորված տեղական արտադրության ծխախոտի իրացումից ստացված հարկի աճով, որը կազմել է 34.2% կամ 2.0 մլրդ դրամ:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնք կարող էին ազդեցություն ունենալ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների վրա՝

- գինեյուրթը դուրս է բերվել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկից.
- տարանջատվել են Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափերը: Վերջիններիս համար սահմանվել են ավելի բարձր դրույքաչափեր:

2009 թվականին պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 81.8 մլրդ դրամ *շահութահարկ*: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 5.1%-ով կամ 4.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսավարողների շահութաբերության մակարդակի անկմամբ, ինչպես նաև 2009 թվականի ընթացքում տնտեսավարողների քանակի կրճատմամբ: Շահութահարկի առավել խոշոր անկում չի արձանագրվել, ըստ էության, այն պատճառով, որ տնտեսավարողները 2009 թվականի շահութահարկի կանխավճարները վճարել են՝ հիմք ընդունելով 2008 թվականի շահութահարկի ցուցանիշները: 2009 թվականին հիմնականում նվազել է ոչ պետական ձեռնարկությունների, ոչ ռեզիդենտների և պետական ձեռնարկությունների կողմից վճարված շահութահարկը՝ համապատասխանաբար 13.2%-ով, 30.5%-ով և 35.3%-ով: Միևնույն ժամանակ հարկ է մշել, որ զգալի աճ է արձանագրվել ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի գծով՝ 35.1% կամ 2.7 մլրդ դրամ: Ավելացել են նաև 1% դրույքաչափով, ինչպես նաև ոչ ռեզիդենտից աղբյուրի մոտ վճարված շահութահարկի մուտքերը՝ համապատասխանաբար 8.8 և 59.4 %-ով:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք կարող էին ազդեցություն գործել հաշվետու տարվա շահութահարկի մուտքերի վրա: Մասնավորապես՝

- ԱԱՀ վճարող չհամարվողներին հնարավորություն է տրվել հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսերը նվազեցնել տվյալ հաշվետու տարում՝ ամբողջությամբ.
- ԱԱՀ վճարող չհամարվողներին թույլատրվել է նորմավորվող ծախսերը նվազեցնել՝ առանց հաշվի առնելու սահմանված նորմաները, բացառությամբ օրապահիկի, ինչպես նաև

դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, որոնք նվազեցվում են հատուցման գումարների չափով.

- սահմանվել է, որ 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա շահութահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի 10%-ից, ընդ որում վճարված գումարները համարվում են այդ տարիների համար շահութահարկի վերջնական գումարներ.

- սահմանվել է, որ համախառն եկամուտը նվազեցվում է Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի և դրանց մասով «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն հաշվարկված և վճարված եկամտահարկի հանրագումարի այն չափով, որը ամսական կտրվածքով չի գերազանցում 3.0 մլն դրամը, իսկ միանվագ գործարքի գծով (այդ թվում՝ եկամտահարկի գումարը)՝ 300.0 հազ. դրամը.

- մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆոնդային բորսայում օրենքով սահմանված կարգով հասարակ անվանական բաժնետոմսեր ցուցակած ռեզիդենտ ընկերությունները (բացառությամբ պետության կողմից կարգավորող սակագներ կիրառող ռեզիդենտների) օգտվում են հաշվետու տարիների շահութահարկը 50%-ով, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր տարվա համար 300 մլն դրամով նվազեցնելու արտոնությունից.

- հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման դեպքերի) եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5%-ից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն.

- օրենքով սահմանվել է, որ նախորդ տարում ԱԱՀ վճարող չհամարվող հարկատուները շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո կարող են շահութահարկի կանխավճարներ չկատարել.

- շահութահարկի վճարումից ազատվել են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուները՝ իրենց կողմից ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով:

Եկամտահարկը հաշվետու տարում կազմել է ավելի քան 60.2 մլրդ դրամ՝ 12%-ով կամ 6.5 մլրդ դրամով գերազանցելով 2008 թվականի փաստացի ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է պարզեցված հարկ վճարողների ընդհանուր հարկման դաշտ անցմամբ, ինչպես նաև ոլորտում իրականացված վարչարարության խստացմամբ:

Եկամտահարկի մուտքերի վրա 2009 թվականի ընթացքում հնարավոր ազդեցություն են գործել նաև «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված հետևյալ փոփոխությունները՝

- անձնական նվազեցումը սահմանվել է 30000 դրամ.

- առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռքբերումներ կատարելու համար հարկային գործակալի կողմից վճարվող հարկի չափը սահմանվել է վճարված եկամտի 11%-ի չափով.

- սահմանվել է, որ 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա եկամտահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա եկամտահարկը չեն կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2%-ից և ավելի՝ համախառն եկամտի 10%-ից, ընդ որում վճարված գումարները համարվում են այդ տարիների համար եկամտահարկի վերջնական գումարներ.

- սահմանվել է, որ հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացված, ինչպես նաև այդ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով.

- սահմանվել է, որ հարկվող եկամուտը որոշելիս ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի չափով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե մուտքագրված *մաքսատուրքը* կազմել է 25.1 մլրդ դրամ: Ներմուծման ծավալների անկման հետևանքով նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերը նվազել են 32.7%-ով կամ շուրջ 12.2 մլրդ դրամով:

2009 թվականին պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 22.8 մլրդ դրամ հաստատագրված վճարներ (առանց ծխախոտի արտադրանքի, ներմուծվող բենզինի ու դիզելային վառելիքի հաստատագրված վճարների): Մուտքերի 66.8%-ը (15.2 մլրդ դրամ) ստացվել է սպասարկման ոլորտից, 21.1%-ը (4.8 մլրդ դրամ)՝ առևտրական գործունեությունից, 12.1%-ը (2.8 մլրդ դրամ)՝ հանրային սննդի ոլորտից: Հաշվետու տարում հաստատագրված վճարները 12.1%-ով կամ 2.5 մլրդ դրամով գերազանցել են 2008 թվականի ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է խաղատների գործունեության կազմակերպման և դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար գանձվող հաստատագրված վճարների դրույքաչափերի բարձրացմամբ: Մասնավորապես՝

- խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշելիս հիմք է ընդունվում ելակետային տվյալի 4000000-ապատիկը՝ 2500000-ապատիկի փոխարեն.

- այլ ավտոմատների համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշելիս հիմք է ընդունվում ելակետային տվյալի 125000-ապատիկը՝ 75000-ապատիկի փոխարեն.

- անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ 50000-ապատիկի փոխարեն.

- խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 25%-ի չափով՝ 20%-ի փոխարեն.

- տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ 50000-ապատիկի փոխարեն.

- անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է ելակետային տվյալի 75000-ապատիկի չափով՝ 50000-ապատիկի փոխարեն:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով փոփոխվել է նաև ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության հաստատագրված վճարի ամսական չափը: Այն հաշվարկվում է՝ ամսվա ընթացքում իրացված գազի ընդհանուր ծավալի նկատմամբ մեկ մետր խորանարդ գազի հաշվով 20 դրամ հաշվարկային դրույքաչափ կիրառելով: Ընդ որում, սահմանվել է, որ հաշվարկային դրույքաչափով հաստատագրված վճարի հաշվարկման համար ամսվա ընթացքում իրացված գազի ծավալը չի կարող պակաս լինել ամսվա ընթացքում ստացված գազի ծավալի 87.5%-ից: Բացի այդ, ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության համար սահմանվել է հաստատագրված վճարի նվազագույն ամսական չափ՝

- Երևան քաղաքում 1500000 դրամի չափով.

- Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում գտնվող գազալցման կայանների համար՝ 1125000 դրամի չափով.

- այլ վայրերում գտնվող գազալցման կայանների համար՝ 900000 դրամի չափով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել ընդամենը 330.4 մլն դրամ *պարզեցված հարկ* (նախորդ տարվա 6.7 մլրդ դրամի դիմաց)՝ պայմանավորված 2009 թվականի հունվարի 1-ից «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դադարեցմամբ:

2009 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 6.1 մլրդ դրամ *բնօգտագործման և բնապահպանական վճարներ*, որից 4.3 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 1.8 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունն է թողել նաև այս մուտքերի վրա՝ հանքարդյունահանման ոլորտում գրանցված անկման և ներմուծման ծավալների նվազման արդյունքում: 2008 թվականի համեմատ բնօգտագործման և բնապահպանական վճարները նվազել են 38.6%-ով կամ 3.8 մլրդ դրամով, ընդ որում՝ 69.8%-ով կամ 2.4 մլրդ դրամով նվազել են օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող վճարները, 34.7%-ով կամ 1.5 մլրդ դրամով՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող բնապահպանական վճարները:

Հաշվետու տարվա ընթացքում 10 մլրդ դրամ է մուտքագրվել այլ հարկերից: Մասնավորապես՝ 2.9 մլրդ դրամ են կազմել ճանապարհային վճարները, 151.9 մլն դրամ՝ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարը, 2 մլրդ դրամ՝ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 1.1 մլրդ դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 2 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրությունը խախտելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 258.3 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունները, 1.5 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները և 9.6 մլն դրամը՝ արտոնագրային վճարները: Նշենք, որ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթիի գծով փաստացի մուտքերը 66.4%-ով կամ 4 մլրդ դրամով զիջել են ծրագիրը: Թերակատարումը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ միջազգային շուկայում գունավոր մետաղների գների կտրուկ անկմամբ, որի արդյունքում դադարեցվել է որոշ ընկերությունների կողմից հանքավայրերի շահագործումը: Միևնույն ժամանակ, «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարի գծով ստացվել են կանխատեսվածից 10.1%-ով կամ

13.9 մլն դրամով ավել մուտքեր: Ծրագիրը 2.1 անգամ գերազանցել են նաև հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները և կազմել շուրջ 1.1 մլրդ դրամ: Նշված գումարից 626.8 մլն դրամը կազմել է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարը՝ նախատեսված 100 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի կողմից կատարված վճարումներով: Նախատեսված 418 մլն դրամի դիմաց 448.4 մլն դրամ են կազմել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, որը պայմանավորված է նախորդ տարիների պարտքի դիմաց վճարումներով:

Նախորդ տարվա համեմատ այլ հարկերն ընդհանուր առմամբ նվազել են 50.7%-ով կամ 10.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթիի ու կոնցեսիոն վճարի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների նվազմամբ:

2009 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 19 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 2.8%-ը: Պետական տուրքի փաստացի մուտքերը 20.7%-ով կամ 5 մլրդ դրամով զիջել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է պետական գրանցման համար (40.3%-ով), օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար (19.7%-ով), ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար (28.4%-ով), հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար (28.4%-ով) ստացված մուտքերի գծով: Միաժամանակ, որոշ տուրքերի գծով արձանագրվել են կանխատեսվածից բարձր ցուցանիշներ: Մասնավորապես՝ ծրագիրը գերազանցել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու (54.3%-ով) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու ու Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման (92.9%-ով) համար գանձված տուրքերը:

Նախորդ տարվա համեմատ պետական տուրքը նվազել է 14.6%-ով կամ 3.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, պետական գրանցման և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի նվազմամբ:

2009 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև

դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել ավելի քան 1.1 մլրդ դրամ (որից 268.8 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ նախատեսված 737.8 մլն դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս մուտքերի մակարդակը գրեթե մնացել է անփոփոխ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են նաև հայցվորները՝ պետական նպաստների, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման, գումարների բռնագանձման վերաբերյալ հայցերով (լրացումն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 1-ից), ինչպես նաև պետական տուրքերի վճարումից ազատվելու արտոնություններ են սահմանվել անհատ ձեռնարկատերերի և առևտրային կազմակերպությունների համար (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009 թվականի մայիսից):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 18.1 մլն դրամ՝ ապահովելով 192.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով արձանագրվել է 88% աճ: Մուտքերի նման աճը պայմանավորված է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմած քաղաքացիների քանակի կտրուկ աճով:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել ավելի քան 1.7 մլրդ դրամ՝ 28.4%-ով զիջելով կանխատեսված և 15.4%-ով կամ 311.3 մլն դրամով՝ 2008 թվականի նույն ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված է անձնագրային ձևակերպումների հետ կապված գործողությունների դիմաց գանձված տուրքերի նվազմամբ: Նվազել են նաև ՀՀ մուտքի արտոնագրերի տրամադրման դիմաց գանձված տուրքերը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն (ընդունվել է 2009 թվականի ապրիլի 28-ին) սահմանվել է ՀՀ մուտքի արտոնագրի նոր տեսակ՝ 21-օրյա ժամկետով և 3000 ՀՀ դրամ պետական տուրքի դրույքաչափով: Արդյունքում, 2009 թվականին միայն երկրորդ կիսամյակի ընթացքում տրամադրված նոր տեսակի ՀՀ մուտքի արտոնագրերը կազմել են տարվա ընթացքում տրամադրված բոլոր տեսակի արտոնագրերի ընդհանուր քանակի մոտ 30%-ը: Այս գործոնի ազդեցությունը առավել շոշափելի կլինի հետագայում, քանի որ Հայաստան այցելող օտարերկրյա քաղաքացիների գերակշռող մասին բավարարում է 21 օրը և բոլորը կձգտեն ստանալ այդ տեսակի մուտքի արտոնագրեր:

Պետական տուրքերի 14.1%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 2.7 մլրդ դրամ, որը 40.3%-ով կամ 1.8 մլրդ դրամով զիջում է նախատեսված ցուցանիշը և 22.5%-ով կամ 718.4 մլն դրամով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Դա

պայմանավորված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու, ավտոմեքենայի պետահամարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, ինչպես նաև ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձված տուրքերի նվազմամբ: Միաժամանակ, լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքի գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում և նախորդ տարվա նկատմամբ աճ:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2009 թվականին պետական բյուջե է վճարվել ավելի քան 1 մլն դրամ, որը 42.6%-ով զիջում է նախատեսվածը և 22.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նվազումը պայմանավորված է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի դիմաց տրամադրված վկայագրերի թվի նվազմամբ. հաշվետու տարում այն կազմել է 206՝ 2008 թվականի 267-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, սպրանքային և սպասարկման նշանների, սպրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել 293.4 մլն դրամ պետական տուրք՝ ապահովելով 99.1% կատարողական և 5.3%-ով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը: 2009 թվականի հունվարի 1-ից փոփոխություններ են կատարվել նշված տուրքերի դրույքաչափերում:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2009 թվականին գանձվել է ավելի քան 2.2 մլրդ դրամ, որը 28.4%-ով զիջում է կանխատեսված ցուցանիշը և 24.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նվազումը պայմանավորված է արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակի նվազմամբ, ինչպես նաև ՀՀ մուտքի արտոնագրերի տրամադրման դիմաց գանձված տուրքերի նվազմամբ, որը ևս բացատրվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով ՀՀ մուտքի արտոնագրի նոր տեսակի (21-օրյա ժամկետով և 3000 ՀՀ դրամ դրույքաչափով) սահմանմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 20.9%-ը ստացվել է լիցենզիաների տրամադրման դիմաց: Նշված աղբյուրից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 4 մլրդ դրամ՝ ապահովելով 93% կատարողական և 7.2%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը: Նվազումը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի, շահումով խաղերի բնագավառում և պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ տալու համար գանձվող տուրքերի նվազմամբ: Վիճակախաղերի և շահումով խաղերի բնագավառում լիցենզիաներ

տալու համար տուրքի նվազումը պայմանավորված է 2009 թվականի փետրվար ամսին «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով խաղատների և շահումով խաղերի կազմակերպիչների կողմից շահագործվող մեքենայացված և կենդանի խաղերի համար սահմանված հաստատագրված վճարի չափի ավելացմամբ (մեկ մեքենայացված խաղի ամսական հաստատագրված վճարը 75 հազ. դրամից դարձել է 125 հազ. դրամ, իսկ մեկ կենդանի խաղի ամսական հաստատագրված վճարը՝ 2.5 մլն դրամից 4 մլն դրամ), ինչն էլ իր հերթին պատճառ է հանդիսացել մի շարք ընկերությունների գործունեության դադարեցման համար: Իսկ պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների տրամադրման համար տուրքի նվազումը կապված է լիցենզավորված անձանց թվի կրճատման հետ: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները նույնպես ազդեցություն են գործել 2009 թվականի բյուջեի մուտքերի վրա: Մասնավորապես՝ պետական տուրք է սահմանվել վարկային բյուրոյի գործունեության համար՝ բազային տուրքի 500-ապատիկի չափով (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009 թվականի մայիսից): Օրենքի մեկ այլ փոփոխությամբ սահմանվել են պետական տուրքի նոր տեսակներ զբոսաշրջության բնագավառում լիցենզիաներ տրամադրելու և հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման համար՝

- զբոսաշրջության բնագավառում լիցենզիա տրամադրելու համար սահմանվել է բազային տուրքի տասնապատիկի չափով պետական տուրք.

- հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման համար սահմանվել են բազային տուրքի 5-250-ապատիկի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009 թվականի մայիսից):

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման արտոնագիր (լիցենզիա) ստանալու համար սահմանվել են պետական տուրքեր, այդ թվում՝

- հեռուստահաղորդումների եթերային հեռարձակման համար՝ բազային տուրքի 250-500 - ապատիկի չափով՝ կախված հեռարձակման տարածքներից.

- ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման համար բազային տուրքի 150-250-ապատիկի չափով.

- հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման համար՝ բազային տուրքի 100-500-ապատիկի չափով (փոփոխություններն ուժի մեջ են մտել 2009 թվականի հունիսից):

Փոփոխություններ են կատարվել լիցենզավորման ենթակա քաղաքաշինության բնագավառի համար սահմանված տուրքերում (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունիսից):

Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման ու տարանցիկ փոխադրման և ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության համար լիցենզիաներ տրամադրելու և դրանց գործողության ժամկետները

երկարաձգելու համար սահմանվել են բազային տուրքի 300-ապատիկից մինչև 500-ապատիկի չափով պետական տուրքեր (լրացումն ուժի մեջ է մտել 2009 թվականի սեպտեմբերից):

2009 թվականին այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի գումարը կազմել է շուրջ 7 մլրդ դրամ, որը 19.7%-ով զիջում է կանխատեսված և 14.4%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նվազումը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող տուրքերի նվազմամբ: Հաշվետու տարում այս մուտքերը կազմել են շուրջ 5.9 մլրդ դրամ՝ 21.1%-ով զիջելով կանխատեսված և 16.4%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ 2009 թվականին փոխադրված ուղևորների թվաքանակի նվազմամբ: Ուղևորների թվաքանակի կտրուկ անկումն ուղղակիորեն կապված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն հանվել են կնիքի և դրոշմակնիքի պատրաստման թույլտվություն տալու համար սահմանված պետական տուրքերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունիսից): Իրավաբանական անձանց պետական միասնական և պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման համար նախկինում գործող բազային տուրքի չափով պետական տուրքի փոխարեն սահմանվել է բազային տուրքի եռապատիկի չափով պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2009 թվականի սեպտեմբերից):

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2009 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 102.9 մլրդ դրամ՝ 19.9%-ով թերակատարելով ծրագրված ցուցանիշը: 2008 թվականի համեմատ նշված վճարները նվազել են 2%-ով կամ շուրջ 2.1 մլրդ դրամով: Տարեկան ծրագրային և նախորդ տարվա ցուցանիշների համեմատ ցածր կատարողականը պայմանավորված է պարզեցված հարկ վճարող տնտեսավարողների հարկման ընդհանուր դաշտ անցնելու համար «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքով որոշակի արտոնությունների սահմանմամբ: Բացի այդ, ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերի համար սոցիալական վճարի դրույքաչափը սահմանվել է 3%, նախկին 15 և 5 % նվազող դրույքաչափերի փոխարեն:

Նշված գումարից 85.9 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 14 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 2.9 մլրդ դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից:

Պաշտոնական դրամաշնորհներ

2009 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 21.7 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 58.3%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որի շրջանակներում նախատեսված 21.5 մլրդ դրամի դիմաց ստացվել է 9 մլրդ դրամ կամ 41.8%-ը: Եվրոպական հանձնաժողովից Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո 2007-2010 թթ. ազգային ինդիկատիվ ծրագրով նախատեսված դրամաշնորհի շրջանակներում 2009 թվականին ՀՀ-ին տրամադրվել է 5.7 մլրդ դրամի չափով աջակցություն, որից 4.4 մլրդ դրամը՝ դատաիրավական, իսկ 1.3 մլրդ դրամը՝ կրթական համակարգի բարեփոխումների շրջանակներում: Հաշվետու տարում Ճապոնիայի կառավարության կողմից «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից նախատեսված 850 մլն դրամի դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 737 մլն դրամ: 1.2 մլրդ դրամ է տրամադրվել Եվրամիության պարենային ապահովության ծրագրի շրջանակներում, որի գծով 2009 թվականի պետական բյուջեում մուտքեր չեն նախատեսվել:

Հաշվետու ժամանակահատվածում նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվել է շուրջ 13.6 մլրդ դրամ, որից 9 մլրդ դրամ (նախատեսվածի 41.8%-ը)՝ ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում, 2.4 մլրդ դրամ (նախատեսվածի 90.2%-ը)՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող թվով 23 ծրագրերի շրջանակներում, 771.8 մլն դրամ (նախատեսվածի 87.2%-ը)՝ Լինսի հիմնադրամից, 613.7 մլն դրամ (նախատեսվածի 32.1%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող 3 ծրագրերի շրջանակներում, 504.9 մլն դրամ (նախատեսվածի 86.2%-ը)՝ ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում և 251.4 մլն դրամ (նախատեսվածի 11.2%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող 2 ծրագրերի շրջանակներում:

Մասնավորապես՝ հաշվետու տարում Լինսի հիմնադրամից ստացված 771.8 մլն դրամից 440.1 մլն դրամն ուղղվել է Երևանի փողոցների վերանորոգման, 170.8 մլն դրամը՝ կրթական հաստատությունների վերականգնման և 161 մլն դրամը՝ ճանապարհների վերանորոգման ծրագրերի ֆինանսավորմանը: ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում

ստացված 504.9 մլն դրամից 164.9 մլն դրամն ուղղվել է գյուղատնտեսության, 135 մլն դրամը՝ ջրամատակարարման, 205 մլն դրամը՝ մշակույթի ոլորտների ծրագրերի իրականացմանը: Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման և ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման համակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվել է համապատասխանաբար 370.8 մլն դրամ և 130.4 մլն դրամ՝ նախատեսված 592.4 մլն դրամի և 387.8 մլն դրամի դիմաց: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից ստացված 251.4 մլն դրամից 189.5 մլն դրամը ստացվել է «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն», իսկ 61.9 մլն դրամը՝ «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

2009 թվականի պետական բյուջեում նախատեսված հետևյալ դրամաշնորհային ծրագրերը չկատարվելու պատճառով նախատեսված միջոցները չեն ստացվել՝

- Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր՝ 863.5 մլն դրամ.

- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման և Սևանա լճի բնապահպանական ծրագրեր՝ համապատասխանաբար 874.3 մլն դրամ և 1.2 մլրդ դրամ.

- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագիր՝ շուրջ 80 մլն դրամ.

- Ֆրանսիայի հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր՝ 48.1 մլն դրամ.

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր՝ 16.4 մլն դրամ:

2009 թվականին 511.8 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 44.9%-ով կամ 6.7 մլրդ դրամով:

Այլ եկամուտներ

Պետական բյուջեի այլ եկամուտները 2009 թվականին կազմել են 43 մլրդ դրամ, որը կազմում է բյուջեի եկամուտների 6.2%-ը՝ նախորդ տարվա 5.6%-ի դիմաց: Այլ եկամուտները գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը 42.1%-ով կամ 12.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող և պետության կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների բարձր ցուցանիշներով, որոնք նախատեսված համապատասխանաբար 3.7 մլրդ դրամի և 207.9 մլն դրամի դիմաց կազմել են շուրջ 10.1 մլրդ դրամ և 2.4 մլրդ դրամ: Մուտքերի մնան բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2009 թվականի ընթացքում ստացվել են մեծ ծավալի արտաքին վարկային միջոցներ, այդ թվում՝ 500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՌԳՎարկը: Դրա արդյունքում պետական բյուջեի ազատ մնացորդին և կայունացման դեպոզիտային հաշվին կուտակվել են զգալի միջոցներ, որոնք էլ տարվա ընթացքում արդյունավետ կառավարվել են՝ ապահովելով համապատասխան տոկոսային եկամուտների ստացումը պետական բյուջե: Նշենք, որ նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն ավելացել են համապատասխանաբար 56%-ով կամ 3.6 մլրդ դրամով և 5 անգամ կամ 1.9 մլրդ դրամ:

Բացի այդ, մի քանի այլ եկամտատեսակների գծով ևս արձանագրվել է ծրագրի գերազանցում: Մասնավորապես՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից նախատեսված 60 մլն դրամի և նախորդ տարվա 500.1 մլն դրամի դիմաց պետական բյուջե է փոխանցվել 214.4 մլն դրամ: Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը կազմել են ավելի քան 5.7 մլրդ դրամ՝ 7.6%-ով գերազանցելով ծրագիրը և 27.9%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումների ավելացմամբ: Հաշվետու տարում իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 691 մլն դրամի շահաբաժիններ՝ 12.7%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը և 27.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ցուցանիշի անկումը հիմնականում պայմանավորված է 2009 թվականի հուլիս ամսից Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտվող կազմակերպություններից ստացված շահաբաժինները Երևան քաղաքի համայնքային բյուջե մուտքագրվելու, ինչպես նաև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության տակ գտնվող «Հայկական

երկաթուղի» ՓԲԸ-ի՝ լուծարման գործընթացում գտնվելու հանգամանքներով: Պետության կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց ստացվել են 160.5 մլն դրամ տոկոսավճարներ (ծրագրի 100.6%-ը): Հարկ է նշել, որ վրացական կողմը պատշաճ կերպով կատարել է իր պարտավորությունները՝ ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև ստորագրված «ՀՀ հանդեպ Վրաստանի պարտքի վերաձևակերպման մասին» համաձայնագրերով հաստատված վճարման ժամանակացույցերին համապատասխան: Ընդ որում, նշված գումարից 34.4 մլն դրամը հանդիսանում է 2008 թվականի պարտավորությունը, որը վրացական կողմը փոխանցել է 2008 թվականի դեկտեմբերի 30-ին, սակայն Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2009 թվականի հունվարի 9-ին: Միևնույն ժամանակ, 2009 թվականի վերջին վճարումը՝ 42.5 մլն դրամը, փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերի 30-ին և Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվարի 5-ին:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2009 թվականին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 873.8 մլն դրամ՝ 0.1%-ով գերազանցելով ծրագիրը և 1.2%-ով նվազելով նախորդ տարվա համեմատ: Մասնավորապես 756.4 մլն դրամ է մուտքագրվել գույքի (ծրագրային ցուցանիշից 3.1%-ով ավել), 117.4 մլն դրամ՝ պետական պահուստի հոդերի վարձակալությունից (ծրագրային ցուցանիշից 15.6%-ով պակաս): Նախորդ տարվա համեմատ հողի վարձակալությունից մուտքերի անկումը, որը կազմել է 6.6%, հիմնականում պայմանավորված է նրանով, որ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն վարձակալած հողերի վարձավճարներն ու հողի վաճառքից եկամուտները մուտքագրվում են համայնքների բյուջեներ:

Տիրագուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերը կազմել են 63.9 մլն դրամ՝ 57.7%-ով գերազանցելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտների 39%-ով անկումը պայմանավորված է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին մուտքագրված գումարների նվազմամբ, որոնք կազմել են 19.1 մլն դրամ՝ 2008 թվականի 80.5 մլն դրամի դիմաց:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել 22.8 մլրդ դրամ՝ 18.3%-ով գերակատարելով ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման երրորդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից կատարված վճարումներով:

Նախորդ տարվա համեմատ այլ եկամուտները նվազել են 2.8%-ով կամ շուրջ 1.3 մլրդ դրամով: Անկումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման երրորդ օպերատորի կողմից 2009 թվականին վճարումները կազմել են 2.1 մլրդ դրամ՝ 2008 թվականի 15.3 մլրդ դրամի դիմաց:

ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2009 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտների ցածր կատարողականի պայմաններում կառավարությունն ապահովեց պետական բյուջեի ծախսերի ճշտված ծրագրի կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները՝ ի հաշիվ արտաքին և ներքին աղբյուրներից նախատեսվածից ավել փոխառու միջոցներ ներգրավելու: Տարվա ընթացքում կառավարությունը հաշվի առնելով տնտեսական զարգացումները և ՀՀ պետական բյուջեի եկամուտների կատարման ռիսկերը միջոցներ ձեռնարկեց կենսական նշանակություն ունեցող և սոցիալական բնույթի նախատեսված բոլոր ծախսերը ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնելու ուղղությամբ: Բացի այդ, կառավարությունը բյուջետային պարտքերի կուտակումը կանխելու նպատակով 2009 թվականի մարտի 26-ի N 302-Ն որոշմամբ (այսուհետ՝ կառավարության կասեցման որոշում) մասնակիորեն կամ ամբողջությամբ կասեցրեց պետական բյուջեով նախատեսված որոշ ծրագրերի կատարումը՝ ընդհանուր առմամբ բյուջեով նախատեսված ծախսերի 10%-ի չափով: Արդյունքում ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ծախսերի կատարողականը կազմեց 93.6% կամ 929.1 մլրդ դրամ:

2009 թվականին ՀՆԱ-ի անվանական մեծության 13.2% անկման պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2008 թվականի համեմատ 14.7%-ով ավելացել են, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության կտրուկ աճին. այն կազմել է 29.4%՝ պետական բյուջեի մասին օրենքում կանխատեսված 22.7%-ի և 2008 թվականի 22.2%-ի դիմաց:

Տնտեսագիտական դասակարգում

Ըստ տնտեսագիտական բովանդակության՝ ՀՀ 2009 պետական բյուջեի ծախսերի՝ ծրագրից 6.4% շեղման հիմնական մասը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին: Իսկ նախորդ տարվա համեմատ բյուջեի ծախսերի 14.7% աճը առավելապես պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճով: Արդյունքում 2008 թվականի համեմատ բյուջետային ծախսերի կազմում 11.2 տոկոսային կետով ավելացել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը և համապատասխանաբար՝ նվազել ընթացիկ ծախսերի կշիռը: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ դրանց 77.3%-ն ուղղվել է ընթացիկ և 22.7%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է ավելի քան 718.3 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 94.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Առանձին ծախսային հոդվածներում առկա են նաև տնտեսումներ:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 10.5%-ը՝ 75.6 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 96.7%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 17.9%-ով:

2009 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 152.3 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 21.2%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 90.6%-ով: Ընդ որում բոլոր ծախսային հոդվածներում արձանագրվել են ծրագրից շեղումներ: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն ավելացել են 12.6%-ով՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական պարտքի սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 16.3 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 97.8%-ը: Հատկացված գումարից 8.8 մլրդ դրամն ուղղվել է ներքին, իսկ 7.5 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Տնտեսում է արձանագրվել հիմնականում ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերում՝ 360.4 մլն դրամ, որը պայմանավորված է նախատեսվածից ավելի փոքր ծավալով հետգնումների իրականացմամբ: 2009 թվականին նախատեսվում էր իրականացնել 18-20 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի հետգնում, սակայն փաստացի իրականացված հետգնումների ծավալը կազմել է 9.9 մլրդ դրամ, որոնց դիմաց սպասարկման ծախսը կազմել է 501.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն ավելացել են 47.3%-ով՝ հիմնականում պայմանավորված արտաքին պարտքի սպասարկման ծախսերի աճով, որը կազմել է 108.3%:

2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել են 19 մլրդ դրամի սուբսիդիաներ, որից 17.8 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, իսկ 1.3 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Սուբսիդիաների գծով բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են 92.8%-ով: 2008 թվականի համեմատ՝ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարը նվազել է 78.3%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008 թվականին կառավարության 2006 թվականի ապրիլի 6-ի N 449-Ն որոշման համաձայն

65.7 մլրդ դրամ էր տրամադրվել «ՀայՌ-ուսագաբարդ» ՓԲԸ-ին՝ գազի սպառողների վրա սակագնի ազդեցությունը մեղմելու նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել են 80.1 մլրդ դրամի դրամաշնորհներ՝ ապահովելով 87.1% կատարողական: Մասնավորապես՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով շուրջ 27.5 մլրդ դրամ, ինչը 31%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: Այլ ընթացիկ դրամաշնորհներին տրամադրվել է 20.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված գումարի 71.7%: 7.5 մլրդ դրամի կապիտալ դրամաշնորհներ են տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին՝ ապահովելով 74.7% կատարողական: 2008 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները նվազել են 2.9%-ով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33.4%-ը կամ 240.2 մլրդ դրամ կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 98.6%-ով: Հատկացումները բաշխվել են հետևյալ կերպ. 64.3 մլրդ դրամն ուղղվել է նպաստների և 175.9 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.5%-ով, ընդ որում՝ 18.1%-ով ավելացել են նպաստների, 14.6%-ով՝ կենսաթոշակների վրա կատարված ծախսերը՝ պայմանավորված դրանց չափերի բարձրացմամբ:

2009 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 18.8%-ը կամ 134.9 մլրդ դրամ կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 96.1%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.2%-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2009 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 210.8 մլրդ դրամ, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 22.7%-ը և տարեկան ծրագրի 90.5%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծախսերի ցածր կատարողականով: 2008 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 221.4 մլրդ դրամ, որից 188.6 մլրդ դրամն օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 22.4 մլրդ դրամը՝ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 4.7 մլրդ դրամը՝ այլ հիմնական միջոցների և 5.5 մլրդ դրամը՝ պաշարների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 10.7 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կազմելով կանխատեսված մուտքերի 77.7%-ը: Նշված գումարից շուրջ 10.1 մլրդ դրամը ստացվել է հողի, 569.4 մլն դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

2008 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է շուրջ 2.3 անգամ կամ 117.7 մլրդ դրամով: Մասնավորապես՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 21.9%-ով կամ 39.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների վրա կատարված ծախսերի աճով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը նվազել են 88%-ով կամ 78 մլրդ դրամով: Վերջինս պայմանավորված է հիմնականում այն հանգամանքով, որ 2008 թվականին 65.7 մլրդ դրամ էր ստացվել Հրազդանի 5-րդ էներգաբլոկի վաճառքից:

Գործառնական դասակարգում

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

2009 թվականին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 113 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 89% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է «Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ» դասում: Տնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ կառավարության որոշմամբ բյուջեի ծախսերի մոտ 10%-ի կասեցման արդյունքում բաժնում ընդգրկված ծրագրերի մեծամասնության գծով առկա են շեղումներ:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 13.7 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 93.3%-ը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 8.8%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և կարողությունների զարգացման, վարչական օբյեկտների շինարարության և ՀՀ վերահսկիչ պալատի պահպանման ծախսերի աճով:

2009 թվականին 2.4 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանմանը՝ կազմելով ծրագրի 98.4%-ը: ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարողությունների զարգացման համար նախատեսված 116.4 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ Ազգային ժողովի պահպանման և կարողությունների զարգացման ծախսերն ավելացել են 14.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է հաստիքների ավելացմամբ և ԱԺ նոր մասնաշենքի շահագործմամբ:

Հաշվետու տարում 660.9 մլն դրամ հատկացվել է ՀՀ վերահսկիչ պալատի պահպանմանը՝ կազմելով ծրագրի 95.4%-ը: Վերահսկիչ պալատի աշխատակազմի կարողությունների զարգացման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 64.9%-ով՝ կազմելով 1.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ վերահսկիչ պալատի պահպանման և կարողությունների զարգացման ծախսերն ավելացել են 74.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է հաստիքային միավորների ավելացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 6.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 94.1%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ նախագահի և կառավարության աշխատակազմերի, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների պահպանումը: Շուրջ 388 մլն դրամ տրամադրվել է նշված մարմինների կարողությունների զարգացմանը՝

ապահովելով 85.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ վերջիններիս պահպանման և կարողությունների զարգացման ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

ՀՀ նախարարությունների պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով 2009 թվականին կազմել են 875.5 մլն դրամ, իսկ նախարարությունների աշխատակազմերի մասով՝ 932.9 մլն դրամ, և ապահովել են համապատասխանաբար 88.5 և 95% կատարողական: Համապատասխանաբար 41 մլն և 14.7 մլն դրամ է տրամադրվել նախարարների և նախարարությունների աշխատակազմերի կարողությունների զարգացմանը, որոնք կազմել են ծրագրվածի 41.3 և 21.6 %-ը: 2008 թվականի համեմատ նախարարների աշխատակազմերի մասով ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել, նախարարությունների աշխատակազմերի մասով՝ ավելացել են 19.8%-ով:

Վարչական օբյեկտների շինարարության ծրագրով կատարվել են 995.6 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 100%-ը: Հատկացված միջոցների հաշվին ավարտվել են ՀՀ Ազգային ժողովի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: Իսկ վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 609.3 մլն դրամ, որն իրականացվել է 79.6%-ով:

Տվյալ դասում նախատեսված էր Լոռու և Սյունիքի մարզերի համայնքներին տրամադրել 1.75 մլն դրամ սուբվենցիաներ, որից փաստացի օգտագործվել է 1 մլն դրամը՝ Թումանյանի քաղաքապետարանի գազաֆիկացման համար: Իսկ Ծավ գյուղական համայնքի գյուղապետարանի շենքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները չիրականացնելու հետևանքով նախատեսված 750 հազ. դրամը չի օգտագործվել:

Քաղաքական հետազոտություններ իրականացնելու նպատակով 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված 114.1 մլն դրամը և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 13.9 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել են:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերի կատարմանը հաշվետու տարում տրամադրվել է 33 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 76.2%-ը: Շեղումը, որը կազմել է շուրջ 10.3 մլրդ դրամ, հիմնականում առաջացել է ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի կասեցմամբ և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գումարների պակաս օգտագործմամբ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 10.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի նվազմամբ:

Այս դասում ներառված՝ գործադիր իշխանության մարմինների պահպանման ծրագրի գծով տրամադրվել է 9.5 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 97.3%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 25.8%-ով, որը պայմանավորված է

համակարգի աշխատակիցների սոցիալական վիճակի բարելավման նպատակով աշխատավարձի ծախսերի ավելացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 1.3 մլրդ դրամ, որի կատարողականը կազմել է 87.4%: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը: Նախարարության կարողությունների զարգացման նպատակով նախատեսված 86.2 մլն դրամը չի օգտագործվել: Նախորդ տարվա համեմատ նախարարության աշխատակազմի պահպանման և կարողությունների զարգացման ծախսերը նվազել են 11.1%-ով:

2009 թվականին ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման նպատակով տրամադրվել է 185.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 87.1%-ը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 13.2%-ով:

Ամբողջությամբ կատարվել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդի և ՀՀ պետական բյուջեից ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 466.5 մլն դրամ և 716.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ պետական պարտատոմսերի գովազդի ծախսերը կազմել են 45 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 90% կատարողական և 6.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 18.6 մլն դրամ, որը կատարվել է 88.6%-ով:

Արտահանողներին ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձի նպատակով 2009 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 15 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 67.3%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 31.8%-ով: Բացի նշված գումարից, ևս 3.8 մլրդ դրամ վերադարձվել է ավելացված արժեքի հարկի եկամուտները նվազեցնելու միջոցով՝ նախորդ տարվա 3.4 մլրդ դրամի դիմաց:

Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզավճարների տրամադրման նպատակով օգտագործվել է 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98%-ը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 4.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 64.2%-ը:

Հաշվետու տարում շուրջ 7.1 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* խմբի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 89.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման և արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների ծախսերի

ցածր կատարողականով: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2008 թվականի հետ համադրելի դասակարգմամբ (առանց միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարման ծախսերի, որոնք 2009 թվականին ընդգրկվել են պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում) ավելացել են 0.7%-ով:

Արտաքին հարաբերությունների ծախսերից 4.5 մլրդ դրամն ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 88.8%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է թափուր հաստիքների առկայության արդյունքում միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.6%-ով:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կատարվել են ամբողջությամբ՝ կազմելով 938.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.7%-ով՝ պայմանավորված տարադրամի փոխարժեքի բարձրացմամբ:

Ցածր կատարողական է արձանագրվել արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերում, որոնք կատարվել են համապատասխանաբար 52.2%-ով և 88.2%-ով: Նշված ծրագրերի գծով նախատեսված 300-ական մլն դրամի դիմաց կատարվել են համապատասխանաբար 156.7 և 264.5 մլն դրամի ծախսեր:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը հատկացվել է 141.7 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 91.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 7.2%-ով՝ պայմանավորված դիվանագիտական աստիճանի համար սահմանված հավելավճարի չափերի ավելացմամբ: Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման ծրագրի գծով ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվել է 758.4 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 4.9%-ով՝ հիմնականում պայմանավորված դիվանագետին երրորդ լեզվի իմացության համար տրվող հավելավճարով:

Դեսպանությունների շենքերի գնման նպատակով օգտագործվել է 177.1 մլն դրամ կամ նախատեսվածի 88.6%-ը: Նշված գումարից 151.8 մլն դրամի հաշվին Մինսկ քաղաքում ձեռք է բերվել դեսպանության շենք, իսկ 25.9 մլն դրամն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2009 թվականի պարտավորության մարմանը:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 108.6 մլն դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Տվյալ խմբում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման

մարմինների կարողությունների զարգացման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար նախատեսված 25.5 մլն դրամի օգտագործումը կասեցվել է կառավարության որոշմամբ:

ՀՀ-ում ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) ծրագրի շրջանակներում նախատեսված 14.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որն ուղղվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի ներկայացրած մի շարք ծրագրերի իրականացմանը:

Ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը 2009 թվականին կազմել են 2.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 91.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայությունների դասի ցածր կատարողականով: Սակայն 2008 թվականի համեմատ հիմնականում նշված ծախսերի աճի արդյունքում ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերն ավելացել են 6.5%-ով:

Հաշվետու տարում 374.3 մլն դրամ է տրամադրվել աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 93.9%-ը: Այս դասում ներառված՝ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով համապատասխանաբար 52.5 և 147.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերն աճել են 25%-ով, որը պայմանավորված է կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների թվաքանակի աճով: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումը 2008 թվականի համեմատ փոփոխություն չի կրել: Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 174.2 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 93.3% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Խորհրդի կարողությունների զարգացման համար նախատեսված 12 մլն դրամը չի հատկացվել՝ համաձայն կառավարության կասեցման որոշման: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանման ծախսերը 2.5%-ով զիջել են 2008 թվականի ցուցանիշը:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87.8%-ը: Ընդ որում, բոլոր 7 ծրագրերում առկա են շեղումներ: Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և

տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 602.2 մլն դրամ կամ ծրագրի 93.8%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել: Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 278.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.1%-ը և 15%-ով գերազանցելով 2008 թվականի ցուցանիշը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների հատկացումները կազմել են 169.8 մլն դրամ կամ նախատեսվածի 67.9%-ը, որը պայմանավորված է ծախսերի կասեցմամբ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 61.8%-ով՝ մատակարար կազմակերպությունների կողմից վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների գների աճով: 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման և վերջինիս համար կարողությունների զարգացման գծով օգտագործվել է համապատասխանաբար 44.8 մլն դրամ (76.2%) և 11.5 մլն դրամ (66.8%): «SIDA. «Ժամանակի օգտագործում», «Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն», «Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր», «Շրջակա միջավայրի վիճակագրություն» ծրագրի շրջանակներում արտաբյուջետային միջոցների հաշվին ծախսերը կազմել են 321.8 հազար դրամ կամ նախատեսվածի 72.8%-ը: «TASIS. Վիճակագրություն 10-Բիզնես ռեգիստրի հետազոտություն» ծրագրով արտաբյուջետային միջոցներից հատկացումները կազմել են 2.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 622.7 մլն դրամ, որից 234.3 մլն դրամ՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, 4.2 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 93.6% և 99.8%: «ՀՀ պետական գնումների գործակալություն» և «Սպասարկում» ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը նախատեսված ողջ ծավալով տրամադրվել է՝ կազմելով համապատասխանաբար 149.5 մլն դրամ և 234.7 մլն դրամ: 2008 թվականի համեմատ նշված դասի ծախսերն ավելացել են 3.8%-ով:

2009 թվականին «*Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք*» խմբին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 5.5 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 92.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի ցածր կատարողականով: 2008 թվականի համեմատ խմբի ծախսերն ավելացել են 24.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների և

գիտական ու գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի աճով:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները կազմել են 523.7 մլն դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» և «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 2.5 մլրդ դրամ և 241.6 մլն դրամ: 2008 թվականի համեմատ ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծախսերն ավելացել են 46.6%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվի առնելով ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների բացառիկ նշանակությունը պետության համար՝ 2009 թվականին իրականացվել է աշխատավարձերի և տնտեսական այլ ծախսերի վերահաշվարկ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են 2 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով 84.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտության պետական կոմիտեի կողմից սահմանվել են ֆինանսավորման համար որոշակի չափորոշիչներ, որոնց հիման վրա իրականացվել է ֆինանսավորումը: Բացի այդ, չի կայացել փորձագետների համակարգի ստեղծման և զարգացման համար նախատեսված մրցույթների մի մասը: Ծրագրի շրջանակներում միջոցներ էին նախատեսվել նաև Գիտական կենտրոնի ստեղծման և գիտական համագործակցության համար, սակայն ֆինանսավորումը ստացվել է 4-րդ եռամսյակում, ինչը բավարար ժամանակահատված չէր գիտական կենտրոնի ստեղծման և միջազգային գիտական համագործակցության համար: 2008 թվականի համեմատ գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ծախսերն ավելացել են 38%-ով:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագիրն իրականացվել է 72.9%-ով: Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում օգտագործվել է 164.4 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան 2008 թվականին որոշեց կրճատել գյուղական ճանապարհների վերականգնմանն ուղղված գումարի ամբողջական տրամադրումը, իսկ 2009 թվականին վերջնականապես դադարեցրեց այդ աշխատանքների ֆինանսավորումը: Ծրագրի ցածր կատարողականի պատճառ է հանդիսացել նաև ծրագրի մյուս՝ Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի նախնական ծավալների որոշ մասի կրճատումը: Արդյունքում կրճատվել են նաև ծրագրի մոնիթորինգի և ազդեցության գնահատման ծախսերը: 2009 թվականին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից

իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը (ԿՄԱՀ) օգտագործվել է ծրագրի մոնիթորինգի և ազդեցության գնահատման նպատակով, մասնավորապես, գյուղական աղքատության կրճատման վրա ծրագրի ազդեցությունը գնահատելու համար: Բացի այդ, Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) ծրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացվող վերապատրաստման դասընթացների ազդեցության գնահատման նպատակով իրականացվել է գյուղատնտեսական գործունեության հետազոտությունը, հավաքվել են տվյալներ, կատարվել են համապատասխան վերլուծություններ: Իրականացվել են ՋՕԸ-երի և ջրօգտագործողների հետազոտության դաշտային աշխատանքներ: Սկսվել են ՀՄՀ-Հայաստան ծրագրի տարբեր բաղադրիչների գործընթացի որակական վերլուծության աշխատանքներ: Հաշվետու տարում ավարտվել է 44 ՋՕԸ-երի գնահատումը, և մշակվել են կառավարման բարելավման 26 պլաններ (ԿԲՊ): Ներկայումս 8 թիրախային ՋՕԸ-ում խորհրդատվական աշխատանքներ են ընթանում ԿԲՊ իրականացման աջակցության ուղղությամբ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 23.3%-ով՝ հիմնականում պայմանավորված Երևանի համաքաղաքային ծախսերի նվազմամբ:

Տվյալ խմբում ընդգրկված ծրագրերից Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը և գիտական ու գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորումն իրականացվել են ամբողջությամբ: Մասնավորապես՝ 271.3 մլն դրամ են կազմել Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, մշակման, փորձաքննության, Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման, «Երևան» պատմաաշխարհագրական ատլասի ստեղծման և Երևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հաղիսացող հողերը համայնքին սեփականության իրավունքով անհատույց փոխանցելու ուղղությամբ: 2008 թվականի համեմատ նշված ծրագրի ծախսերը նվազել են 69.4%-ով՝ պայմանավորված նախագծային աշխատանքների համար տրամադրված միջոցների նվազմամբ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում 123 մլն դրամ է հատկացվել ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ «Հայոց պատմություն» եռահատորյակի և ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» եռահատորյակի տպագրության համար:

Խմբի ծախսերի զգալի մասը՝ ավելի քան 1.5 մլրդ դրամ (98.8%), տրամադրվել է գիտական ու գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններին: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 710 գիտական թեմա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.7%-ով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերի չպատկանող) խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 5.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 657.8 մլն դրամ կամ նախատեսվածի 74.1%-ը: Ծրագրի նպատակներն են՝ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն ընտրված հաստատություններում մոդելային նորարարությունների իրականացման միջոցով, պետական կառավարման համակարգի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը և կառավարության կողմից որոշումների կայացումն ու քաղաքականության իրականացումն արդյունավետորեն վերահսկելու համար համապատասխան մեխանիզմների ստեղծումը: Ծրագիրը ներառում է հետևյալ վեց բաղադրիչները՝ «Քաղաքացիական ծառայության համակարգի կառավարման հզորացում», «Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրում», «Արտաքին վերահսկողության ուժեղացում», «Քաղաքականության մշակման բարելավում», «Տեղական ինքնակառավարման համակարգի հզորացում», «Ծրագրի կառավարում»: Ծրագրից 25.9% շեղման հիմնական պատճառ է հանդիսացել ծրագրի էլեկտրոնային գնումների ներդրման բաղադրիչի ներքո նախատեսված աշխատանքների փոփոխությունը: Արդյունքում գնումների գործընթացը սկսվել է 2009 թվականի դեկտեմբերին: Բացի այդ, մեքենաների և սարքավորումների ձեռքբերման գծով վարկային ծրագրի համաֆինանսավորման փաստացի ծախսը 2009 թվականին իրականացվել է ի հաշիվ կանխավճարի, որը համաձայն համապատասխան վարկային համաձայնագրի ստացվել էր ծրագրի մեկնարկին և ենթակա է մարման ավարտման փուլում: Միառժամանակ, Քաղաքացիական ծառայության խորհրդի շենքի համար օդորակիչների մատակարարումը և տեղադրումը իրականացվել է 2010 թվականի հունվարին:

Հաշվետու տարվա ընթացքում 526.1 մլն դրամ է տրամադրվել այս խմբում ընգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 94.8%-ը: Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում 8.1 մլն դրամ (73.7%) է տրամադրվել ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովին: Նախորդ տարվա համեմատ նշված մարմինների պահպանման և կարողությունների զարգացման ծախսերը նվազել են 1.4%-ով:

Նախատեսված ամբողջ ծավալով իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- 2009 թվականին փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 203.3 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ տվյալ ծախսերն ավելացել են 38.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է կատարված փորձաքննությունների քանակի աճով:

- աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներին տրամադրվել է շուրջ 21.5 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ տվյալ ծախսերն ավելացել են 13.4%-ով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության և պարտադիր սոցիալական ապահովության ծախսերի աճով:

- անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրմանը հատկացվել է 30 մլն դրամ: 2008 թվականի համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

- պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 35.2 մլն դրամ, որը 14.9%-ով գերազանցում է 2008 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության և պարտադիր սոցիալական ապահովության ծախսերի աճով:

- «Մեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալության ՊՈԱԿ-ներին հաշվետու տարում տրամադրվել է 431.3 մլն դրամ՝ 14.9%-ով գերազանցելով 2008 թվականի ցուցանիշը:

- երկրատեղեկատվական համակարգի նախագծման, ներդրման և սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 87 մլն դրամ: Հատկացված միջոցներով 2009 թվականին իրականացվել են Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 4841 հա տարածքի կադաստրային և տեղագրական հատակագծերի համադրման, անճշտությունների հանութագրման, թարմացման, ստորգետնյա մայրուղային հաղորդակցողիների հանութագրման, երկրատեղեկատվական համակարգի տվյալների հավաքագրման, շերտերի ստեղծման և դասակարգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

- հողամասերի, շենքերի և շինությունների համակարգված դիտարկումների և անշարժ գույքի շուկայի վերլուծությունների իրականացման ծախսերը կազմել են 30 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել: Սահմանների ամրացման ծառայություններին տրամադրվել է 58.5 մլն դրամ, որն օգտագործվել է ՀՀ վարչատարածքային միավորների՝ համայնքների սահմանների ճշտման և ամրացման աշխատանքների ֆինանսավորման համար: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացվել են Արարատի մարզի 97 համայնքների կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական

սահմանների նկարագրման, քարտեզների համադրման և դրա արդյունքում անճշտությունների ուղղման, վարչական սահմանների ամրացման աշխատանքներ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 25.5%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների աճով:

Ավտոմատացված համակարգի ներդրմանը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործունեության ավտոմատացման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի և լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերմանը տրամադրվել է 56.6 մլն դրամ ապահովելով տարեկան ծրագրի 99.6% կատարողական: Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ծառայություններին տրամադրվել է 27 մլն դրամ (35.1%), հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը՝ 4.9 մլն դրամ (61.8%):

Աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներին տրամադրվել է 12 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 70.6% կատարողական: Հատկացված միջոցներով իրականացվել են ՀՀ աշխարհագրական անվանումների քարտադարանի վարման և թարմացման, աշխարհի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի նախապատրաստման աշխատանքներ:

«Պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքներ» ծրագրի շրջանակներում 2009 թվականին տրամադրվել է 166.9 մլն դրամ (93.2%), որով իրականացվել է ՀՀ պետական մասշտաբային շարքի 1:10000 մասշտաբի 670 թերթ տեղագրական քարտեզները և դրանց տեղեկամատյանները գեոդեզիական կետերով և աշխարհագրական անվանումներով համալրելու և պետական մասշտաբային շարքի 88 թերթ տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքներ: ԼՂՀ-ի տարածքում կատարվել է 6102.3 քառ. կմ տարածքի տիեզերալուսանկարահանման նյութերի պլանաբարձունքային հիմքի ստեղծման և վերծանման, մոտ 4430 քառ. կմ տարածքի նյութերի գեոդեզիական խտացման, հավասարակշռման և օրթոֆոտոների ստացման, 110 թերթ 1:10000 մասշտաբի և 35 թերթ 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզների թվայնացման աշխատանքներ: Ծրագրից շեղումը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով չիրականացված տիեզերալուսանկարահանման աշխատանքներով: 2008 թվականի համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 55.7%-ով:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով 97% կատարողական, իսկ նույն աղբյուրից ֆինանսավորվող՝ կոմիտեի համակարգի

կարողությունների զարգացման ծախսերը կազմել են 184.2 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 11.6%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման և Պետական հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 109.3%-ով (122.9 մլն դրամ) և 103.4%-ով (129 մլն դրամ): Գերակատարումը պայմանավորված է 2009 թվականին ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ տեղի ունեցած արժեզրկմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման ծրագրի շրջանակներում մշակվել են կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) տեխնիկական առաջադրանքը, իրականացման ռազմավարությունը և ֆինանսական նախահաշիվը: ԿՖԿՏՀ-ում ներգրավված անձանց կարողությունների ամրապնդման նպատակով կազմակերպվել են սեմինար-քննարկումներ, ապահովվել է մասնակցությունը 2009 թվականի նոյեմբերի 16-20-ը Թբիլիսիում Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Ֆինանսական կառավարում և գնումներ» թեմայով համատեղ տարածաշրջանային աշխատաժողովին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների իրականացման ծրագրի շրջանակներում մշակվել են՝

- «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը.

- հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտները.

- հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը.

- հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ուղե-
ցույցը.

- հանրային հատվածի կազմակերպությունների համար հաշվապահական հաշվառման մոդելային քաղաքականությունը.

- բարեփոխումների իրականացման ռազմավարությունը,

- հանրային հատվածի կազմակերպություններում գործող հաշվային պլանից նոր հաշվային պլանին անցման ցուցումները,

- հաշվեգրման հիմունքով հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման փորձնական ծրագրով իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը.

- ֆինանսական հաշվետվություններ 2009 թվականի մարտի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության օրինակով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման երկրորդ դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսված էր 116.8 մլն դրամ, որը կատարվել է 43.7%-ով՝ կազմելով 116.8 մլն դրամ: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանին՝ ներդրումների և արտահանման խթանման գործում, ինչպես նաև բարելավել բիզնես և ներդրումային միջավայրը, որի շնորհիվ օժանդակություն կցուցաբերվի նաև տնտեսական և սոցիալական անցումային գործընթացին: Ծրագիրը բաղկացած է 4 բաղադրիչներից՝ «Ենթակառուցվածքների և հմտությունների զարգացում», «Ներդրողների և արտահանողների սպասարկման ինստիտուցիոնալ ամրապնդում», «Ներդրումների և արտահանման խթանում և ստեղծում», «Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում»: Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է խորհրդատվական ծառայությունների մատուցման ժամկետների վերանայմամբ: Բացի այդ, 2009 թվականին նախատեսված էր Ջարգացման հայկական գործակալության վարչական շենքի չորրորդ հարկի կապիտալ, ինչպես նաև ամբողջ շենքի կոսմետիկ վերանորոգման աշխատանքների իրականացումը, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ որոշում կայացվեց ՀԲ-ի և ծրագրի կառավարման խորհրդի համաձայնությամբ նախագծանախահաշվային փաստաթղթերը վերանայելու համար վարձել խորհրդատվական ընկերություն, վերանայվեցին վերոնշյալ աշխատանքների ժամկետները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման երկրորդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ընթացիկ ծախսերի գծով ծախսվել է 101.8 մլն դրամ կամ նախատեսվածի 43.4%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է խորհրդատվական ծառայությունների մատուցման ժամկետների վերանայմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Վիճակագրական մաստեր-պլանի մշակման և վիճակագրական կարողությունների ուժեղացման միջոցով տեխնիկական աջակցության դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 35.5 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 38.3 մլն դրամ: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի աճով: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցություն ցուցաբերել Ազգային վիճակագրական ծառայությանը վիճակագրական գլխավոր ծրագրի մշակման գործում, որը հիմք կհանդիսանա վիճակագրական կարողությունների կառուցման և պաշտոնական վիճակագրության ռազմավարության մշակման գործում: Ծրագրի շրջանակում իրականացվել են բոլոր նախատեսված խորհրդատվական ծառայությունները, մասնավորապես՝ իրականացվել է «Վիճակագրական համակարգի և տեղեկատվության սպառող-տրամադրող երկխոսության գնահատման, Հայաստանի ազգային վիճակագրական

մաստեր-պլանի մշակում» միջոցառումը, որի շրջանակում մշակվել է Վիճակագրական մաստեր պլանը, որը կհանդիսանա պլանավորման գործիք և կներառի ներկայիս Ազգային վիճակագրական ծառայության գնահատումը, վերջինիս միջոցով կուսումնասիրվեն համակարգի ուժեղ կողմերը և սահմանափակումները, և որի միջոցով կառաջադրվեն վիճակագրական համակարգի բարելավման այլընտրանքային ոլորտներ: Կազմակերպվել է սեմինար, որը հնարավորություն էր ընձեռնել բաժնետերերին և դոնորներին ծանոթանալ պլանի հետ և ունենալ տրամադրող-ստացող երկխոսություն՝ թե՛ միջազգային և թե՛ ազգային մակարդակներում ներկայացնել Վիճակագրական մասթեր պլանի շրջանակներում գրանցված ձեռքբերումները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 98.2 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 50.7 մլն դրամ (51.7%): Ծրագրի նպատակն է ամրապնդել ՀՀ ֆինանսների նախարարության Պետական պարտքի կառավարման վարչության ինստիտուցիոնալ կարողությունները՝ պարտքի կառավարումն ուժեղացնելու և ներքին պարտքի շուկայի զարգացման միջոցով: Դրամաշնորհային ծրագիրը բաղկացած է 2 բաղադրիչներից՝ «Պետական պարտքի կառավարում» և «Ներքին պարտքի շուկայի զարգացում»: Ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ ՀՀ ֆինանսներին նախարարությունը շարունակում էր պետական պարտքի կառավարման բարեփոխումները, որին օժանդակում էր նաև Հայաստանում Եվրամիության խորհրդատվական խումբը: Վերջինիս հետ տեղի ունեցած բազմաթիվ հանդիպումների և քննարկումների արդյունքում հստակեցվել են պետական պարտքի կառավարման բարեփոխումներին ուղղված քայլերի հաջորդականությունը և մշակվել է պետական պարտքի կառավարման բարեփոխումների գործողությունների ծրագիր, որը կնպաստի պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Քննարկումների արդյունքում արվել է եզրահանգում, որ անհրաժեշտություն է առաջացել վերանայել Համաշխարհային բանկի «Պետական պարտքի կառավարման» դրամաշնորհի շրջանակում հաստատված միջոցառման իրականացման ժամկետները: Նախատեսված ծախսերի ցածր կատարողականի պատճառներից մեկն էլ այն է, որ խորհրդատուների հետ բանակցությունների ընթացքում առաջանում է խնայողություն, և ծախսվում է նախատեսվածից ավելի քիչ գումար: 2009 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ խորհրդատվական ծառայությունները՝

- «Տվյալների հավաքում, դրամական հոսքերի մոդելավորում, ռիսկի չափորոշիչների և հաշվետվությունների ձևավորում» միջոցառումը, որի գլխավոր նպատակներն էին այլընտրանքային ռազմավարությունների առաջարկումը՝ հիմք ընդունելով պարտքի արժեքն ու ռիսկը, արժեք-ռիսկ վերլուծության իրականացումը, ռազմավարության ձևավորումը և այլն.

- «Առաջնային գրասենյակի ներուժի ստեղծման/առաջնային դիլերների համակարգի բարեփոխման գնահատում» միջոցառումը, որի գլխավոր նպատակներն էին առաջնային գրասենյակի մասնագետների կողմից ռազմավարության իրագործման կարողությունների զարգացումը, Հայաստանում գործող առաջնային դիլերների ներկայիս ծրագրի գնահատումը, ինչպես նաև բարեփոխման առաջադրումը, որը կօժանդակի ներքին պարտքի շուկայի կատարողականի բարելավմանը և զարգացմանը.

- «Գրամային շուկաների և իրացվելիության ծրագրի մշակում» միջոցառումը, որի գլխավոր նպատակներն էին ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև միջինստիտուցիոնալ նոր համաձայնագրի համար բազային հիմնադրույթների, սկզբունքների, մոտեցումների, ընդհանուր նպատակների և խնդիրների մշակումը, շուկայում առկա գործիքների օգտագործման այնպիսի ծրագրի մշակումը, որը ենթադրում է գործիքների կիրառման եղանակների վերանայում այնպես, որ նպաստի շուկայի ակտիվացմանը և շուկայի մասնակիցների միջև իրացվելիության փոխանակմանը, ռեպո գործիքի կիրառման նոր ծրագրի մշակումը, որը կխթանի միջբանկային ռեպո շուկայի ակտիվացմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 26 մլն դրամ կամ նախատեսվածից 19.3%-ով ավելի, որը պայմանավորված է 2009 թվականին ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ տեղի ունեցած արժեզրկմամբ: Ծրագրի շրջանակներում ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ստանդարտների գործնական կիրառության վերաբերյալ փորձարկման աշխատանքներ են կատարվել ՀՀ կրթության և գիտության նախարարությունում, վերջինիս ենթակա «Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ում և Երևանի Արաբկիր համայնքի թաղապետարանում: Փորձարկման նպատակն էր բացահայտել այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են այդ ստանդարտները հնարավորինս կիրառական դարձնելու համար: Արդյունքում ներքին աուդիտի ստանդարտները լրամշակվել են և հաստատման կներկայացվեն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:

2009 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի համակարգում ներգրավված պաշտոնյաների և ՀՀ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների գլխավոր աուդիտորների/գլխավոր ֆինանսիստների համար կազմակերպվել են «Ներքին աուդիտը ՀՀ-ում» և «Հանրային հատվածի ներքին աուդիտի բարեփոխումները Հայաստանում» թեմաներով սեմինար-խորհրդակցություններ, որոնց ընթացքում մասնակիցներին մանրամասն ներկայացվել են հանրային հատվածի ներքին աուդիտի ստանդարտները և այդ ոլորտում միջազգային փորձը:

Ապահովվել է մասնակցությունը 2009 թվականի ապրիլի 1-3-ը ք. Լյուբլյանայում Համաշխարհային բանկի կողմից, PEMPAL ծրագրի շրջանակում, անդամ երկրների

ներկայացուցիչների համար կազմակերպված թվով չորրորդ աշխատաժողովին՝ «Ներքին առդիտ» թեմայով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 44.9 մլն դրամ կամ նախատեսվածի 76.8%-ը: Ծրագրի նպատակն է ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին ընթացակարգերի շրջանակներում նոր և նորարարական միջոցառումների ներդրման, ինչպես նաև քաղաքականության կառուցման առաջատար մոդելների փորձարկման միջոցով ապահովել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում համապատասխան ներուժի զարգացումը: Ծրագիրը բաղկացած է «Ինստիտուցիոնալ զարգացման խթանում» և «Քաղաքականության վերլուծության ներուժի ամրապնդում» բաղադրիչներից: Շեղումն արձանագրվել է դրամաշնորհային միջոցների օգտագործման գծով, իսկ կառավարության համաֆինանսավորումը տրամադրվել է նախատեսված գումարի չափով: Ծրագրի ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ տեխնիկական առաջադրանքների երկարատև քննարկումների արդյունքում հանձնարարականների իրականացումը սկսվեց նախատեսված ժամկետից ուշ: 2009 թվականի ընթացքում կնքվել են պայմանագրեր հետևյալ խորհրդատվական ծառայությունների իրականացման համար՝

- խոշոր հարկատուների հետազոտություն.
- վարչարարական և կանոնակարգային ծախսերի ուսումնասիրություն.
- ուղղորդում և խորհրդատվական աջակցություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը քաղաքականության վերլուծությունների հաշվարկելի համընդհանուր հավասարակշռության մոդելների ներկայացման և կիրարկման համար.
- ուղղորդման և խորհրդատվական աջակցություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը պիլոտային սկզբունքով էկոնոմետրիկ մոդելավորման ներդրման և վերապատրաստողների վերապատրաստման համար.
- ուղղորդում և խորհրդատվություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրման միջոցով ռազմավարական պլանավորման ուղղությամբ,
- ուղղորդում և խորհրդատվություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը ինստիտուցիոնալ զարգացման ռազմավարության մշակման և կիրարկման ուղղությամբ.
- ուղղորդում և խորհրդատվություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը ներքին կառուցվածքի և հասարակայնության հետ կապերի գործառույթի ամրապնդման ուղղությամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեխնոլոգիաների մրցունակության բարձրացման նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի գծով կատարվել են 40.6 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 18.8%-ը: Տեխնոլոգիաների մրցունակության բարձրացման նախապատրաստման ծրագրի համաձայնագիրը

Համաշխարհային բանկի և ՀՀ միջև ստորագրվել է 2009 թվականի փետրվարի 25-ին: Ծրագրի նպատակն է ստեղծել օժանդակ միջավայր Հայաստանում ինովացիոն և մրցունակ գիտելիքահենք հասարակություն ձևավորելու նպատակով՝ զարգացած տեղեկատվական ենթակառուցվածքով, էլեկտրոնային ծառայություններով և հզոր տեղական տեխնոլոգիական ոլորտներով: Դրամաշնորհային ծրագիրը բաղկացած է 4 բաղադրիչներից՝ «Էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքի զարգացում», «Ինովացիոն ենթակառուցվածք», «SS ոլորտ և էլեկտրոնային հասարակություն» և «Ծրագրի կառավարում»:

2009 թվականին դրամաշնորհային միջոցների գծով բյուջեում նախատեսվել էր 201.8 մլն դրամ, որից փաստացի օգտագործվել է 26.2 մլն դրամ, իսկ համաֆինանսավորման մասով նախատեսված 14.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցները նախատեսված էր օգտագործել ծրագրի շրջանակում նախատեսված մի շարք խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով, մասնավորապես՝ ինտերնետային հիմնացանցի և ներքին կառավարական ցանցի ստեղծմանն ուղղված, ռադիոհաճախականությունների տիրույթի վերլուծության, համեմատական վերլուծության և առաջարկությունների ներկայացման ուղղությամբ, Գյումրիի տեխնոքաղաքի եռաչափ համակարգչային մոդելների ստեղծման, ճարտարագիտական վերլուծության և տեղանքի հետազոտման, ճարտարագիտական նախագծերի և նախահաշիվների պատրաստման, Երևանի տեխնոպարկի ծրագրի նախագծման, իրագործելիության հետազոտության, տեղանքի (վայրի) ընտրության, բիզնես ծրագրերի մշակման ուղղությամբ, վեճուրային կապիտալի և սկսնակ ձեռնարկությունների աջակցման ուղղությամբ: SS ոլորտի զարգացմանն ուղղված և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք ծրագրերին աջակցելու նպատակով նախատեսված էր ընտրել SS վկայագրման, իրացման և ներդրումների խթանման, մասնագետների պատրաստման և իրավական հարցերով խորհրդատուներ: Նախատեսված էր իրականացնել ճարտարագիտական նախագծման ոլորտի հետազոտություն, աջակցել «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրականացմանը և այլ խորհրդատվական ծառայություններ:

Դրամաշնորհային միջոցների թերի օգտագործումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի երկարաձգմամբ և տարբեր խնդիրների առաջացմամբ: Մասնավորապես՝ քանի որ Հայաստանում չկան SS ոլորտում բազմամյա փորձառություն և որակավորում ունեցող մեծ թվով խորհրդատվական ընկերություններ և անհատներ, որոնք բավարարում են ծրագրի շրջանակում մշակված տեխնիկական հանձնարարականներով սահմանված ընդունելիության չափանիշներին և որոնք կարող են մասնակցել հայտարարված մրցույթներին, այդ իսկ պատճառով մրցույթների մեծ մասը հայտարարվում է երկու և ավելի անգամ, որպեսզի ապահովվի մրցույթների կայացման համար Համաշխարհային բանկի ուղեցույցերով սահմանված հայտերի անհրաժեշտ քանակը՝ նվազագույնը վեց հայտ:

Անհրաժեշտ քանակը չապահովելու դեպքում հարկ է լինում լրացուցիչ դիմել ՀԲ՝ գնահատման գործընթացը սահմանվածից քիչ հայտերով շարունակելու համար թույլտվություն ստանալու նպատակով: Այս ամենը, ինչպես նաև բուն գնահատման գործընթացը երկար ժամանակ է պահանջում, ինչի հետևանքով խորհրդատուների ընտրությունը և պայմանագրերի շնորհումը նույնպես ուշացել է: Արդյունքում հուլիս-օգոստոս ամիսներին մեկնարկած հանձնարարականներով պայմանագրեր կնքվեցին միայն տարվա վերջում (նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին), ուստի 2009 թվականին նախատեսված վճարումների հիմնական մասը տեղափոխվեց 2010 թվական:

2009 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ կառավարության արդյունքների մոնիտորինգի բարելավման կարողությունների ստեղծման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսված էր իրականացնել 31.9 մլն դրամի ծախսեր, որոնք պետք է օգտագործվեին ծրագրի շրջանակներում նախատեսված մի շարք խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելու նպատակով: Փաստացի օգտագործվել է 17.2 մլն դրամ կամ նախատեսվածի 54%-ը: Գրամաշնորհի համաձայնագիրը Համաշխարհային բանկի և ՀՀ միջև ստորագրվել է 2009 թվականի ապրիլի 21-ին: Ծրագրի նպատակը կառավարությունում ինստիտուցիոնալ գիտելիքի և կարողությունների ստեղծումն է՝ մոնիտորինգի և գնահատման ազգային համակարգի հիմունքների ձևավորման միջոցով պետական կառավարման համակարգի աշխատանքային ընթացակարգերի բարեփոխման համար: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ «Գործող ընթացակարգերի վերլուծություն, նոր աշխատանքային և մոնիտորինգի ու գնահատման ընթացակարգերի ներդրում» և «Կատարողականի մոնիտորինգի կարողությունների ստեղծում»: Ծրագրի ընթացքում կնքվել է պայմանագիր «ՀՀ կառավարության կարողությունների ամրապնդում՝ արդյունքների մոնիտորինգի և աշխատանքային ընթացակարգերը վերանախագծելու համար» միջոցառման իրականացման նպատակով: Յաճր կատարողականի պատճառն այն է, որ ներկայացվել է նախատեսվածից ավելի ցածր պայմանագրային գին, որի արդյունքում առաջացել է խնայողություն:

Վարչական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում 20 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքի հիմնանորոգման համար, որը չի օգտագործվել:

Նախորդ տարվա համեմատ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) խմբի ծախսերը նվազել են 21%-ով, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008 թվականին շուրջ 1.6 մլրդ հատկացվել էր ՀՀ Նախագահի և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման ծախսերի ֆինանսավորմանը:

Պետական պարտքի գծով գործառնությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 16.3 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ծրագրով նախատեսվածի 97.8%-ը: 8.3 մլրդ դրամ տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկման նպատակով՝ կազմելով նախատեսվածի 96.6%-ը: Նշված ծավալով տոկոսավճարի խնայողությունը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից ավելի փոքր ծավալով հետգնումների իրականացմամբ: Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է շուրջ 7.5 մլրդ դրամ: Մուրհակների սպասարկման ծախսերը կազմել են 3.3 մլն դրամ: Վերը նշված երկու ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով: Շուրջ 508 մլն դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների սպասարկմանը, որը կազմել է նախատեսվածի 87.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է միջազգային շուկայում LIBOR տոկոսադրույքի անկումով:

2009 թվականին ՀՀ պետական բյուջեից կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներն ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով 28 մլրդ դրամ: Նշված գումարից ավելի քան 27.8 մլրդ դրամը կազմել են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցումը: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվել են 205.6 մլն դրամի սուբվենցիաներ: Նախորդ տարվա համեմատ կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներն աճել են 30.1%-ով:

Պաշտպանություն

2009 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 130.2 մլրդ դրամ, որը 4.1%-ով զիջում է տարեկան ծրագիրը: Տնտեսումների զգալի մասն արձանագրվել է ռազմական կարիքների բավարարման ծախսերում: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 7.5%-ով:

Հաշվետու տարում *ռազմական պաշտպանության* խմբին հատկացվել է շուրջ 125 մլրդ դրամ, որից 124.8 մլրդ դրամը՝ ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմում է ծրագրի 95.9%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը հատկացվել է 142.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 89%-ը:

Արտաքին ռազմական օգնությանը տրամադրվել է շուրջ 108.3 մլն դրամ կամ ծրագրի 91.6%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության ռազմական

ներկայացուցչության պահպանման, ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի համադրման օղակում ՀՀ կապի սպայի գործունեության ապահովման և Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի շենքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են համապատասխանաբար 39.3 մլն դրամ, 29 մլն դրամ և 9.6 մլն դրամ, որոնք ամբողջությամբ ֆինանսավորվել են: ՆԱՏՕ-ի վերափոխման հրամանատարությունում ՀՀ փոխգործակցության ներկայացուցչի պահպանման ծրագրին հատկացվել է 30.3 մլն դրամ՝ ապահովելով 75.3% կատարողական:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների խմբում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական պատվերի ծախսերը կազմել են շուրջ 849 մլն դրամ՝ ապահովելով 89.3% կատարողական:

Պաշտպանության ծառայությունների (այլ դասերին չպատկանող) ծախսերին տրամադրվել է շուրջ 4.3 մլրդ դրամ, որից 4.1 մլրդ դրամը կազմել են պաշտպանության բնագավառի այլ ծախսերը, 38.9 մլն դրամ՝ գորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսերը, 69.6 մլն դրամ՝ այլ մարմինների արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերը: Այլընտրանքային ծառայության ապահովման նպատակով բյուջեով նախատեսվել էր 16.2 մլն դրամ, որը չի ծախսվել դիմողների բացակայության պատճառով:

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 69.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 91.8%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Քրեակատարողական համակարգի պահպանության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված միջոցների հաշվին կատարվող, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման ծրագրերի համեմատաբար ցածր կատարողականով:

Բաժնի ծախսերի 67.4%-ը կամ 46.9 մլրդ դրամ կազմել են հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 92.8%-ով: Նշված 46.9 մլրդ դրամից ավելի քան 34 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 12.8 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 93.3 և 91.5 %-ով:

Նախորդ տարվա համեմատ ուստիկանության ծախսերն աճել են 15.7%-ով կամ 4.6 մլրդ դրամով, որի զգալի մասն արձանագրվել է հասարակական կարգի պահպանման ծախսերում՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի և համապատասխանաբար պարտադիր սոցիալական ապահովության վճարների ծախսերի աճով: Հասարակական կարգի պահպանության ապահովման համար նախատեսված ծախսերը կատարվել են 97%-ով՝ կազմելով 23.9 մլրդ դրամ: ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը կազմել են 172.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը և 38.5%-ով գերազանցել 2008 թվականի ցուցանիշը: Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 235.8 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.7%-ով: Հաշվետու տարում 5.3 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ուստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 97.5%-ը և 11.5%-ով (550 մլն դրամ) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: ՀՀ կառավարությանն առընթեր ուստիկանության ճանապարհային ուստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, զրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված արտաբյուջետային միջոցների օգտագործումը հաշվետու տարում կազմել է 4.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 72.9%-ը: 2008 թվականի համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 20.6%-ով: Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 7 մլն դրամ կամ նախատեսվածի 86.3%-ը: Նշված ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցները 2.5 անգամ գերազանցել են 2008 թվականի ցուցանիշը: ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 96.7%-ով՝ կազմելով 130.5 մլն դրամ:

Ազգային անվտանգության բնագավառին 2009 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 12.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 91.5%-ը: 2008 թվականի համեմատ ազգային անվտանգության ծախսերն ավելացել են 1.6%-ով կամ 207 մլն դրամով: Մասնավորապես 11 մլրդ դրամ հատկացվել է ազգային անվտանգության ապահովման ծրագրի ֆինանսավորմանը, որը կազմում է նախատեսվածի 90.9%-ը: Ծրագրի նկատմամբ արձանագրված շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով և տնտեսումներով:

Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է 95.7% կամ շուրջ 1.4 մլրդ դրամ, իսկ նույն նպատակով նախատեսված արտաբյուջետային միջոցներն օգտագործվել են 74.8%-ով՝ կազմելով 13 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ պետական

պահպանության ապահովման ծախսերն ավելացել են 27.7%-ով կամ 294.1 մլն դրամով, որը պայմանավորված է հաստիքների համալրմամբ և աշխատավարձերի բարձրացմամբ: ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման և կարողությունների զարգացման ծրագրերի շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 226.6 մլն դրամ (89.9%) և 201.4 մլն դրամ (100%): Խորհրդի աշխատակազմի պահպանման ծախսերի գծով շեղումը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքների չհամալրման պատճառով առաջացած խնայողություններով: 2008 թվականին ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման ծախսերն իրականացվել էին կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 4.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 97%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 36.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերի աճով: Այս դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի ծախսերը կազմել են 238.6 մլն դրամ՝ ապահովելով 93.2% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պահպանմանը: Վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 32.6 մլն դրամ: Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կազմել են 4.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 29.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Ղատական գործունեությանը և իրավական պաշտպանության խմբի ծրագրերին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 10.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.2%-ը: Ծախսերի շեղումը արձանագրվել է հիմնականում դատական իշխանության մարմինների պահպանման ծրագրերի գծով: 2008 թվականի համեմատ խմբի ծախսերն ավելացել են 40.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի, ինչպես նաև դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 5.2 մլրդ դրամ տրամադրվել է դատական իշխանության մարմինների պահպանմանը՝ նախատեսված 5.8 մլրդ դրամի փոխարեն (90.1%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 26.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ դատական օրենսգրքի և «Ղատական ծառայության մասին» ՀՀ օրենքի

համաձայն դատավորների և դատական ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ, ինչպես նաև հաստիքների ավելացմամբ:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի իրականացման համար 2009 թվականին կատարվել են 2.8 մլրդ դրամի ծախսեր կամ նախատեսվածի 101.5%-ը: Ծրագիրը բաղկացած է վեց հիմնական բաղադրիչներից՝ «Դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացում», «Դատարանների շենքերի վերականգնում», «Դատավորների վերապատրաստման դպրոց», «Դատական ակտերի հարկադիր կատարման բարելավում», «Արբիտրաժի ծառայությունների ուժեղացում», «Իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում»: 2009 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ավարտվել և շահագործման են հանձնվել Մարալիկ, Տաշիր, Ստեփանավան, Վայք, Մասիս և Բերդ քաղաքների ընդհանուր իրավասության դատարանների շենքերը.

- մեկնարկել են մի շարք դատարանների վերակառուցման և կառուցման աշխատանքները, այդ թվում՝ Սպիտակ, Մեղրի և Չարենցավան քաղաքներում տեղակայված դատարանների շենքերը.

- ծրագրով շահառու հանդիսացող դատաիրավական և արդարադատության ոլորտի տասնհինգ շահառուների համար գնվել և հատկացվել են զգալի քանակով սարքավորումներ, կահույք, շերտավարագույրներ և մուտքերի հսկման անվտանգության համակարգեր, ինչը հնարավորություն է տվել զգալիորեն բարելավել դատարանների աշխատանքային պայմանները.

- դատարանների ավտոմատացման շրջանակներում լրացուցիչ ներկրվել է համակարգչային և կազմտեխնիկայի խմբաքանակ, ինչը հնարավորություն է տվել վերակառուցված և նոր կառուցված ՀՀ բոլոր դատարանների դահլիճներում ևս տեղադրել դատական նիստերի աուդիո ձայնագրման համակարգեր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրում ճապոնական և հոլանդական դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2009 թվականին օգտագործվել է համապատասխանաբար 242.2 մլն դրամ և 462.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսված հատկացումների 85%-ը և 169.2%-ը: 2009 թվականի ընթացքում ճապոնական ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- մշակվել են նորաստեղծ Արդարադատության ակադեմիայի շենքային համալիրի կառուցման և ՀՀ ԱՆ փորձագիտական կենտրոնի շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը.

- իրականացվել է դատական համակարգի կառավարման, գործերի հոսքերի ավտոմատացման նպատակով համակարգչային ծրագրի սպասարկումը.

- իրականացվել են մի շարք տեղական և միջազգային մրցույթներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով իրականացվել են կառուցման և վերակառուցման ենթակա շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, այդ թվում՝ Ապարան, Սևան, Կապան, Եղեգնաձոր քաղաքներում տեղակայված դատարանների շենքերի համար.

- իրականացվել են վերոնշյալ շինարարական աշխատանքների հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ.

- իրականացվել են «Դատաիրավական բարեփոխումներ» երկրորդ ծրագրի համար հանրային կարծիքի մոնիտորինգ և հարցումներ:

Առաջին ծրագրի ցածր կատարողականը և երկրորդի գերակատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պայմանագրեր, որոնք նախատեսված էր իրականացնել ճապոնական ծրագրի շրջանակներում, ՀԲ համաձայնությամբ ֆինանսավորվեցին հոլանդական դրամաշնորհի միջոցներից: Բացի այդ, հոլանդական դրամաշնորհի ավել օգտագործումը պայմանավորված է նաև ծրագրի շրջանակներում ԾԻԳ-ի և կապալառուների ու մատակարարների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում փաստացի կատարված աշխատանքների ընդունման և ֆինանսավորման անհրաժեշտությամբ: 2009 թվականի ընթացքում հոլանդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 2009 թվականից սկսած ՀՀ հանրային հեռուստատեսության Առաջին ալիքի եթերում հեռարձակվում է ծրագրի շրջանակներում ստեղծված «Դատաժամ» հաղորդաշարը, որի նպատակն է հանրությանը ծանոթացնել դատական համակարգի հետ, ինչպես նաև իրազեկել դատական կարգով իրավունքները պաշտպանելու եղանակների մասին: Տվյալ հաղորդաշարը հաջորդում է նախկինում ծրագրով ֆինանսավորված «Իմ իրավունքը» հաղորդաշարին.

- 2009 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ շահագործման հանձնվեց «Էլեկտրոնային կառավարություն» սկզբունքով հագեցած բազմաֆունկցիոնալ հանրային տեղեկատվական համակարգը: Ծրագրի շրջանակներում մշակված ծրագրային ապահովումը և ձեռք բերված սարքավորումները՝ կրպակներ և մոնիթորներ, տեղադրվեցին ՀՀ դատարաններում, մի շարք պետական մարմինների շենքերում, ինչպես նաև այլ հանրային վայրերում.

- հաշվետու տարում իրականացվել է նաև Դատական դեպարտամենտի և Արդարադատության խորհրդի համար ինստիտուցիոնալ և տեխնիկական օժանդակության և խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Հաշվետու տարում 536 մլն դրամ է տրամադրվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 94.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.5%-ով:

Վարչական օբյեկտների շինարարության նպատակով 2009 թվականին տրամադրվել է 473.1 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 94.6%: ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 8.3 մլն դրամ և 119.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և 95.5%-ը: Եվրախորհրդի կողմից տրամադրվող միջոցներով սեմինարների կազմակերպման նպատակով արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսվել և իրականացվել են 3.3 մլն դրամի ծախսեր:

Հաշվետու տարում պետական բյուջեից 357.2 մլն դրամ է տրամադրվել իրավական պաշտպանության դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 96.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է Մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցության հաշվին կատարված ծախսերի աճով, ինչպես նաև երկու նոր ծրագրերի ֆինանսավորմամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2009 թվականին կազմել են 122.8 մլն դրամ կամ նախատեսվածի 90.3%-ը: Համեմատաբար ցածր կատարողականը ծախսերի կասեցման, ինչպես նաև աշխատակազմի պահպանման որոշ ծախսեր դոնոր կազմակերպությունների ֆինանսավորման հաշվին կատարելու արդյունք է: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.8%-ով՝ պայմանավորված «ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, ինչպես նաև գործուղումների ծախսերի աճով: Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 152.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության, ինչպես նաև անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծրագրերին հատկացվել է համապատասխանաբար 21.5 մլն դրամ (97.8%) և 15.7 մլն դրամ (99.9%): Նշված երկու ծրագրերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում չեն նախատեսվել: Հաշվետու տարում 44.7 մլն դրամ է օգտագործվել «Մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցություն» արտաբյուջետային ծրագրի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 98%-ը: 2009 թվականի մարտի 1-ից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ սկսել է իրականացնել «Մարդու

իրավունքների արդյունավետ պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության միջոցով՝ որպես Ազգային կանխարգելող մեխանիզմ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացվող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը» թեմայով ծրագիր: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է նաև «Արտահայտման ազատություն և արդար դատաքննության իրավունք» թեմայով միջազգային սեմինար՝ նվիրված Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հիմնադրման 5-ամյակին:

2009 թվականին 2.6 մլրդ դրամ է տրամադրվել դատախազության խմբի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 91.4%-ը: Համեմատաբար ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցմամբ: 2008 թվականի համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 5.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանման ու կարողությունների զարգացման ծախսերի նախատեսմամբ, որոնք 2008 թվականին ֆինանսավորվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Նշված ծախսերը 2009 թվականին կազմել են համապատասխանաբար 241 մլն դրամ (93.2%) և 7.3 մլն դրամ (99.3%): Հաշվետու տարում 2.3 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը, որը կատարվել է 92.7%-ով: 18.4%-ով է կատարվել ՀՀ դատախազության կարողությունների զարգացման ծրագիրը, որի ծախսերը կազմել են 10.2 մլն դրամ: 58.4 մլն դրամ (89.9%) են կազմել վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը, որը հատկացվել է Արարատի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի դատախազությունների վարչական շենքերի հիմնանորոգմանը: Ամբողջությամբ՝ 56.1 մլն դրամի չափով օգտագործվել են ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցները:

Քրեակատարողական համակարգի պահպանության ծախսերը 2009 թվականին կազմել են 5.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 76.7%-ը, որը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Արդյունքում 2008 թվականի համեմատ դրանք նվազել են 19.8%-ով:

Տնտեսական հարաբերություններ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ծախսերի 14.4%-ը տրամադրվել է տնտեսական հարաբերությունների բաժնին: Այն կազմել է ավելի քան 133.8 մլրդ դրամ և ապահովել տարեկան ծրագրի 101.9%-ով կատարում: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրերի բարձր

կատարողականով, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի՝ նախատեսվածից ցածր ցուցանիշով: Միևնույն ժամանակ, նախատեսվածից զգալի ցածր կատարողական է արձանագրվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի գծով: Բաժնի բոլոր խմբերում, բացառությամբ կապի և վառելիքի ու էներգետիկայի խմբերի, արձանագրվել է ծրագրի ցածր կատարողական: Կապի բնագավառի ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով, իսկ վառելիքի ու էներգետիկայի բնագավառի ծախսերը 93.5%-ով գերազանցել են ծրագիրը՝ պայմանավորված խմբում ընդգրկված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի բարձր կատարողականով: Հատկացված ֆինանսական միջոցների զգալի մասն ուղղվել է երեք բնագավառների՝ տրանսպորտի (45.4%), վառելիքի ու էներգետիկայի (28.6%) և գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության (27%) ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ 92.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Խմբում ընդգրկված են 15 ծրագրեր, որոնցից 3-ի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝

- Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է 573.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 27.4%-ով կամ 123.5 մլն դրամով.

- «Հիդրոէներգետիկության ծառայությունների գծով կատարված ծախսերը կազմել են 534.6 մլն դրամ, որն օգտագործվել է «Հիդրոէներգետիկության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոէներգետիկության հիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 33.4%-ով կամ 133.7 մլն դրամով.

- «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծախսերը կազմել են 12 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին:

2009 թվականին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 198.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 94.9%-ը, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը (ներառյալ կարողությունների զարգացման ծախսերը) ավելացել են

7.9%-ով կամ 15.3 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի գծով (նախարարությունների աշխատակազմերի մասով) օգտագործված միջոցները կազմել են 584.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 96.1%-ը, որը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Նախորդ տարվա համեմատ 2.8% կամ 16.1 մլն դրամի աճը պայմանավորված է աշխատողների թվաքանակի ավելացմամբ և աշխատավարձի բնականոն աճով, էկոնոմիկայի նախարարության կաթսայատան վերանորոգմամբ, ինչպես նաև աշխատողների թվաքանակի ավելացման հետ կապված՝ վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսերի ավելացմամբ: Այս նպատակով ևս 58.4 մլն դրամ օգտագործվել է էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 70.6%-ը:

2009 թվականի պետական բյուջեից 18 մլն դրամ է տրամադրվել ստանդարտների մշակման ծառայությունների ձեռքբերմանը՝ կազմելով ծրագրի 55.4%-ը, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Արդյունքում 2008 թվականի համեմատ նշված ծախսերը 56.1%-ով նվազել են:

2009 թվականին 11.1 մլն դրամ է տրամադրվել չափումների միասնականության ապահովման աշխատանքների ֆինանսավորման համար՝ կազմելով ծրագրի 70.7%-ը, ինչը նույնպես պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Չափումների միասնականության ապահովման նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվել են ամենամյա շարունակական աշխատանքներ ազգային էտալոնների բաղադրման, պահպանման, տեխնիկական սպասարկման, կատարելագործման աշխատանքների կազմակերպման և իրականացման, հետազոտական աշխատանքների գծով կատարվել է գերմաքուր նյութերի ստացման տեխնոլոգիայի ուսումնասիրություն, կատարվել են չափումների միասնականության ապահովման համակարգի երկու ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 41%-ով կամ 7.7 մլն դրամով: 2008 և 2009 թվականներին հետազոտական աշխատանքների միջոցառման շրջանակներում կատարվել են տարբեր ապրանքատեսակների հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև 2008 թվականին կատարվել են չափումների միասնականության ապահովման համակարգի երեք ազգային ստանդարտների, իսկ 2009 թվականին՝ երկու ազգային ստանդարտների նախագծերի մշակման աշխատանքներ:

2009 թվականին արտադրանքի որակի փորձաքննության ծախսերը նախատեսված 24.6 մլն դրամի դիմաց կազմել են 100 հազ. դրամ: Ծրագրի նպատակն է տնտեսավարող սուբյեկտներից փորձանմուշների ձեռքբերումը և համապատասխան հավատարմագրված

լաբորատորիաներում դրանց փորձարկումը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ին N 594-Ա որոշմամբ 2009 թվականի հունիսի 1-ից մինչև 70 մլն դրամ շրջանառություն ունեցող ՓՄՁ-ներում դադարեցվել են ստուգումները: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը 2008 թվականի համեմատ նվազել են 96.9%-ով կամ 3.1 մլն դրամով:

Հաշվետու տարում 68.1 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 80.1%-ը: 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված է եղել միջոցներ հատկացնել ԱՄՆ-ում առևտրի ներկայացուցիչ ունենալու համար, սակայն ներկայացուցիչ դեռ չի նշանակվել, ինչով էլ պայմանավորված է ծրագրի շեղումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.1%-ով կամ 6.2 մլն դրամով:

Հաշվետու տարում «Շանհայ էքսպո 2010» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության ծրագրի գծով օգտագործվել է 77.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 90.6%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Նախորդ տարվա պետական բյուջեում նշված ծրագիրը նախատեսված չի եղել:

2009 թվականին առևտրաարդյունաբերական պալատի կարողությունների զագացմանը նախատեսված 40 մլն դրամի դիմաց ուղղվել է 10 մլն դրամ, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սարքավորումների ձեռքբերման և արբիտրաժային հաստատության համար ինտերնետային կայքի պատրաստման աշխատանքներ: Նախորդ տարվա պետական բյուջեում նշված ծրագիրը նախատեսված չի եղել:

Հաշվետու տարում տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 126.9 մլն դրամ՝ ապահովելով 90% կատարողական: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.1%-ով կամ 12.7 մլն դրամով: Ծրագիրն իրականացնում է «Ջարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն: Ընկերության հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը և արտահանման խթանումը, ինչպես նաև գործարար միջավայրի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման խոչընդոտների ուսումնասիրությունը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բացահայտվել են երկրի առավել մրցակցային ոլորտները, ինչպես նաև այդ ոլորտների մրցակցային առավելությունները՝ համեմատած համաշխարհային շուկայում ՀՀ մրցակից երկրների հետ:

Հաշվետու տարում վարչական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում շուրջ 4.5 մլն դրամ է տրամադրվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշպանության պետական հանձնաժողովին՝ ապահովելով ծրագրի 90%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 43.8%-ով կամ 3.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2009 թվականին վերանորոգվել են շենքի հակահրդեհային և տեսահսկման համակարգերը, իսկ 2008 թվականին՝ վարչական շենքի ջեռուցման համակարգը և վերելակները, որոնք բավականին աշխատատար էին:

2009 թվականին շուրջ 63.5 մլն դրամ է տրամադրվել Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 79.4%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Տեխնոպարկի գործունեության կառավարման և Եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիայի ֆինանսավորման միջոցառումները: Տեխնոպարկի գործունեության կառավարման շրջանակներում մշակված բիզնես պլանի հիման վրա ձևավորվել է Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը, որը հանդիսանում է նաև Տեխնոպարկի կառավարման գրասենյակ: 2009 թվականին տրվել են Գյումրու տեխնոպարկի ճարտարապետական էսքիզի մշակման նպատակով կազմակերպության ընտրության և գրասենյակի գործունեության ծրագիրը նախապատրաստելու նպատակով խորհրդատվական ընկերություն ընտրելու մրցույթների համար հայտարարությունները, ապահովվել է Եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիայի բնականոն գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 20.5%-ով կամ 10.8 մլն դրամով:

2009 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 36.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 82.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ոռոգման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու տարում գյուղատնտեսության ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 13.7 մլրդ դրամ կամ ծրագրվածի 83.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին», Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու ծրագրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման ու ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների ցածր կատարողականով:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 38 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են ընդհանուր առմամբ 12 վարկային և դրամաշնորհային ծրագրեր:

Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 4 մլրդ դրամ (որից 3.8 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 250.8 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 99.8% կատարողական: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման միջոցով: Ծրագիրն ունի 2 հիմնական բաղադրիչ՝ «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»: Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնման բաղադրիչի խնդիրն է՝ բարելավել հիմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի ներդրումները նպատակաուղղվել են սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերին: Ներդրումների միջոցով հանրապետության 29 համայնքներում իրականացվել են ոռոգման ու խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգման, խորքային հորերի հորատման և դրենաժային համակարգերի վերականգնման, 70 համայնքներում՝ գազաֆիկացման, իսկ մեկ համայնքում՝ ավտոճանապարհի վերականգնման աշխատանքներ: Ծրագրի վերլուծության և կառավարման բաղադրիչի շրջանակներում կատարվել են ՕՊԵԿ-ին ծրագրի առաջընթացի հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ, իրականացվել են ՕՊԵԿ-ի գլխավոր տնօրենի ղեկավարությամբ պատվիրակության դիմավորում, աշխատանքային հանդիպումների կազմակերպում՝ ՀՀ Նախագահի, վարչապետի և այլ պաշտոնատար անձանց հետ, կատարվել են պաշտոնական նամակագրական կապի ապահովման, ծրագրի շահառուների, իրականացնող կազմակերպությունների, համայնքների և շահագրգիռ այլ մարմինների հետ խորհրդատվությունների և ժողովների կազմակերպման, ծրագրի տարեկան աուդիտի կազմակերպման աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 862.3 մլն դրամ՝ (որից 837.7 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 24.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 102.4% կատարողական, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալի ավելացմամբ: Ծրագրի նպատակն է՝ աջակցել Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում ներդրումները խթանելու:

միջոցով: Օգտագործված միջոցներից տրամադրվել են 401.9 մլն դրամ դրամաշնորհներ, որի շրջանակներում գյուղատնտեսության ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար 2009 թվականին կատարվել են 63 համայնքների գազաֆիկացման և խմելու ջրի ցանցերի վերանորոգման, գյուղտեխնիկայի ձեռքբերման աշխատանքներ: 306.5 մլն դրամ տրամադրվել է այլ ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, որի հաշվին իրականացվել են ծրագրի իրականացման գրասենյակի, գյուղատնտեսության աջակցության մարզային և հանրապետական կենտրոնների, «Մերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերը, մարզային աջակցության թիմերի գործառնական ծախսերը, մասնագետների ուսուցողական և ճանաչողական այցերի ծախսերը: Ծրագրի շրջանակներում 153.9 մլն դրամ տրամադրվել է մեքենաների և սարքավորումների ձեռքբերմանը: Մասնավորապես՝ ձեռք են բերվել ստուգման լաբորատոր սարքեր, տրակտորներ, կոմբայններ և գյուղտեխնիկա, ինչպես նաև կատարվել են 41 տեխնոլոգիաների գնահատման ծրագրեր:

Նշված վարկային ծրագրի համաֆինանսավորման մաս կազմող ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարվել են ավելի քան 112.5 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 49.9%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ծրագրի ճշգրտումներով, որի արդյունքում աշխատանքների մի մասի կատարումը տեղափոխվել է հաջորդ տարի: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Աջակցություն փոքր գյուղական ձեռնարկատիրություններին», «Աջակցություն ֆերմերային տնտեսության զարգացմանը» և «Համայնքների տնտեսական զարգացում»: Առաջին բաղադրիչի «Գյուղական ֆինանսական ծառայությունների հզորացում» ենթաբաղադրիչի շրջանակներում միջազգային մասնագետների կողմից իրականացվել է մասնակից ֆինանսական կառույցների մասնագետների ուսուցում: Ֆերմերային տնտեսությանն աջակցության զարգացման բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել ծախսերի տնտեսման և ճիշտ հաշվարկման եղանակների մշակման, ինչպես նաև ուսուցողական ծրագրերի մշակման գործում: Համայնքների տնտեսական զարգացման բաղադրիչի շրջանակներում խորհրդատվության ծառայություն է մատուցվել համայնքների զարգացման գծով միջազգային մասնագետի կողմից: 6 մարզային աջակցության թիմերի տեղական խորհրդատուների կողմից իրականացվել են համայնքներում կատարվող աշխատանքների մոնիթորինգ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի գծով նախատեսվել էր հատկացնել 663.4 մլն դրամ, որը կատարվել է 88%-ով՝ կազմելով շուրջ 583.7 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրն ուժի մեջ է մտել 2009 թվականի ապրիլի 13-ից (վարկային համաձայնագիրը կնքվել է 2009 թվականի փետրվարի 26-ին) և նախատեսվում է ավարտել 2010 թվականի մայիսի 30-ին: Ծրագիրը նախատեսված է որպես լրացուցիչ ֆինանսավորում

գյուղական համայնքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար: Ծրագրի շրջանակներում իրականացվել են գազաֆիկացման և խմելու ջրի ցանցերի վերանորոգման, ինչպես նաև գյուղտեխնիկայի ձեռքբերման աշխատանքներ:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳՉՄՀ) աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 851.7 մլն դրամ (որից 213.9 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 637.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ կազմելով նախատեսվածի 49.1%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է աշխատանքների՝ նախատեսված ժամկետից ուշ մեկնարկով: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողների և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող գյուղական ձեռնարկությունների աճին, տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից ֆինանսական միջոցներ, որոնք կբավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը և աջակցել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում», «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»: Առաջին բաղադրիչի շրջանակներում 2009 թվականին կառավարության համապատասխան որոշմամբ հիմնադրվել է Գյուղական ներդրումների հիմնադրամը, աշխատակազմի ձևավորման նպատակով անցկացվել է մրցույթ, միջազգային խորհրդատուների հետ մշակվել են հիմնադրամի գործունեությունն ապահովող փաստաթղթերը: Ծրագրում ընդգրկված «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչի խնդիրն է բարելավել հիմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի շրջանակներում ներդրումները նպատակաուղղվել են սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերին:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳՉՄՀ-ի կողմից տրամադրված դրամաշնորհի հաշվին կատարվել են շուրջ 45.9 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 57.7%-ը, որոնք ծախսվել են միջազգային խորհրդատվական ծառայությունների գնման և աշխատակազմի ուսուցման ուղղությամբ: Ցածր կատարողականը պայմանավորված է աշխատանքների՝ նախատեսված ժամկետից ուշ մեկնարկով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 708.9 մլն դրամ (որից ավելի քան 478 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 230.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման

հաշվին)՝ կազմելով նախատեսվածի 57.9%-ը: Օգտագործված միջոցներից շուրջ 539 մլն դրամը կազմել են շենքերի և շինությունների շինարարության ծախսերը, որի շրջանակներում իրականացվել են «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի և Մեղրիի (Ագարակ) սահմանային հսկիչ անցակետի կառուցման աշխատանքները: 97.9 մլն դրամ են կազմել այլ մեքենաների և սարքավորումների ծախսերը, որն ուղղվել է կենսաանվտանգության բարձրացման և փոխհատուցման հիմնադրամի համալրմանը: Եվս 72.1 մլն դրամ տրամադրվել է ծրագրի համակարգող քարտուղարության և ծրագրի իրականացման աշխատակազմի, ինչպես նաև անասնաբուժական ծառայությունների ավտոմեքենաների պահպանման նպատակով: Ցածր կատարողականը պայմանավորված է փոխհատուցման գումարների բաշխման գործընթացի ժամանակավոր կասեցմամբ, ինչպես նաև որոշ աշխատանքների ծավալների ճշգրտմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիային հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով 2009 թվականին խորհրդատվական և ուսուցողական ծրագրերի իրականացման համար նախատեսվել էր հատկացնել 125.3 մլն դրամ, որը կատարվել է 74.1%-ով՝ կազմելով 92.9 մլն դրամ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է որոշ աշխատանքների հետաձգմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 215.1 մլն դրամ՝ 29.7%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է ծրագրի ավարտով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են անասնաբուժական լաբորատոր սարքավորումների ձեռքբերման և սննդի անվտանգության ու անասնաբուժական պետական տեսչության մասնագետների համար հիվանդությունների վերահսկման և մոնիտորինգի գծով խորհրդատվության և ուսուցման աշխատանքներ:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) և Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) աջակցությամբ իրականացվող՝ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 34.4 մլն դրամի ծախսեր՝ 3.2 անգամ գերազանցելով նախատեսվածը, որը պայմանավորված է ծրագրի առաջընթաց տեմպերով: Ծրագրի նպատակն է հանրապետության առավել աղքատ յոթ լեռնային մարզերում (Տավուշ, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Վայոց Ձոր, Արագածոտն և Սյունիք) գյուղական տարածքների բնակչության եկամուտների կայուն աճի ապահովումը: Ծրագրի խնդիրն է աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության առավել աղքատ յոթ լեռնային մարզերում գյուղատնտեսությանն առնչվող տնտեսական գործունեության աճին: Ծրագրի հիմնական նպատակն է գյուղական տարածքներում բարելավել գյուղատնտեսական մթերքների իրացման համար մատակարար-արժեքային շղթայի գործունեության արդյունավետությունը և փոքր ու

միջին ձեռնարկատիրության զարգացմանը խթանող պայմանները՝ հիմնականում տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգման ճանապարհով: Խնայված միջոցների հաշվին լրացուցիչ իրականացվել է Լոռու մարզի մեկ համայնքի ջրամատակարարման ծրագիրը:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի գծով 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 91.5 մլն դրամ՝ նախատեսված 181.4 մլն դրամի դիմաց: Ծրագրի գծով օգտագործված միջոցներից շուրջ 45.9 մլն դրամը կազմել են տրանսպորտային սարքավորումների, 38.8 մլն դրամը՝ ընթացիկ, իսկ 6.8 մլն դրամը՝ աճեցվող ակտիվների ծախսերը:

Անտառների պետական մոնիթորինգի հզորացմանն ուղղված ծախսերը կազմել են շուրջ 27.9 մլն դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը: Ծրագրի շրջանակներում միջազգային խորհրդատուների կողմից իրականացվել է անտառային մոնիթորինգի հզորացման, հնարավորությունների ընդլայնման, ինչպես նաև հանրային իրազեկման և ապօրինի անտառօգտագործման դեմ պայքարի մեջ հասարակության մասնակցության խրախուսման բնագավառներում խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 664.7 մլն դրամ կամ նախատեսվածի 90.4%-ը: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, մասամբ էլ՝ անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների պահանջի բացակայությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության նպատակով 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը: Ծրագրի շրջանակներում հանրապետության ութ մարզերի բարձր լեռնային տարածաշրջաններում 181 համայնքների շահառուներին մշակվող գյուղատնտեսական հողատարածքի յուրաքանչյուր հեկտարի համար անվերադարձ և անհատույց տրամադրվել է 35 հազարական դրամի պետական աջակցություն: Ծրագրում ընդգրկվել է 45073.3 հա հողատարածություն:

«Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրման համակարգում» ծրագրի գծով ծախսերը կազմել են ավելի քան 24.4 մլն դրամ՝ 57.4%-ով կատարելով ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտության բացակայությամբ, ինչպես նաև կառավարության որոշմամբ սահմանված ծախսերի կասեցմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են տվյալների հավաքագրման, վերլուծության, պայմանագրերի տպագրության և կնքման, ծրագրում ընդգրկված համայնքների հողօգտագործողներին տեղեկատվության

տրամադրման, բանկային ծառայությունների վճարման գործընթացները: Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության ծախսերը (ներառյալ համակարգման ծախսերը) նախորդ տարվա համեմատ գրեթե փոփոխության չեն ենթարկվել:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման համար կատարված ծախսերը կազմել են ավելի քան 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել առանձին տեսակների կենսապատրաստուկներ, իրականացվել է հանրապետության համայնքների 850 անասնաբույժների կողմից մատուցված անասնաբուժական ծառայությունների դիմաց գումարների ամսական վճարումը: Հարկ է նշել, որ նախորդ տարի նշված ծախսերն ընդգրկվել են երկու տարբեր ծրագրերում՝ «Պատվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում» և «Անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում»: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերն ավելացել են 15.6%-ով կամ 204.8 մլն դրամով, ինչը պայամանավորված է անասնաբուժական ոլորտում օգտագործվող կենսապատրաստուկների իրացման նկատմամբ ավելացված արժեքի հարկի կիրառման արտոնության վերացմամբ, ձեռք բերված պատվաստանյութերի և այլ պարագաների քանակի ավելացմամբ, ինչպես նաև համայնքների յուրաքանչյուր անասնաբույժին ամսական վճարվող միջին գումարի չափի 6325 դրամով ավելացմամբ:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների իրականացման համար հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 478.4 մլն դրամ՝ 61.6%-ով կատարելով ծրագիրը: Ծրագրի ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, մասամբ էլ՝ աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքում առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Արմավիրի մարզի Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների 800.0 մետր հատվածի վերականգնման, Վեդի գետի հունի մաքրման և ափերի ամրացման, Արարատի մարզի Եղեգնավան համայնքից Ուրցաձոր համայնքն ընկած հատվածում շուրջ 1000 մետր հատվածի հունի մաքրման և ափերի ամրացման, Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատարի ջրանցքի շուրջ 750.0 մետր հատվածի հունի մաքրման և 2010 թվականին իրականացվելիք աշխատանքների նախագծանախահաշ-վային փաստաթղթերի կազմման և փորձաքննության աշխատանքները: 2008 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են

67.5%-ով կամ 192.7 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Հայաստանի Հանրապետության տավարաբուծության զարգացման ծրագրի իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 331.4 մլն դրամ կամ նախատեսվածի 66.3%-ը, որը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին հանրապետություն են ներկրվել 269 գլուխ տոհմային երինջներ, որոնք տարածամկետ վճարման պայմանով (4 տարի) վաճառվել են հանարապետության 2 ֆերմերային տնտեսություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 33.6%-ով կամ 167.4 մլն դրամով՝ պայմանավորված ծրագրի շրջանակներում ձեռք բերված անասունների գլխաքանակի նվազմամբ (146 գլխով):

Հաշվետու տարում նշված դասում ընդգրկված 3 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝

- հատուկ միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 1 մլն դրամ, որի հաշվին իրականացվել են արտակարգ իրավիճակների պայմաններում ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պաշտպանության և գործունեության ապահովման նախապատրաստական միջոցառումներ, այն է՝ կառավարման արտաքաղաքային պահուստային կետին սպասարկող անձնակազմի վարձատրություն, կոմունալ և այլ ծառայությունների, դեղամիջոցների և առաջին անհրաժեշտության այլ պարագաների ձեռքբերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

- ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացման նպատակով տրամադրվել է շուրջ 29.9 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 21.4%-ով՝ պայմանավորված ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանական ծառայության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ծառայությունների իրականացման ծախսերի նորմատիվների ավելացմամբ: Նշված ծախսերն ուղղվել են ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման (ՀԿԱ) վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի պահպանությանը, որոնք համաճարակային բռնկումների ժամանակ գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններն օջախներում լոկալիզացնելու, ինչպես նաև դրանց հետագա տարածումները կանխելու նպատակով իրականացրել են կարանտինային սահմանափակումներ:

- գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացման համար ծախսվել է 217.4 մլն դրամ: Իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համաճարակային վիճակի

վերլուծության, մոնիթորինգի, հանրապետության բարձր լեռնային տարածաշրջաններում կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանելու, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքների լաբորատոր փորձաքննության միջոցառումներ, ինչպես նաև պատվաստված գյուղատնտեսական կենդանիների մոտ առաջացած իմունային ֆոնի որոշում, ձեռք բերված պատվաստանյութերի և ախտորոշիչ միջոցների պահպանում: 2008 թվականի համեմատ ծախսերի 33.1 մլն դրամով կամ 17.9%-ով աճը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում իրականացվող հակահեղեղային միջոցառումների ծախսերը կազմել են ավելի քան 262.8 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական և 19%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հրագրան գետի հունի շուրջ 2.1 կմ հատվածի մաքրման և հողաթմբերի ամրացման, Դիլիջան քաղաքի Աղստև գետի հունի շուրջ 2 կմ հատվածի մաքրման և ափերի ամրացման, Արարատի մարզի Ոսկետափ, Ավշար և Այգեվան համայնքներում մեկական խորքային հորերի հորատման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է փաստացի կատարված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում իրականացվող հակակարկտային կայանների տեղակայման ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 244.3 մլն դրամ՝ ապահովելով 97.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է անցկացված մրցույթի արդյունքում առաջացած խնայողություններով: Նշված ծախսերի հաշվին իրականացվել են Արարատի մարզում 28 հակակարկտային կայանքների տեղակայման աշխատանքներ (կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2010 թվականի հուլիսի 1-ը), որոնց դիմաց վճարվել է 100% կանխավճար: Ծրագիրը սկսել է գործել 2009 թվականից:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների գծով կատարվել է ավելի քան 182.8 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ: Նախորդ տարվա նկատմամբ 42.5 մլն դրամով կամ 30.3%-ով աճը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի գծով 2009 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 169.9 մլն դրամ՝ ապահովելով 56.6% կատարողական, որը

պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի և անտառային տարածքների առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: 30.6 մլն դրամ տրամադրվել է 4836 հա հողատարածության վրա մորեխների դեմ պայքարի ծառայությունների, 87.2 մլն դրամ՝ մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների ֆինանսավորմանը: Նշված բաղադրիչի շրջանակներում ձեռք բերված թունանյութերն անհատույց տրամադրվել են հանրապետության բոլոր մարզերի առավել անապահով տարածքների հողօգտագործողներին, որոնց միջոցով պայքարի աշխատանքներ են տարվել շուրջ 107616 հա հողատարածության վրա: 52.2 մլն դրամ տրամադրվել է 4958 հա տարածքի վրա անտառի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումների իրականացման համար: 2008 թվականի համեմատ այս ծրագրի գծով ծախսերի 4.7%-ով աճը պայմանավորված է մատուցված աշխատանքների ծավալների և ձեռքբերված թունանյութերի քանակի ավելացմամբ:

Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիթորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացմանը տրամադրվել է ավելի քան 80.1 մլն դրամ՝ 10%-ով զիջելով նախատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Կատարվել են 224.1 հազ. հա-ի հանրապետությունում գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում, նոր օջախների հայտնաբերում և բույսերի վնասատուների և հիվանդությունների հայտնաբերման մոնիթորինգ, փորձանմուշների և թունանյութերի նմուշների լաբորատոր փորձաքննություններ:

Հայաստանի Հանրապետությունում ցորենի և գարու սերմնաբուծության զարգացմանն ուղղվել է շուրջ 75.6 մլն դրամ կամ նախատեսվածի 40.1%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում սուբսիդիաներ են տրամադրվել ցորենի և գարու սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 24.8%-ով կամ 25 մլն դրամով նվազումը կապված է երկու բաղադրիչների՝ սուպեր էլիտային և էլիտային սերմերի ներկրման և բանջարային մշակաբույսերի սուպերէլիտային ու էլիտային սերմերի արտադրության դիմաց սուբսիդավորումը չիրականացնելու հետ:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 46.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 89.2%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացվել են 97585 հեկտար գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հողանմուշների, պարարտանյութերի և բուսաբուծական մթերքների լաբորատոր փորձաքննություններ և 175 համայնքներում

մշակաբույսերի պարարտացման հանձնարարականների կազմում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.9%-ով կամ 4.6 մլն դրամով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

«Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների նպատակով օգտագործվել է 46.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 85.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել ավտոմատ ներարկիչներ՝ 21.5 մլն դրամ, սառնարաններ՝ 14.4 մլն դրամ և սառնարան ավտոմեքենա՝ 10.5 մլն դրամ արժողությամբ: Ծրագիրը ներդրվել է 2009 թվականին:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է շուրջ 36.1 մլն դրամ՝ ապահովելով 90%-ով կատարում, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սորտային նույնականացման աշխատանքներ, սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն և նմուշառում, սերմանմուշների լաբորատոր փորձաքննություն, սորտային սերմադաշտերի ապրոբացիա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.5%-ով կամ 7.8 մլն դրամով՝ պայմանավորված մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը կազմել են ավելի քան 26.7 մլն դրամ, որը կատարվել է 52.3%-ով: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, մասամբ էլ՝ սննդամթերքի նմուշների լաբորատոր փորձաքննության անցկացման համապատասխան պահանջարկի բացակայությամբ: Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության վերահսկողության նպատակով ծրագրով իրականացվել են սննդամթերքի արտադրության, վերամշակման և իրացման կետերից վերցված շուրջ 3100 սննդամթերքի նմուշների 21650 փորձաքննություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 24.6%-ով կամ 5.3 մլն դրամով աճը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերը կազմել են ավելի քան 6.3 մլն դրամ, որը կատարվել է 15.3%-ով: Ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, մասամբ էլ՝ ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքում առաջացած խնայողություններով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 31.9 մլն դրամով կամ 83.4%-ով:

Հիդրոօդերևութաբանական միջոցառումների գծով պետական պատվերի շրջանակներում տրամադրվել է 1.95 մլն դրամ՝ 11.4%-ով զիջելով նախատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, որը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված

կասեցումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է շրջակա միջավայրի օդերևութաբանական, ագրոօդերևութաբանական, հիդրոլոգիական, մթնոլորտային օդի վիճակի կանխատեսումների, լճերի, գետերի, արհեստական ջրամբարների և այլ ջրային մակերեսների, ջրի բաղադրության և քանակների վերաբերյալ տեղեկատվության ստացում:

2009 թվականին գյուղատնտեսության ոլորտում նախատեսված թվով 5 ծրագրերի՝ «Տարածաշրջանային լաբորատորիաների շենքերի հիմնանորոգում» (60.6 մլն դրամ), «Վտանգների աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրման աջակցություն» (52.2 մլն դրամ), «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման փորձնական ծրագիր» (31.3 մլն դրամ), «Բուսասանիտարական համակարգի բարելավում և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցություն» (5.6 մլն դրամ), «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում (նախարարությունների աշխատակազմերի մասով)» (2.5 մլն դրամ) իրականացումը կառավարության որոշմամբ ամբողջությամբ կասեցվել է:

Հաշվետու տարում շուրջ 1.5 մլրդ դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* բնագավառին, որը կազմել է նախատեսվածի 86.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է անտառվերականգնման և անտառաշինական աշխատանքների ցածր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են հինգ ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառապահպանական, անտառավերականգնման և անտառաշինական աշխատանքների իրականացման համար կատարված հատկացումները:

Հաշվետու տարում անտառապահպանական ծառայությունների իրականացման համար նախատեսվել է 735 մլն դրամ, որը տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր կանոնադրական խնդիրներն իրականացնելու համար: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Անտառվերականգնման և անտառաշինական աշխատանքների իրականացման համար 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 458.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 65.7%-ը: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, մասամբ էլ՝ ամբողջ ծավալով անտառվերականգնման աշխատանքների իրականացման անհրաժեշտության բացակայությամբ: Ծրագիրն իրականացվել է երկու բաղադրիչներով՝ «Անտառվերականգնում» և «Անտառաշինություն»: Անտառվերականգնման բաղադրիչի ծախսերը կազմել են 347.5 մլն դրամ, իսկ անտառաշինական աշխատանքներին ուղղվել է 111.3 մլն դրամ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 36.5%-ով կամ 236.9 մլն դրամով, որը պայմանավորված է փաստացի կատարված անտառվերականգնման աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Ճապոնական կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում իրականացվող անտառավերականգնման միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են ավելի քան 229.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում կատարվել են անտառապատման և ցանկապատման աշխատանքներ Լոռու, Շիրակի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Հարկ է նշել, որ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի թիվ 931-ն որոշման 4-րդ կետի պահանջով սահմանվել է, որ «ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ը 2009 թվականին պայմանագիրը կատարում է ամբողջ ծավալով՝ պայմանով, որ պայմանագրի գումարի 52.9 մլն դրամ չափով ֆինանսավորումը իրականացվում է 2010 թվականի առաջին եռամսյակում: Այս հանգամանքով էլ պայմանավորված է նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 17.5%-ով նվազումը:

Հաշվետու տարում անտառային պետական մոնիթորինգի նպատակով նախատեսված 54 մլն դրամը գրեթե ամբողջությամբ օգտագործվել է և նախորդ տարվա համեմատ ավելավել 2.6%-ով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

«Անտառի պետական մոնիթորինգ» ՊՈԱԿ-ում ներդրումների գծով ծախսերը կազմել են շուրջ 10.6 մլն դրամ՝ կատարելով նախատեսված ծրագրի 88%-ը, որը պայմանավորված է աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքում առաջացած խնայողություններով: Հատկացված գումարների հաշվին իրականացվել են «Անտառի պետական մոնիթորինգ» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքի 4-րդ հարկի վերանորոգման աշխատանքները: Ծրագիրը 2008 թվականի պետական բյուջեում նախատեսված չի եղել:

Հաշվետու տարում շուրջ 21 մլրդ տրամադրվել է *ռռոզման* բնագավառի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 81.6%-ը: Եեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և Աբու-Դաբիի Չարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի ցածր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 15 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են վեց վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր:

ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 60.1%-ը կամ ավելի քան 6.2 մլրդ դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի կողմից կատարվել է ծրագրի նախնական ծավալների կրճատում: Հաշվետու տարում մեկնարկել են շինարարական աշխատանքները: Ծրագիրն ունի երկու հիմնական բաղադրիչ՝ «Ոռոգման

ենթակառուցվածքներ» և «Ջրից դեպի շուկա»: Առաջին բաղադրիչի շրջանակներում վերականգնվել է Արզնի-Շամիրամ ջրանցքի 2.7 կմ հատվածը, ինչպես նաև 77 կառուցվածքներ: Արտաշատի մայր ջրանցքում կառուցվել է ջրի կառավարման հանգույց: Վերականգնման աշխատանքների ավարտին ավելի քան 60000 ջրօգտագործողներ 30 համայնքներում կունենան ջրի կորստի կրճատումից և ջրի կառավարման բարելավումից առաջացած օգուտներ:

Հաշվետու տարվա ընթացքում «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում շարունակվել են աշխատանքները ծրագրային հիմնական գործունեության ուղղությամբ՝ ֆերմերների վերապատրաստում և ցուցադրական տեղամասերի հիմնում Հայաստանի ողջ տարածքում, տեխնիկական օժանդակություն վարկային բաղադրիչի իրականացմանը, ինչպես նաև ֆերմերային խմբերի և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակողներին ուղղված օժանդակության ակտիվացում: Դասընթացներ են կազմակերպվել ջրի ներտնտեսային կառավարման (ՋՆԿ) և բարձրարժեք գյուղատնտեսության (ԲԱԳ) թեմաներով: Դասընթացներն անց են կացվել հանրապետության բոլոր 10 մարզերում: ՋՆԿ-ի բաղադրիչի կողմից ներմուծվել են այնպիսի նոր տեխնոլոգիաներ, ինչպիսիք են արևային պոմպը կամ ջրանիվը: ԲԱԳ բաղադրիչը շարունակել է իր ավանդական ցուցադրությունները: Միևնույն ժամանակ ներմուծվել են ԱՄՆ արտադրության պոլիէթիլենային ջերմոցներ, որոնց շնորհիվ խթանվելու է բանջարեղենի սածիլները ջերմոցում աճեցնելու և այնուհետև բաց դաշտ տեղափոխելու մոտեցումը: Վերապատրաստման բաղադրիչը ներկայումս իրականացվում է Հայաստանի 10 մարզերի ավելի քան 300 համայնքներում: 2009 թվականին ՋՆԿ-ի գծով վերապատրաստվել է 15092 մարդ, իսկ ծրագրի սկզբից՝ 34164 մարդ: ԲԱԳ-ի գծով 2009 թվականին վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 14630 մարդ, իսկ ծրագրի սկզբից՝ 19672 մարդ: Հետբերքահավաքային գործընթացների, վերամշակման և մարկետինգի (ՀՎՄ) բաղադրիչի շրջանակներում 2009 թվականին աջակցություն է ցուցաբերվել 71 ձեռնարկությունների/ֆերմերների խմբերի, իսկ դրանց ընդհանուր թիվը վերջին երեք տարվա ընթացքում հասել է 141-ի:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 4 մլրդ դրամ (որից ավելի քան 3.2 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 749 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ կազմելով նախատեսվածի 99.3%-ը: Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ «Թալինի 59,01 կմ-ի և Արմավիրի 24,80 կմ-ի ոռոգման համակարգերի գլխավոր ջրանցքների (ընդամենը 83,81 կմ մայր և ճյուղային ջրանցքների) վերականգնում» և «Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ գործողություններ»: Ծրագրի իրականացումը սկսվել է 2009 թվականի տարեվերջին, և աշխատանքների հիմնական մասը տեղափոխվել է 2010 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Պատվարների անվտանգության առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում ծրագրված ավելի քան 1.7 մլրդ դրամի դիմաց օգտագործվել է շուրջ 2.4 մլրդ դրամ: Պատվարների անվտանգության ծրագրի հիմնական նպատակներն են պատվարների ներքին բյեֆի 350 հազար բնակչության անվտանգության ապահովումը և ոռոգման համակարգերի ջրապահովվածության ավելացումը, ինչպես նաև ենթակառուցվածքային և կազմակերպչական հիմնախնդիրների լուծման միջոցով մասնավոր սեկտորի զարգացմանը նպաստելը: Այս նպատակին հասնելու համար կատարվող ներդրումներն ուղղված են ոռոգման ենթակառուցվածքների վերականգնմանը և այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք հնարավոր կդարձնեն մասնավոր սեկտորի մասնակցությունը ենթակառուցվածքների կառավարմանը, պահպանմանը և զարգացմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ Պատվարների անվտանգության առաջին ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են ավելի քան 1.3 մլրդ դրամ (որից ավելի քան 1 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 282.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 121.4% կատարողական: Նշված ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ ծրագիրը գտնվում է ավարտման փուլում: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին կատարվել են Մարմարիկի պատվարի կառուցվածքների վերականգնման և անվտանգության, սարքավորումների տեղադրման և տեխնիկական վերահսկողության աշխատանքներ:

Պատվարների անվտանգության երկրորդ ծրագրով հնարավորություն ստեղծվեց շարունակել առաջին ծրագրով սկիզբ դրված՝ անվտանգությանն ուղղված միջոցառումների իրականացումը ևս 47 պատվարների համար: Ծրագիրը նպատակաուղղված է նպաստելու Հայաստանում կայուն ջրի կառավարման կարողությունների զարգացմանը: Այն կաջակցի նաև ֆինանսական կարգապահության ստեղծմանը, քանի որ դրա շնորհիվ կնվազի ոռոգման համակարգի կախվածությունը պետական բյուջեից: Հաշվետու տարում պատվարների անվտանգության երկրորդ ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.1 մլրդ դրամ (որից 902.7 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 147.8 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով ծրագրի 161.1% կատարում: Բարձր կատարողականը պայմանավորված է նրանով, որ ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել և ավարտվել են հաշվետու տարվա ընթացքում: Ծրագրի բաղադրիչներն են՝ պատվարի վերականգնում, աշխատանքների նախագծում և վերահսկում, վերականգնողական աշխատանքներ, պատվարների անվտանգության կայունություն, պատվարների անվտանգության սարքավորումների դաշտային տեղադրում, Ռոռգում-Ջրառի ուժեղացում, մոտեցնող ճանապարհների բարելավում անվտանգ միջոցառումների համար, ծրագրի կառավարում, տեխնիկական օժանդակություն և աուդիտ, ծրագրի գործառնական ծախսեր: 2009 թվականին կատարվել են Արագածոտնի, Տավուշի, Վայոց-Ձորի, Շիրակի, Գեղարքունիքի

և Կոտայքի մարզերում 22 պատվարների առաջնահերթ վերականգնման աշխատանքները, պատվարներին մոտեցնող ճանապարհների վերականգնումը և Սյունիքի մարզի էներգետիկ պատվարների առաջնահերթ վերականգնման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի զարգացման առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում նախատեսված 270.2 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 268.5 մլն դրամ: Ծրագրերի նպատակն է հանրապետության ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության բարելավումը, ոռոգման համակարգերի շահագործման ծախսերի նվազեցումը, ինչպես նաև համակարգում ջրի հաշվառման և կառավարման կատարելագործումը: Առաջին ծրագրի շրջանակներում փաստացի ծախսերը կազմել են 43.3 մլն դրամ կամ նախատեսվածի 42.5%-ը: Այն բաղկացած է չորս բաղադրիչներից՝ «Վթարային կառուցվածքների վերականգնում և Արաքսի գլխամասի վերակառուցում», «Ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցում», «Ծրագրի կառավարում», «Ոլորտի պետական մարմիններին և ջրօգտագործման ընկերություններին (ՋՕԸ) աջակցություն»: Ծրագրի կատարումն ավարտվել է 2009 թվականի մարտի 31-ին:

Հաշվետու տարում ոռոգման համակարգերի զարգացման երկրորդ ծրագրի շրջանակներում փաստացի ծախսերը կազմել են 225.1 մլն դրամ՝ ապահովելով 133.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում կատարվել են Հանրապետության մարզերի մի շարք ոռոգման երրորդ կարգի ջրանցքների վերականգնման և դրանց տեխնիկական վերահսկման աշխատանքներ: Բարձր կատարողականը պայմանավորված է հաշվետու տարում ծրագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու հանգամանքով:

Աբու Դաբիի Չարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 140 մլն դրամի ծախսեր (որից 10.6 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 129.4 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ կատարելով ծրագրի 18.4%-ը: Նկատի ունենալով, որ Սևանա լիճը Հայաստանի միակ մեծ ջրային ռեզերվուարն է՝ ծրագրի նպատակն է ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով գետերից Սևանա լիճ ջուր տեղափոխող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրո համակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ աշխատանքների կապիտալ շինարարության մասը 2009 թվականին չի սկսվել, իրականացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները:

Հաշվետու տարում ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին տրամադրվել է շուրջ 5.3 մլրդ դրամ աջակցություն, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է և 298 մլն դրամով կամ 6%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Համակարգի հետագա

զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է վերագրվում պետական օժանդակությանը, որի անմիջական դրսևորումներից է պետական ֆինանսական աջակցությունը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն էլ ավելի է կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնաձախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի աճը պայմանավորված է ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների ջրի սակագնի ավելացման վրա ազդող գործոններով:

2009 թվականին «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ կատարելով ծրագրի 77.6%-ը: Ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, մասամբ էլ՝ մրցույթների գումարների տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից իրականացվել են շահագործվող կարևոր նշանակություն ունեցող ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամբարների, գլխամասային կառուցվածքների, ջրանցքների, պոմպակայանների և այլ ջրային համակարգերի ամենամյա կապիտալ նորոգումներ: 2009 թվականին հիմնականում իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ հանրապետության տարբեր ջրանցքներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 9.5%-ով կամ 120.6 մլն դրամով նվազումը պայմանավորված է ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

«Որոտան-Արփա-Սևան թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման համար 2009 թվականին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են Արփա-Սևան ջրային համակարգի շահագործման և Որոտան-Արփա թունելի պահպանման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 780.8 մլն դրամով կամ 3.5 անգամ աճը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով ոռոգելի հողերի կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է շուրջ 261 մլն դրամ, որը կատարվել է 79.1%-ով: Շեղումը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը և մաքրվում ու վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա՝ 19000 հեկտարից ոչ ավելի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 21.6%-ով կամ 71.8 մլն դրամով, որը պայմանավորված է շինարարական աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Հաշվետու տարում Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը կազմել են շուրջ 256 մլն դրամ կամ ծրագրի 53.8%-ը: Շեղումը պայմանավորված է Երևան քաղաքի ոռոգման ցանցի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների ցածր կատարողականով:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման գծով աշխատանքների իրականացման համար 2009 թվականի պետական բյուջեից նախատեսված 93.7 մլն դրամն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մեխորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել են Արարատի և Արմավիրի մարզերի 6 համայնքներում 27.1 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցերի վերակառուցման, վերակառուցման, նորոգման և մաքրման աշխատանքներ 63.8 հազ. խոր. մ ընդհանուր ծավալով, բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում (1051.83 կմ), ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում: 2008 թվականի համեմատ նշված ծախսերի 7.7%-ով կամ 6.7 մլն դրամով աճը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են ավելի քան 11.3 մլն դրամ կամ ծրագրի 74.1%-ը: Շեղումը պայմանավորված է արտասահմանյան գործուղումների գծով նախատեսված ծախսերը չիրականացնելու և տրանսպորտային նյութերի պակաս ձեռք բերմամբ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերի 4.4%-ով աճը պայմանավորված է մատուցվող ծառայությունների գների աճով:

Ոռոգման համակարգերի վերանորոգման ծախսերը կազմել են շուրջ 11.1 մլն դրամ կամ նախատեսվածի 85.1%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթի արդյունքում տնտեսված գումարով: Ծրագրի շրջանակներում կատարվել են Սյունիքի մարզի Ալվանք գյուղի եռաստիճան պոմպակայանի խողովակաշարի վերանորոգման ու Իշխանասար գյուղի ներքին ջրանցքի վերանորոգման աշխատանքները և վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ

նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ու փորձաքննության անցկացման փաթեթների ձեռքբերումը:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2009 թվականին կազմել են շուրջ 38.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 193.5% կատարողական: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի բարձր կատարողականով:

Նավթամթերքի և բնական գազի դասում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները կազմել են ավելի քան 90.8 մլն դրամ և ապահովել ծրագրի 99.8% կատարում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Լեռնական համայնքի գազաֆիկացման, Մեծ Այրում համայնքի գազամատակարարման ներքին ցանցի անցկացման, Մալիշկա համայնքի գազաֆիկացման, Գեղիկոպիտ համայնքի գազատարի և Նոր Հաճրն համայնքի գազամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7 անգամ կամ 56.6 մլն դրամով:

Հաշվետու տարում *միջուկային վառելիքի* ծախսերը կազմել են շուրջ 176.7 մլն դրամ, որից 172.6 մլն դրամը կազմել է գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման, իսկ 4.1 մլն դրամը՝ կարողությունների զարգացման ծախսերը: Նշված ծախսերի կատարողականը կազմել է համապատասխանաբար 91.4% և 15.9%: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով:

Վառելիքի այլ տեսակների գծով ծախսերը կազմել են ավելի քան 30.4 մլրդ դրամ՝ 2.5 անգամ գերազանցելով ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի բարձր կատարողականով:

Մասնավորապես՝ ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 29.6 մլրդ դրամ՝ 2.8 անգամ գերազանցելով նախատեսված ցուցանիշը: 2009 թվականին նախատեսվել են էներգաբլոկի կառուցման հիմնական աշխատանքները և սարքավորումների ներկրումները, որոնց դիմաց կատարվել են համապատասխան վճարումները: Ծրագրի նպատակն է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում նոր էներգաբլոկի կառուցումը, որի կիրառմամբ կնվազեցվեն վառելիքի տեսակարար ծախսը, վնասակար արտանետումները, ինչպես նաև կմեղմացվի հանրապետության էլեկտրաէներգիայի կանխատեսվող դեֆիցիտը: 2009 թվականի կարևորագույն ձեռքբերումներից է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի սարքավորումների հավաքակցման աշխատանքների ավարտը, որը հնարավորություն ընձեռեց

2010 թվականի հունվար ամսից սկսել փորձարկման աշխատանքները՝ ապրիլ ամսին էներգաբլոկի արդյունաբերական շահագործման մեկնարկն ապահովելու համար:

Բարձր ցուցանիշ է արձանագրվել նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի գծով: Ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 203.3 մլն դրամ (որից 190.4 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 12.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ 40.2%-ով գերազանցելով նախատեսված ծախսերը: Բարձր կատարողականը պայմանավորված է փաստացի կատարված աշխատանքների ծավալներով: Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի նպատակն է օժանդակել ներդրումային ծրագրին, վերականգնվող էներգետիկայի զարգացմանը, նորմատիվային և կարգավորող դաշտի բարելավմանը վերականգնվող էներգետիկայի ոլորտում:

2009 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Քաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում կատարվել են 549.6 մլն դրամի ծախսեր (որից 423.8 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 125.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 55.5% կատարողական: Ծրագրի նպատակն է մեծացնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը քաղաքային դպրոցներում և բազմաբնակարան շենքերում: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հետևյալ 4 բաղադրիչների գծով՝ «Արդյունավետ ու ապահով ջեռուցման ծառայությունների մատուցման համար նպաստավոր միջավայրի ստեղծում», «Բնակելի շենքերի ջեռուցում», «Դպրոցների ջեռուցում», «Աջակցություն ծրագրի իրականացմանը (ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների տրամադրման միջոցով)»: Իրականացվել է անապահով ընտանիքների բնակարանների գազաֆիկացման (6869 բնակարան), նախագծահետազոտական, վառարանի տեղադրման, 9 դպրոցների գազի վրա հիմնված ջեռուցման համակարգերի վերականգնման, խորհրդատվության աշխատանքներ: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է ընթացիկ դրամաշնորհների գծով նախատեսված 300.7 մլն դրամ գումարը չհատկացնելու, ինչպես նաև այլ աղբյուրներից կատարված ծախսերով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Երկրաջերմային էներգիայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 119 մլն դրամ (որից 88.8 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 30.2 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ 29%-ով կատարելով նախատեսվածը: Ծրագրի նպատակն է «Գրիձոր» և «Քարքար» կոչվող երկու հարթակներում երկրաբանական և երկրաֆիզիկական աշխատանքների իրականացումը: Յածր կատարողականը բացատրվում է նրանով, որ երկրաջերմային ծրագրերի «Գրիձոր» և «Քարքար» կոչվող երկու հարթակներում ուսումնասիրություններ իրականացնելու վերաբերյալ «Բանակցությունների մասին

համաձայնեցված արձանագրությունը» ստորագրվել է 2009 թվականի փետրվարի 2-ին, իսկ «Երկրաջերմային ծրագրերի համար անհարժեշտ հողատարածքների չափերը հաստատելու, այլ նպատակներով չտրամադրելու և համապատասխան պայմանագրեր կնքելու մասին» կառավարության որոշումն ընդունվել է 2009 թվականի հուլիսի 16-ին: Դրանով պայմանավորված՝ փաստացի աշխատանքները կատարվել են նախատեսվածից ուշ:

Հաշվետու տարում *Էլեկտրաէներգիայի* ծախսերը կազմել են շուրջ 7.6 մլրդ դրամ՝ ապահովելով 104.9% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է էլեկտրաէներգիայի բնագավառում ընդգրկված արտաքին աջակցությամբ իրականացվող երկու վարկային ծրագրերի բարձր կատարողականով:

Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 6.9 մլրդ դրամ (որից 6.7 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 137 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 103.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 110 ԿՎ ենթակայանների վերականգնում և SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացում: 110 ԿՎ ենթակայանների վերականգնման արդյունքում Հայաստանի էներգահամակարգի առավել խնդրահարույց ենթակայաններում նախատեսված է փոխարինել հիմնական սարքավորումները: Փոխարինման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը: SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացման արդյունքում կստեղծվի Հայաստանի էներգահամակարգի կառավարման մեկ ամբողջական համակարգ, այդ թվում՝ համապատասխան կապի, տվյալների և տեղեկատվության հավաքման, հաղորդման և պահպանման, էլեկտրաէներգիայի և էներգետիկ ռեսուրսների կառավարման, ինչպես նաև վերահսկման համակարգեր, որը հնարավորություն կստեղծի էներգահամակարգի ավելի հուսալի, արդյունավետ և կայուն աշխատանքի համար:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագրի շրջանակներում «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման համար ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից կատարվել են շուրջ 321.5 մլն դրամի ծախսեր՝ 90.3%-ով գերազանցելով նախատեսվածը: Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը, ինչպես նաև ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում: Ծրագրի բարձր կատարողականը պայմանավորված է «Ալավերդի-2» ենթակայանի հանձնման սերտիֆիկատի ստորագրման երկարաձգմամբ, ըստ որի 2008 թվականին նախատեսված վճարվելիք վերջնավճարը կատարվել է 2009 թվականին, ինչպես նաև «Վանաձոր-1» ենթակայանի վերականգնման վարկային ծրագրի իրականացման պայմանագրի կնքման համար կատարված կանխավճարով:

371.2 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար օգտագործված միջոցները՝ ապահովելով ծրագրի 94.1%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը 58.9%-ով կամ 137.6 մլն դրամով աճել են՝ պայմանավորված քաղաքացիական ծառայողների թափուր հաստիքային միավորների համալրմամբ: Նույն մարմինների կարողությունների զարգացման համար նախատեսված 17 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից շուրջ 159.8 մլն դրամ տրամադրվել է *լեռնասարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* խմբի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 80.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություններ» և «Կրթական, մշակութային, առողջապահական և այլ օբյեկտների շինարարության թույլտվություն» ծրագրերի ցածր կատարողականով: Բացի այդ, խմբում ընդգրկված Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը նախատեսված 5 մլն դրամի չափով չեն կատարվել՝ պայմանավորված պայմանագրերը չկնքելու հանգամանքով:

Հաշվետու տարում ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայության ծախսերը կազմել են 6.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

2009 թվականին երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայությունների գծով կատարվել են շուրջ 151 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 87.8%-ը, ընդ որում ֆինասավորումն իրականացվել է կնքված պայմանագրերին համապատասխան: Ծրագրի նպատակն է իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնց ցանկը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: Ծրագրի վերջնական արդյունքն է՝ ՀՀ ընդերքի պահպանումը, հաշվառումը և գրանցումը, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7 անգամ կամ 111 մլն դրամով: Աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվետու տարում իրականացվել են ՀՀ տարածքում ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով ընդերքի տեղամասերի տեղագրական քարտեզի կազմման աշխատանքներ, որոնք նախորդ տարի չեն կատարվել:

Հաշվետու տարում կրթական, մշակութային, առողջապահական և այլ օբյեկտների շինարարության թույլտվության ծախսերը կազմել են շուրջ 2.6 մլն դրամ՝ կատարելով ծրագրի 17%-ը, որը պայմանավորված է ներկայացված հայտերի քանակով: Ծրագիրը 2008 թվականի պետական բյուջեում չի նախատեսվել:

2009 թվականի ընթացքում *տրանսպորտի* բնագավառի ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 60.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 85%-ով: Ծրագրից

շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի բնագավառում ընդգրկված ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի, Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծախսերի ցածր կատարողականով:

Ճանապարհային տրանսպորտի բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 57.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրվածի 85.7%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 15 ծրագրեր: Նշված բնագավառում առավելապես ցածր կատարողական է ապահովել հետևյալ երեք ծրագրերում՝

- ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում հաշվետու տարում ծախսվել է շուրջ 1.6 մլրդ դրամ (որից 367.7 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 1.2 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ կազմելով նախատեսվածի 18.6%-ը: Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի (ԳՃՎԾ) շրջանակներում մեկնարկել են ծրագրում ընդգրկված գյուղական ճանապարհների շինարարական աշխատանքները: 2009 թվականին ավարտվել են Արմավիր-Իսահակյան-Գյումրի Հ-17 ավտոճանապարհի շինարարական աշխատանքները: Վերանորոգված հատվածի ընդհանուր երկարությունը 24.5 կմ է: Սպասարկելով տասներկու համայնք երկու մարզերում՝ Արագածոտն և Շիրակ, ճանապարհի վերանորոգված հատվածը բավականին հեշտացրել է այդ գյուղերի կապը երեք մեծ քաղաքների՝ Գյումրու, Արմավիրի և Երևանի հետ, հեշտացրել է համայնքների միջև և արտաքին աշխարհի հետ շփումը, աշխուժացել է ընդհանուր տնտեսական գործունեությունը, ներառյալ առևտուրը և ապրանքափոխանակությունը: ԳՃՎԾ-ի առաջին փաթեթում ընդգրկված 273 կմ երկարությամբ ճանապարհային հատվածների շինարարության գծով «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով ՀՀ կառավարությունը 2008 թվականին որոշում ընդունեց շինարարության համար անհրաժեշտ գումարը՝ 5.1 մլրդ դրամի չափով հատկացնել պահուստային ֆոնդից: Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհահատվածները ներառում են բոլոր մարզերը, բացառությամբ Շիրակի: 2009 թվականին այդ ճանապարհահատվածների վրա իրականացվել են տարբեր տեսակի շինարարական աշխատանքներ՝ ներառյալ հողային աշխատանքները, փոսային նորոգումը, ասֆալտ-բետոնե ծածկի աշխատանքները, ճամփեզրերի վերականգնումը: Համաձայն կնքված պայմանագրերի՝ կատարված աշխատանքների գումարի 10%-ը, որը կազմում է 106.5 մլն դրամ, կապալառու կազմակերպություններին վճարվելիք գումարներից պահվել է որպես երաշխիքային գումար, որի 5%-ը պետք է վճարվի պայմանագրային աշխատանքների ավարտից հետո, իսկ մնացածը՝ երաշխիքային ժամկետը լրանալուց հետո: Նախատեսված

աշխատանքներից 229.6 մլն դրամի աշխատանքները եղանակային պայմանների վատթարացման պատճառով դադարեցվել են և հետաձգվել 2010 թվական.

- հաշվետու տարում «Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր» ծրագրի շրջանակներում պետական բյուջեից կատարվել են շուրջ 6 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով նախատեսվածի 63.4%-ը և 61.2%-ով (9.4 մլրդ դրամով) զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ցածր կատարողականը պայմանավորված է որոշ պայմանագրերի լուծմամբ: Հատկացված միջոցներով տարվա ընթացքում աշխատանքներ են իրականացվել 8 ծրագրերի շրջանակներում: 2009 թվականին իրականացվել են առավել ծանրաբեռնված և թռիչքային առումով երկար 15 կամուրջների և կամրջային կառուցվածքների սպասարկման և շահագործման աշխատանքներ, կատարվել են 105.0 հազ. քմ ասֆալտապատման, ճաքալցման աշխատանքներ, վերանորոգվել է Լենինգրադյան-Շինարարների փողոցների հատույթում գտնվող հենապատը, կառուցվել են Արշակունյաց պողոտայում բետոնե միջնապատերը, կառուցվել են թվով 2 վերգետնյա հետիոտն անցումներ, սուբսիդավորվել են «Լուսանշան» ՊՈԱԿ-ը, իրականացվել է հենապատերի վերակառուցման աշխատանքները.

- 2009 թվականի պետական բյուջեից շուրջ 11.6 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով 79.8% կատարողական: Ծրագրված ծախսերից արձանագրված շեղումը մեծ մասամբ պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, մասամբ էլ տնտեսումներով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների հիմնանորոգման ծախսերը 3.1%-ով նվազել են: Ծրագրի շրջանակներում իրականացվել են միջպետական, հանրապետական նշանակության և այլ ճանապարհահատվածների հիմնանորոգման, ինչպես նաև նախագծային և ճանապարհների կահավորման աշխատանքներ՝ տեղադրվել են ճանապարհային նշաններ ու ցուցանակներ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են ավելի քան 5 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 89.4%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, ինչպես նաև տնտեսումներով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը նվազել են 18.8%-ով կամ 1.2 մլրդ դրամով: Ծրագրի շրջանակներում սպասարկվել են 3393 կմ երկարությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, 3 ավտոճանապարհային թունելներ (Պուշկին, Նալբանդ, Դիլիջան) և 5 խոշոր կամուրջներ՝ (Մեղրի, Եղվարդ, Աշտարակ, Ջերմուկ, Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման գ. Չորագետ), կատարվել են նաև ճանապարհների կահավորման աշխատանքներ:

Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Ճանապարհների վերանորոգում» ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 161 մլն դրամի ծախսեր, որն ուղղվել է նախորդ տարի կատարված աշխատանքների դիմաց 5% երաշխիքային գումարների վճարմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 11.3 մլրդ դրամ (որից 9.3 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 2 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին): Ծրագրի առաջին փուլի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 25 միլիոն ԱՄՆ դոլար: Ծրագրի առաջին փուլը ֆինանսավորվում է Միջազգային զարգացման ընկերակցության ֆինանսական ճգնաժամի արագ արձագանքման հիմնադրամի միջոցներից: Դրա նպատակն է՝ վերականգնել կենսական նշանակության ավտոճանապարհային ցանցի (տեղական ճանապարհների) մոտ 100 կմ ընդհանուր երկարությամբ ընտրված հատվածները և ստեղծել ժամանակավոր աշխատատեղեր ճանապարհային շինարարության ոլորտում: Այդ ճանապարհները գտնվում են յոթ մարզերում՝ ապահովելով ճանապարհային կապ 39 համայնքների 71 հազար բնակչությանը: Ի լրումն վարկի գումարի՝ կառավարությունը տրամադրել է 5.4 մլն ԱՄՆ դոլար գումարով համաֆինանսավորում: Ծրագրի առաջին փուլով նախատեսված աշխատանքները մեկնարկել են 2009 թվականի մայիսին: Շինարարական աշխատանքների մրցույթների արդյունքում տնտեսված գումարների հաշվին հուլիս ամսվա ընթացքում մեկնարկել են լրացուցիչ մոտ 18.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների վերանորոգման աշխատանքները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծախսերը կազմել են ավելի քան 5.1 մլրդ դրամ (որից 3.9 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.2 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով նախատեսվածի 99.1%-ը: Ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2009 թվականի սեպտեմբերի 4-ին ստորագրված վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 36.6 մլն ԱՄՆ դոլարի լրացուցիչ ֆինանսավորում՝ վերականգնելու կենսական նշանակության ավտոճանապարհների լրացուցիչ 140 կմ ընտրված հատվածները: Այդ ճանապարհները գտնվում են յոթ մարզերում՝ ապահովելով ճանապարհային կապ 52 համայնքների 176 հազար բնակչությանը: Ի լրումն վարկի գումարի՝ կառավարությունը տրամադրել է 9.1 մլն ԱՄՆ դոլար գումարով համաֆինանսավորում: Ծրագրի երկրորդ փուլի 2009 թվականի համար նախատեսված մոտ 36 կմ ճանապարհների վերականգնման աշխատանքները մեկնարկել են 2009 թվականի սեպտեմբերին: Բոլոր հատվածներում վերանորոգման աշխատանքներն

ավարտված են: Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև մի շարք խորհրդատվական ծառայություններ:

Հաշվետու տարում նշված բնագավառում ընդգրկված 2 ծրագրերի գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում: Մասնավորապես՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 14.3 մլրդ դրամ (որից 10.6 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 3.7 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 145.8% կատարողական: Գյուղական ճանապարհների ծրագրով նախատեսվում էր վերականգնել շուրջ 227 կմ ավտոճանապարհներ Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերում: 2009 թվականին նախատեսվել է 117.81 կմ ավտոճանապարհների վերականգնում Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում: Շահագործման են հանձնվել 140.56 կմ ընդհանուր երկարությամբ վերականգնված գյուղական ճանապարհահատվածներ, այդ թվում՝ 55.1 կմ՝ Գեղարքունիքի մարզում, 19.96 կմ՝ Արմավիրի մարզում, 46.56 կմ՝ Արարատի մարզում, 18.94 կմ՝ Կոտայքի մարզում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկաթուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի գծով ծախսվել է շուրջ 90.6 մլն դրամ (որից 62.9 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 27.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 135.6% կատարողական: Լրացուցիչ ծախսերը կատարվել են տարեսկզբի մնացորդի, ինչպես նաև ՀԲ-ի կողմից ավել տրված ֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին մատուցվել է «Չորս կամուրջների վերանորոգման նախագծում և մրցութային փաստաթղթերի պատրաստում Հայկական երկաթուղու կոնցեսիայի իրականացման համար» խորհրդատվական ծառայությունը, իրականացվել է «Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրի» և «Երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրի» նախապատրաստման դրամաշնորհների ֆինանսական աուդիտ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծրագրով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 724.2 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 93.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կապալառուների կողմից ժամանակին և նախատեսված ծավալներով աշխատանքները չկատարելու, ինչպես նաև կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով և տնտեսումներով: Նշված ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 58.6%-ով կամ 267.5 մլն

դրամով, որը պայմանավորված է մարզային նշանակության ավտոճանապարհների քանակի ավելացմամբ:

2009 թվականին «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրի գծով կատարվել են ավելի քան 597.4 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 99% կատարում: Ծրագրի շրջանակներում իրականացվել է հանրապետության վեց մարզերի (Գեղարքունիք, Վայոց Ձոր, Արարատ, Լոռի, Շիրակ, Տավուշ) ավտոճանապարհների հիմնանորոգման, ճանապարհահատվածների ասֆալտապատման, երեք ճանապարհների շրջանաձև հրապարակի կառուցման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման ներքին ցանցի ընդլայնման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.1 անգամ կամ 562.4 մլն դրամով: Նշված ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ 2009 թվականին ծրագիրն իրականացվել է վեց մարզերում՝ նախորդ տարվա մեկ մարզի դիմաց:

«Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագրով նախատեսված գյուղական ճանապարհների վերականգնման և դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ տրանսպորտի և կապի ոլորտի զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է ավելի քան 500 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը, որը «Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագրի շրջանակներում վճարվել է կատարված աշխատանքների դիմաց:

Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող «Երևանի փողոցների վերանորոգում» ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 440.1 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 79.5% կատարում: Հատկացված միջոցներով կատարվել են Բարեկամության հրապարակ-Կոմիտասի պողոտայի 3.08 կմ հատվածի մասնակի վերանորոգման և ասֆալտապատման, Երևան քաղաքի Հերացի, Սարալանջի և Ավետիսյան փողոցները միացնող նոր մայրուղու երրորդ տեղամասի վերանորոգման աշխատանքները: Ծրագրված ծախսերից արձանագրված շեղումը չի ֆինանսավորվել անհրաժեշտություն չլինելու պատճառով:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման նպատակով կատարված ծախսերը կատարվել են 77.6%-ով՝ կազմելով ավելի քան 414.7 մլն դրամ: Մասնավորապես, 185.5 մլն դրամ է հատկացվել միջպետական, 64.5 մլն դրամ՝ հանրապետական, 100.4 մլն դրամ՝ մարզային նշանակության ավտոճանապարհների տրանսպորտային օբյեկտներում կատարված շինարարական աշխատանքների համար: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 10 կամուրջներ, որից 5-ը՝ միջպետական, 3-ը՝ հանրապետական և 2-ը՝ տեղական նշանակության ճանապարհների վրա: Յաճր կատարողականը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով, ինչպես նաև տնտեսումներով: 2009 թվականին նվազել է հիմնանորոգվող

օբյեկտների քանակը, ինչի հետ կապված՝ նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման գծով բյուջետային ծախսերը նվազել են 292.7 մլն դրամով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երթևեկության կառավարման և անվտանգության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 21.9 մլն դրամի դիմաց ծախսվել է 648 հազար դրամ, որը կատարվել է տարեսկզբի մնացորդի հաշվին: Դրամաշնորհային համաձայնագիր չկնքվելու հետևանքով ծրագիրը փակվել է:

2009 թվականի ընթացքում օդային տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 68.5% կատարողական՝ կազմելով 316 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող պետական, տարածքային հանրապետական մարմինների պահպանման ծախսերի գծով, որոնք 38.1%-ով զիջել են ծրագիրը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված միջոցների հաշվին նախատեսվել էին անհատ անձանց և կազմակերպություններին (հիմնականում մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին) բարեգործական նպատակով տրամադրվող օգնություններ, որոնք նախատեսվածից քիչ են կազմել:

118.8 մլն դրամ է ծախսվել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար՝ ապահովելով ծրագրի 83.3%-ը, որը տնտեսումների արդյունք է:

Հաշվետու տարում խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 2.6 մլրդ դրամ՝ 74%-ով կատարելով ծրագիրը: Ծրագրված ծախսերից արձանագրված շեղումը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը չկատարելու հանգամանքով, ինչպես նաև «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգման ծախսերի ցածր կատարողականով:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի բնագավառում ընդգրկված երկու ծրագրեր կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով: Մասնավորապես՝ 1.8 մլրդ դրամ տրամադրվել է Երևանի մետրոպոլիտենով, 276 մլն դրամ՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններին: Նախորդ տարվա համեմատ Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով ծախսերն աճել են 11.7%-ով կամ 192.1 մլնմ դրամով՝ պայմանավորված ջրահեռացման ծախսերի ավելացմամբ, պահեստամասերի և պահպանման ծառայության թանկացմամբ: Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի դասում ընդգրկված Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը չեն կատարվել (նախատեսվել էր 560.8 մլն դրամ), իսկ Երևանի

մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգման ծախսերը կատարվել են 58.1%-ով (500 մլն դրամ)՝ պայմանավորված կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Նշված երկու ծրագրերը 2008 թվականի պետական բյուջեում չեն ընդգրկվել:

2009 թվականին *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 479 մլն դրամ, որը նախատեսված ամբողջ ծավալով ծախսվել է հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոէթերի մոնիթորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառնությունները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել 1.9 %-ով կամ 9 մլն դրամով, որը պայմանավորված է 2009 թվականի ընթացքում ծրագրի ծավալների ավելացմամբ:

2009 թվականի ընթացքում *այլ բնագավառների* խմբի ծախսերը կազմել են շուրջ 788.2 մլն դրամ կամ նախատեսվածի 95.7%-ը: Ընդունը պայմանավորված է կառավարության որոշմամբ «Հայաստանը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային երկիր» գովազդային ծառայությունների կասեցմամբ, որոնց համար նախատեսվել էր 90 մլն դրամ:

Ոլորտի ծրագրերում մեծ տեսակարար կշիռ ունեն ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրով կատարված ծախսերը, որոնք կազմել են 683.2 մլն դրամ՝ ապահովելով 108.7% կատարողական: Ծրագրի տվյալ բաղադրիչի նպատակը ծրագրային գործունեության վերահսկումն ու կառավարումն է: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2009 թվականի մարտ ամսին ԱՄՆ դոլարի փոխարժեքի կտրուկ աճով:

Հաշվետու տարում զբոսաշրջության ոլորտում ընդգրկված երկու ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝ Հայաստանը ներկայացնող վավերագրական ֆիլմի նկարահանման և միջազգային հեղինակավոր հեռուստաալիքով հեռարձակման ծրագրի գծով ծախսերը կազմել են շուրջ 25 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մասնավորապես իրականացվել է ֆիլմի եռալեզու թարգմանություն և 500 հատ լազերային (DVD) սկավառակի թողարկում:

2009 թվականին զբոսաշրջության աջակցության ծառայությունների ծախսերը կազմել են 80 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ՉԶՀԳ) կողմից ապահովվել է մասնակցությունը զբոսաշրջային ցուցահանդեսներին, իրականացվել են Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող գովազդա-տեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում, օտարերկրյա

լրագրողների և զբոսաշրջային օպերատորների Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում, կենսաց փառատոնի կազմակերպում, զբոսաշրջության ոլորտի միջազգային համագործակցությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.7%-ով կամ 9 մլն դրամով՝ պայմանավորված գնաճով:

2009 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 162.8 մլն դրամ՝ 89.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի օրենսդրական փաստաթղթերի և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման ծրագրերի ցածր կատարողականով: Խմբում ընդգրկված են 5 ծրագրեր:

Հաշվետու տարում տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 52.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեության նպատակը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնաժին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված գործառնություններ են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2009 թվականին ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի օրենսդրական փաստաթղթերի մշակման ծախսերը կազմել են շուրջ 6.7 մլն դրամ կամ նախատեսվածի 34.8%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ ֆինանսավորման հայտերը ներկայացվել են համապատասխան կնքված պայմանագրերի: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ, որոնց նպատակն է պահպանության և օգտագործման բնագավառի նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակումը, օրենսդրական հիմքերի ապահովումը:

Հաշվետու տարում նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակման ծախսերը կազմել են համապատասխանաբար 37.4 մլն դրամ և 14 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 90%-ը և 93.3%-ը, որը պայմանավորված է ներկայացված հայտերի թվաքանակով: Ծրագրերը 2009 թվականի պետական բյուջեում չեն նախատեսվել:

2009 թվականի ընթացքում «Գնագոյացման և ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ում ամբողջ ծավալով կատարվել են նախատեսված 52.1 մլն դրամի ներդրումները: Նախորդ տարվա

համեմատ նշված ծախսերը նվազել են 13.1%-ով կամ 7.9 մլն դրամով, որը պայմանավորված է կապիտալ ծախսերի նվազմամբ:

2009 թվականի ընթացքում *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* ցուցանիշը կազմել է -5.2 մլրդ դրամ՝ նախատեսված -7.9 մլրդ դրամի փոխարեն: Մասնավորապես՝ խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են ավելի քան 5.4 մլրդ դրամի ծախսեր, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 10.7 մլրդ դրամ:

Հաշվետու տարում տվյալ խմբում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 17 ծրագրեր, որոնցից երկուսը Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերն են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.2 մլրդ դրամ (որից 908.6 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 267.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 18 օբյեկտներում, շինարարական աշխատանքներ են իրականացվել նաև 4 այլ օբյեկտներում, որոնց ավարտը նախատեսված է 2010 թվականին, գնվել է բարձր անցանելիության մեկ մարդաստար ավտոմեքենա դաշտային աշխատանքների համար, համակարգչային ցանցի անվտանգության սարքավորում, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը, ավարտվել է տեղական իշխանությունների ֆինանսական ուսուցման մեկ պայմանագիր, կայացել է երկրորդ պայմանագրի մրցույթը: Ծրագրից շեղումը պայմանավորված է որոշ գնումների և տեղական իշխանությունների ֆինանսական ուսուցման երկրորդ պայմանագրի կատարման հետաձգմամբ, ինչպես նաև գործառնական ծախսերի տնտեսումներով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.2 մլրդ դրամ (որից 1.9 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 311.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքներ 28 օբյեկտներում, շինարարական աշխատանքներ են կատարվել նաև 32 այլ օբյեկտներում, որոնց ավարտը նախատեսված է 2010 թվականին, անց է կացվել դպրոցների համար կահույքի գնման մրցույթ:

100% կատարողական է ապահովել նաև «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» ծրագիրը, որի շրջանակներում ծախսվել է շուրջ 143.6 մլն դրամ՝ 2.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում մասնավորապես ձեռք են բերվել անհրաժեշտ պահեստամասեր հենակետային գեներատորների հեռակառավարման էլեկտրոնային համակարգերի վերանորոգման համար: Վերանորոգվել են Արագածոտնի և

Արմավիրի մարզերում տեղադրված 30 համակարգերը և կայծի բլոկները, Արարատի մարզի 5 գյուղերի մշակաբույսերը կարկտահարությունից պաշտպանելու նպատակով կառուցվել են 12 շինություններ հակակարկտային հենակետային գեներատորներ տեղադրելու համար: Չեռք է բերվել 1 հատուկ տրանսպորտային միջոց, ռադիոկայաններ և այլ հատուկ սարքավորումներ ու պահեստամասեր: Տարվա ընթացքում կենտրոնի մասնագետների համար կազմակերպվել են տեսական ու գործնական պարապունքներ:

Շուրջ 306.1 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 93.9%-ով ապահովվելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով և տնտեսումներով: Նշված ծախսերը 2008 թվականի համեմատ ավելացել են 7.2%-ով կամ 50.5 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների ավելացմամբ:

Տվյալ դասում ընդգրկված՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը կազմել են 150 մլն դրամ, որը 64.2%-ով զիջել է նախատեսվածը՝ պայմանավորված փաստացի պատվիրված աշխատանքների ծավալով: Հատկացված միջոցներով տարվա ընթացքում նախատեսված երեքի դիմաց իրականացվել են աշխատանքներ միայն մեկ ծրագրի գծով, որի շրջանակներում սուբսիդիա է հատկացվել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 92.6%-ով կամ 1.9 մլրդ դրամով, որը պայմանավորված է ծրագրային աշխատանքների նվազմամբ: 2009 թվականին աշխատանքներն իրականացվել են մեկ ծրագրի գծով՝ նախորդ տարվա 11 ծրագրերի դիմաց:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման և նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը համապատասխանաբար կազմել են 72.6 մլն և 106.4 մլն դրամ՝ ապահովվելով ծրագրի կատարումը 98 և 98.5 %-ով: Իսկ պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապաստարանային գործառնությունների գծով արտաբյուջետային միջոցներից օգտագործվել է 53.6 մլն դրամ՝ նախատեսված 91.5 մլն դրամի դիմաց:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ կետերի համաձայն կատարված հատկացումները, այդ թվում՝

- Երևան քաղաքում պետական սեփականություն համարվող Երևանի քաղաքապետարանին հանձնված ինքնակամ կառույցների ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից ՀՀ 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորումը՝ 379 մլն դրամ:

- Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից ՀՀ 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորումը՝ 164.9 մլն դրամ:

- Երևան քաղաքում պետական սեփականություն համարվող և Երևանի քաղաքապետարանին հանձնված ինքնակամ կառույցների վարձակալությունից ՀՀ 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորումը՝ 13.8 մլն դրամ:

- Երևան քաղաքի վարչական սահմաններում թույլ տված վարչական իրավախախտումների համար Երևանի քաղաքապետի որոշումներով նշանակված տուգանքներից (տույժերից) ՀՀ 2009 թվականի պետական բյուջե ստացվող բյուջետային եկամուտների հաշվին Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորումը՝ 19.9 մլն դրամ:

Ելնելով «2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից՝ ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են շուրջ 656.5 մլն դրամի ծախսեր: Նշված գումարից 268.8 մլն դրամը կազմում են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների և գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների տրամադրման ծախսերը, 258.3 մլն դրամը՝ ՀՀ հարկային և մաքսային մարմինների կողմից պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջացած լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումները, իսկ 129.4 մլն դրամը կազմում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2009 թվականի ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 3.9 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 62.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) աջակցությամբ իրականացվող Սևանա լճի

բնապահպանական վարկային և դրամաշնորհային ծրագրերի հետաձգմամբ: 2008 թվականի համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 29.9%-ով կամ 901.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցության ավելացմամբ:

Հաշվետու տարում *ռադիոակտիվ թափոնների վնասագերծման ծառայությունների* գծով նախատեսված շուրջ 28.8 մլն դրամից օգտագործվել է 27.3 մլն դրամը: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնների փոխադրումը, ուսումնասիրումը, տեղափոխումը, վնասագերծումը, պահպանումը և թաղումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.3%-ով:

2009 թվականին օդի աղտոտման դեմ պայքարի ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են 176 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 83.2% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում հատուկ սարքավորումների ձեռքբերման համար նախատեսված ծախսերի կասեցմամբ: Հիմնականում նշված պատճառով 2008 թվականի համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի ծախսերը նվազել են 28.3%-ով: Հատկացված գումարից 7 մլն դրամը տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին: Վերջինիս կողմից իրականացվել են թափոնների վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում, կազմակերպություններում առաջացած թափոնների հաշվառում, դասակարգում՝ ըստ վտանգավորության աստիճանի, տնտեսության ճյուղերի և սպասարկման ոլորտի, կատարվել են նաև թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքների իրականացման նպատակով տվյալների հավաքում, ուսումնասիրում և վերլուծություն, ժամկետանց թունաքիմիկատներով աղտոտված տարածքների հաշվառում և մարդու առողջության ու շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության ռիսկի գնահատում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել: Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացման նպատակով պետական աջակցության շրջանակներում նախատեսված 112 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.3%-ով, որը կապված է մոնիթորինգային աշխատանքների ծավալների, ինչպես նաև բովանդակության փոփոխության հետ: «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում հատուկ սարքավորումների ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 45.7 մլն դրամ կամ նախատեսվածի 57.1%-ը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել արդիական հատուկ սարքավորումներ: Ծրագրի ցածր կատարողականը և նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 53.5%-ով նվազումը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Օդի աղտոտվածության մոնիթորինգի դիտացանցի արդիականացման և մոնիթորինգային տվյալների ներկայացուցչության ապահովման ծառայությունների ծախսերը

կազմել են շուրջ 10.4 մլն դրամ կամ նախատեսվածի 90%-ի չափով: Վերջինս նույնպես պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում սարքավորումների ձեռքբերման ծախսերը կազմել են 942.5 հազ. դրամ կամ նախատեսվածի 85.7%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ծախսերի կասեցմամբ և մրցույթի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 3 լրակազմ համակարգչային տեխնիկա:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է շուրջ 1.7 մլրդ դրամ՝ 40%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Շեղումը պայմանավորված է ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող՝ Սևանա լճի բնապահպանական ծրագրերի տարեվերջին սկսելու և աշխատանքները 2010 թվական տեղափոխելու հանգամանքով:

2009 թվականի ընթացքում ձկան պաշարների համալրման գծով պետական պատվերի ծախսերը կատարվել են նախատեսվածի 89.4%-ի չափով՝ կազմելով շուրջ 71.5 մլն դրամ: Ցածր կատարողականը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծրագրի ֆինանսավորման 10.6%-ով նվազումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցման և գնումների շրջանակներում առաջացած տնտեսման հանգամանքներով: Ծրագրի շրջանակներում զգալի չափով ավելացել են Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրման նպատակով ձկնային պաշարների համալրման ծավալները:

Սևանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման աշխատանքների կատարմանն ուղղվել է շուրջ 256.9 մլն դրամ՝ գրեթե ամբողջությամբ ապահովելով ծրագրային հատկացումները: Տվյալ ծրագրի շրջանակներում ամբողջությամբ ավարտվել են Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված՝ ջրի տակ մնացած շուրջ 600 հա անտառածածկ տարածքներում ծառափայի բույսերի մաքրման և հեռացման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 6.2 անգամ:

Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծախսերը կազմել են 3.6 մլն դրամ՝ արձանագրելով նախատեսվածից 10%-ով ցածր կատարողական և նույն չափով նվազելով նախորդ տարվա համեմատ (կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներ): Ծրագրի շրջանակներում Սևանա լճում կատարվել են հիդրոակուստիկ դիտարկումներ ձկների տարածական տեղաբաշխման, խտության, պաշարների գնահատման ուղղությամբ:

2009 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված շուրջ 177.4 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Սևան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված միջոցառումներ և ծրագրեր: Մասնավորապես՝ ազգային պարկի տարածքում՝ Արտանիշի և Սևանի մասնաճյուղերում,

6 հա-ի վրա կատարվել է մրգատու այգու հիմնում: Բացի այդ, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված արդյունագործական ձկնորսության, խեցգետնի և լճագորտի որսի 13 պայմանագրերով կատարվել է 135.2 տոննա կարասի, 267.7 տոննա խեցգետնի և 17.2 տոննա լճագորտի որս: Նախորդ տարվա համեմատ «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների ծախսերն ավելացել են 6.6%-ով:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 76.6 մլն դրամ պետական աջակցությունը նույնպես ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ, ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանության, մարդու գործունեության հետևանքով պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման աշխատանքներ, կատարվել են նաև 10 հա անտառի տնկում, 15 հա անտառի ցանքս, 5 հա անտառի լրացում, 70 հա անտառի խնամք, 2500 կգ անտառային սերմերի մթերում և այլ ծրագրային աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.4%-ով:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող (ԲՀՊ) տարածքների պահպանության, ԲՀՊ տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար հատկացվել է շուրջ 74.1 մլն դրամ պետական աջակցություն, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ ծրագրային աշխատանքները՝

- «Էրեբունի» պետարգելոցի շուրջը 4 կմ երկարությամբ ստեղծվել են հանքայնացված շերտեր ու գծեր և կուտակվել ջրի պաշարներ.

- «Որդան կարմիր» արգելավայրում 380 գծ/մ մաքրվել է առուների հունը, որդանխտտի աճին ու զարգացմանը նպաստելու նպատակով հեռացվել է մոտ 2500 կգ այդ բուսատեսակների կանաչ զանգված.

- «Ջրվեժ» անտառապարկում տնկվել է 4500 հատ ծառ և թուփ, մշակվել է տնկարանի և դպրոցի հողամասի 1.2 հա տարածքը՝ վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.9%-ով:

«Շիկահող» պետական արգելոցի և «Մոսինների պուրակ» պետական արգելավայրի պահպանության, պետական արգելոցում գիտական ուսումնասիրությունների և «Մոսինների

պուրակ» պետական արգելավայրում անտառատնտեսական աշխատանքների իրականացման նպատակով նախատեսված 34.8 մլն դրամ պետական աջակցության ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում «Շիկահող» պետարգելոցում և «Սոսիների պուրակ» արգելավայրի 12201 հա վրա իրականացվել են պետական պատվերով նախատեսված պետարգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների իրականացման նպատակով հատկացվել է 77.5 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Խոսրովի անտառ» պետարգելոցում իրականացվել են պետական պատվերով նախատեսված պետարգելոցի պահպանության, արգելոցում գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով:

ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսվածի 95.5%-ի չափով՝ կազմելով 10.5 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Ծրագրի շրջանակներում կատարվել են բուսական և կենդանական աշխարհի հազվագյուտ և անհետացող տեսակների արդի վիճակի, քանակական և որակական ցուցանիշների բացահայտման, պոպուլյացիաների աճելավայրերի/ապրելավայրերի վիճակի գնահատման, տարածվածության բացահայտման և արեալների քարտեզագրման, ՀՀ Կարմիր գրքում ընդգրկվող բուսակենդանական տեսակների և սնկերի ճշգրիտ ցուցակների կազմման և հարակից նյութերի պատրաստման աշխատանքներ: ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագրի շրջանակներում նախապատրաստվել են նաև «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» և «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծերը: Նախորդ տարվա համեմատ ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծախսերն աճել են 5%-ով:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» և «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հատկացվել է համապատասխանաբար 189.5 մլն դրամ և 68.2 մլն դրամ՝ ապահովելով համապատասխանաբար 169.6% և 90% կատարողական: «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» ծրագրի բարձր կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2008 թվականի տարեվերջին կատարված աշխատանքների դիմաց վճարումները կատարվել են 2009 թվականի սկզբին: «Հանրային մասնավոր համագործակցություն»

դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 68.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 90%-ը: Վերոնշյալ երկու ծրագրերի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ են մատուցվում ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

ՎՋԵԲ աջակցությամբ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր իրականացնել Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային և վարկային ծրագրերը, որոնց վճարումները, ինչպես արդեն նշվել է, հետաձգվել են՝ պայմանավորված ծրագրերը տարեվերջին սկսելու և աշխատանքները 2010 թվական տեղափոխելու հանգամանքով: Մասնավորապես՝ վարկային ծրագիրը կատարվել է նախատեսվածի 34.7%-ի չափով (94.1 մլն դրամը կազմել է կառավարության համաֆինանսավորումը, 509.8 մլն դրամը՝ վարկային միջոցները), իսկ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վճարումներ չեն կատարվել:

Խմբի ծախսերից շուրջ 28.4 մլն դրամը կազմել են «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ում տրանսպորտային սարքավորումների, սարքավորումների և ոչ նյութական հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերը, որոնք կատարվել են նախատեսվածի 86.9%-ի չափով՝ պայմանավորված կառավարության որոշմամբ ծախսերի կասեցմամբ և գնումների մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 3 ավտոմեքենա, ռադիոկապ և կատարվել է խրտվիլակների պատրաստում, տեղադրում և ձևավորում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 84.4%-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 2 մլրդ դրամ կամ ծրագրվածից 10.1%-ով ավելի: Վերջինս հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի բարձր կատարողականով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 783.3 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 93.6%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 22.6%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 653-Ն որոշման համաձայն Օգտակար հանածոների պաշարների և Երկրաբանական գործակալությունները, իսկ ՀՀ Նախագահի 2008 թվականի մայիսի 20-ի ՆՀ-121-Ն հրամանագրի համաձայն՝ ՀՀ պետատոմհսկողությունը դուրս են բերվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմից:

Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագրով նախատեսված 23.3 մլն դրամի ծախսերը կատարվել են 89.5%-ով: Ցածր կատարողականը պայմանավորված է ծախսերի կասեցմամբ և տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում շարունակվել են 2007 թվականին սկսված՝ Ջրային պետական կադաստրի նոր կառուցվածքին համապատասխան աշխարհագրական տեղեկատվական վերլուծական համակարգի կիրառական ներդրման աշխատանքները: Հաշվետու տարում կատարված աշխատանքների արդյունքում ստեղծված համակարգը ներառում է թեմատիկ թվային քարտեզներ՝ դրանց համապատասխան տվյալների բազաներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 25.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է նախատեսված աշխատանքների բովանդակության և ծավալների փոփոխությամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 238.1 մլն դրամ (նախատեսվածից 8.2 անգամ ավելի), 198.4 մլն դրամ (նախատեսվածից 3.7 անգամ ավելի) և 73.5 մլն դրամ (նախատեսվածից 1.7 անգամ ավելի): Բարձր կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2008 թվականին կատարված աշխատանքների մի մասի ամփոփումը և վճարումները նախատեսված էր ավարտել 2009 թվականի հունվարի 31-ին, սակայն բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրերն ավարտվել են մայիսի 31-ին, իսկ Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագիրը՝ ապրիլի 30-ին:

Ջրաղբյուրների գույքագրման ծառայությունների ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 38.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են Սյունիքի, Վայոց Ձորի, Լոռու մարզերի և Երևան քաղաքի խորքային հորերի և բնաղբյուրների գույքագրման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.9%-ով կամ 3.3 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրով նախատեսված աշխատանքների բովանդակության և ծավալների (գույքագրվող ջրաղբյուրների քանակի) փոփոխությամբ:

Այլ դասերին չպատկանող՝ շրջակա միջավայրի պաշտպանության խմբում Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ծրագրով նախատեսվել էր 500 մլն դրամ, որից օգտագործվել է 414.4 մլն դրամը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 42 բակերի տարածքների բարեկարգում և կանաչապատում: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է փաստացի պատվիրված աշխատանքների ծավալով:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 16.9 մլն դրամ պետական աջակցություն՝ ապահովելով ծրագրի 100%

կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Ապահովվել է բնապահպանական պաշտոնական ինտերնետային կայքի անխափան գործունեությունը, որը ներկայացված է երեք լեզվով: Սպասարկվել են գրադարանի և ֆիլմադարանի այցելուներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.9%-ով կամ 2.1 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի վարման աշխատանքների հիմնական նպատակն է գնահատել ՀՀ տարածքում ստորերկրյա ջրերի ձևավորման գործընթացների քանակական և որակական հատկանիշների տարածաժամանակային փոփոխությունների հիմնական օրինաչափությունները և դրանց հիման վրա ապահովել ստորերկրյա ջրերի առավել արդյունավետ օգտագործումն ու պահպանումը, օգտագործել դրանք վնասակար ազդեցության դեմ պայքարի համապատասխան միջոցառումների մշակման և ստորերկրյա ջրերի ռեժիմի ճիշտ կառավարման եղանակների ընտրության համար: 2009 թվականին ՀՀ պետական բյուջեից տվյալ ծառայություններին հատկացվել է 18.1 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Սևանա լճի շրջակայքի ջրածածկվող անտառային տարածքների գույքագրման և քարտեզագրման ծառայությունների համար 2009 թվականի համար նախատեսված 10 մլն դրամը հատկացվել է ամբողջությամբ:

«Արտադրության և սպառման թափոնների տեղադրմանը և վնասագերծմանը ներկայացվող պահանջներ» նորմատիվ փաստաթղթի մշակման ծախսերը կազմել են շուրջ 6.3 մլն դրամ՝ 89.5%-ով ապահովվելով ծրագրային հատկացումները: Ծրագրի շրջանակներում մշակվել է արտադրության և սպառման թափոնների հիմնական տեսակների գոյացման տեսակարար ցուցանիշների տեղեկատվական ձեռնարկը: «Օգտագործման համար ոչ պիտանի պեստիցիդների գործածությանը ներկայացվող կանոններ» նորմատիվ փաստաթղթի մշակման ծախսերը նույնպես կազմել են 6.3 մլն դրամ և 89.5%-ով ապահովել ծրագրային հատկացումները: Ծրագրի շրջանակներում կատարվել են տարբեր ծագում ունեցող (օրգանական, քիմիական, հանքային, կոմունալ) արտադրության և սպառման թափոնների առաջարկվող վնասագերծման և օգտագործման տեխնոլոգիաների ցանկի մշակման աշխատանքներ: Վերջին երկու ծրագրերի թերակատարումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված ծախսերի կասեցմամբ, ինչպես նաև տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրերի ֆինանսավորման 30% նվազումը հիմնականում պայմանավորված է աշխատանքների ծավալների փոփոխությամբ:

Անտառի վնասատուների և հիվանդածին միջատների դեմ պայքարի էկոլոգիապես անվտանգ նոր տեխնոլոգիաների մշակման ծառայությունների համար 2009 թվականին տրամադրվել է շուրջ 13.4 մլն դրամ կամ նախատեսված գումարի 89.1%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցմամբ և որոշակի տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում մշակվել են անտառի վնասատուների և հիվանդածին միջատների դեմ պայքարի էկոլոգիապես անվտանգ նոր տեխնոլոգիաներ: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրը նախատեսված չի եղել:

Ջրային ռեսուրսների և ջրային պաշարի բաղադրիչների արդիական բնութագրերի ճշգրտման ծառայություններին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից հատկացվել է 26.7 մլն դրամ՝ նախատեսված 32.1 մլն դրամի դիմաց: Ծրագրի 16.9% շեղումը նույնպես պայմանավորված է ծախսերի կասեցմամբ և 2.2 մլն դրամի չափով տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել են մակերևութային բնական վերականգնվող հոսքի քանակական և որակական տարածաժամանակային բնութագրերի ճշգրտում, ինչպես նաև մակերևութային և ստորերկրյա ջրային պաշարների տարանջատված գնահատման հստակեցում, խորքային հոսքի ճշգրտում: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրը նույնպես նախատեսված չի եղել:

Ջրօգտագործման թույլտվությունների առկա կանոնակարգերի կատարելագործման, ջրօգտագործման թույլտվությունների հայտերի գերակայությունների չափորոշիչների սահմանման ծառայություններին ուղղվել է 4.3 մլն դրամ՝ 89.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի թերակատարումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով և գնումների շրջանակներում ձեռքբերված տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում կատարվել է ջրօգտագործման թույլտվությունների առկա կանոնակարգերի ուսումնասիրում, ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրօգտագործողների հայտերի ուսումնասիրում, հայտերի գնահատման գործընթացում բացթողումների բացահայտում, օրենսդրության պահանջների համաձայն ջրօգտագործման թույլտվությունների հայտերի գերակայությունների չափորոշիչների սահմանում: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրը նախատեսված չի եղել:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի սահմանման ծառայությունների ֆինանսավորմանը հատկացվել է 20.6 մլն դրամ: Ծրագիրը կատարվել է նախատեսվածից 19.5%-ով պակաս, ինչը նույնպես պայմանավորված է կասեցմամբ և գնումների շրջանակներում ձեռքբերված տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել է ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման միջազգայնորեն ընդունված նորմերի և մեթոդաբանության ուսումնասիրում և մշակում, ջրային ռեսուրսների դասակարգմամբ ներկայացվող պահանջների գնահատում, միջազգային նորմերի համադրումը ազգային

նորմերի հետ, ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ջրի որակի ապահովման նորմերի սահմանման մեթոդաբանության մշակում, ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի և ջրի որակի ապահովման նորմերի սահմանում: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրը նախատեսված չի եղել:

13.3 մլն դրամ կամ նախատեսվածի 89.3%-ը հատկացվել է ջրօգտագործման թույլտվության հայտերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակման ծառայություններին: Ծրագրի համեմատաբար ցածր կատարողականը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով և գնումների շրջանակներում ձեռքբերված տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում հատկացվել են ջրային ռեսուրսների որակին և քանակին ներկայացվող պահանջները՝ համաձայն ջրային ռեսուրսների դասակարգման, ինչպես նաև կատարվել է ջրային ռեսուրսների հոսքի ուսումնասիրում, էկոլոգիական թողքի ճշտում: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրը նախատեսված չի եղել:

ՀՀ Ջրի ազգային ծրագրի պահանջներին համապատասխան մոնիթորինգի ծրագրի մշակման ծառայություններին հատկացվել է շուրջ 26.7 մլն դրամ՝ 84.3%-ով կատարելով ծրագիրը: Այս ծրագրի ցածր կատարողականը նույնպես պայմանավորված է ծախսերի կասեցմամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել է մոնիթորինգի ենթակա միջավայրի ընտրություն, մոնիթորինգի ենթակա հատվածի նմուշառումների և չափումների կետերի տեղաբաշխման վերանայում, միջազգային ստանդարտներին ներդաշնակ նմուշների լաբորատոր վերլուծության և պահպանման պահանջների ընտրություն, ջրային ռեսուրսների քանակի, մակարդակի մոնիթորինգի և ջրօտագործման տվյալների համատեղ վերլուծություն, ջրային ռեսուրսների վիճակի գնահատում, դրա բարելավման մեթոդոլոգիայի ու հաշվարկային եղանակի մշակում: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրը նախատեսված չի եղել:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էին Սևանա լճի ավազանի ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, էկոտոնի, անօտարելի և ջրապահպան գոտիների տարածքների փաստացի չափերի որոշման 14.6 մլն դրամի աշխատանքներ, որոնք կատարվել են 89.6%-ով (13.1 մլն դրամ): Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կասեցմամբ, ինչպես նաև մրցույթի արդյունքում ձեռքբերված տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել են տեղանքի մակերեսային մանրամասն գնումներ և քարտեզագրումներ, ջրի նմուշառում, ջրի քիմիական, կենսաբանական և մանրէաբանական անալիզներ, նյութերի գրասենյակային մշակում: ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում տվյալ ծրագիրը նախատեսված չի եղել:

«Բնապահպանական նպատակային ֆոնդ» ծրագրի շրջանակներում կատարվել են 37.3 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 85.4%-ը: Ծրագիրը ֆինանսավորվել է ՀՀ

բնապահպանության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության և ՀՀ բնապահպանության համակարգում տեղեկատվության փոխանակման համար համընդհանուր (կորպորատիվ) ցանցի ստեղծման նպատակով հատկացված գումարների կրճատմամբ: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին օգտագործված գումարները բաշխվել են հետևյալ ուղղություններով՝

- պետական աջակցություն «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ին թանգարանային ցուցանմուշների պահպանման պայմանների բարելավման նպատակով՝ 3.8 մլն դրամ.

- պետական աջակցություն «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ 18.1 մլն դրամ.

- պետական աջակցություն «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ին կենսաանվտանգության վերաբերյալ կայքի սպասարկման համար՝ 195.4 հազ. դրամ.

- ՀՀ բնապահպանության համակարգում տեղեկատվության փոխանակման համար համընդհանուր (կորպորատիվ) ցանցի ստեղծում՝ 3.1 մլն դրամ.

- կայուն օրգանական աղտոտիչների անալիտիկ հետազոտությունների լաբորատորիայի տարածքի հիմնանորոգման աշխատանքներ՝ 1 մլն դրամ.

- Երևանում Ռոտերդամի կոնվենցիայի ազգային իրավասու նշանակված անձանց համար և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բազմակողմանի համաձայնագրերի՝ Ստոկհոլմի և Բազելի կոնվենցիաների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը նվիրված տարածաշրջանային ուսուցողական սեմինարի կազմակերպում՝ 612.5 հազ. դրամ.

- «Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին 2009 թվականին Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի արգելման գործընթացի արդյունավետ կազմակերպում՝ 5.7 մլն դրամ.

- աջակցություն Խոր Վիրապ պետական արգելավայրի կառավարման աշխատանքներին՝ 4.7 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագիրն իրականացվել է ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1395-Ն որոշման համաձայն: Ծրագրի ծախսերը կազմել են 57.7 մլն դրամ, կամ նախատեսվածի 83.4%-ը, որից 53.8 մլն դրամը կազմել են դրամաշնորհային միջոցները, իսկ 3.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորումը: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները՝

- մշակվել են «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանի և գործարար ծրագրի նախնական տարբերակները.

- մշակվել է ծրագրի Աջակցության գոտու տնտեսական զարգացման պլանի նախնական տարբերակը.

- «Քարտեզագրման ինստիտուտ» կազմակերպության կողմից կատարվել են ՊՈԱԿ-ի տարածքի քարտեզագրման աշխատանքերը.

- ազգային պարկի տարածքին հարող համայնքների կողմից իրականացվում են հողի հատկացման աշխատանքներ՝ գրասենյակներ և այցելուների կենտրոն կառուցելու համար.

- ավարտված են ՊՈԱԿ-ի շենք-շինությունների կառուցման նախագծային աշխատանքերը.

- մրցութային փուլում է գտնվում շինարարական աշխատանքների կազմակերպումը:

Այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության դասում երկու ծրագրեր չեն իրականացվել: Մասնավորապես՝ օդի հիմնական աղտոտիչների ազդեցության հետազոտման և մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ներգործությունը կարգավորող մեթոդական և իրավական ակտերի մշակման ծառայությունների համար նախատեսվել էր հատկացնել 6.2 մլն դրամ, իսկ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման համար (նախարարությունների աշխատակազմերի մասով)՝ շուրջ 4.8 մլն դրամ: Առաջին ծրագիրը չի իրականացվել հայտարարված 4 մրցութների չկայացման պատճառով, իսկ երկրորդ ծրագիրը կասեցվել է՝ համաձայն կառավարության որոշման:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

2009 թվականին բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 21.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 95.1%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտի ծախսերի համեմատաբար ցածր կատարողականով: Սակայն 2008 թվականի համեմատ ջրամատակարարման ծախսերը զգալիորեն աճել են, ինչի արդյունքում բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 50.3%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում 2.8 մլրդ դրամ է տրամադրվել բնակարանային շինարարության ոլորտին՝ ամբողջությամբ կատարելով ծրագրված ցուցանիշը: 2008 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 25.7%-ով:

Գումարի զգալի մասը՝ շուրջ 2.3 մլրդ դրամ, կազմել են Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել են թվով 5 վթարային

շենքեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 30.8%-ով կամ 1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է ծրագրային աշխատանքների ծավալների նվազմամբ:

Անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայտտերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության նպատակով նախատեսված 540 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է, որը 8%-ով կամ 40 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Բաժնի ծախսերի 69.4%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 14.6 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 93.2%-ը, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման, Շիրակի, Լոռու և Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով, ինչպես նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման դրամաշնորհային ծրագրի և Ֆրանսիայի հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային և դրամաշնորհային ծրագրերը չկատարելու հանգամանքով:

Հաշվետու տարում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 121.8 մլն դրամ՝ 89.7%-ով կատարելով ծրագիրը: Շեղումը պայմանավորված է առանձին հողվածներով նախատեսված ծախսերի մասնակիորեն կասեցմամբ և որոշ հողվածներով փաստացի կատարված ծախսերի տնտեսմամբ: Նշվածով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 10.5%-ով, որը նույնպես պայմանավորված է վերը նշված հանգամանքներով:

Մեծամորի ռեզերվային հորի կառուցման նպատակով օգտագործվել են նախատեսվածից 11.1%-ով պակաս միջոցներ՝ կազմելով շուրջ 12.1 մլն դրամ, որը պայմանավորված է մրցույթի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին ավարտվել են Մեծամորի ռեզերվային հորի կառուցման, խորքային հորի հորատման և էլեկտրական գծերի վերականգնման աշխատանքները: 2008 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են շուրջ 19.1 մլն դրամով:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 5.1 մլրդ դրամ՝ 46%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Գերակատարումը պայմանավորված է

վերանորոգման աշխատանքների արագ կատարման հանգամանքով: Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝ «Համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում» և «Կառավարման բարելավում և կարողությունների հզորացում»: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում շարունակվել են շենքերի ու շինությունների վերանորոգման և մեքենաների ու սարքավորումների ձեռքբերման աշխատանքները՝ Գորիս, Թալին, Էջմիածին քաղաքների և Արտաշատի տարածաշրջանի գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման նպատակով: Բոլոր վերոհիշյալ համայնքների համար նախատեսված աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն ավելացել են 6.7 անգամ կամ շուրջ 4.4 մլրդ դրամով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվել է «Հայջրմուղկյուղի» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարմանն ուղղված սուբսիդավորումը, որի գծով նախատեսված 863.4 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է:

Համայնքային բյուջեներին տրամադրվել են 334.6 մլն դրամի սուբվենցիաներ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Միջոցները հատկացվել են Արագածոտնի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի համայնքներին: 2008 թվականի համեմատ արձանագրվել է ծախսերի 2.1 անգամ աճ՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված միջոցներով իրականացվող՝ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի գծով օգտագործվել է համապատասխանաբար 1.3 մլրդ դրամ և 2 մլրդ դրամ՝ 56%-ով և 110.1%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշները: Բարձր կատարողականները պայմանավորված են փաստացի կատարված աշխատանքների ծավալներով: Ծրագրերի շրջանակներում 2009 թվականի ընթացքում ավարտվել են մեքենաների, սարքերի և սարքավորումների, վարչական շենքի գրասենյակի գույքի ձեռքբերումը, իրականացվել են վարչական շենքերի, արհեստանոցների և պահեստների վերականգնման և մի շարք այլ աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծախսերը նվազել են 39%-ով կամ 808.1 մլն դրամով, իսկ Շիրակի մարզինը՝ ավելացել են 3.1 անգամ կամ 1.4 մլրդ դրամով: Տարբերությունները պայմանավորված են կատարված աշխատանքների ծավալների փոփոխությամբ:

Նույն ծրագրերի ֆինանսավորման նպատակով նախատեսված 1.6 մլրդ դրամ դրամաշնորհային միջոցներն օգտագործվել են մասամբ: Մասնավորապես՝ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 62.6%-ով կամ 370.8 մլն դրամի չափով, իսկ Շիրակի մարզինը՝ 13.4%-ով

կամ 135 մլն դրամով: ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրով կնքված պայմանագրերի հիման վրա իրականացվող աշխատանքները համարվում են վարկային միջոցների շարունակական մաս: Ծրագրով նախատեսված և 2009 թվականին չօգտագործված գումարները տեղափոխվել են 2010 թվական: 2008 թվականին այս ծրագրերի շրջանակներում ծախսեր չեն իրականացվել, քանի որ կատարված աշխատանքների համար մասհանման հայտերի հիման վրա Գերմանական KfW բանկի կողմից գումարները տրամադրվել են միայն վարկային միջոցներից:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 87.2 մլն դրամ՝ ապահովելով 38.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրն ավարտվել է, և կնքվել է նոր համաձայնագիր՝ որպես ծրագրի շարունակություն, համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի ֆինանսավորման լրացուցիչ ծրագիր: Ծրագրի առաջնահերթ խնդիրներն են ջրամատակարարման համակարգերի արդյունավետության բարձրացումը, ջրամատակարարման ժամերի ավելացումը, ջրի վարձի գանձման համակարգերի բարելավումը, սոցիալապես խոցելի խմբերի համար աջակցության և վճարման պայմանների հատուկ մեխանիզմի սահմանումը, ինչպես նաև հաճախորդների սպասարկման բարելավման և հասարակության իրազեկության ծրագրերի մշակումը: 2009 թվականին ծրագրի շրջանակներում կատարվել են Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգման և վերականգնման աշխատանքներ:

Խմելու ջրի մատակարարման բարելավմանն ուղղվել է 500.8 մլն դրամ՝ 93.7%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի համեմատաբար ցածր կատարողականը պայմանավորված է մրցույթի արդյունքում առաջացած խնայողությամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Շիրակի, Տավուշի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի 13 գյուղական համայնքների ջրամատակարարման համակարգերի կառուցման և բարելավման աշխատանքներ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.6 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրված հատկացումների 59.2% կատարողական: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ առանձին աշխատանքներ տեղափոխվել են 2010 թվական: 2009 թվականի ընթացքում կատարվել են բաշխիչ ցանցում գոտիավորման հետևյալ աշխատանքները՝ Երևան քաղաքի 16-րդ թաղամասի, Արաբկիրի 17, 19, 21, 23, 25, 27 փողոցների և Պռոշյան փողոցի ջրագծերի, փականների վերակառուցում և փոխարինում, Նորագյուղ թաղամասի՝ Հրազդան գետը թափվող կոյուղագծի միացում 500 մմ դյուլերին, քաղաքի Կենտրոն համայնքի ջրամատակարարման II-III փուլերի գոտիավորում, Մարաշի 4000 խմ ծավալով ջրամբարի վերականգնում ու կառուցում, Քանաքեռավանի, Ավան-

Առինջի ու Նորքի 4-րդ զանգվածի կոյուղագծի վերակառուցում, Անդրանիկի 10/1-10/32., Օգանովի 622., Ուլենցի փողոցից մինչև Ազատության պողոտա կոյուղագծերի վերակառուցում, գինու գործարանին հարող Խորհրդարանական փողոցից մինչև Էջմիածնի Հին խճուղի հասնող կոյուղագծի վերակառուցում, Նժդեհի փ. կոյուղու կոլեկտորի վերակառուցում, Շահումյանի համայնքի Լուկաշինի 10000 խմ ծավալով ջրամբարի վերականգնում ու կառուցում, Չորաղբյուր ՕԿՁ-ից ինքնահոս ջրագծի կառուցում, Մուշական և Ջրաշեն գյուղերի ջրամատակարարման բարելավում, Խարբերդ գյուղի ջրատարի վերակառուցում և Մայակ ու Բանավան քաղամասերի սեկտորիզացում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 68.2%-ով կամ 629.3 մլն դրամով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում 2009 թվականին կատարվել են 48.8 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրված հատկացումների 53.2% կատարողական: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ ծրագրի ավարտը տեղափոխվել է 2010 թվական:

«Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքը փակելու համար ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով հատկացված սուբսիդիան ամբողջությամբ ֆինանսավորվել է՝ կազմելով 38.5 մլն դրամ:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով 2009 թվականի պետական բյուջեի ճշտված ծրագրով նախատեսվել էին համապատասխանաբար 258.5 մլն դրամի և 53.9 մլն դրամի ծախսեր, որոնք, սակայն, չեն կատարվել, քանի որ խորհրդատուի կողմից ավարտական հաշվետվությունը ներկայացվել է 2010 թվականի հունվարին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 130.4 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 33.6%-ը: Կառավարության 2009 թվականի հունիսի 11-ի N 661-Ն որոշմամբ հաստատվել է «Լոռու-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կառավարչի ընտրության մրցույթի արդյունքների և 2009 թվականի հուլիսի 14-ին հայ-գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ բի Էյջ, Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ ընկերությունների կոնսորցիումի միջև կնքվել է մասնավոր կառավարման պայմանագիր: 2009 թվականի դեկտեմբերին պայմանագրի

համաձայն Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից ուղղակի վճարմամբ կոնսորցիումին է վճարվել կանխավճար ֆիքսված վճարի 10%-ի չափով, իսկ առաջին եռամսյակի հասանելիք գումարը Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից ընկերությանն է փոխանցվել 2010 թվականի հունվար ամսին:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 874.3 մլն դրամի օգտագործում, որը չի իրականացվել:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսված գումարը ստացվել է ամբողջությամբ՝ կազմելով 156.6 մլն դրամ, որից օգտագործվել է 13.8%-ը կամ 21.6 մլն դրամը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 1.9 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով նախատեսված ցուցանիշի 89.4% կատարում: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի իրականացումը սկսվել է 2009 թվականի վերջին, և դրանց կատարումը հետաձգվել է 2010 թվական: Ծրագիրը բաղկացած է հետևյալ երեք բաղադրիչներից՝

- ծրագիրն իրականացնող մարմնի սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառավարման ամրապնդում.

- ծրագիրն իրականացնող մարմնում ներդրումներ՝ կենտրոնական վերապատրաստման և նախաորակավորման հաստատության բարելավում և սարքավորումներով հագեցում, քիմիական և կենսաբանական լաբորատորիաների վերակառուցում և սարքավորումներով հագեցում, գրասենյակային սարքավորումների շահագործման համար նախատեսված պահեստամասեր, գործիքներ և մեխանիզմներ, բնակելի շենքերի ու բնակարանների ջրաչափերի տեղադրում, ներշենքային և բաշխիչ ցանցերում ջրի հոսքի կորուստները ստույգ հաշվելու նպատակով ներքին ցանցի վերանորոգումներ.

- ներդրումներ մասնաճյուղային համակարգերում՝ աշխատանքների, ապրանքների և խորհրդատվական ծառայությունների տրամադրում, մասնաճյուղերում ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի վերականգնման ու վերակառուցման նպատակով ներդրումային ծրագրերի նախագծում, իրագործում ու վերահսկում, այդ թվում՝ Հրազդան քաղաքի ջրային համակարգի նախագծում և վերակառուցում: 2009 թվականին կնքվել են մեքենաների ու սարքավորումների ձեռքբերման պայմանագրեր, և մատուցվել են խորհրդատվական ծառայություններ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի

վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 69.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Վճարումները կատարվել են հետևյալ ուղղություններով՝

- խորհրդատվական կազմակերպությանը վճարումը կատարվել է մատուցված խորհրդատվական ծառայության կողմից ներկայացված կատարողական ակտերի հիման վրա՝ կազմելով 18.2 մլն դրամ.

- Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից կապիտալ շինարարության աշխատանքների կատարման համար 51.1 մլն դրամ է վճարվել կապալառուներին:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 38.5%-ով կամ 43.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրով նախատեսված աշխատանքները մոտեցել են ավարտին:

2009 թվականին պետական բյուջեի ծախսերի *փողոցների լուսավորման* խմբում Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի շրջանակներում նախատեսված ավելի քան 2.1 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Կատարված հատկացումներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և վերակառուցման աշխատանքների ֆինանսավորմանը: Երևան քաղաքի փողոցներում անցկացվել են 322.6 կմ երկարությամբ մալուխագծեր, տեղադրվել են 5304 էլեկտրական սյուներ և 9216 լուսատուներ: 2008 թվականի համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 63.8%-ով կամ 825.4 մլն դրամով՝ ծրագրային աշխատանքների ավելացման հետևանքով:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների գծով կատարվել են 3.9 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 97.8% կատարողական: Հատկացումների հաշվին Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի շրջանակներում իրականացվել են վթարային շենքերի հետազոտման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 2.2%-ով:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների՝ այլ դասերին չպատկանող ծրագրերի գծով հաշվետու տարում կատարվել են ավելի քան 1.5 մլրդ դրամի ծախսեր՝ 98%-ով ապահովելով ծրագրային հատկացումները:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 432.8 մլն դրամ՝ 96.9%-ով ապահովելով նախատեսված տարեկան հատկացումները: Նշված միջոցներով իրականացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության պահպանումը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով: Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի գծով ֆինանսավորումը կասեցվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ քաղաքաշինության նախարարության

պահպանման և կարողությունների զարգացման ծախսերը նվազել են 8.4%-ով կամ 39.5 մլն դրամով:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների դասում նախատեսված՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերի շրջանակներում կատարվել են 1.1 մլրդ դրամի ծախսեր՝ ամբողջությամբ ապահովելով տարեկան ծրագրային հատկացումների ծավալը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են թվով 26 ջրային կառույցների շահագործման և պահպանման աշխատանքներ: Հատկացված գումարից 150 մլն դրամ տրամադրվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝ որպես սուբսիդիա, 263.3 մլն դրամ՝ Երևան քաղաքի ջրային կառույցների շահագործման և պահպանման աշխատանքներին, 293.6 մլն դրամ՝ Աջափնյակի Սիլիկյան թաղամասի կոյուղագծի կառուցման աշխատանքներին, 375.5 մլն դրամ պետական օժանդակություն է տրամադրվել «Երևան» հիմնադրամին՝ Երևանի փողոցների և բակային տարածքների աղբահանության, սանիտարական մաքրման և բարեկարգման նպատակով: 2008 թվականի համեմատ տվյալ ծրագրի ծախսերն ավելացել են 62.2%-ով՝ պայմանավորված ծրագրային աշխատանքների ավելացմամբ:

Առողջապահություն

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի առողջապահության ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 56.2 մլրդ դրամ՝ 87.7%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ընդ որում, բոլոր խմբերում առկա են ծրագրից շեղումներ, որոնց զգալի մասն առաջացել է արտահիվանդանոցային և հիվանդանոցային ծառայությունների խմբերում և հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Բաժնի ծախսերի 38.5%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 36.4%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 6.3%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերման, 13.8%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի և 5.1%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ՝ պետական առողջապահական ծախսերն ավելացել են 12.4%-ով, որի հիմնական մասն ուղղվել է հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծրագրերի ֆինանսավորմանը՝ պայմանավորված մատուցված ծառայությունների ծավալների և մեկ հիվանդի բուժման ծախսերի ավելացմամբ: Բացի այդ, զգալի աճ է արձանագրվել նաև արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով:

Հաշվետու տարում բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 3.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 81.2% կատարողական:

Շեղումը հիմնականում առաջացել է «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» և «Ներդրումներ առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար» ծրագրերի ցածր կատարողականի արդյունքում: Բացի այդ, շեղումներ են արձանագրվել նաև արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող Իմունականիսարգելման Ազգային ծրագրի և ՀՀ-ում Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման ծրագրերի գծով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով 2009 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 3.0 մլրդ դրամ՝ 90.3%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն ուղղվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ազգաբնակչության դեղորայքի ապահովմանը:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով նախատեսված 1.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

Իմունականիսարգելման ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներից ծախսվել է շուրջ 29.8 մլն դրամ՝ նախատեսված 30.8 մլն դրամի դիմաց: 2009 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները՝

- հնգավալենտ պատվաստումների ներդրման նպատակով բուժաշխատողների շրջանում դասընթացների, խորհրդակցությունների կազմակերպում և իրականացում, 2009 թվականի սեպտեմբերի 1-ից նաև մոնիթորինգի իրականացման համար մասնագետների ներքին գործուղումներ.

- իմունականիսարգելման ոլորտում առկա գրանցամատյանների, հաշվետվական ձևաթղթերի, պատվաստումային քարտերի, մեթոդական փաստաթղթերի տպագրման, ինչպես նաև հանրային իրազեկման աշխատանքներ.

- ձեռք է բերվել վառելիք և բաշխվել Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության փորձագիտական կենտրոններին:

«ՀՀ-ում Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» արտաբյուջետային ծրագրով հատկացվել է 376.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 85.5%-ը: Շեղումը պայմանավորված է աշխատավարձերի և համապատասխանաբար սոցիալական ապահովության վճարների տնտեսմամբ, որոշ ծառայությունների համար նախատեսված գումարները չօգտագործելու և սարքավորումների գնումը հետաձգելու հանգամանքներով:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է հիվանդներին սոցիալական աջակցություն, ինչպես նաև տուբերկուլյոզի բնագավառում առողջության առաջնային պահպանման օղակի բժիշկների և բուժքույրերի վերապատրաստում, ԳՈԹՍ ծրագրի ռազմավարության

դասընթացներ, ավարտվել են Աբովյանի տուբերկուլյոզային դիսպանսերի բազմադեղակայուն բաժանմունքների վերանորոգման և կահավորման աշխատանքները, բազմադեղակայուն տուբերկուլյոզի բուժման համար ներմուծվել է անհրաժեշտ քանակով դեղորայք, ձեռք են բերվել բժշկական հագուստ և պարագաներ:

Բժշկական սարքերի և սարքավորումների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ներդրումներ առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար» և «Ներդրումներ պետական պահպանության ծառայությունում բժշկական սարքավորումների ձեռքբերման համար», որոնց շրջանակներում օգտագործվել է ավելի քան 99.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 18.8%-ը: Միջոցներն օգտագործվել են առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար՝ 19.7%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ծրագրի նպատակն է համակարգի առողջապահական հիմնարկների բժշկական սարքավորումների և ավտոտրանսպորտի նորացումը և վերազինումը, որը խիստ անհրաժեշտ է հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում: Նշված ծրագրի ցածր կատարողականը, ինչպես նաև պետական պահպանության ծառայությունում բժշկական սարքավորումների ձեռքբերման համար ներդրումների ծրագրով նախատեսված 25 մլն դրամը չօգտագործելու հանգամանքը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ բժշկական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը նվազել են 93.3%-ով կամ 1.4 մլրդ դրամով:

2009 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է ավելի քան 20.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 83.9%-ով կատարում: Ցածր կատարողականը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 38.5%-ը կամ շուրջ 7.9 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի, 24.7%-ը կամ 5.1 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 4.0%-ը կամ 826.0 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 32.7%-ը կամ շուրջ 6.7 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 38.5%-ը կամ շուրջ 7.9 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 84.9%-ով: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունների ֆինանսավորմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը.

- կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է 1,119.5 մլն դրամ ընդհանուր գումարի դեղորայք:

Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը նվազել են 0.9%-ով կամ 69.3 մլն դրամով՝ պայմանավորված կառավարության որոշմամբ սահմանված ծախսերի կասեցումով:

«Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագրի համար օգտագործվել է 128 մլն դրամ կամ նախատեսվածի 17.5%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 1100 հաշմանդամ երեխաների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ձեռքբերման ծախսերը 2009 թվականին կազմել են 1.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 93.5%-ը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2008 թվականի 59.3 հազար սեանսի փոխարեն, 2009 թվականին իրականացվել է 66.9 հազար սեանս: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 13% կամ շուրջ 139.1 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում հատկացվել է ավելի քան 1.0 մլրդ դրամ՝ 62.5%-ով ապահովելով նախատեսվածը: Ծրագրի շրջանակներում նախաձեռնողյան և հետձեռնողյան հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 46.0 հազար հղիների նկատմամբ՝ նախորդ տարվա 42.0 հազարի փոխարեն, ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 9.9%-ով կամ 946.1 մլն դրամով, որը նաև պայմանավորված է ծառայության գնի աճով:

Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններին տրամադրվել է շուրջ 64.8 մլն դրամ պետական աջակցություն՝ 90.9%-ով ապահովելով նախատեսվածը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով, ինչպես նաև տնտեսմամբ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 15.8%-ով՝ պայմանավորված դեղորայքի և աշխատավարձի ծախսերի ավելացմամբ:

«Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում հատկացվել է ավելի քան 2.4 մլրդ դրամ կամ կամ նախատեսվածի 84.2%-ը: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 159.0 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.3%

կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2008 թվականի 7.5 հազար հիվանդի դիմաց 2009 թվականին բուժօգնություն է ստացել 10.3 հազար հիվանդ: Ծախսերի աճը 2008 թվականի համեմատ կազմել է 22.6%:

Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված ծախսերը կատարվել են 87.7%-ով՝ կազմելով շուրջ 12.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է իրականացվել 1.8 հազար հիվանդների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով:

«Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների համար նախատեսված 5.0 մլն դրամը չի ծախսվել՝ պայմանավորված կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է 826.0 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 93%-ը: Մասնավորապես՝ ավելի քան 736.6 մլն դրամ (92.4%) տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի թվաքանակը կազմել է 269.8 հազար, նախորդ տարվա 253.0 հազարի դիմաց: Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 89.4 մլն դրամ՝ ապահովելով 98.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են թվով 74.2 հազար երեխաներ՝ 2008 թվականի 79.5 հազարի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ՝ ստոմատոլոգիական ծառայությունների գծով բյուջեի ծախսերն ավելացել են 6.2%-ով:

Պարաբժշկական ծառայություններում ընդգրկված են 3 ծրագրեր՝ «Շտապ բժշկական օգնության գծով ծառայություններ», «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ», ինչպես նաև «Ձորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերը, որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 6.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 90.7%-ը: Մասնավորապես, շուրջ 1.5 մլրդ դրամ (73.2%) տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2009 թվականին իրականացվել է 359.3 հազար կանչ՝ 2008 թվականի 342 հազարի փոխարեն: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով: Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են 2.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը, որի շրջանակներում իրականացվել է 3577.8 հազար

հետազոտություն՝ 2008 թվականի 3325-ի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերն աճել են 4.5%-ով: Չորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2009 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 2.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.3%-ը: Ծրագրի շրջանակներում բժիշկ-մասնագետների կողմից իրականացվել է 15-17 տարեկան պատանիների առողջության առաջնային պահպանում և շարունակական հսկողություն, ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 14.8%-ով:

2009 թվականին ՀՀ պետական բյուջեի *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են 21.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով: Տարվա ընթացքում հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում ծառայություններ են մատուցվել 252.6 հազար հիվանդի: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 44.8%-ը կամ շուրջ 9.7 մլրդ դրամը կազմել են բժշկական, մոր և մանկան կենտրոնների, 29.2%-ը կամ 6.3 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների, 26.0%-ը կամ ավելի քան 5.6 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերի ծրագիրը կատարվել է 89.4%-ով: Անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով 86% կատարողական: 2008 թվականի համեմատ դրանք ավելացել են 2.1%-ով կամ 47.6 մլն դրամով: Աճի հիմնական պատճառը հիվանդի մեկ օրվա բուժման գնի աճն է, որը 2008 թվականի 11500 դրամի դիմաց 2009 թվականին դարձել է 12400 դրամ: Բացի այդ, պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2008 թվականի 31.6 հազար հիվանդի դիմաց 2009 թվականին բուժօգնություն է ստացել 30.6 հազար հիվանդ:

Հաշվետու տարում պետական բյուջեից շուրջ 3.3 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 92%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2009 թվականին բուժօգնություն է ստացել 36 հազար հիվանդ՝ 2008 թվականի 29.4 հազար հիվանդի փոխարեն: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 24.0%-ով կամ շուրջ 637.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է մեկ հիվանդի բուժման ծախսի, ինչպես նաև հիվանդների թվաքանակի ավելացմամբ:

Հաշվետու տարում 6.3 մլրդ դրամ է օգտագործվել մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների մատուցման նպատակով, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 89.7%-ով: Տվյալ դասի շրջանակներում նախատեսվել էր 8 ծրագրերի ֆինանսավորում, որոնցից կատարվել է 7-ը:

Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են 1.2 մլրդ դրամ՝ 96.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 8.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ: Եթե 2008 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 5.3 հազար հիվանդ, ապա 2009 թվականին հիվանդների թիվը կազմել է 5.8 հազար:

«Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով 2009 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 716.9 մլն դրամ՝ 96.5%-ով ապահովելով նախատեսվածը: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին բուժօգնություն է ստացել 9.7 հազար հիվանդ՝ 2008 թվականի 9.9 հազարի փոխարեն: 2008 թվականի համեմատ ծախսերի 8.8% աճը պայմանավորված է մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ:

«Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 162.7 մլն դրամ (83.4%), որի շրջանակներում բուժօգնություն է ստացել 1.3 հազար հիվանդ՝ 2008 թվականի 1.2 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերն աճել են 4.3%-ով:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ՝ 95.1%-ով ապահովելով նախատեսվածը և 7.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը պայմանավորված է մեկ հիվանդի բուժման ծախսի, ինչպես նաև հիվանդների թվաքանակի ավելացմամբ: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 7 հազար հիվանդ՝ 2008 թվականի 6.6 հազարի փոխարեն:

«Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով ծախսվել է 1 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսվածի 89.8%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 48.3 հազար հիվանդ՝ 2008 թվականի 48.6 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ֆինանսավորումն ավելացել է 4.6%-ով՝ պայմանավորված մեկ հիվանդի բուժման գնի ավելացմամբ:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին տրամադրվել է շուրջ 959.7 մլն դրամ կամ նախատեսվածի 72.7%-ը: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 9.3 հազար հիվանդի փոխարեն

2009 թվականին բուժօգնություն են ստացել 10.1 հազար հիվանդ: 2008 թվականի համեմատ ծրագրի գծով ծախսերն աճել են 8%-ով կամ 71.2 մլն դրամով:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է 569.0 մլն դրամ կամ նախատեսվածի 89.6%-ը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ինչպես 2008 թվականին, այնպես էլ 2009 թվականին բուժօգնություն են ստացել 4 հազար հիվանդ, հետևաբար ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թրաֆիքինգի գոհերի բժշկական օգնության ծառայությունների ծրագրով 2009 թվականի պետական բյուջեից հատկացվել էր 2.2 մլն դրամ, որը տարվա ընթացքում չի օգտագործվել՝ դեպքեր չլինելու պատճառով:

Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերն ընդհանուր առմամբ կազմել են 9.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.3%-ը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 30.6%-ով կամ 2.3 մլրդ դրամով:

Հաշվետու տարում շուրջ 5.9 մլրդ դրամ է տրամադրվել «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին՝ 96.2%-ով ապահովելով նախատեսվածը և 43.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2008 թվականի 52.5 հազար դեպքի փոխարեն 2009 թվականին արձանագրվել է 56.5 հազար դեպք: Աճը պայմանավորված է նաև մեկ օրվա բուժման արժեքի ավելացմամբ:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է 362.0 մլն դրամ կամ նախատեսվածի 90.1%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերն ավելացել են 3.8%-ով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի և մեկ հիվանդի բուժման ծախսի ավելացմամբ: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2008 թվականի 5.1 հազար դեպքի փոխարեն 2009 թվականին արձանագրվել է 5.4 հազար դեպք:

«Երեխաներին բժշկական օգնության» ծրագրին տրամադրվել է ավելի քան 3.4 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով նախատեսվածը և 16.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2009 թվականին բուժօգնություն են ստացել 37.9 հազար հիվանդ՝ 2008 թվականի 34 հազարի փոխարեն: 2008 թվականի համեմատ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է նաև մեկ օրվա բուժման գնի ավելացմամբ:

2008 թվականին պետական բյուջեից շուրջ 2.9 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 94% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ

սահմանված կասեցումով: Տվյալ խմբի շրջանակներում նախատեսված 8 ծրագրերից կատարվել են 7-ը:

Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների գծով տրամադրված միջոցները, որոնք կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.1%-ով՝ պայմանավորված դեղորայքի և այլ ծախսերի աճով:

«Հիգիենիկ հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվեր» ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 205.6 մլն դրամ՝ ապահովելով 93.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 36.3%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2008 թվականին տվյալ ծախսերում ներառվել է Իմունականխարգելման ազգային ծրագրով պատվաստանյութերի ձեռքբերման համար նախատեսված գումարը, որը 2009 թվականի պետական բյուջեում ընդգրկվել է առանձին ծրագրով:

2009 թվականին շուրջ 250.5 մլն դրամ է տրամադրվել հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 99.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.3%-ով կամ 5.5 մլն դրամով՝ պայմանավորված հատուկ և կյանքի համար վտանգավոր պայմաններում ժանտախտ, խոլերա, տուլարեմիա և այլ հարուցիչների հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներում աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ, ինչպես նաև դեղորայքի և այլ տնտեսական ծախսերի ավելացմամբ:

«ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում օգտագործվել է 112.9 մլն դրամ՝ ապահովելով 87.7% կատարողական: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 40.7%-ով՝ պայմանավորված բուժվող հիվանդների թվաքանակի ավելացմամբ և աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունները և իմունականխարգելման ազգային ծրագիրը, որոնց տրամադրվել է համապատասխանաբար 66.7 մլն և 150.0 մլն դրամ: Իմունականխարգելման ազգային ծրագրով ազգաբնակչության համար ձեռք են բերվել պատվաստանյութեր և ներարկիչներ կարմրուկի, խոզուկի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 199.4 մլն դրամ՝ ապահովելով 94.4% կատարողական: Հատկացված միջոցներով իրականացվում է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց խնդիրն է արյան հավաքագրումը, բացթողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով և դրա բաղադրիչներով ապահովումը: 2008 թվականի համեմատ այս ծրագրի գծով ծախսերն աճել են 2.8%-ով՝ պայմանավորված հակառեզուս իմունոգլոբուլինի պատրաստման և դրանք ծննդատներին տրամադրման աշխատանքներով:

Ծխելու դեմ պայքարի պետական ծրագրի համար նախատեսվել էր 100 մլն դրամ, որը կառավարության որոշմամբ կասեցվել է:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի շրջանակներում իրականացվել են ավելի քան 7.7 մլրդ դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 86%: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է առողջապահական օբյեկտների հիմնանորոգման և արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի գծով:

«Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում» ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 37.8 մլն դրամ՝ ապահովելով 93.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում տարեկան 90-180 հիվանդներ, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը՝ ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է մոտ 400.0 հազ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 60.2%-ով՝ պայմանավորված հանրապետությունից դուրս մեկնող հիվանդների թվի ավելացմամբ: Այն կազմել է 170՝ նախորդ տարվա 154-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է 413.1 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 84.1%: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով: Այն ուղղվել է սոցիալապես անապահով խավի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժաբարավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.1%-ով՝ պայմանավորված հիվանդների թվաքանակի աճով:

Անցած տարում 20 մլն դրամ է տրամադրվել դեղաբաղաբաղանությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 81.4%-ով: Շեղումը պայմանավորված է գրանցվող դեղերի քանակի նվազմամբ:

«Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 39.6 մլն դրամ՝ ապահովելով 88.1% կատարողական: Շեղումը տնտեսման արդյունք է: Ծրագրի շրջանակներում կառուցվել է Վանաձորի դիահերձարանը:

Ավելի քան 68.3 մլն դրամ է տրամադրվել առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ծառայություններին՝ ապահովելով 92.6% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի կազմում ընդգրկված են առողջապահության բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը, որի վերջնական արդյունքները հանձնվում են Ազգային վիճակագրական ծառայությանը և պետական ռեգիստրին: Ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետային կապ:

Առողջապահության համակարգի գործունեության մասին զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի գրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 16.8%-ով:

Առողջապահական օբյեկտների հիմնանորոգման նպատակով 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 307.5 մլն դրամ՝ ապահովելով 25.4% կատարողական: Հատկացված գումարն ուղղվել է Եղեգնաձորի բուժմիավորման շենքի, ինչպես նաև Երևան քաղաքում 2 հիվանդանոցների հիմնանորոգմանը: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով և գնումների շրջանակներում ձեռքբերված տնտեսմամբ:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսագերծման և բաշխման աշխատանքներին ուղղվել է 40.0 մլն դրամ՝ 88.9%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով և գնումների շրջանակներում արձանագրված տնտեսմամբ:

2009 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.4 մլրդ դրամ՝ 26.6%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Համաշխարհային բանկի և ծրագրի կառավարման խորհրդի համաձայնությամբ նշված օբյեկտների շինարարական աշխատանքների պայմանագրերում կատարվել է շինարարական աշխատանքների ծավալների ավելացում, որի արդյունքում ավելացել է պայմանագրի գումարը: Այս ծրագրով 2009 թվականին իրականացվել է «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքերի կապիտալ վերանորոգում:

Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 3.3 մլրդ դրամ, որը կատարվել է 95.6%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 818.9 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են շուրջ 2.5 մլրդ դրամ: Չորս մարզային հիվանդանոցների վերանորոգման համար հայտարարված մրցույթների արդյունքում որոշ պայմանագրեր կնքվել են բյուջեով նախատեսվածից ցածր գներով: Առողջապահական համակարգի արդիականացման առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ բաղադրիչները՝

- ընտանեկան բժշկության զարգացում, այդ թվում՝ ընտանեկան բժիշկների և բուժքույրերի վերապատրաստում, առողջության առաջնային պահպանման ենթակառուցվածքների բարելավում.

- մարզային հիվանդանոցային հաստատությունների օպտիմալացում և արդիականացում.

- կառավարության կարողությունների հզորացում՝ առողջապահության ոլորտի արդյունավետ քաղաքականության մշակման և մոնիտորինգի նպատակով.

- ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության կարողությունների ամրապնդում:

Հաշվետու տարում ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 36.8 մլն դրամ՝ ապահովելով 68.5% կատարողական: Նշված ծրագրով 2009 թվականի բյուջեով նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ, արդյունքում առաջացել է գումարների տնտեսում, քանի որ պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ցածր գներով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված 223.5 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են շուրջ 89.5 մլն դրամ: Ծրագրին կառավարության մասնակցությունն ամբողջությամբ իրականացվել է՝ շուրջ 29.1 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են ավելի քան 60.4 մլն դրամ կամ նախատեսվածի 31.1%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսված է եղել սկսել շինարարական աշխատանքները 2 օբյեկտներում, սակայն փաստացի աշխատանքներ են իրականացվել 1 օբյեկտում: Մեկ մեծ միկրոծրագիր, որը նախատեսված էր իրականացնել այս վարկային ծրագրի շրջանակներում, իրականացվել է Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրում այլ ոլորտում:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագրով պետական բյուջեով նախատեսվել էր 124.5 մլն դրամի ծախս, որը կատարվել է 47.8%-ով՝ կազմելով 59.5 մլն դրամ: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել նախատեսված գումարի չափով՝ շուրջ 32.4 մլն դրամ, իսկ վարկային միջոցները կազմել են 27.1 մլն դրամ կամ նախատեսվածի 29.4%-ը: Ելնելով աշխարհում ահազնացող խոզի գրիպ Ա/Հ1N1 վիրուսի պանդեմիկ իրավիճակից, «Թռչնագրիպին նախապատրաստվածության ծրագիր» թիվ 4178 AM վարկային ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում նախատեսված «Օգելտամիվիր ֆոսֆատ» (Տամիֆլու, փոշի, 7կգ) հակավիրուսային դեղամիջոցի ձեռքբերման և ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի համապատասխան լաբորատորիաների վերանորոգման համար նախատեսված ֆինանսական միջոցներն ուղղվել են Գրիպ Ա/Հ1N1 դեմ պատվաստանյութի ձեռքբերմանը 2010 թվականի ընթացքում: 2009 թվականին վարկային ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 3 հատ ջերմաչափման ստացիոնար հեռակառավարվող համակարգ, որը հանձնվել է ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ին, Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (ՊՀՀ) Մեդրիի և «Շիրակ» օդանավակայանի սանիտարական կարանտինային կետերին՝ սահմանի անցման կետերում ջերմող հիվանդների հայտնաբերման նպատակով:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիային հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով հատկացվել էր շուրջ 33.0 մլն դրամ, որը կատարվել է 68.2%-ով՝ կազմելով 22.5 մլն դրամ: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 5.1 մլն դրամի չափով՝ կազմելով նախատեսվածի 62.3%-ը, իսկ դրամաշնորհային միջոցները կազմել են 17.3 մլն դրամ կամ նախատեսվածի 70.1%-ը: Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում նախատեսված էր իրականացնել թերապևտների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, լաբորատոր մասնագետների և միջին բուժանձնակազմի սեմինար-պարապմունքներ «Թռչնի գրիպի համաճարակաբանական հսկողություն և բուժում» թեմայով: Հաշվի առնելով միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերը, որոնք ներառում են նաև սեմինարներ «Թռչնի և պանդեմիկ գրիպի համաճարակաբանություն և բուժում» թեմայով, 2009 թվականի ծրագրով նախատեսված սեմինարները տեղափոխվել են 2010 թվական: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տրամադրվել է ինտերնետային կապ ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության կենտրոնական ապարատին, Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Լոռու, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզային կենտրոններին (թվով 14) և ՀՀ ԱՆ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցին:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Թռչնագրիային հակազդելու համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագրի գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով հատկացվել էր շուրջ 353.3 մլն դրամ, որը կատարվել է 128.4%-ով: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է Հայաստան ժամանած ջերմող հիվանդների հայտնաբերման համար ջերմաչափման ստացիոնար հեռակառավարման սարքերի ձեռքբերման հանգամանքով:

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- վերանորոգվել են ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության «Շիրակ» օդանավակայանի և ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության Բագրատաշենի սանիտարական կարանտինային կետերը.

- կառուցվել են ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության Բավրայի, Մեղրիի, Գոգավան-Պրիվոլնոյի և Այրում-Ջիլիզա սանիտարական կարանտինային կետերը.

- յուրաքանչյուր սանիտարական կարանտինային կետի համար ձեռք են բերվել բժշակական, ախտահանիչ և համակարգչային սարքավորումներ, գրասենյակային կահույք, տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև 3 հատ ջերմաչափման ստացիոնար հեռակառավարվող համակարգ ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության «Չվարթնոց» միջազգային օդանավակայանի (2 հատ) և Բագրատաշենի սանիտարական կարանտինային կետերի համար.

- ձեռք է բերվել Գրիպ H1N1 վիրուսի հայտնաբերման և ախտորոշման համար անհրաժեշտ ռեագենտների հավաքածու (թվով 4 հավաքածու):

Դատարժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման գծով 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 350 մլն դրամ՝ ապահովելով 97.1% կատարողական՝ պայմանավորված կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.3%-ով՝ պայմանավորված հիմնականում աշխատավարձերի բարձրացմամբ:

Պաթանատոմիական ծառայությունների ձեռքբերման գծով տրամադրվել է շուրջ 39.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.2%-ով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ և հետազոտությունների թվաքանակի ավելացմամբ:

Խմբում ընդգրկված հետևյալ ծրագրերը՝ «Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ» (94.0 մլն դրամ), «Այլ բուժօգնության և սպասարկման ծառայություններ» (15.0 մլն դրամ) և «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր» (40.0 մլն դրամ), ֆինանսավորվել են ամբողջությամբ:

«Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ» ծրագրին տրամադրվել է շուրջ 46.0 մլն դրամ՝ ապահովելով 87.2% կատարողական: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումով: Միջոցներն ուղղվել են սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուռուցիկներին, նեֆրոլոգներին, հանրապետության ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնությանը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 27.2%-ով՝ պայմանավորված կազմմեթոդական օգնության ծավալի, ինչպես նաև մարզերի ընդգրկվածության ավելացմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 973.5 մլն դրամ՝ ապահովելով 85.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է հիմնականում ՀՀ առողջապահության նախարարության հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոններում թափուր հաստիքների առկայությամբ, ինչպես նաև կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 10.8%-ով՝ պայմանավորված ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմում աշխատող բժիշկ-հիգիենիստներին և բժիշկ-համաճարակաբաններին վտանգավորության համար օրենքով նախատեսվող 50% և 100% հավելավճարների տրամադրմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Առողջապահության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում

ծախսվել է 23.7 մլն դրամ՝ նախատեսված 28.6 մլն դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում իրականացվել է տեղեկատվական ծառայությունների, ինչպես նաև տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «ՀՀ-ում դեղակայուն տուրբերկուլյոզի կառավարման ընդլայնում» ծրագրին տրամադրվել է շուրջ 5.5 մլն դրամ՝ ապահովելով 9.8% կատարողական: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Գլոբալ հիմնադրամի հետ դրամաշնորհի համաձայնագիրը կնքվել է 2009 թվականի 2-րդ եռամսյակում, ծրագրի նախահաշիվը հաստատվել է 2009 թվականի նոյեմբերի 2-ին, և 2009 թվականին Առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավորումների և առողջապահական պարագաների ձեռք բերման նպատակային մրցույթը չի կայացել: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում ՀՀ ԱՆ գլոբալ հիմնադրամի ծրագրերի համակարգման խմբի 7 անդամներ գործուղվել են Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիա՝ մասնակցելու Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային հանդիպմանը:

Հանգստ, մշակույթ և կրոն

2009 թվականին ՀՀ պետական բյուջեից *հանգստի, մշակույթի և կրոնի* ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 16.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 81.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է մշակութային ծառայությունների ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.7%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում հանգստի և սպորտի բնագավառին տրամադրվել է 1.5 մլրդ դրամ՝ 96.1%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 30.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև 2009 թվականի պետական բյուջեում օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ նախագահի անվանական թոշակ նախատեսելու հանգամանքով:

2009 թվականին ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծրագրով նախատեսված միջոցները նպատակաուղղվել են միջոցառումների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական

վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Այս ծրագրի գծով 2009 թվականին տրամադրվել է 994.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում անցկացվել են ՀՀ 84 առաջնություններ, որոնց մասնակցել են 6700 մարզիկներ: Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների համար կազմակերպվել են 126 ուսումնամարզական հավաքներ, որոնց մասնակցել է 3850 մարդ: Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված 1729 մարզիկ մասնակցել են աշխարհի, Եվրոպայի առաջնությունների մրցաշարերին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 19.3%-ով՝ պայմանավորված նրանով, որ 2009 թվականին կայացել են աշխարհի և Եվրոպայի ավագ տարիքի պատանիների և երիտասարդների առաջնությունները:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 52 մլն դրամ է տրամադրվել շախմատիստների պատրաստմանը, որը 20%-ով զիջել է հաշվետու տարվա նախատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ պայմանավորված որոշ ծրագրերի վերանայմամբ:

Նախատեսված չափով հատկացվել է օլիմպիական խաղերում, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցությունը, որը կազմել է 50 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև հետևյալ 9 ծրագրերը՝

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման նպատակով օգտագործվել է 7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16%-ով, ինչը պայմանավորված է մասնակիցների թվի ավելացմամբ:

- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով տրամադրվել է 17.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.5%-ով՝ պայմանավորված նախնական փուլերում մասնակից ընտանիքների թվի ավելացմամբ:

- մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացման նպատակով տրամադրվել է 8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

- նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: Տվյալ ծախսերը նույնպես պահպանվել են նախորդ տարվա մակարդակին:

- 2009 թվականին 46 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 158.9%-ով, որն ուղղվել է հավաքական թիմերի մարզիկներին մարզահանդերձանքով ապահովմանը:

- ուսանողական մարզական միջոցառումներին (Բելգրադի համաշխարհային ունիվերսիադա) մասնակցելու նպատակով տրամադրվել է 23 մլն դրամ: Նշված ծրագիրը նախորդ տարվա պետական բյուջեում չի ընդգրկվել, քանի որ ունիվերսիադան անցկացվում է 2 տարին մեկ անգամ:

- ձյուդոյի Եվրոպայի երիտասարդների առաջնության կազմակերպման և անցկացման նպատակով տրամադրվել է 30 մլն դրամ: Համահայկական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է 15 մլն դրամ: Բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնության կազմակերպման և անցկացման նպատակով տրամադրվել է 34.2 մլն դրամ:

- ՀՀ հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի 8 չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 17.3 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.3%-ով՝ պայմանավորված 6 չեմպիոնների փոխարեն 2009 թվականին 8-ին թոշակ վճարելու հանգամանքով:

- պետական աջակցությունը հաշմանդամային սպորտով զբաղվող մարզական և այլ հասարակական կազմակերպություններին կազմել է 9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 45%-ը՝ պայմանավորված կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, իրականացված միջոցառումներին մասնակցել են 432 հաշմանդամ մարզիկներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցելու համար նախատեսված էր 3.4 մլն դրամ, որը տնտեսման արդյունքում իրականացվել է 76.4%-ով և կազմել 2.6 մլն դրամ: Նախորդ տարի ծրագիրը չի իրականացվել:

Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 38.8 մլն դրամ՝ 99.6%-ով կատարելով ծրագիրը: Նախորդ տարի այդ նպատակով միջոցներ չեն նախատեսվել:

Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով տրամադրվել է շուրջ 2.2 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 78.9%-ը՝ պայմանավորված տնտեսմամբ: Նախորդ տարի այս ծրագրի գծով նույնպես միջոցներ նախատեսված չեն եղել:

2009 թվականին 145.8 մլն դրամ տրամադրվել է օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով, որը կազմել է նախատեսվածի 97.2%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարի ծրագիրը նախատեսված չի եղել:

Հաշվետու տարում հանգստի և սպորտի ծառայությունների խմբում նախատեսված չորս ծրագրեր՝ «Հանրակրթական դպրոցների միջև մարզական խաղերի անցկացում», «Եվրոպայի

խորհրդի կողմից հրատարակված գիտամեթոդական գրականության թարգմանություն և տպագրություն», «Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում» և «Հանրությանը սպորտի Եվրոպական խարտիայի հիմնահարցերին տեղեկացմանն ուղղված միջոցառումների իրականացում», 30.7 մլն դրամ ընդհանուր գումարով կառավարության որոշմամբ կատարվել են:

2009 թվականի պետական բյուջեից 9.6 մլրդ դրամ տրամադրվել է *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրվածի 77.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ որոշ ծրագրերի կատարմամբ: 2008 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերը նվազել են 0.8%-ով:

Հաշվետու տարում 1.3 մլրդ դրամ ուղղվել է գրադարանների ֆինանսավորմանը, որը կազմել է ծրագրով նախատեսված հատկացումների 72.6%-ը: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցները նվազել են 12.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի կրճատմամբ: 2009 թվականին տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը նախատեսվել էր հատկացնել 528.9 մլն դրամ, որն իրականացվել է 62%-ով (327.6 մլն դրամ): Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է մշակութային 5 օբյեկտ (2-ը՝ Երևան քաղաքում, 3-ը՝ հանրապետության մարզերում)՝ նախորդ տարվա 6-ի փոխարեն:

2009 թվականին 917.8 մլն դրամ ուղղվել է 16 գրադարանների պետական աջակցության տրամադրմանը, որի կատարողականը կազմել է 95.9%: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական աջակցությունն ավելացել է 4.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման, ավտոմատացված միասնական համակարգի ներդրման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիրլինգ» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի, Կոտայքի, Տավուշի մարզերում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի շրջանակներում կույր և թույլ տեսնող անձանց հնարավորություն տրվեց համակարգչի միջոցով տառերն ու թվերը «կարդալ» լսողական խորհրդանշանների

միջոցով: Տեղեկատվական հաղորդակցման այս ծրագիրը 2009 թվականին ներդրվել է Խնկո-Ապրո անվան, Շիրակի և Լոռու մարզային գրադարաններում: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Գրադարանների շենքերի հիմնանորոգման պետական ծրագրի ուղղությամբ շարունակվել են Հայաստանի ազգային և Խնկո-Ապրո անվան ազգային մանկական գրադարաններում իրականացվող հիմնանորոգման աշխատանքները:

2009 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին տրամադրվել է 52.6 մլն դրամ, որը կատարվել է 74.5%-ով: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը կազմել է 14.5%, որը հիմնականում պայմանավորված է աշխատողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և ընթացքում լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթի պետական պաշարների համալրման, օգտվողներին մատենագիտական տեղեկատվությամբ ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը:

Գրադարանների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերման գծով պետական պատվերի ծրագրի իրականացման համար օգտագործվել է 23.6 մլն դրամ, որը կազմում է նախատեսվածի 15.9%-ը: Միջոցներն ուղղվել են Հայաստանի ազգային գրադարանի, Գեղարքունիքի, Լոռու և Սյունիքի մարզային գրադարանների համար կահույքի ձեռքբերմանը, Արագածոտնի մարզային գրադարանի սանհանգույցի վերանորոգմանը:

Մշակութային օբյեկտների շինարարության և «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ում ներդրումների ծախսերը, որոնց համար նախատեսվել էր համապատասխանաբար 109 մլն դրամ և 8 մլն դրամ, կառավարության որոշմամբ ամբողջությամբ կասեցվել են:

2009 թվականին թանգարանների և ցուցասրահների խմբի ծրագրերին պետական բյուջեից տրամադրվել է 1.5 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 74.6%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ուղղությամբ կատարված ծախսերն աճել են 4.5%-ով: Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ծրագրի իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է 1.5 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 93.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 11.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է թանգարանների աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի 10%-ով բարձրացմամբ և դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների ավելացմամբ:

2009 թվականի պետական բյուջեից 14.5 մլն դրամ է տրամադրվել կենտրոնացված կարգով թանգարանների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը՝ նախատեսված 115.9 մլն դրամի փոխարեն: Հատկացումներն ուղղվել են թանգարանների նյութատեխնիկական բազայի հագեցմանը, Հայաստանի ազգային պատկերասրահում ազդարարման համակարգի տեղակայմանը, Հայաստանի պատմության թանգարանի համար սենտրալին կրպակների ձեռքբերմանը, Հ. Թումանյանի թանգարանի կաթսայատան արդիականացմանը, Ե. Քոչարի թանգարանի տեսահսկման և ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացմանը:

Տվյալ դասում 107.2 մլն դրամ էր նախատեսվել մշակութային օբյեկտների հիմնանորոգման նպատակով, որը չի իրականացվել՝ պայմանավորված կառավարության որոշմամբ ծրագրի կասեցումով:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվել էին 225.5 մլն դրամի ծախսեր, որից օգտագործվել է 20.5 մլն դրամը:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից 587.5 մլն դրամ է տրամադրվել մշակույթի տների, սկումբների և կենտրոնների ֆինանսավորմանը, որը կատարվել է 40.1%-ով: Շեղումը ծրագրից հիմնականում առաջացել է մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների գծով, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 40.4%-ով: Մասնավորապես, 383.7 մլն դրամ են կազմել հիմնանորոգման, 124.8 մլն դրամ՝ շինարարության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 38.4 և 33.1 %-ով: Նշված ծրագրերի շրջանակներում հանրապետության մարզերում հիմնանորոգվել է 16 և կառուցվել՝ 4 մշակութային օբյեկտ:

Այս դասի նախագծային աշխատանքների իրականացման համար օգտագործվել է 26.2 մլն դրամ կամ նախատեսվածի 74.9%-ը: Ներդրումները «Անդրանիկ Մարգարյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում կազմել են 19.4 մլն դրամ (97%): Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրումը կազմել է 4 մլն դրամ (100%): Նախորդ տարի այս ծրագրերը նախատեսված չեն եղել:

Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման ծրագիրը կատարվել է 99.4%-ով՝ կազմելով 29.3 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16%-ով, որը հիմնականում պայմանավորված է կենտրոնի աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի 10%-ով բարձրացմամբ և դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների աճով:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 995.8 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 90.8%-ը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 23%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է այս բնագավառում Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի աճով: Վերջիններս կազմել են 380 մլն դրամ, որոնք իրականացվել են նախատեսված ողջ ծավալով և 2.1 անգամ կամ 200 մլն դրամով գերազանցել են նախորդ տարվա ծախսերը: Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ծրագրի շրջանակներում պետական օժանդակություն է ցուցաբերվել «Երևան» հիմնադրամին՝ «Երևանի օր» տոնակատարության և այլ համաքաղաքային միջոցառումների կազմակերպման համար:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև ներքոհիշյալ 3 ծրագրերը:

308.1 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.8%-ով:

187.6 մլն դրամ տրամադրվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով՝ պայմանավորված կենդանիների կերերի գների աճով:

Տեղեկատվական-վերլուծական և հասարակության հետ կապերի կենտրոնին պետական աջակցությունը կազմել է 42.5 մլն դրամ: Կենտրոնն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում մշակույթի ոլորտի տեղեկատվական, վերլուծական, հետազոտական և խորհրդատվական գործունեություն: Կենտրոնը տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի տարածքում մշակութային գործունեության մասին, ներկայացնում է հայ մշակույթն ու արվեստը զանգվածային և էլեկտրոնային տեղեկատվության միջոցներով, պատրաստում է մշակույթի ոլորտին վերաբերող տեղեկատվական-վերլուծական նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.4%-ով՝ պայմանավորված միջոցառումների թվի աճով:

«Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործության կենտրոն» ՊՈԱԿ-ին 2009 թվականի պետական բյուջեից հատկացվել է 31.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.3%-ը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերի աճը կազմել է 9.7%, որը հիմնականում պայմանավորված է աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ: Ծրագիրն իրականացվել է ազգաբնակչության հոգևոր և գեղագիտական զարգացման, հասարակության մեջ ժողովրդական ստեղծագործության տարածման, ավանդական ժողովրդական արհեստների պահպանման և ուսումնասիրման, ինքնագործ կոլեկտիվների, ինքնուսանողական ստեղծագործողների, ժողովրդական վարպետների ստեղծագործությունների կատարելագործման և հանրահռչակման նպատակով:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 29.3 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով ծրագրի 83.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11%-ով: Ծրագրի նպատակը

մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: 2009 թվականին կանխատեսված փորձաքննության ենթակա 4600 մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների դիմաց փաստացի քանակը կազմել է 1771 առարկա՝ նախորդ տարվա 2427-ի դիմաց: Տարբերությունը պայմանավորված է հայտատուների դիմումների թվի նվազմամբ:

Այլ մշակութային կազմակերպությունների դասում մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում հիմնանորոգվել է Հայաստանի գրողների միության շենքը, որի համար հատկացվել է 16.8 մլն դրամ, ապահովելով ծրագրի 76.9%-ը, ինչը բացատրվում է նախատեսվածից ցածր արժեքով պայմանագրերի կնքման հանգամանքով:

«Ժողովրդական ստեղծագործության և արհեստագործակցության կենտրոն», «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ներում ներդրումները, որոնց համար ընդհանուր առմամբ նախատեսվել էր 89.5 մլն դրամ, կառավարության որոշմամբ կասեցվել են:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 4.2 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 87.9% կատարողական: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: 2008 թվականի համեմատ արվեստի բնագավառում պետական բյուջեի ծախսերն աճել են 20.9%-ով կամ 730.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է երաժշտարվեստի և պարարվեստի համերգների, մշակութային միջոցառումների իրականացման և «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների ծախսերի աճով: Նախորդ տարվա համեմատ 10%-ով բարձրացվել են նաև թատրոնների աշխատողների աշխատավարձերը:

Արվեստի բնագավառի ծախսերի մեծ մասն ուղղվել է մշակութային կազմակերպությունների պետական աջակցությանը: Նշված նպատակով նախատեսված հատկացումները գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվել են, այդ թվում՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին՝ 556.8 մլն դրամ (100%), Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին՝ 228.3 մլն դրամ (99.5%), թատերական ներկայացումներին՝ 1.1 մլրդ դրամ (99.5%), Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան թատրոնին՝ 20 մլն դրամ (100%), հայ մշակույթի միջազգային կենտրոններին՝ 19.5 մլն դրամ (100%): Ամբողջությամբ իրականացվել է նաև տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի ֆինանսավորումը, որը կազմել է 18.6 մլն դրամ:

Մշակութային միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 958.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2009 թվականին

առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դերյուտային գործընթացներին պետական աջակցության ապահովումը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման և ժամանակակից մտածողության խրախուսման նպատակով:

2009 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրով նախատեսվել և օգտագործվել է 890.1 մլն դրամ: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը:

«Ժողովրդական» կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար նախատեսված 56.6 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 35.9 մլն դրամ, որը ֆինանսավորվել է ներկայացված փաստացի պահանջին համապատասխան:

Արվեստի բնագավառի մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 166.4 մլն դրամ կամ նախատեսվածի 70.8%-ը: Միջոցները հատկացվել են Երևանի Հ. Պարոնյանի անվան թատրոնի և Երգի պետական թատրոնի շենքերի հիմնանորոգման նպատակով:

2009 թվականին թատերական կազմակերպություններում նախատեսված ներդրումներն ամբողջությամբ չեն կատարվել: Մասնավորապես՝ ներդրումները «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ում կատարվել են 25.8%-ով (149.4 մլն դրամ), «Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ում՝ 76.3%-ով (20.7 մլն դրամ), թատրոններում՝ 48.7%-ով (37.3 մլն դրամ), համերգային կազմակերպություններում՝ 89.5%-ով (28.7 մլն դրամ):

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է 612.6 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 84.5%-ը: Ընդունը պայմանավորված է կառավարության 2009 թվականի N 302-Ն որոշմամբ, որով, մասնավորապես, ամբողջությամբ կասեցվել են «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ում (7.5 մլն դրամ) և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ում (90 մլն դրամ) նախատեսված ներդրումները: Նախորդ տարվա համեմատ կինեմատոգրաֆիայի ծախսերը նվազել են 2%-ով:

Կինոկարների արտադրությանը տրամադրված շուրջ 455 մլն դրամ պետական աջակցությունը կատարվել է նախատեսված ծավալով: Ծրագիրն ուղղվել է կինոարվեստի պահպանմանը, տարածմանն ու զարգացմանը, կինոարտադրության ոլորտում պետական

քաղաքականության ռազմավարության իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով:

Ազգային կինոթրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2009 թվականին այդ ուղղությամբ բյուջետային ծախսերը կազմել են 117.4 մլն դրամ կամ նախատեսվածի 93.2%-ը: 2008 թվականի համեմատ գրանցվել է ծախսերի 15.9% աճ, որը հիմնականում պայմանավորված է աշխատողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ:

Նախատեսված ողջ ծավալով՝ 33 մլն դրամի չափով, ֆինանսավորվել են փաստավավերագրական կինոթրագրերի իրականացման ծրագիրը: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին, որը կատարվել է 52.7%-ով: 2009 թվականին վերականգնվել է 3 ֆիլմ՝ կանխատեսված 6-ի փոխարեն:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման նպատակով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 403.9 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 70.6%-ը: Ընդունը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով, ինչպես նաև խնայողություններով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 53.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008 թվականին տվյալ դասում միջոցներ էին հատկացվել Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերին, ինչպես նաև հուշարձանների վերանորոգման և վերականգնման ծախսերի նվազմամբ:

Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով պետական աջակցությունը կազմել է 4 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: Հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիտորինգի նպատակով տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Հաշվետու տարում կանխատեսվել և իրականացվել է 26 հուշարձանի տեխնիկական վիճակի մոնիտորինգ:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 60.5 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 88.7%-ը: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: 2009 թվականին կանխատեսվել և իրականացվել է 900 հուշարձանների պահպանական գոտիների նախագծում և թողարկում՝ նախորդ տարվա 517-ի դիմաց: Կանխատեսվել և իրականացվել է 4000 հուշարձանների հաշվառում ու ցուցակագրում և 467 հուշարձանի վկայագրում: Կանխատեսվել

և իրականացվել է հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 800 վավերագրերի կազմումը և թվայնացումը: 2008 թվականի համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 3%-ով, որը հիմնականում ուղղվել է կենտրոնի աշխատողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմանը:

Հուշարձանների վերանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 331.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 67.4%-ը: 2009 թվականին իրականացվել են 16 պատմամշակութային բարձրարժեք հուշարձանների վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքներ, կատարվել են 2 հուշարձանի վերականգնման և ամրակայման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և 2 հուշարձանի պեղման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 28.1%-ով:

2009 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են 4.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 88.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 1.7%-ով կամ 72.2 մլն դրամով:

Հաշվետու տարում հեռուստառադիոհաղորդումների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 86.7%-ը: Հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 2.3 մլրդ դրամ (86.7%), հեռուստատեսային ծառայությունների ծրագրի շրջանակներում հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2%-ով, որը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի աճով, որի արդյունքում աճել են արբանյակային հեռարձակման ծառայությունների գծով ծախսերը:

Հաշվետու տարում ռադիո ծառայությունների շրջանակներում 651.7 մլն դրամ (87.4%) դրամաշնորհներ են տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 5.8%-ով:

Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 23 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 99.1%-ը և նախորդ տարվա համեմատ փոփոխության չի ենթարկվել:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և նրանցից ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով

հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 81.9 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է և 10%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 8 մլն դրամի պետական աջակցություն (75.2%), որը նախորդ տարվա համեմատ նվազել է 20%-ով:

2009 թվականի պետական բյուջեից 41.5 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 100%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 87.9 մլն դրամ տրամադրվել է գնումների հրապարակայնության ապահովմանը, որը կազմել է նախատեսվածի 79.8%-ը և 23%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:

Այս ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 175.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 91.7%-ը:

Քարոզչական աշխատանքների իրականացման համար և «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների, ինչպես նաև քարոզչական աշխատանքների իրականացման ծրագրերը, որոնց համար ընդհանուր առմամբ նախատեսված էր 28.8 մլն դրամ, կառավարության որոշմամբ ամբողջությամբ կասեցվել են:

2009 թվականին շուրջ 797.3 մլն դրամ են կազմել հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերը՝ 94%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերն աճել են 6.3%-ով կամ 47.2 մլն դրամով:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 99.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 73.2%-ը: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին հրատարակվել է 88 անուն գիրք:

Նախատեսված ծավալով իրականացվել են ներքոհիշյալ 7 ծրագրերը՝

- պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 68.9 մլն դրամ, որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.5%-ով.

- գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը տրամադրվել է 58.4 մլն դրամ, որը 31.8%-ով գերազանցել է նախորդ տարվա ծախսերը.

- «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին տրամադրվել է 38.6 մլն դրամ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել.

- «Վրաստան» թերթի հրատարակմանը տրամադրվել է 10 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

- թարգմանչական ծառայություններին տրամադրվել է 102 մլն դրամ: 2008 թվականին այս նպատակով պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել:

- գրականության հրատարակմանը տրամադրվել է 40 մլն դրամ աջակցություն: Հատկացումների հաշվին հրատարակվել են 44 անուն գիրք և 8 էլեկտրոնային հրատարակում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են շուրջ 3.1 անգամ:

- տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 25 մլն դրամ՝ 10.2%-ով գերազանցելով 2008 թվականի ցուցանիշը: Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման և արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկչի ստեղծման աշխատանքների ֆինանսավորմանը:

Ոչ պետական մամուլի հրատարակման ծրագրին տրամադրվել է 47.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալու տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: 2009 թվականին հրատարակվել են 70 անուն թերթեր և ամսագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.3%-ով:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 40.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2008 թվականին սուբսիդավորվել են թվով 9 թերթեր և ամսագրեր՝ հաշվետու տարվա 5-ի դիմաց:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններին տրամադրվել է 256.9 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 97.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 17.5%-ով:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման համար պետական պատվերի գծով տրամադրվել է 9.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 55.1%-ը: Ծրագրի շրջանակներում «Ազգ» օրաթերթի կողմից մատուցվել են տեղեկատվական սպասարկման ծառայություններ: Շեղումը պայմանավորված է հրապարակվող հայտարարությունների պակասով և հատկացված գումարի խնայողությամբ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 18.9%-ով:

Հաշվետու տարում տեղեկատվության ձեռքբերման գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 68.6 մլն դրամ՝ 99.5%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Ծրագրի շրջանակներում տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման

ծառայություններ են մատուցվել «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ՁԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23%-ով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից 444.7 մլն դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 71.7%-ով: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված կասեցումներով:

265.1 մլն դրամ է տրամադրվել երիտասարդական ծրագրերի դասին, որոնք ընդհանուր առմամբ կատարվել են 60.1%-ով: Տվյալ դասի ծախսերի հիմնական մասը՝ 231.7 մլն դրամ, կազմել են «Երիտասարդական ծրագրեր» ծրագիրը, որը կատարվել է 59.6%-ով: Արդյունքում տվյալ ծախսերը 32.4%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը:

2009 թվականին երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները: Հայաստանի Հանրապետության մարզերում ապահովվել է մարզային երիտասարդական կենտրոնների աշխատանքը՝ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, որոնց նպատակն է բարձրացնել մարզերում երիտասարդական պետական քաղաքականության արդյունավետությունը, այն հասանելի դարձնել մարզերի երիտասարդությանը: Այս ծրագրի շրջանակներում մշակվել են «Երիտասարդության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Երիտասարդ ընտանիքներին՝ մատչելի բնակարան» և «Երիտասարդ ընտանիքների կողմից ավտոմեքենաների ձեռքբերման վարկերի մատչելիության և հասանելիության բարձրացում» ծրագրերը: Գործել է 2006 թվականին ստեղծված՝ «Երիտասարդ առաջնորդների դպրոցը»: Երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման առումով մեծ ուշադրություն է դարձվել երիտասարդության իրազեկման և տեղեկատվության տրամադրման խնդիրներին: Հրատարակվել է երիտասարդական պետական քաղաքականության և երիտասարդության հիմնահարցերը լուսաբանող «Մենք, դուք, նրանք» երկշաբաթաթերթը: Հայերենով, ռուսերենով, անգլերենով գործել և պարբերաբար թարմացվել է Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության էլեկտրոնային կայքէջը, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ տեղական հեռուստաընկերությունների միջոցով, Արցախում երկու շաբաթը մեկ հեռարձակվել է «Անկախության սերունդ» երիտասարդական հեռուստահաղորդաշարը: Աջակցություն է ցուցաբերվել 40 երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, տաղանդավոր և շնորհալի երիտասարդ ստեղծագործողների, գիտնականների մասնակցությանը միջազգային տարբեր գիտաժողովների, սեմինարների, համաժողովների: Երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման և նրանց գործունեությանը պետական աջակցության

ուղղությամբ 2009 թվականի ընթացքում քննարկվել են հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագրերի հայտերը, և փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ցուցաբերվել է համապատասխան աջակցություն շուրջ 19 կազմակերպությունների:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 7.7 մլն դրամ կամ նախատեսվածի 61.5%-ը, որը պայմանավորված է փաստացի աշխատանքների ծավալով: Հայաստան սփյուռքի երիտասարդության այցելությունների նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 24.8 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Արի տուն ծրագրին ՀՀ սփյուռքի նախարարության արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 893 հազ. դրամ կամ նախատեսվածի 41.8%-ը: Վերջին երեք ծրագրերը 2008 թվականի պետական բյուջեում նախատեսված չեն եղել: «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների նպատակով պետական բյուջեով հատկացվել էր 12.4 մլն դրամ, որը կառավարության որոշմամբ կասեցվել է:

«Զաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» դասի ծախսերը 2009 թվականին կազմել են 179.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) և կարողությունների զարգացման նպատակով տրամադրվել է 426.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 95.5%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.8%-ով:

Կրթություն

2009 թվականի *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 107.5 մլրդ դրամ՝ ապահովելով 85.5% կատարողական: Շեղումն առաջացել է հիմնականում կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված ծրագրերի ցածր կատարողականի արդյունքում: Նախորդ տարվա համեմատ կրթության բնագավառի ծախսերն աճել են 3.9%-ով: Ընդ որում, բոլոր խմբերում, բացառությամբ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների, արձանագրվել է ծախսերի աճ:

Անցած տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 93.9%-ով՝ կազմելով շուրջ 66.1 մլրդ դրամ (որից 18.3 մլրդ դրամը կազմել են տարրական, 34.3 մլրդ դրամը՝

հիմնական ընդհանուր կրթության, 13.4 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը): Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 22.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է ուսուցիչների և վարչական անձնակազմի աշխատավարձի բարձրացմամբ: 2009 թվականին դպրոցների մանկավարժների միջին ամսական աշխատավարձը կազմել է 116575 դրամ, վարչական անձնակազմինը՝ 176141 դրամ: Հանրակրթության համակարգում 2009 թվականին գործել է 1370 դպրոց՝ 401122 աշակերտով:

Շուրջ 251.8 մլն դրամ է տրամադրվել երաժշտական դպրոցներում ուսուցման գծով: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական դպրոցի գործունեությունը, որտեղ 2009 թվականին սովորել է 547 աշակերտ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25.6%-ով, ինչը պայմանավորված է երաժշտական դպրոցի վարչական, մանկավարժական և ուսումնասօժանդակ աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձերի 25%-ով բարձրացմամբ: Նշված գումարից 7.9 մլն դրամը կազմել է երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը:

Հատուկ կրթությանը պետական բյուջեից տրամադրվել է 3.0 մլրդ դրամ (որից 814.3 մլն դրամը՝ տարրական, շուրջ 1.7 մլրդ դրամը՝ հիմնական, 521.0 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության գծով)՝ 97.7%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 18.3%-ով կամ 464.2 մլն դրամով, որը հիմնականում կապված է աշխատավարձի բարձրացման հետ: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 30 դպրոց 3450 աշակերտով:

Անցած տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության կազմակերպման համար ծախսվել է ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 94.8%-ը: Նշված գումարից 13.4 մլն դրամը տրամադրվել է արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների կրթաթոշակների վճարմանը, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Համակարգում գործել են 6 դպրոցներ, որտեղ սովորողների միջին տարեկան թիվը կազմել է 1996: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 25.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ, որն իրականացվել է հանրակրթության համակարգում կատարված բարձրացումների ընդհանուր սկզբունքներով:

2009 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 98.7%-ով՝ կազմելով շուրջ 347.5 մլն դրամ (որից 136.8 մլն դրամը՝ տարրական, 182.8 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության և 27.9 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են): Հաշվետու տարում ներառական կրթության համակարգում ընդգրկվել է 965 աշակերտ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 52.7%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և աշակերտների թվաքանակի աճով:

Երեկոյան ուսուցման ծրագրով ֆինանսավորվել են Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է շուրջ 45.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 94.5%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճելով 34.1%-ով, ինչը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացման հանգամանքով: Համակարգում 2009 թվականին գործել է 2 դպրոց 206 աշակերտով:

«Ավագ դպրոցների համակարգի ներդրում» ծրագրի իրականացման համար տրամադրվել է շուրջ 269.7 մլն դրամ՝ 68.8%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված ծախսերի կասեցման հանգամանքով: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել համակարգիչներ և կահույք: 2008 և 2009 թվականներին ընդհանուր առմամբ համալրվել են 48 դպրոց: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 19.5%-ով, որը կապված է համալրված դպրոցների թվի ավելացման հետ:

Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացվող՝ «Կրթական հաստատությունների վերականգնում» ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 170.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում կատարվել են դպրոցների ուժեղացման և վերակառուցման աշխատանքներ Երևան քաղաքում, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզերում: Իրականացվել են նաև Լոռու և Շիրակի մարզերում ութ դպրոցների վերակառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներ, ինչպես նաև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն:

2009 թվականին *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* ծախսերը կազմել են շուրջ 4.7 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 93.9%-ը, որից շուրջ 1.8 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 2.9 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նշված դասերի գծով ծրագրված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 90.1%-ով և 96.4%-ով: Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագիրն իրականացվել է 30 ուսումնական հաստատությունների կողմից, որոնցում կրթություն է ստացել միջին հաշվով 5289 աշակերտ: «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի իրականացման համար տրամադրվել է շուրջ 291.2 մլն դրամ՝ 87.2%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Տնտեսումը կապված է նախատեսված կրթաթոշակ ստացող սովորողների թվի նվազման հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

2009 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 2.6 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 276 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը:

Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 96.5%-ով և 95.9%-ով: Շեղումը պայմանավորված է սովորողների փաստացի թվաքանակի՝ կանխատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 21.1%-ով՝ կապված աշխատավարձերի բարձրացման հետ, որն իրականացվել է հանրակրթության համակարգում կատարված բարձրացումների ընդհանուր սկզբունքներով:

Անցած տարում ՀՀ պետական բյուջեից ավելի քան 7.5 մլրդ դրամ տրամադրվել է բարձրագույն կրթության բնագավառին, որից շուրջ 7 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 557.3 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 98.2%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ և ուսանողների (այդ թվում՝ արտասահմանյան երկրներում կրթություն ստացող) ուսման ծախսերի ավելացմամբ: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները: Նշված ծրագրի գծով օգտագործվել է 4.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.7%-ը: Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 94.7% կատարողական:

Հաշվետու տարում հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 92.2%-ով՝ կազմելով շուրջ 557.3 մլն դրամ: Հետբուհական մասնագիտական կրթության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 6 ծրագրեր: Մասնավորապես՝ 25.3 մլն դրամ տրամադրվել է գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է 65%-ով: Ծրագրի շրջանակներում միջոցները նախատեսվել էին ասպիրանտուրայի հավանական դիմորդների համար օտար լեզվի և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկայի նախապատրաստական դասընթացներ և տարբերակված ստուգումներ անցկացնելու համար, սակայն գումարն ամբողջությամբ չի օգտագործվել, որը պայմանավորված է ասպիրանտների թվաքանակի նվազմամբ:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների համար 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 48.6 մլն դրամ, որը կատարվել է 88.6%-ով: Շեղումը կապված է ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում սովորողների թվաքանակի փոփոխության հետ:

Խմբում ընդգրկված հետևյալ ծրագրերը՝ «Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում» (3.0 մլն դրամ) և «Հետբուհական մասնագիտական կրթություն» (շուրջ 86.7 մլն դրամ), ֆինանսավորվել են ամբողջությամբ: «Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում» և

«Հետքուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրերի ծախսերը համապատասխանաբար կազմել են 221.6 մլն և 172.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 90.0 և 98.5 %-ով: «Հետքուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում» ծրագրի գծով շեղումն առաջացել է ասպիրանտուրա ընդունվելու համար դիմորդների օտար լեզվի և ինֆորմատիկայի ստուգաքնների հանձնման նպատակով նախատեսված միջոցների տնտեսման արդյունքում:

Հաշվետու տարում ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերը կազմել են 3.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87.5%-ը, որից շուրջ 2.3 մլրդ դրամը արտադպրոցական դաստիարակության, 847.2 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: Շեղումն առաջացել է հիմնականում լրացուցիչ կրթության բնագավառում վերապատրաստման ծառայությունների, դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման և համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայությունների ցածր կատարողականի արդյունքում: 2008 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն ավելացել են 26.9%-ով՝ հիմնականում պայմանավորված արտադպրոցական դաստիարակության ծախսերի աճով:

Շուրջ 1.4 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակությանը՝ ապահովելով ծրագրի 98.9% կատարողական: 2009 թվականին նշված համակարգում գործել է 21 դպրոց 10766 աշակերտով: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 23.9%-ով կամ 269.9 մլն դրամով, որը հիմնականում կապված է աշխատավարձի բարձրացման հետ:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 10.5 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 21.8%-ով, որը նույնպես պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ:

Մարզական հասարակական կազմակերպություններին նախատեսված շուրջ 413.2 մլն դրամ պետական աջակցությունը տրամադրվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.9%-ով, որը հիմնականում կապված է աշխատավարձի բարձրացման հետ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 290.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 98.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի մոտ 1.9 անգամ աճը պայմանավորված է աշակերտների թվի և մեկ սովորողի ուսման վարձավճարի փոխհատուցման չափի ավելացմամբ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 48.1 մլն դրամ՝ ապահովելով 97.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է կառավարության որոշմամբ սահմանված ծախսերի կասեցումով: Ծրագրի

շրջանակներում Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաներին ու ուսուցիչներին ցուցաբերել է ուսումնամեթոդական և գործնական աջակցություն: Վերապատրաստման դասալսումներին մասնակցել է 150 ուսուցիչ, վարպետության դասընթացներին՝ 300 մանկավարժ և 200 աշակերտ: Մշակվել են երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների միասնական ուսումնական պլաններ և շուրջ 10 առարկայական ծրագրեր:

2009 թվականի պետական բյուջեով արտադպրոցական դաստիարակության բնագավառում հետևյալ ծրագրերի գծով՝ «Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում», «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» և «Մարզակառույցներին, մարզադպրոցներին և մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում», նախատեսվել է համապատասխանաբար 17.1 մլն դրամ, 43.3 մլն դրամ և շուրջ 50.0 մլն դրամ, որոնք նախատեսված ամբողջ ծավալով ֆինանսավորվել են: Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման հատկացված միջոցների հաշվին 2009 թվականին տպագրվել են գեղարվեստական կրթության 21 ամուն ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ: Հրատարակված գրականությունը անվճար տրամադրվել է հանրապետության բոլոր համայնքների երաժշտական և արվեստի դպրոցներին: «Ներդրումներ արտադպրոցական դաստիարակության հաստատություններում» ծրագրի համար նախատեսված ծախսերը (440.0 հազ. դրամ) կասեցվել են կառավարության որոշմամբ:

2009 թվականին *լրացուցիչ կրթության* ծախսերը կազմել են ավելի քան 847.2 մլն դրամ կամ ծրագրի 66.7%-ը: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով: ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի գծով կատարվել են շուրջ 27.9 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 86.1%-ը: Վերապատրաստման գծով շեղումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝

- օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստումներով (միջազգային կազմակերպությունների կողմից, վարկային և գրանտային ծրագրերով).
- օրենքով նախատեսված համապատասխան մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով.
- կադրերի հոսունությամբ (թափուր պաշտոնների առկայություն):

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 67.9%-ով՝ պայմանավորված վերապատրաստված քաղաքացիական ծառայողների թվի ավելացմամբ և դասախոսների

ժամավճարի բարձրացմամբ: 2009 թվականի ընթացքում վերապատրաստվել է 2481 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 2114-ի փոխարեն:

Լրացուցիչ կրթության հետևյալ ծրագրերը՝ «Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ», «Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվեր», «Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ» և «ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստում», ֆինանսավորվել են ամբողջությամբ, որոնց տրամադրվել է համապատասխանաբար 85.0 մլն, 17.7 մլն, 60.6 մլն և 905.8 հազ. դրամ:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծախսերը նույնպես նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով 154.5 մլն դրամ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 56.4%-ով՝ պայմանավորված վերապատրաստվողների թվի ավելացմամբ:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են 26.0 մլն դրամ կամ նախատեսվածի 40.1%-ը, ինչը պայմանավորված է դասընթացներին մասնակցած քաղաքացիների թվով, ինչպես նաև կառավարության որոշմամբ սահմանված ծախսերի կասեցումով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.4%-ով՝ պայմանավորված վերապատրաստվածների թվի ավելացմամբ:

Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են շուրջ 11.1 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 58.9%-ը: Համաձայն միջպետական համաձայնագրի յուրաքանչյուր տարի Ռուսաստանի Դաշնության Արտակարգ իրավիճակների նախարարության քաղաքացիական պաշտպանության ակադեմիայում Հայաստանի փրկարար ծառայությանը հատկացվում է 4 անվճար ուսուցման տեղ: Այս ծրագրով ծախսերը ներառում են տարեկան 2 անգամ փրկարար ծառայողի և նրա ընտանիքի անդամների գործուղման, ակադեմիայի հանրակացարանի բնակվարձի և կրթաթոշակի վճարման ծախսերը: Ծրագրի շեղումը պայմանավորված է նրանով, որ նախատեսված 8-ի փոխարեն 2009 թվականին ակադեմիայում ուսանել են 6 ունկնդիր:

Բուժանձնակազմի մասնագիտացման, շարունակական ուսուցման և վերապատրաստման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով ավելի քան 144.7 մլն դրամ: 2009 թվականին նշված դասընթացներին մասնակցել է 1271 հոգի՝ նախորդ տարվա 1549-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.9%-ով կամ շուրջ 10.7 մլն դրամով:

«Համայնքային ծառայողների վերապատրաստում» ծրագրով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 17.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 24.1%-ը: Շեղումը

պայմանավորված է պետական գնումների գործընթացով և վերապատրաստվողների քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 59.2%-ով, ինչը պայմանավորված է վերապատրաստվող համայնքային ծառայողների թվի նվազմամբ: Այն նախորդ տարվա 2371-ի փոխարեն կազմել է 650:

Հաշվետու տարում «Դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են ավելի քան 182.7 մլն դրամ՝ ապահովելով 64% կատարողական:

«Վերապատրաստման ծառայություններ» ծրագրի գծով 2009 թվականի պետական բյուջեից 244.2 մլն դրամ է հատկացվել ՀՀ դատախազությանը, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը և ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությանը, որից օգտագործվել է 92.8 մլն դրամ ՀՀ դատախազության կողմից: Ծրագիրը կատարվել է 38%-ով: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը:

«Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրի համար տրամադրվել է շուրջ 25.6 մլն դրամ, որը ֆինանսավորվել է 100%-ով:

Հաշվետու տարում նշված դասում ընդգրկված 3 ծրագրերի՝ նախատեսված ավելի քան 62.7 մլն դրամ գումարով իրականացումը կասեցվել է կառավարության որոշմամբ:

2009 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 18.7%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 20.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 61.2%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է «Կրթական օբյեկտների շինարարություն» և «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրերում՝ պայմանավորված ծախսերի կասեցմամբ:

Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են ավելի քան 17.9 մլն դրամ՝ 66.2%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին վերապատրաստվել են 84 սփյուռքահայ ուսուցիչներ՝ նախատեսված 100-ի դիմաց (Ջավախքի ուսուցիչները չեն կարողացել մասնակցել դասընթացներին): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը 3.2 անգամ աճել են, ինչը պայմանավորված է վերապատրաստվող սփյուռքահայ ուսուցիչների թվաքանակի ավելացմամբ և կեցության բոլոր ծախսերի տրամադրմամբ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների կազմակերպման նպատակով կատարվել են 6.5 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 65.5% կատարողական և 34.4%-ով նվազելով նախորդ տարվա ցուցանիշի համեմատ: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է կառավարության որոշմամբ ծախսերի կասեցումով:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 9.5 մլրդ դրամ՝ 51.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 199 կրթական օբյեկտներ (Երևանում՝ 44, մարզերում՝ 155): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 30.2%-ով:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է 328.8 մլն դրամ՝ ապահովելով 91.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 3 միջին մասնագիտական կրթական օբյեկտներ (Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ, Հրազդանի պետական քոլեջ և Աբովյանի էներգետիկական քոլեջ): Շեղումը պայմանավորված է փաստացի պայմանագրերը նախատեսվածից ցածր ինքնարժեքով կնքելու հանգամանքով:

Ուսանողներին գեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման համար նախատեսված 20.5 մլն դրամի ֆինանսավորումը կատարվել է ամբողջությամբ: Հաշվետու տարում բնակիչների թիվը կազմել է 400: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերն ավելացել են 11.2%-ով կամ շուրջ 2.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ավելի քան 201.5 մլն դրամ (ծրագրվածի 93.6%-ը) տրամադրվել է նախագծային աշխատանքների իրականացմանը: Նախագծային աշխատանքների ծավալի նվազման արդյունքում այս ծախսերը նախորդ տարվա համեմատ կրճատվել են 62.8%-ով կամ շուրջ 340.7 մլն դրամով:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված գումարի 57.2%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում կատարվել են շինարարական աշխատանքներ 23 դպրոցներում: Նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերը նվազել են 14.6%-ով կամ շուրջ 291.2 մլն դրամով:

2009 թվականին ավելի քան 223.2 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 88.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է փաստացի կնքված պայմանագրերով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 3 մարզադպրոց՝ նախորդ տարվա 2-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 4.1 անգամ:

Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերը կատարվել են 78.7%-ով և կազմել 1.7 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 25 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ (4-ը՝ Երևան քաղաքում, 21-ը՝ մարզերում)՝ նախորդ տարվա 29-ի դիմաց: 2008 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 6.2%-ով:

Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները կազմել են շուրջ 94.7 մլն դրամ՝ 97.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 210.0 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 65.5%-ը և 35.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 2009 թվականին պետական բյուջեով միջոցներ էին նախատեսվել 4500 երեխայի ամառային հանգիստը կազմակերպելու համար, սակայն ՀՀ վարչապետի 2009 թվականի մայիսի 27-ի թիվ 439-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել է թվով 3000 երեխաների ամառային հանգստի կազմակերպումը՝ պայմանավորված ծախսերի կասեցումով: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 35.2%-ով՝ պայմանավորված մանկավարժների աշխատավարձերի բարձրացման և մատուցվող ծառայությունների արժեքի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկման հանգամանքներով:

«Ավարտական փաստաթղթերի գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում» ծրագրի գծով ծախսվել է 394.7 մլն դրամ՝ ապահովելով 96.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 2.6%-ով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու ծրագրի շրջանակներում ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից կատարվել են 764.5 մլն դրամի ծախսեր՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ՝ այս ծախսերն ավելացել են 62.9%-ով, որը պայմանավորված է ավագ դպրոցների համար դասագրքերի հրատարակման հանգամանքով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում հաշվետու տարվա ընթացքում կատարվել են ավելի քան 615.6 մլն դրամի Երևանի համաքաղաքային նշանակության ծախսեր՝ 87.9%-ով կատարելով ծրագիրը: Շեղումը պայմանավորված է փաստացի կնքված պայմանագրերի ավելի ցածր արժեքով: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի 16 կրթական հաստատություններում կատարվել են կաթսայատների և ջեռուցման համակարգերի կառուցման աշխատանքներ:

«Փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին» ծրագրով օգտագործվել է շուրջ 56.8 մլն դրամ՝ 67.6%-ով կատարելով ծրագիրը, որը պայմանավորված է գործուղված մանկավարժների թվով. նախատեսված 400 մանկավարժի փոխարեն գործուղվել են 270-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.6%-ով կամ 6.8 մլն դրամով, քանի որ 2008 թվականին գործուղված մանկավարժների թիվը կազմել էր 240:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 49.7 մլն դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 7 մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների

տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 11.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների գնի ավելացմամբ:

Նախատեսված ամբողջ ծավալով իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 35 մլն դրամ: Անց են կացվել ՀՀ անկախության 18-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 18-րդ խաղերը՝ 7 մարզաձևերից, որից 6 մարզաձևը՝ չորս փուլով և 1 մարզաձևը՝ մեկ փուլով: Խաղերին մասնակցել են շուրջ 4500 մասնակիցներ:

- «Դպրոցականների օլիմպիադաների անցկացում» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 41.2 մլն դրամ՝ 52.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Աճը պայմանավորված է համահայկական հայոց լեզվի և հայ գրականության օլիմպիադայի կազմակերպման հանգամանքով: Անց է կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլը հանրակրթական 14 առարկաներից, որին մասնակցել են շուրջ 1020 աշակերտներ:

- հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 94.3 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2009 թվականին կազմել է 1720, վերապատրաստվել են նաև թվով 450 ուսուցիչ և 300 դաստիարակ: 2008 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 23.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

- հաշվետու տարում ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 41.7 մլն դրամ՝ 3.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Հիմնադրամի կողմից մշակվել է 635 անուն փաստաթուղթ:

- բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների շրջանակներում հաշվետու տարում ծախսվել է 80 մլն դրամ: Նշված ծրագրի շրջանակներում անցկացվել են երկու հանրապետական կոնֆերանս, բարձրացվել է բոլոնյան գործընթացի և նրա հիմնական սկզբունքների մասին հասարակության իրազեկվածությունը, իրականացվել են Միջբուհական կոնսորցիումի գործառույթները, ստեղծվել է ԲՈՒՀ-երի տվյալների բազաների կառուցման և կառավարման էլեկտրոնային համակարգը և այլն: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.4%-ով:

- «Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 225.3 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ ծախսերն ավելացել են 22.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 2206 երեխայի գնահատում՝ 2008 թվականի 2200-ի փոխարեն:

- հաշվետու տարում 65.7 մլն դրամ է տրամադրվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին.

- «Ներդրումներ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում» ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 50 մլն դրամ.

- դասական երաժշտական բարձրագույն կրթության զարգացմանն ուղղվել է ավելի քան 55.4 մլն դրամ: Ծրագիրը սկսվել է 2009 թվականին:

Ռազմագիտության կաբինետների վերականգնման ծրագրով հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 4.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 89.9%-ը: Ծախսերի տնտեսումն առաջացել է կայացած մրցույթների արդյունքում: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել Ռազմագիտական հանրագիտարանի 1000 օրինակ: Ռազմագիտության կաբինետների վերականգնման համար հանրակրթական դպրոցներում ներդրումների ծրագիրը, որի գծով նախատեսվել էր 25 մլն դրամ, կառավարության որոշմամբ կասեցվել է: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 83.4%-ով:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 547.0 մլն դրամ կամ նախատեսվածի 76.6%-ը: Ծրագիրն իրականացվել է 644 դպրոցում: Նախորդ տարվա նկատմամբ ծախսերն ավելացել են շուրջ 202.6 մլն դրամով կամ 58.8%-ով, որը պայմանավորված է 320 նոր դպրոցների սպասարկման հանգամանքով:

Անցած տարում բյուջեից ավելի քան 472.4 մլն դրամ տրամադրվել է գնահատման և թեստավորման ծառայություններին՝ կազմելով նախատեսվածի 84.5%-ը: Ծրագրի շրջանակներում անցկացվել են թվով 11 հանրակրթական առարկաներից միասնական և ավարտական քննություններ: Ավարտական քննությունների մասնակիցների թիվը կազմել է 22192, միասնական քննությունների մասնակիցների թիվը՝ 19500: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 26.2%-ով կամ 98 մլն դրամով, որը պայմանավորված է նրանով, որ միասնական և ավարտական քննություններն անցկացվել են 11 առարկաներից՝ նախորդ տարվա 5-ի դիմաց:

Միջուռքի հայկական կրթական հաստատությունների համար ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրման համար 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 69.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշների 99.9%-ը: Հատկացված միջոցների հաշվին ձեռք են բերվել 56678 հատ 124 անվանում դասագիրք և օժանդակ նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Շուրջ 25.3 մլն դրամ է տրամադրվել Ջավախքի դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով, որը կատարվել է 84.3%-ով: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 1350 կոմպլեկտ աշակերտական գույք և 270 հատ գրատախտակ: Տնտեսումն առաջացել է կայացած

մրցույթների արդյունքում: 2008 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 15.7%-ով կամ 4.7 մլն դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Կրթության որակի և համապատասխանության ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.2 մլրդ դրամ, որը 16.8%-ով գերազանցում է նախատեսված ցուցանիշը: Ծրագրի գերակատարումը պայմանավորված է 2008 թվականի վերջին մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով կրեդիտորական պարտավորությունների առկայությամբ, որոնք մարվել են 2009 թվականի ընթացքում: «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի նպատակն է՝ ուղղորդել Հայաստանի կրթական համակարգի զարգացումը դեպի գիտելիքահեն տնտեսության պահանջները: Վարկային ծրագիրը բաղկացած է չորս ենթածրագրից՝

- հանրակրթության կրթակարգի, առարկայական ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ստեղծում.

- տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության համակարգում.

- ուսուցիչների մասնագիտական կատարելագործում.

- հանրակրթության համակարգի կառավարման բարելավում և արդյունավետության բարձրացում:

2009 թվականը «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին վարկային ծրագրի իրականացման վերջին տարին էր: Ծրագրի համաձայնագրով 2009 թվականի նոյեմբերի 28-ը սահմանված էր առաջին ծրագրի փակման օրը: 2009 թվականի դեկտեմբերի 1-ից սկսվել են երկրորդ վարկային ծրագրով նախատեսված աշխատանքները: Մասնավորապես՝ մշակվել են՝

- նախադպրոցական ծրագրի իրականացման ղեկավար ձեռնարկի նախագիծը.

- ավագ դպրոցների գրադարանավարների վերապատրաստման ծրագրի, ժամանակացույցի, նյութերի մշակման և վերապատրաստողների ուսուցման նպատակով փորձագիտական աջակցության տեխնիկական առաջադրանքը.

- կրթական միջավայրի տեխնիկական հատկորոշիչների մշակման նպատակով փորձագիտական աջակցության տեխնիկական առաջադրանքի նախագիծը.

- բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի ներդրման նպատակով փորձագիտական աջակցության տեխնիկական առաջադրանքի նախագիծը.

- «Դրամաշնորհներ վերապատրաստումներ իրականացնող կազմակերպություններին և դպրոցներին» ղեկավար ձեռնարկի նախագիծը.

- մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակով տվյալների կարիքների գնահատման և համապատասխան համակարգչային

բազայի նկարագրի մշակման համար փորձագիտական աջակցության տեխնիկական առաջադրանքի նախագիծը.

- «Ուսանողական վարկերի զարգացումը Հայաստանում» հայեցակարգային հիմնական դրույթները:

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի իրականացման համար ՀՀ կառավարության N 1357-Ն որոշմամբ առաջին ծրագրից հատկացվել է 13.6 մլն դրամ, որը չի օգտագործվել: Կատարված աշխատանքների դիմաց վճարումները կատարվել են 2010 թվականին:

2009 թվականի պետական բյուջեից հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են 15.8 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ծախսերի 17.6%-ը: Ծրագրի իրականացումը կասեցվել է կառավարության որոշմամբ: 2009 թվականին ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել են 10 անուն ձեռնարկներ և ուսումնական այլ նյութեր՝ թվով 11000 օրինակ, ձեռք են բերվել 3000 հատ քրայյան տետրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 82.4%-ով կամ շուրջ 74.2 մլն դրամով:

Մարզական օբյեկտների հիմնանորոգմանն ուղղվել է շուրջ 11.9 մլն դրամ՝ նախատեսված 583.1 մլն դրամի դիմաց, ինչը պայամանավորված է ծախսերի կասեցման հանգամանքով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել 1 մարզադպրոցում: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են շուրջ 404.9 մլն դրամով, քանի որ 2008 թվականին հիմնանորոգվել էր 6 մարզադպրոց:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից 490 մլն դրամ տրամադրվել է կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 10000 մարդ (ավելացումը 2008 թվականին վերապատրաստվածների նկատմամբ կապված է ավագ դպրոցների ուսուցիչների ներգրավման հետ), մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 56148: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 7.1%-ով՝ պայամանավորված աշխատավարձերի բարձրացմամբ, որն իրականացվել է հանրակրթության համակարգում կատարված աշխատավարձերի բարձրացումների ընդհանուր սկզբունքներով:

2009 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են ավելի քան 206.8 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 91.9% կատարողական: Ծրագրով նախատեսված թվով 16 ձեռնարկներից հրատարակվել են 13-ը, որի հետևանքով չկատարված աշխատանքի գումարը կազմել է շուրջ 1.4 մլն դրամ, մնացած միջոցները

տնտեսվել են: Ծրագրի շրջանակներում մշակվել են նաև մի շարք մասնագիտությունների չափորոշիչներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, մանկավարժներ, փորձագետներ, կատարվել են թարգմանություններ և այլն: 2008 թվականի համեմատ՝ այս ծրագրի ծախսերը նվազել են 1.8 մլրդ դրամով, որը պայմանավորված է 2008 թվականին ծրագրի շրջանակներում նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար լաբարատոր, արհեստանոցային, համակարգչային տեխնիկայի, ուսանողական գույքի և հաստատությունների վերազինման համար անհրաժեշտ այլ գույքի և սարքավորումների ձեռքբերման համար կատարված ծախսերով:

Հայկական սիյուռքի կրթօջախներին ՀՀ սիյուռքի նախարարության արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 1.9 մլն դրամ պետական աջակցություն՝ 95.4%-ով կատարելով նախատեսված ծախսերը:

2009 թվականի պետական բյուջեում ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվել է ավելի քան 80.6 մլն դրամ, որը չի ծախսվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են 486 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 90.4%-ը: Ծրագրին ՀՀ կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 69.9 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 416.0 մլն դրամ: Համաձայն ՀՄՆՀ կանոնակարգի՝ ծրագրերի մեկնարկը չի տրվում մինչև համայնքի ներդրումը ստանալը: Համայնքի ներդրման ուշացման պատճառով 2 ծրագիր նախատեսվածից ուշ են մեկնարկել: Ծրագրի շրջանակներում սկսվել է շինարարական աշխատանքներ 2 կրթական հիմնարկներում և ավարտվել են 10 կրթական հիմնարկներում:

Հաշվետու տարում նշված դասում ընդգրկված ևս 8 ծրագրեր՝ նախատեսված 934.4 մլն դրամ գումարով, կասեցվել են կառավարության որոշմամբ:

2009 թվականին պետական բյուջեից 504.2 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 94.9%-ով: Այլ դասերին չպատկանող կրթության ծախսերը 21.2%-ով գերազանցել են 2008 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2008 թվականին գիտության պետական կոմիտեի ֆինանսավորումն իրականացվել էր կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

Սոցիալական պաշտպանություն

2009 թվականի պետական բյուջեի ծախսերի 26.2%-ն ուղղվել է սոցիալական պաշտպանության ոլորտին: Ոլորտին կատարված հատկացումները կազմել են շուրջ 243.6 մլրդ դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական: Նշված ծախսերը 2008 թվականի նկատմամբ ավելացել են 14.6%-ով կամ 31.1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է հիմնականում թոշակների և նպաստների ավելացմամբ:

Հաշվետու տարում շուրջ 1.3 մլրդ դրամ տրամադրվել է *վատառողջության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 98.1% կատարողական:

«Վատառողջություն» դասում ընդգրկված են երկու ծրագրեր՝ «Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» և «Բժշկա-սոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության ծառայություններ», որոնց շրջանակներում կատարված ծախսերը կազմել են համապատասխանաբար 82.9 մլն դրամ (93.3%) և 109.6 մլն դրամ (100%): Առաջին ծրագրի ծախսերը 2008 թվականի համեմատ աճել են 13%-ով՝ պայմանավորված հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի աճի հանգամանքով: Այն 2009 թվականի հունվարի 1-ից սահմանվել է 30 հազ. դրամ՝ 2008 թվականի 25 հազ. դրամի դիմաց: «Բժշկա-սոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության ծառայություններ» ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետպրոթեզավորման, աշխատունակության վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: 2009 թվականին իրականացվել է 9 հիվանդատեսակների գծով 723 մարդու բուժում: Ծրագրի ծախսերը 2008 թվականի համեմատ ավելացել են 13.3%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ սեպտեմբեր ամսից սկսած մեկ հիվանդի մեկ օրվա բուժման ծախսն ավելացել է՝ 11500 դրամից հասնելով 12650 դրամի: Ընդհանուր առմամբ վատառողջության դասին տրամադրվել է 192.5 մլն դրամ, որը 13.2%-ով ավելի է 2008 թվականի ցուցանիշից:

Անաշխատունակության դասին հատկացվել է 1.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերն ավելացել են 13.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերի աճով:

Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ իրականացնելու համար

տրամադրվել է 10.5 մլն դրամ (100%): 2008 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 10.2%-ով, որը պայմանավորված է մատուցվող ծառայության գնի նվազմամբ:

Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 883.9 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ քաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, դրանց վերանորոգումը, ինչպես նաև ձայնաստեղծ սարքերի և աչքի պրոթեզների տրամադրման ծառայությունների ձեռքբերումը: Նշված ծախսերը 2008 թվականի նկատմամբ ավելացել են 15.6 %-ով կամ 119.5 մլն դրամով, որը պայմանավորված է նախորդ տարվա համեմատ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ ստացող հաշմանդամների թվաքանակի ավելացմամբ:

Հոգեկան առողջության վերականգնման ծրագրին հատկացվել է 73.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.3%-ով՝ պայմանավորված նրանով, որ փաստացի բուժման ծառայություններ են մատուցվել 459 հիվանդների՝ 2008 թվականի 392-ի դիմաց: Նախատեսված ողջ ծավալով իրականացվել է նաև տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցումը, որը կազմել է 7.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ՝ ծրագրի գումարը պակասել է 9.7%-ով, որը համակարգչային ուսուցման գնի իջեցման արդյունք է:

Հաշմանդամ երեխաների և պատանիների սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար տրամադրվել է 16.5 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում ծրագրին տրամադրվել է 103.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 88.1%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի շրջանակներում 2009 թվականին հաշմանդամներին են տրամադրվել նաև 2008 թվականին ձեռք բերված և պահեստավորված սայլակներն ու լսողական սարքերը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և պահեստամասերով ապահովելու համար տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 97.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11%-ով, որը մեկ միավոր համակարգչային տեխնիկայի գնի բարձրացման արդյունք է:

Ծերության դասի ծրագրերին հատկացվել է շուրջ 177.6 մլրդ դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 14.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է ապահովագրական կենսաթոշակների ծախսերի աճով:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեցել են ապահովագրական կենսաթոշակների ծախսերը՝ 147.3 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.9%-ով: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 14.9%-ով կամ 19.1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի չափի փոփոխությամբ, որը 6800 դրամից դարձել է 8000 դրամ, ինչպես նաև ապահովագրական ստաժի մեկ տարվա համար տրվող հավելման չափի փոփոխությամբ՝ 395 դրամից 450 դրամ:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ապահովման ծախսերը կազմել են 19.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.6%-ը: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 15.1%-ով կամ 2.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է նոր նշանակումներով, ինչպես նաև սպայական անձնակազմի որոշ խմբի կենսաթոշակների վերահաշվարկի հանգամանքով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 2.5 մլրդ դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: 2008 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 5.7%-ով կամ 153.6 մլն դրամով, որը բացատրվում է բացառապես Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման (մահացության) հանգամանքով:

Սոցիալական կենսաթոշակների ծախսերը կատարվել են 97.3%-ով և կազմել շուրջ 6.1 մլրդ դրամ: 2008 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 15.9%-ով կամ 835.8 մլն դրամով, որը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի բարձրացմամբ՝ 6800 դրամից մինչև 8000 դրամ, և կենսաթոշակառուների թվի աճի հանգամանքով:

ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակները, ամենամյա դրամական օժանդակության հատուցման ծախսերը կազմել են 218.9 մլն դրամ՝ ապահովելով 56.6% կատարողական: 2009 թվականին նախատեսվել էր վերահաշվարկել դատավորների կենսաթոշակները, որը չիրականացվեց՝ օբյեկտիվ հանգամանքներից ելնելով: Նշված ծախսերը 7.1%-ով գերազանցել են 2008 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված կենսաթոշակառուների թվաքանակի ավելացմամբ:

«Տարեցներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 15.7%-ով կամ 178.1 մլն դրամով, որը պայմանավորված է սպասարկող անձնակազմի թվաքանակը 15 մարդով և աշխատավարձի ու սննդի ծախսերը շուրջ 20%-ով ավելանալու հանգամանքով:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով հատկացումները կազմել են 90.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և 13.3%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ սպասարկող անձնակազմի աշխատավարձի շուրջ 20%-ով բարձրացմամբ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով պետական աջակցությունը կազմել է 15.1 մլն դրամ, որը կատարվել է 96.6%-ով: Ծախսերը նախորդ՝ 2008 թվականի նկատմամբ ավելացել է 15.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ աշխատավարձի և սննդի ծախսերի շուրջ 20%-ով ավելացմամբ:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը նախատեսված 197.1 մլն դրամի դիմաց տրամադրվել է 168.4 մլն դրամ: Ծրագիրը նախատեսված է տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում միայնակ տարեցների և հաշմանդամների սպասարկման, ինչպես նաև անապահով անձանց շաբաթվա աշխատանքային օրերին ճաշարաններում մեկ անգամ սննդի տրամադրման համար: Նախատեսված միջոցների պակաս օգտագործումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված 3000 շահառուի փոխարեն փաստացի սնունդ է տրամադրվել ըստ դիմողների քանակի՝ 1849 շահառուի: Ծախսերը 2008 թվականի նկատմամբ ավելացել են 32.4%-ով, քանի որ նախորդ տարի սննդի տրամադրման համար միջոցներ չէին հատկացվել:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման, ինչպես նաև «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների ծրագրերը, որոնց հատկացումները կազմել են համապատասխանաբար 14.4 մլն դրամ և 3.1 մլն դրամ: «Տարեցների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում ներդրումներն իրականացվել են 96.5%-ով՝ կազմելով 22.4 մլն դրամ: Վերջին երեք ծրագրերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել էին առաջին անգամ:

«Հարսզատին կորցրած անձինք» խմբի ծրագրերին տրամադրվել է 139.5 մլն դրամ՝ ապահովելով 78.1% կատարողական: Շեղումը հիմնականում առաջացել է Հայաստանի գոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստի վճարման ծրագրում: 2009 թվականի պետական բյուջեով նշված ծրագրով նախատեսվել էր հատկացնել 154.8 մլն դրամ, որը իրականացվել է 82.2%-ով (127.3 մլն դրամ)՝ պայմանավորված մեկ ազգային հերոսի ընտանիքի կողմից նպաստից հրաժարվելու, ինչպես նաև «Մարտական Խաչ» 1-ին և 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվածների փաստացի թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու

հանգամանքով: «Մարտական Խաչ» 1-ին և 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվածների ընտանիքներին նպաստը ՀՀ պետական բյուջեում նախատեսվել է առաջին անգամ, որով պայմանավորված՝ «Հարազատին կորցրած անձինք» խմբի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 4.3 անգամ:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարումը կազմել է 6.2 մլն դրամ կամ նախատեսվածի 95.8%-ը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 45%-ով:

Կառավարության 1992 թվականի նոյեմբերի 18-ի N 584 որոշման 49-րդ կետով նախատեսված նպաստի վճարման նպատակով օգտագործվել է 6 մլն դրամ կամ նախատեսվածի 34.4%-ը: Հիշյալ ծրագրի գծով ծախսերը կատարվում են ապահովադիրների մոտ և հետագայում փոխհատուցվում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից: Հաշվետու տարվա փաստացի կատարված վերոհիշյալ ծախսը ներառում է 2009 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածը: Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ծախսերը ծառայության կողմից ֆինանսավորվել են 2010 թվականի հունվար-փետրվար ամիսներին, հարկային մարմնի կողմից համապատասխան տեղեկանքները ծառայություն են ներկայացվել ընթացիկ տարում (համապատասխան հաշվետվությունների ներկայացման ներկայումս գործող կարգի):

Ընտանիքի անդամներ և զավակներ խմբի ծախսերը կազմել են 41.8 մլրդ դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նշված գումարի զգալի մասը՝ 29.1 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 1.1%-ով, ինչը պայմանավորված է նպաստի նվազագույն չափի բարձրացմամբ: 2009 թվականին ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն է ստացել 107490 ընտանիք՝ 2008 թվականի 119514-ի փոխարեն:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 106.6 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ՝ կազմելով նախատեսվածի 62%-ը: Հարկ է նշել, որ ծրագիրը ֆինանսավորվել է ներկայացված փաստացի հայտերի ամբողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 12.7%-ով:

2009 թվականին մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստների գծով ծախսերը կազմել են 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2008 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 8.4 անգամ, որը պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ երեխաների ծննդյան կապակցությամբ

ծնողներին տրվող նպաստի աճով, որը 3000 դրամից դարձել է 18000 դրամ, ինչպես նաև ծնելիության աճով:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման ծառայությունների համար նախատեսվել էր 31.1 մլն դրամ: Սակայն ՄԱԿ-ի Համաշխարհային պարենային ծրագրի կողմից նախատեսված սննդամթերքի առաքումը չիրականացվելու հետևանքով նախատեսված միջոցները չեն օգտագործվել:

ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին աջակցության և խորհրդատվության ծրագրին տրամադրվել է 31.2 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 73%-ը: Շեղումը պայմանավորված է ծրագրով նախատեսված բնակարանների ձեռքբերման նոր ընթացակարգերին անցնելու կապակցությամբ նախատեսված բնակարանների և դրանց կահավորման համար անհրաժեշտ գույքի գնումը չիրականացնելու, ինչպես նաև ծրագրի առանձին բաղադրիչների գծով նախատեսվածից պակաս ծախսեր կատարելու հանգամանքներով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.8%-ով:

Հղիության և ծննդաբերության նպաստի գծով ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ, որոնք կատարվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 11.3% աճը հիմնականում պայմանավորված է հանրապետությունում նվազագույն ու միջին աշխատավարձերի, ինչպես նաև ծնելիության որոշակի աճի հանգամանքներով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 5.1 մլրդ դրամ, որը նույնպես կատարվել է նախատեսված չափով: 2009 թվականին միանվագ նպաստ է ստացել 45426 ընտանիք: 2008 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 3.7 անգամ, որը պայմանավորված է նպաստի չափի բարձրացմամբ, ինչպես նաև ծնելիության աճով: 2008 թվականի 35000 դրամի փոխարեն 2009 թվականին 1-ին և 2-րդ երեխայի համար հատկացվել է 50000 դրամ, իսկ 3-րդ և ավելի երեխայի համար՝ 430000 դրամ:

2009 թվականին 99.3%-ով կատարվել է վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (գոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցումը, որը կազմել է 396.1 մլն դրամ և 14.1%-ով գերազանցել նախորդ տարվա ծախսերը:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի՝ երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96%-ը: Տարվա ընթացքում նախատեսվել էր երեխաների տուն-ինտերնատներում իրականացնել 935 խնամվողների շուրջօրյա խնամք, սակայն փաստացի խնամվողների միջին տարեկան թվաքանակը կազմել է 878 մարդ: Ծախսերը

նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 18%-ով, որը հիմնականում պայմանավորված է բյուջեով նախորդ տարվա նկատմամբ սպասարկող անձնակազմի թվաքանակի ավելացման, ինչպես նաև աշխատավարձի և սննդի ծախսերը շուրջ 20%-ով ավելանալու հանգամանքով:

ՀՀ մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայությունների նպատակով պետական աջակցությունը կազմել է 11.4 մլն դրամ կամ 97%: 2008 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 41.8%-ով, որը պայմանավորված է շահառուներին տրամադրվող օժանդակության փաթեթի ծախսերը այլ ծրագրով նախատեսելու հանգամանքով:

Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության տրամադրման նպատակով «Երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ներին 2009 թվականի բյուջեով նախատեսված պետական աջակցությունը կազմել է 132.9 մլն դրամ կամ նախատեսվածի 95.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել: 2009 թվականին գործել են «Երևանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ը և «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ:

Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է 780.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 87.1%-ով կատարում: Շեղումը նախատեսվածի նկատմամբ պայմանավորված է երեխաների փաստացի թվաքանակը 36-ով պակաս լինելու հանգամանքով: Ծախսերը նախորդ՝ 2008 թվականի նկատմամբ ավելացել են 12.0 %-ով, որը հիմնականում պայմանավորված է բյուջեով նախորդ տարվա նկատմամբ սպասարկող անձնակազմի թվաքանակը 24 մարդով, աշխատավարձի և սննդի ծախսերը շուրջ 20%-ով ավելանալու հանգամանքով:

«Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի չորս ցերեկային կենտրոններին տրամադրվել է 48.3 մլն դրամ, որն ուղղվել է 515 երեխայի սոցիալ-հոգեբանական և կրթական կարիքների բավարարման ծառայությունների մատուցմանը: Միջոցներն օգտագործվել են 94.1%-ով, ծախսերը նախորդ տարվա համեմատ պակասել են 5.9%-ով, աշխատողների փաստացի թվաքանակով պայմանավորված:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայությունների ծախսերը կազմել են 21 մլն դրամ՝ ապահովելով 91.1% կատարողական, երեխաները տարվա տարբեր ամիսներին ընտանիքների խնամքին հանձնելու հանգամանքով

պայմանավորված: Նշված ծախսերը նախորդ՝ 2008 թվականի նկատմամբ ավելացել են 33.8 %-ով, որը պայմանավորված է 2008 թվականի նվազագույն աշխատավարձը 25000 դրամի փոխարեն 2009 թվականին 30000 դրամ սահմանելու, ինչպես նաև կոմունալ ծառայությունների սակագների թանկացման հանգամանքով:

Բյուջետային բարեփոխումների համատեքստում՝ ներդրումներ «Երեխաների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում ծրագիր ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել է առաջին անգամ՝ մանկատների համար կապիտալ ակտիվների ձեռք բերման ծախսերը երեխաների շուրջօրյա խնամքի պահպանման ծախսերից տարանջատելու հետևանքով: Հատկացումները կազմել են 18 մլն դրամ ապահովելով 83.9% (ըստ փաստացի ծախսերի):

«Երեխաների տուն-ինտերնատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում» ծրագիրը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել է առաջին անգամ՝ մանկատների դպրոցահասակ երեխաների գրպանի ծախսերի համար միջոցները երեխաների շուրջօրյա խնամքի պահպանման ծախսերից տարանջատելու հետևանքով: Ծրագրով նախատեսվել է հատկացնել 15.2 մլն դրամ: Փաստացի ծախսերը կազմել են 8.9 մլն դրամ՝ մանկատներում դպրոցահասակ երեխաների փաստացի թվաքանակով պայմանավորված: Ծրագրի շրջանակներում մանկատներում խնամվող 7-12 տարեկան դպրոց հաճախող երեխաներին գրպանի ծախսերի համար հատկացվում է ամսական 2000 դրամ, իսկ 13-18 տարեկան երեխաներին՝ ամսական 3000 դրամ: Մանկատներում խնամվող երեխաների թվաքանակը անընդհատ փոփոխվում է և հնարավոր չէ նախորոք հստակորեն կանխատեսել նրանց թվաքանակը: Այդ պատճառով, նախատեսված 7-12 տարեկան 235 երեխաների փոխարեն գրպանի ծախսերի համար գումար հատկացվել է 159 երեխայի, իսկ նախատեսված 13-18 տարեկան 200 երեխաների փոխարեն՝ գումար հատկացվել է 142 երեխայի:

ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնությունը կազմել է 1.9 մլն դրամ, ծրագիրը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել է առաջին անգամ:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրումը կազմել է 8.7 մլն դրամ, ծրագիրը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել է առաջին անգամ և իրականացվել է նախատեսված ողջ ծավալով:

«Ներդրումներ "Երեխաների սոցիալական հոգածության կենտրոն" ՊՈԱԿ-ներում» ծրագիրը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվել է առաջին անգամ՝ երեխաների համայնքային հոգածության կենտրոնների կապիտալ ակտիվների ձեռք բերման ծախսերը տարանջատելու հետևանքով: Նախատեսված 9.2 մլն դրամի դիմաց ծախսերը կազմել են 7.7 մլն դրամ: Սույն ծրագրի շրջանակներում նախարարության համակարգի 2 երեխաների համայնքային հոգածության կենտրոնների կողմից ձեռք են բերվել կապիտալ ակտիվներ:

Ծախսերի տարբերությունը պայմանավորված է ինչպես ակտիվների ձեռք բերման պայմանագրերով նախատեսված գների տարբերությամբ, այնպես էլ Աջափնյակի կենտրոնի կողմից նախատեսված ծավալից փաստացի պակաս ակտիվներ գնելու հանգամանքով (զբաղեցրած տարածքի պատուհանների ճաղավանդակներ ձեռք չեն բերվել):

«Ներդրումներ երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներում» ծրագիրը նույնպես նախատեսվել է առաջին անգամ իրականացվելով նախատեսված գրեթե ողջ ծավալով կազմել է 35.1 մլն դրամ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը կազմել է 252.8 հազ դրամ (100%):

2009 թվականին 5.3 մլրդ դրամ տրամադրվել է գործազրկության ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 98%-ը: Ծախսերի հիմնական մասն ուղղվել է գործազրկության նպաստի վճարմանը՝ շուրջ 4.5 մլրդ դրամ, որը կատարվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը աճել են 62.8%-ով կամ 1.8 մլրդ դրամով: Հաշվետու տարում գործազուրկների թվաքանակը ամսական հաստատված 14500-ի փոխարեն դարձավ շուրջ 22900:

Վարձատրվող հասարակական աշխատանքների շրջանակներում օգտագործվել է 492.9 մլն դրամ, կամ ծրագիրը կատարվել է 100%-ով: Նշված ծախսերը 28.8 %-ով նվազել են 2008 թվականի համեմատ ինչը համայնքների կողմից վարձատրվող հասարակական աշխատանքների փաստացի պակաս կատարված աշխատանքների արդյունք է:

Չեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվել է 661 հազ. դրամ ֆինանսական աջակցություն՝ նախատեսված 2.8 մլն դրամի փոխարեն: Ծրագրում նախատեսվել է ընդգրկել 100 գործազուրկի և հաշմանդամի: Սակայն հաջողվել է ֆինանսական աջակցություն ցուցաբերել նախատեսված գումարի՝ նվազագույնի չափով (1 անձի համար նախատեսված էր 27500 դրամ, սակայն միջինը ծախսվել է 6356 դրամ), որն էլ թույլ է տվել ծրագրում ընդգրկել 104 անձի: Արդյունքում խնայվել է 2.1 մլն դրամ: Բացի դրանից ծրագրում ընդգրկված 104 անձիք գրանցվելով որպես ձեռնարկատեր շարունակում են իրենց գործունեությունը և կատարում սոցվճարներ:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծախսերը կազմել են 58.4 մլն դրամ՝ նախատեսված 64.8 մլն դրամի փոխարեն: Տնտեսումը պայմանավորված է գործատուի կողմից տրված նախատեսվածից ցածր աշխատավարձի չափաքանակով (գործատուին փոխհատուցվում է գործատուի կողմից սահմանված աշխատավարձի 50%-ի չափով, բայց ոչ ավել քան սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը):

Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չգրադված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպման նպատակով տրամադրվել է 9.9 մլն դրամ կամ նախատեսվածի 75.5%-ը: Բանակցությունների արդյունքում 1 հաշմանդամի ուսուցման համար ծախսվեց 125157 դրամ նախատեսված 170000 փոխարեն:

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ ծրագրի հատկացումները կազմել են 17.7 մլն դրամ (90.2%), նախորդ՝ 2008 թվականի նկատմամբ ծախսերը ավելացել են 71.7%-ով, որը հիմնականում արդյունք է շահառուների թվաքանակը 3500-ով ավելանալուն, ինչպես նաև 3 հաստիքային միավոր ավելացնելուն:

Գործազուրկների աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց մասնագիտական ուսուցմանը տրամադրվել է 171.3 մլն դրամ (73.6%): Ծրագրում նախատեսվել էր ընդգրկել 1370 գործազուրկի: Սակայն ծրագրում հաջողվեց ընդգրկվել 1464 գործազուրկ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պարբերական և մրցակցային բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրերով 1 գործազուրկի ուսուցման համար ծրագրով նախատեսված 170000 փոխարեն միջինը ծախսվել է 124290 դրամ:

Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցումը կազմել է 3.9 մլն դրամ (24.5%): Ծրագրով նախատեսված 30-ի փոխարեն այլ վայր աշխատանքի է գործուղվել 10 գործազուրկ: Ծրագրի պակաս կատարումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Օբյեկտիվ պատճառներից է ծրագրի նոր և առանձնահատուկ լինելը. ծրագրի իրականացումը հնարավոր է միայն գործուղող և ընդունող կենտրոնների համատեղ ջանքերի շնորհիվ, որը միշտ չէ, որ հաջողվում է: Պատճառների թվում էր նաև թափուր հայտարարված ուսուցչական աշխատատեղերի դրույքից շատ պակաս դասաժամերի քանակը, առողջապահության ոլորտի հիմնարկներում պահանջվող նեղ մասնագետների բացակայությունը հաշվառված գործազուրկների շրջանում, շինարարության ոլորտում աշխատանքների սեզոնայնությունը, ինչպես նաև ցածր աշխատավարձը: Սուբյեկտիվ պատճառների մեջ առանձնանում է թափուր աշխատատեղերի հայտ ներկայացրած հիմնարկների ղեկավարների չհիմնավորված մերժումները՝ գործուղվելու ցանկություն հայտնած անձանց:

Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց վերամասնագիտացում ծրագրին տրամադրվել է 347 հազ. դրամ (10.2%): Ծրագրում նախատեսվել է ընդգրկել 20 անձի, սակայն այս ծրագրում ընդգրկվել է ընդամենը 3 անձ: Այս ծրագրի իրականացման դժվարությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ գրադվածության տարածքային կենտրոններում հաշվառված երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող

աշխատանք փնտրող չգրադված անձինք հիմնականում մասնավարժներ են, որոնք դժվարությամբ են համաձայնվում ձեռք բերել այլ մասնագիտություն:

Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպմանը հատկացվել 4.9 մլն դրամ, որը կազմել է 97.3%: Ծրագրի շրջանակներում իրականացվել է «Իրական գործազրկության մակարդակի գնահատում» թեմայով հետազոտություն, որի նպատակը պաշտոնական և իրական գործազրկության (Աշխատանքի միջազգային կազմակերպության հաշվարկման մեթոդ) մակարդակների համեմատությունն է:

Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայություններ ծրագրին տրամադրվել է 4.2 մլն դրամ որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրով իրականացվել է նախատեսված թվով 6 տոնավաճառներ՝ Գյումրի, Գիլիջան, Վանաձոր, Արտաշատ, Կապան, Հրազդան քաղաքներում, որոնց մասնակցել է 218 գործատու, 10750 աշխատանք փնտրող: Նրանցից աշխատանքի է տեղավորվել 220-ը:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ և Ներդրումներ «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոն» ՊՈԱԿ-ում ծրագրերը չեն իրականացվել պայմանավորված՝ «Գյումրու հաշմանդամների աշխատանքային վերականգնման և մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ը ստեղծված չլինելու հանգամանքով:

«Բնակարանային ապահովում» խմբի ծրագրերին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից հատկացվել է ավելի քան 4.1 մլրդ դրամ՝ ապահովելով 62.2% կատարողական: նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 24.6%-ով՝ հիմնականում պայմանավորված կառավարության կասեցման որոշմամբ:

Չոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ գինձառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար տրամադրվել է շուրջ 3 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

«Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծրագրի ծախսերը կազմել են 382 մլն դրամ կամ նախատեսվածի 15.8%-ը: Բնակարանների գնման վկայագրերի միջոցով 2009 թվականին ձեռք է բերվել 63 բնակարան, որից 59-ը՝ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց, 1-ը՝ Երևան քաղաքում բնակվող փախստական ընտանիքի, 1-ը՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում բնակվող փախստական ընտանիքի և 2-ը Տավուշի մարզում բնակվող փախստական ընտանիքների համար: 2008 թվականի համեմատ 2009 թվականին տրամադրվել է 378-ով պակաս բնակարաններ:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրում և ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարանների, կահույքի, կենցաղային սարքերի և սարքավորումների տրամադրում ծրագրերը չեն իրականացվել բնակարանների ձեռքբերման նոր ընթացակարգերին անցնելու կապակցությամբ:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն իրականացնելու համար տրամադրվել է շուրջ 721.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Կատարվել են ք. Ստեփանավանի Դեսինի փող. թիվ 45 և 47, Պրոմեթևս փող. թիվ 28 և 49 անավարտ շենքերի կառուցման, Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղի թիվ 5 շենքի վերականգնման և Մարալիկի 9 անավարտ շենքերի կառուցման աշխատանքները:

Սոցիալական հատուկ արտոնությունների (այլ դասերի չպատկանող) խմբում 2009 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 5.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Նախորդ տարվա նկատմամբ խմբի ծախսերը ավելացել են 22.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է պատերազմի վետերաններին, հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, վետերանների պատվովճարների և ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիներին տրվող դրամական միջոցների ավելացմամբ:

2009 թվականի պետական բյուջեից 1 մլրդ դրամ է տրամադրվել վետերանների պատվովճարներին, որը կազմել է ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ ծախսերը ավելացել են 35%-ով: Վետերանների պատվովճարի գումարը 2008 թվականի հուլիսի 1-ից 10.0 հազ. դրամից դարձել էր 20.0 հազ դրամ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի (25.11.1998թ. ՀՕ-258) 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է 2.5 մլրդ դրամ դրամական օգնություն, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշվախ ծախսերը ավելացել են 20.1%-ով, հիմնականում պայմանավորված դրամական օգնության նախկինում սահմանված չափերի փոփոխության՝ աճի (7500 դրամից 9100 դրամ, 2500 դրամից 3000 դրամ, 3800 դրամից 4500 դրամ, 5700 դրամից 6800 դրամ), ինչպես նաև ուժային կառույցներում հաշվառված համապատասխան կոնտիգենտի թվաքանակի աճի հանգամանքներով:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են ավելի քան 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: 2008 թվականի համեմատ ծախսերն ավելացել են 20.4%-ով, որը նախատեսված միջոցների ավելացման արդյունք է:

Հաշվետու տարում 53.1 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 99.8%-ով, 2008 թվականի համեմատ ծախսերն աճել են 22.2%-ով, որը պայմանավորված է աշխատավարձի և սննդի ծախսերը շուրջ 20%-ով նախորդ տարվա համեմատ ավելացմամբ: Ներդրումները «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում կատարվել է նախատեսված չափով 4.1 մլն դրամ:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ իրականացնելու նպատակով տրամադրվել է 14.1 մլն դրամ, որը նույնպես կատարվել է նախատեսված չափով: 2008 թվականի համեմատ ծախսերն աճել են 16.2%-ով, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի աճով:

Պետական աջակցությունը «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ին կազմել է 8.5 մլն դրամ (77.7%), որի միջոցով իրականացվում է ժամանակավոր ապաստանի կարգավիճակ հայցող փախստականների սպասարկումը (կացարանի տրամադրում, սնունդ, բուժզննում և այլ ծառայությունների տրամադրում): 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 13%-ով՝ պայմանավորված կարգավիճակ հայցողների քանակի և սպասարկման ծավալների աճով:

Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 792 հազ. դրամ միանվագ դրամական փոխհատուցում, որը կատարվել է 49.6%-ով և 32.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված դիմողների փաստացի թվաքանակի նվազմամբ:

Փախստականի կարգավիճակ հայցողին տրվող միանվագ նպաստ նախատեսված է եղել 500 հազ դրամ, որը սակայն վճարման համապատասխան կարգ չլինելու պատճառով չի ծախսվել:

Սոցիալական պաշտպանության (այլ դասերի չպատկանող) խմբի ծրագրերի գծով 2009 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 8.2 մլրդ դրամ՝ ապահովելով 82.9% կատարողական: Շեղումը հիմնականում առաջացել է կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների, ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման և պետական կառավարման մարմնի պահպանման և զարգացման ծրագրերի ծախսերի գծով:

Կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական կառավարման մարմնի պահպանման և զարգացման ծրագրի ծախսերը կատարվել են 83.5%-ով և կազմել 1.3 մլրդ դրամ: Ընդունված հիմնականում տնտեսումների արդյունք է:

ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմի պահպանմանը տրամադրվել է ավելի քան 1.5 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսվածի 92.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը աճել են 5.1 %-ով ինչը հիմնականում բացատրվում է քաղաքացիների աշխատավարձերի բնականոն աճով, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սակագների բանկացման հանգամանքով: ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմի կարողությունների զարգացման ծրագրին տրամադրվել է 10.1 մլն դրամ (40.3%):

Հաշվետու տարում 274 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 99.9%-ով: 2008 թվականի նկատմամբ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրին տրամադրվել է 235.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 77.4%-ը: Ծրագրի նպատակները ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի և հանրային հատվածի հիմնական գործառնությունների բարելավման հետ:

Ծրագիրը ներառում է հետևյալ հինգ բաղադրիչները՝

- ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին.
- աշխատանք և զբաղվածություն .
- կենսաթոշակներ.
- սոցիալական աջակցություն.
- ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով նախատեսված ծախսերի ամբողջովին չկատարելու պատճառը այն է, որ որ վարկային ծրագրերի համաֆինանսավորման փաստացի ծախսը 2009 թվականին իրականացվել է ի հաշիվ կանխավճարի, որը համաձայն համապատասխան վարկային համաձայնագրի ստացվել էր ծրագրի մեկնարկին և ենթակա է մարման ավարտման փուլում:

Ընթացիկ ծախսերի գծով ամբողջովին չկատարման հիմնական պատճառը այն է, որ 2009 թվականի հոկտեմբերին վարկային համաձայնագրում կատարվեց փոփոխություն և ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվեց մինչև 2010 թվականի մայիսի 31-ը, ինչը հանգեցրեց որոշակի պայմանագրերի ժամկետների համապատասխան երկարաձգմանը: 2009 թվականի նախատեսվածից պակաս կատարումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ որոշակի

խորհրդատվական աշխատանքներ ստորև բերված պատճառներով ժամանակին չիրականացվեցին և հետաձգվեցին հաջորդ տարի, մասնավորապես՝

Գյումրի քաղաքում Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոնի հիմնադրման և պետական գրանցման, ինչպես նաև աշխատակազմի ձևավորման գործընթացի ուշացման հետևանքով, երկարաձգվեց կենտրոնի ստեղծմանն ուղղված մեթոդական նախադրյալների ապահովման ուղղությամբ աշխատանքները, վերջին փուլով նախատեսված աշխատակազմի վերապատրաստման աշխատանքների իրականացումը տեղափոխվեց 2010 թվականի ապրիլի վերջ:

2010 թվական տեղափոխվեցին նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության արխիվի վարման գործընթացի կատարելագործմանն ուղղված խորհրդատվական ծառայությունների վերջին փուլի աշխատանքները, քանի որ համակարգի փորձնական շահագործման ընթացքում ի հայտ եկան տարբեր բացթողումներ և թերություններ, որոնց շտկման և վերացման համար, ինչպես նաև ուսուցման ենթակա մասնագետների վերջնական ցանկը պատվիրատուի կողմից ձևավորելու համար անհրաժեշտ էր լրացուցիչ ժամանակ, երկարաձգվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվական համակարգերի բարելավման և արդիականացման աշխատանքների վերջին փուլը, քանի որ տարբեր տեղեկատվական համակարգերի փորձնական տեղակայման աշխատանքների ընդունման գործընթացը աշխատանքային խմբերի կողմից նախատեսվածից շատ ավելի տևեց, այդ իսկ պատճառով տեղեկատվական համակարգերի տեղակայման, տեղեկատվության միգրացիայի, աուդիտի, փաստաթղթավորման, թեսթավորման եւ մասնագետների ուսուցման աշխատանքները տեղափոխվեցին 2010 թվական:

Ծրագրի շրջանակում Բաղադրիչ I-ով (Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին) իրականացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվական համակարգերի բարելավման և արդիականացման աշխատանքների առաջին երկու փուլերը՝ մշակվել են վերջնական տեխնիկական առաջարկները, պատրաստվել են տեխնիկական առաջարկության հիման վրա ստեղծված ծրագրային ապահովման տեղեկատվական համակարգերը և Սոցիալական պաշտպանության ոլորտի կառուցվածքային ստորաբաժանումներում փորձնական տեղակայված Տեղեկատվական համակարգերի ծրագրային ապահովման նախնական տարբերակները:

Բաղադրիչ II-ով (Աշխատանք և զբաղվածություն) հաջողությամբ իրականացվել են Գյումրի քաղաքում Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոնի շինարարության հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքները, ամբողջությամբ կահավորվել և հագեցվել է նշված կենտրոնը՝ ձեռք են բերվել անհրաժեշտ համակարգչային և տեսաձայնային սարքավորումներ, կահույք, միկրոավտոբուս

հաշմանդամների համար, արտադրական սարքեր և նյութեր, կենցաղային տեխնիկա, տնտեսական ապրանքներ, գրենական պիտույքներ և անհրաժեշտ այլ պարագաներ: Իրականացվեցին ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացվող գործառույթների և ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական նյութերի ձևավորման տրագրության կազմակերպման աշխատանքներ:

Բաղադրիչ III-ով (Կենսաթոշակներ) իրականացվել են ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության արխիվի վարման գործընթացի կատարելագործմանն ուղղված խորհրդատվական ծառայությունների երեք փուլերի աշխատանքները, մշակվել է էլեկտրոնային արխիվի տեղեկատվական համակարգը:

Բաղադրիչ V-ով (Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում) իրականացվել են Ծրագրի մոնիթորինգի և գնահատման աշխատանքները 2009 թվականի կտրվածքով, ընտրվել է նախագծող կազմակերպություն, որը պատրաստել է վերանորոգվող տարածքային կենտրոնների (Թալին, Սևան, Մարտունի) նախագծանախահաշվային փասթաթղթերը, ինչպես նաև իրականացրել է շին-վերանորոգման աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները:

Համակցված բաղադրիչով հաջողությամբ իրականացվել են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների, մարզային և տարածքային մարմինների աշխատակիցների համար «Գործ» Ինտերնետային տեղեկատվական համակարգի ուսուցման և վերապատրաստման դասընթացները:

Հաջողությամբ անց է կացվել Արագածոտնի մարզի Զբաղվածության պետական ծառայության, սոցիալական ապահովագրության պետական ծառայության և սոցիալական ծառայության Թալինի տարածքային գրասենյակների և Գեղարքունիքի մարզի Սևանի և Մարտունու տարածքային գրասենյակների շին-վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով գնումներ մեթոդով հայտարարված մրցույթները: Շինարարությունը ընտված կապալառուների կողմից հաջողությամբ իրականացվել և ավարտվել է, աշխատանքները ընդունվել են:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 10.1 մլն դրամ:

Սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների (այլ դասերի չպատկանող) դասի ծախսերը կազմել են շուրջ 4.8 մլրդ դրամ՝ ապահովելով 79.8% կատարողական:

Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում 510.2 մլն դրամ տրամադրվել է նպաստների, դրամական օգնությունների վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 98.1% կատարողական: Նախորդ տարվա

համեմատ նշված ծախսերն ավելացել են 47.7%-ով, ինչը պայմանավորված է ընտանեկան նպաստի գումարի ավելացմամբ և նրանով, որ նախորդ տարում «Բնակչության զբաղվածության և գործազրկության նպաստի» և «Գործազրկության նպաստի» վճարումներն իրականացվել են Սոցիալական ապահովագրության հիմնադրամի միջոցների հաշվին:

Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման շրջանակներում «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 43.9 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Իսկ 2008 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 23.6%-ով:

Այլ օբյեկտների շինարարության և հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 255.8 մլն և 69.3 մլն դրամի ծախսեր, ընդ որում, շինարարությունն իրականացվել է 96.1%-ով, իսկ հիմնանորոգման ծախսերը՝ 86.7%-ով, վերջինիս պակաս կատարողականը արդյունք է մրցույթի արդյունքում գների տնտեսմամբ:

«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում բժշկասոցիալական փորձաքննության (ԲՄՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և «Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՄՃՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 7.1 մլն դրամ և 17.4 մլն դրամ: Ծրագրերը իրականացվել են նախատեսված ողջ ծավալով: 2008 թվականի համեմատ նշված ծախսերից առաջինը փոփոխության չի ենթարկվել իսկ երկրորդն ավելացել է 51.5%-ով, որը արդյունք է նոր ձևաթղթերի պահանջով:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի շահագործման և սպասարկման նպատակով ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 18 մլն դրամ պետական աջակցություն, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1%-ով:

Գործազուրկների տվյալների տեղեկատվական համակարգի («Գործ» համակարգ) շահագործման և սպասարկման նպատակով ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին պետական աջակցությունը կազմել է 21.4 մլն դրամ, որը ևս կատարվել է նախատեսված չափով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 3.5%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների պետական աջակցությունը կազմել է 146.5 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը

պակասել են 1.5 %-ով, որը պայմանավորված է սոցիալական քարտ ստանալու համար դիմած անձանց փաստացի թվաքանակով:

Երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման սպասարկման և տեղեկատվության տրամադրման նպատակով պետական աջակցությունը կազմել է 15.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը չեն փոփոխվել:

Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները կազմել են շուրջ 29.9 մլն դրամ՝ ապահովելով 95.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական աջակցությունը կազմել է 80.4 մլն դրամ, ապահովելով 95.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 27%-ով, որը սոցիալական ոլորտի մեթոդաբանական նոր ձեռնարկի մշակման արդյունք է:

Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները կազմել են 9.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերն ավելացել են 4%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 23.4 մլն դրամ, որը կատարվել է 89.7%-ով: Տարբերությունը պայմանավորված է ձեռք բերվելիք ծառայությունների համար հայտարարված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերով նախատեսվածի նկատմամբ ցածր գներ սահմանվելու հանգամանքով՝ նախատեսված ծավալային ցուցանիշները ամբողջությամբ պահպանելու պայմաններում: 2008 թվականի նկատմամբ ծախսերը ավելացել են 66.5%-ով, որը արդյունք է նախորդ տարվա նկատմամբ հեռուստահաղորդումների հեռարձակման թվաքանակի ավելացման:

Կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների իրականացմանը տրամադրվել է 1.5 մլրդ դրամ, որը կատարվել է 69.8%-ով: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից պակաս թվով մարդկանց սպասարկելու հանգամանքով:

Հաշվետու տարում պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է 1.9 մլրդ դրամ, որն իրականացվել է 80.9%-ով: Սա բացատրվում է նրանով որ ապահովադիրների մոտ տեղերում 2009 թվականի միայն հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում կատարված ծախսն է: 2009 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ապահովադիրների մոտ տեղերում կատարված ծախսը հարկային մարմնի կողմից

Սոցիալական ապահովության պետական ծառայությանը ֆինանսավորման է ներկայացվել 2010 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում: Նախորդ տարվա ծախսի նկատմամբ տնտեսումը (447.3 մլն դրամ) զուտ պայմանական է և բացատրվում է վերոհիշյալ հանգամանքով:

Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 18.2 մլն դրամ, որը կատարվել է 76.7%-ով: Շեղումը պայմանավորված է ՀՀ կառավարության կասեցման որոշմամբ: Նույն որոշմամբ պայմանավորված չի իրականացվել նաև ներդրումներ «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում ծրագրիր:

Կենսաթոշակների նշանակման ու վճարման «Արաքս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններին տրամադրվել է 17.5 մլն դրամ, որը կատարվել է 87.4%-ով: Անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններին տրամադրվել է 34.9 մլն դրամ, որը կատարվել է 87.2%-ով: Նշված երկու ծրագրերում էլ տնտեսումը պայմանավորված է մրցույթի արդյունքում ծառայությունների մատուցման պայմանագրային գնի նվազման հանգամանքով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ներդրումները «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում որը կազմել է 1.3 մլն դրամ: Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 2 մլն դրամ: Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին տրամադրվել է 5.2 մլն դրամ: ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին տրամադրվել է 5.7 մլն դրամ: Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին տրամադրվել է 14.6 մլն դրամ:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն համար ծախսվել է 13.9 մլն դրամ: Տնտեսումը պայմանավորված է անաշխատունակության թերթիկների պահանջվող թվաքանակի նվազման հանգամանքով:

Թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով բրոշուրների, տեղեկատվական թերթոնների մշակման և հրատարակման համար ծախսվել է 3 մլն դրամ (50%): Նախատեսված մեկ գրքույկ չի տպագրվել:

Վետերանների պատվովճարի և ՀՄ պատերազմի վետերաններին ու «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի

(25.11.1998թ. ՀՕ-258) 13 հոդվածում նշված անձանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրման հետ կապված վճարման ծառայություններին տրամադրվել է 12 մլն դրամ, որը կատարվել է 30.4%-ով: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է Պաշտպանության նախարարության կողմից հիշյալ ծրագրի գծով վճարումները սեփական ուժերով կատարելու ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով նախատեսված վարձավճարների տոկոսադրույքների փոփոխության (նվազման) հանգամանքներով (վարձավճարի տնտեսում):

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված վճարման ծառայություններ ծրագրի գծով ծախսվել է 723.2 հազ.դրամ (58.1%): Տնտեսումը պայմանավորված է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով նախատեսված վարձավճարների տոկոսադրույքների փոփոխության (նվազման) հանգամանքով:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կատարման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 7.3 մլն դրամ, որը կատարվել է 69.7%-ով ըստ կատարված փաստացի ծախսերի:

«Թրաֆիքինգի գոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագիրը չնայած նախատեսվել էր ծրագիրն իրականացնել համաֆինանսավորման սկզբունքով, սակայն ծրագրի շրջանակներում մատուցվելիք ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգի բացակայության պատճառով, ծրագիրն իրականացվել է միայն «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության միջոցների հաշվին:

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 5.3 մլն դրամ, որը կատարվել է 81.5%-ով ըստ կատարված փաստացի ծախսերի:

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

2009 թվականի պետական բյուջեից ՀՀ կառավարության պահուստային ֆոնդին հատկացվել է 33.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Տրամադրված միջոցներից 6.7 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 99.1%-ը, շուրջ 27.3 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ պահուստային ֆոնդի ծախսերը նվազել են 1%-ով, կամ 352.1 մլն դրամով:

2009 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ևս 27 մլն դրամ տրամադրվել է բաժնետոմսերի ձեռք բերմանը, որը ներառված է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում:

Հույժ գաղտնի:

ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեն կատարվել է 239.1 մլրդ դրամ պակասորդով՝ ճշտված ծրագրով նախատեսված շուրջ 66.6 մլրդ դրամի փոխարեն: Նշենք, որ 2008 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 24.5 մլրդ դրամ¹⁸ պակասորդով: Պակասորդ/ՀՆԱ ցուցանիշը 2009 թվականին կազմել է 7.55%՝ բյուջեում կանխատեսված 1%-ի և 2008 թվականի 0.67%-ի դիմաց:

Հաշվետու տարվա ընթացքում պակասորդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են ավելի քան -115.1 մլրդ դրամ՝ նախատեսված շուրջ -264.2 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր շուրջ 7.8 մլրդ դրամ: Պակասորդի ներքին ֆինանսավորման ցուցանիշի՝ ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեի միջոցների փոփոխության ցուցանիշի շեղումով, որը նախատեսված -144 մլրդ դրամի փոխարեն կազմել է -4.7 մլրդ դրամ:

Պետական բյուջեի պակասորդի 18.2%-ը ֆինանսավորվել է պետական արժեթղթերի հաշվին՝ կազմելով 43.4 մլրդ դրամ և 89%-ով գերազանցելով տարեկան ծրագրով նախատեսված ցուցանիշը: Մասնավորապես՝ 45.4 մլրդ դրամ է կազմել գանձապետական պարտատոմսերի հաշվին ֆինանսավորումը՝ նախատեսված 25 մլրդ դրամի փոխարեն:

Գեռես 2008 թվականին անցում էր կատարվել նոր՝ միջնաժամկետ և երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկումներին, որոնց տեղաբաշխումները շարունակվել են նաև 2009 թվականի ընթացքում: 2009 թվականի մայիսի 26-ից իրականացվում են նոր 3, իսկ հուլիսի 14-ից՝ 5 տարի մարման ժամկետով ուղենշային պարտատոմսերի թողարկումներ՝ համապատասխանաբար 12.0% և 12.5% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ: Ուղենշային պարտատոմսերի տեղաբաշխման ծավալը տարվա ընթացքում կազմել է 54.1 մլրդ դրամ, տեղաբաշխման միջին եկամտաբերությունը՝ 12.49%: Պակասորդի ֆինանսավորման ծրագրի իրագործման շրջանակներում, ուղենշային պարտատոմսերի թողարկումներին զուգահեռ, իրացվելիության ավելացման և մարման բեռի թեթևացման նպատակով, պարբերաբար իրականացվել են նախկինում թողարկված միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի փոքրածավալ թողարկումներին, ինչպես նաև 2008 թվականի թողարկման 3 և 5 տարի մարման ժամկետով արդեն նախկին ուղենշային համարվող պարտատոմսերի հետգնումներ:

2009 թվականի ապրիլ ամսից սկսած, ՀՀ կենտրոնական բանկի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն իրականացված միջոցառումների (ՀՀ կենտրոնական

¹⁸ Միջազգային կազմակերպություններին տրամադրված կապիտալ դրամաշնորհները 2009 թվականի պետական բյուջեում ընդգրկված են պակասորդի ֆինանսավորման աղբյուրներում՝ որպես միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարում, ուստի 2008 թվականի ցուցանիշը բերվել է համադրելի դասակարգման:

բանկն ակտիվորեն իրականացնում է պարտատոմսերի առքի գործառնություններ, չի կրճատում ռեպո գործառնությունների ծավալը) արդյունքում, հունիսի 30-ի դրությամբ պետական բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվել է 8.7 մլրդ դրամով, իսկ մնացած 36.7 մլրդ դրամը ֆինանսավորվել է երկրորդ կիսամյակում:

2009 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը. շրջանառության մեջ եղած ներքին պարտքի եկամտաբերությունը կազմել է 10.39% (2008 թվականին՝ 8.36%), պարտքի ժամկետայնությունը՝ 1391 օր (2008 թվականին՝ 1535 օր), մարման բեռի բաշխվածությունը հասել է մինչև 2028 թվականը: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 140,580,420.0 հազ. դրամ: Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 41,429.49 մլն դրամ (29.5%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 71,374.98 մլն դրամ (50.7%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 27,531.56 մլն դրամ (19.6%), խնայողական պարտատոմսերինը՝ 244.39 մլն դրամ (0.2%):

2009 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ ընդհանուր 1,500,000.0 հազ. դրամ ծավալով: Այս պարտատոմսերի տեղաբաշխման ծավալը կազմել է 270,845.0 հազ. դրամ:

2009 թվականին շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. հետգնումը կազմել է 1 մլն դրամ:

Մուրհակների մարման նպատակով կատարվել են 2.0 մլրդ դրամի վճարումներ (100%): Ամբողջությամբ մարվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի նախատեսված գումարը՝ կազմելով 1.2 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին ֆինանսական ակտիվները կազմել են -157.4 մլրդ դրամ կամ տարեկան ճշտված ծրագրի 55%-ը: Մասնավորապես՝ ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 112.2 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 99.1%-ը: Նշված գումարից շուրջ 97.6 մլրդ դրամը Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի միջոցներից հատկացվել է տնտեսավարող սուբյեկտներին վարկեր տրամադրելու նպատակով: 3.0 մլրդ դրամի վարկ է տրամադրվել «Չանգեգուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին: Ավելի քան 182.9 մլն դրամի վարկեր են տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: 69.9 մլն դրամ հատկացվել է «Կանազ» ԲԲԸ-ի ֆինանսական պարտավորությունների մարմանը:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 2.1 մլրդ դրամի դիմաց վարկավորվել է 1.7 մլրդ դրամ: Միջկառավարական համաձայնագրի երրորդ տարում ավարտվեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի վարկային բաղադրիչի առաջին փուլը, և մեկնարկեց

երկրորդ փուլը: ՀՄՀ-Հայաստանի ֆինանսական միջոցներից արդեն օգտվել են ավելի քան 400 վարկառուներ, իսկ վարկերը տրամադրվել են «Ջրից դեպի շուկա» հիմնական ծրագրային գործառույթների ուղղությամբ:

Արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում բյուջետային վարկերի տրամադրումը այդ ծրագրերում ներգրավված տնտեսավարող սուբյեկտներին կատարվել է 94.1%-ով՝ կազմելով 9.5 մլրդ դրամ: Մասնավորապես՝ գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվել է 8.1 մլրդ դրամ՝ համաֆինանսավորում՝ նախատեսված 8.3 մլրդ դրամի դիմաց: 1.4 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 77%-ը: Շեղում է արձանագրվել Գ-ՋՄՀ աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին», ՀԲ աջակցությամբ իրականացվող գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի գծով:

Տրամադրված վարկերի վերադարձից մուտքերը կազմել են շուրջ 15.1 մլրդ դրամ, որի գծով հաշվետու տարում ծրագրվել էին 14.6 մլրդ դրամի մուտքեր:

Առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցման արդյունքում կուտակված միջոցներից բյուջե է մուտքագրվել 36.8 մլն դրամ: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 27 մլն դրամ:

Հաշվետու տարում նախատեսվել էր շուրջ 20.0 մլրդ դրամ օգտագործել բյուջեի 2009 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից, սակայն փաստացի արդյունքներով օգտագործվել է ընդամենը 8.1 մլրդ դրամ:

2009 թվականին Ռուսաստանի Դաշնության տրամադրած 185.1 մլրդ դրամ պետական վարկի միջոցները ներդրվել են գանձապետարանում բացված կայունացման դեպոզիտային հաշվին: Նշված գումարից պետական բյուջե է փոխանցվել 126 մլրդ դրամ, որից փաստացի օգտագործվել է 111.9 մլրդ դրամը: Ռ-Դ վարկի հաշվին տրամադրված վարկերից 2009 թվականի ընթացքում մարվել է շուրջ 4.7 մլրդ դրամը:

2009 թվականին պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է շուրջ 354.3 մլրդ դրամով՝ կազմելով նախատեսվածի 107.1%-ը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 389.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 106.5%-ը: Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են շուրջ 395.7 մլրդ դրամի վարկային միջոցներ, որից 185.1 մլրդ դրամը՝ Ռ-Դ կառավարության, 57.4 մլրդ դրամը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, 24.8 մլրդ դրամը՝ Չարգացման միջազգային ընկերակցության և 31.4 մլրդ դրամը՝ Ասիական զարգացման բանկի

կողմից: Արտաքին աղբյուրներից տրամադրված վարկերի գումարը 8 անգամ կամ 346.4 մլրդ դրամով գերազանցել է 2008 թվականի ցուցանիշը:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է ավելի քան 6.3 մլրդ դրամ, որից ավելի քան 4.4 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: Բացի այդ, 839.4 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 524.7 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 232 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 34.5 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը, 182.6 մլն դրամ՝ Բարձր լարման ցանցերի համակարգերի վերանորոգման ծրագրի և 87.3 մլն դրամ՝ Քանաքեռ ՀԷԿ-ի վերականգնման անհետաձգելի օգնության ծրագրի գծով Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով պակասուրդի ֆինանսավորման ծրագիրը կատարվել է ամբողջությամբ և կազմել շուրջ 33.3 մլրդ դրամ: Մասնավորապես, 33.1 մլրդ դրամ է կազմել ԼՂՀ-ին տրամադրված միջպետական վարկը: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է շուրջ 61.9 մլն դրամի վճարում, որից 29.5 մլն դրամը 2008 թվականի պարտավորությունն է: Այն Վրաստանի կողմից վճարվել է սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ 2008 թվականի դեկտեմբերին, սակայն միասնական գանձապետական հաշվին մուտքագրվել է 2009 թվականի հունվար ամսին: Նույն կերպ 2009 թվականի պարտավորության մի մասը՝ 44.8 մլն դրամի չափով, պետական բյուջե է մուտքագրվել 2010 թվականի հունվարին:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 217.4 մլն դրամ: Հաշվետու տարում 1.8 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը:

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 2,966.7 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 35.4%-ը՝ 2008 թվականի 1,577.1 մլն դոլարի և 13.3%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 2,465.9 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության անմիջական վարկային պարտավորություններն են, 500.8 մլն ԱՄՆ դոլար են կազմում Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 72.0 մլն ԱՄՆ դոլար, որից 45.0 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 27.1 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 5.5%՝ նախորդ տարվա 3.1%-ի դիմաց: 2009 թվականի վերջի

դրությամբ արտաքին պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ՉՆԱ) աճել է՝ 2008 թվականի 994.5 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 2,259.6 մլն ԱՄՆ դոլար, աճել է նաև ՉՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2008 թվականի 8.3%-ի դիմաց կազմելով 25.9%: Հաշվետու տարում աճել է ՉՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2008 թվականի 56.6%-ից հասնելով 172.6%-ի: